ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ՀՏԴ 343.195.3:347.963(042.3)
ԳՄԴ 67.72
Հ 247

Փորձագետ՝ Անուշ Հակոբյան
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Այվազյան

Հ 247 ՀՀ դատախազության գործունեության գնահատում.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2026.- 329 էջ:

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և դատախազությանը՝ ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիայի հակազդման արդյունավետությունը:

ՀՏԴ 343.195.3:347.963(042.3)
ԳՄԴ 67.72

ISBN 978-9939-1-2310-3

© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

www.transparency.am

Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 5

ՆԱԽԱԲԱՆ 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 12

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 15

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 18

1. ՀՀ դատախազության գործունեության գնահատումը՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների 18

1.1. ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը 19

1.2. ՀՀ դատախազության ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով 35

1.3. ՀՀ դատախազության ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը 50

1.4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում 65

1.5. Կանխարգելում, կրթություն և իրազեկում 79

1.6. Համագործակցություն և արտաքին հարաբերություններ 87

2. ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության 94

3. ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի 106

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 109

Հավելված 1. ՀՀ դատախազության գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ 115

Հավելված 2. ՀՀ դատախազության գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման չափանիշների և ցուցանիշների 302

Հավելված 3. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ՝ հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ դատախազության համար 303

Հավելված 4. ՀՀ դատախազության գործունեության գնահատման ցուցանիշների դասակարգումը՝ ըստ ազդեցության ու կատարողականը բնութագրող գործոնների 320

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 322

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԳՐԵԿՈ	ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԹԻ	Թրանսպարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԹՊԻՀ	Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցություն
ԿԸՀ	ԹԻ Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ԿՀԲ	Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿՄ	Հակակոռուպցիոն մարմին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԴԿ	Միավորված ազգերի կոռուպցիայի դեմ կոնվենցիա
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՀԻ	Միջազգային հանրապետական ինստիտուտ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ՔՕ	Քրեական օրենսգիրք
ՔԾԳ	ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ

ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՈԳՎ	ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն
CARIN.NETWORK	Camden Asset Recovery Inter-agency Network միջազգային ոչ պաշտոնական ցանց
COSP	Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողով
ICAR	Ակտիվների վերականգնման միջազգային կենտրոն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ՀՀ դատախազությանը՝ ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիայի հակազդման արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրն է գնահատել ՀՀ դատախազության համապատասխանությունը հակակոռուպցիոն մարմինների գնահատման համար ընդունված միջազգային չափանիշներին, այն է՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայից բխող պահանջներին ու «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությամբ» սահմանված սկզբունքներին, և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

ՀՀ դատախազության կարողությունների ու գործունեության գնահատման համար հիմք են ընդունվել ՀՀ Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերով, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով ՀՀ դատախազությանը վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացման սահմանված պահանջները, որոնց հիման վրա տեղայնացվել և օգտագործվել է «Հակակոռուպցիոն մարմինների կարողությունների զարգացման» ԹԻ գործիքը:[1]

Հետազոտությունն իրականացվել է 2021-2024 թվականների ժամանակահատվածի համար: Տվյալները հավաքագրվել են ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին ուղղված պաշտոնական հարցումների, առցանց բաց աղբյուրներում առկա պաշտոնական ու միջազգային կառույցների փաստաթղթերի դիտարկման, մամուլի լուսաբանումների ուսումնասիրության և փորձագիտական քննարկումների միջոցով:

ՀՀ դատախազության գործունությունը դիտարկվել և գնահատվել է 48 ցուցանիշներով: Գնահատվել են ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը, ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, կառույցի հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման պրակտիկան, կոռուպցիայի կանխարգելմանը, կրթմանը և իրազեկմանը միտված ջանքերը, համագործակցությունն ու արտաքին հարաբերությունները: Առնչվող ցուցանիշների միջոցով գնահատվել է ՀՀ դատախազության համապատասխանությունը Ջակարտայի սկզբունքներին: Գնահատվել է նաև ՀՀ դատախազության գործունեությունը՝ ըստ կատարողականի և դրա վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների:

Համաձայն նշված մեթոդաբանության՝

- Առավել բարձր են գնահատվել ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը (77.7 %), ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով (68.7 %):

[1] Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparencycdn.org/kproducts/ACA-Assessment-Tool.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

Միջինին մոտ միավորներ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների հետապնդումը (44.4 %), հաշվետվողականությունը ու ներքին բարեվարքությունը (44.4 %) ու համագործակցությունը և արտաքին հարաբերությունները (50 %): Ամենացածր տեղում են կանխարգելումը, կրթությունը և իրազեկումը (21.4 %), այդ թվում՝ օրենսդրությամբ ՀՀ դատախազության այդպիսի գործառույթները պատշաճ չկարգավորելու բերումով:

- Ջակարտայի հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից՝ ՀՀ դատախազության գործունությունը գնահատվել է 62.1 %, որտեղ ցածր մակարդակում են եղել արտաքին հաշվետվողականության, հանրային հաղորդակցության և գործակցության սկզբունքների ապահովումը:
- ՀՀ դատախազության գործունեությունը գնահատվել է առավել բարձր՝ 65.3 %՝ տվյալ կառույցի վերահսկողության շրջանակում գտնվող ներքին գործոնների ցուցանիշներով: ՀՀ դատախազության վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված գնահատականը 62.5 % է, իսկ կատարողականի ցուցանիշներով՝ 34.2 %:

ՀՀ դատախազության գործունեության գնահատմամբ վերհանված խնդիրների առնչությամբ ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը (օրենսդրական մասով)՝

1. Վերանայել և վերացնել Գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում երկու անգամ անընդմեջ ընտրվելու հնարավորությունը:
2. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում թափանցիկությունն ու արժանիքահեն մոտեցումն ապահովելու նպատակով թեկնածուների առաջադրման փուլում սահմանել լրացուցիչ մեխանիզմներ, այդ թվում՝ մինչև ԱԺ ներկայացնելը բաց մրցույթի կազմակերպում՝ սահմանված պահանջներին համապատասխանող ցանկացած անձի մասնակցության և ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովի կողմից մեկ թեկնածուի փոխարեն ԱԺ-ի քննարկմանը մինչև երեք թեկնածուի ներկայացման հնարավորությամբ:
3. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում ապահովել անկախ փորձագետների մասնակցությունը (այդ թվում՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ), որոնք չեն հանդիսանում հանրային ծառայողներ և ենթակա չեն որևէ պետական մարմնի:
4. Վերանայել Գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերից որոշ հայեցողական գնահատման հնարավորություն ստեղծող հիմքեր սահմանող կարգավորումները (օրինակ՝ օրենքի խախտումը, որը վարկաբեկել է ՀՀ դատախազության հեղինակությունը):
5. Սահմանել անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ՝ դատախազների ինքնուրույնությունն ու անկախությունն ապահովելու, Գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմնի ձևավորման կամ գործող մարմինների կազմավորման կարգի վերանայման նպատակով՝ դրանց կազմում ներառելով նաև ոչ դատախազ անդամներ (օրինակ՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ, նշված ոլորտում առնվազն 5 տարվա փորձառություն ունեցող իրավաբաններ), իսկ դատախազ անդամների ընտրությունն

իրականացնել դատախազների կողմից՝ ապահովելով համակարգի տարբեր օղակների ներկայացվածությունը:

6. ՀՀ դատախազությանն օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար:
7. ՀՀ դատախազության լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործման ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է գլխավոր դատախազի թեկնածուների ընտրության չափանիշներում սահմանել առնվազն վերջին երեք տարիների ընթացքում որևէ կուսակցության անդամ հանդիսանալու կամ քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվելու սահմանափակում:
8. Մեծացնել ՀՀ դատախազության բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
9. ՀՀ դատախազության ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից ՀՀ դատախազության ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով ՀՀ դատախազության համաձայնությունը:
10. Վերանայել և բարձրացնել դատախազների հիմնական աշխատավարձի դրույքաչափերը, ինչը հնարավորություն կտա ձևավորել պարզ, թափանցիկ և կայուն վարձատրության համակարգ՝ ապահովելով, որ եկամտի առանցքը հանդիսանա հիմնական աշխատավարձը, իսկ հավելումները ունենան բացառիկ և հիմնավորված բնույթ՝ առանց խաթարելու համակարգի ամբողջականությունն ու ինստիտուցիոնալ անկախությունը:
11. Վերանայել խրախուսման մեխանիզմները՝ հիմնվելով կատարողականի, մասնագիտացման և ծանրաբեռնվածության գործոնների վրա:
12. Վերանայել դատախազների ընտրության և նշանակման, առաջխաղացման համար անցկացվող փակ մրցույթների նպատակահարմարությունը՝ սահմանելով օբյեկտիվ և արժանիքահեն չափանիշներ դատախազների առաջխաղացման համար: Օրենքով սահմանել թափանցիկության ապահովման հստակ մեխանիզմներ՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որակավորման հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ մասնակցելու, ինչպես նաև սահմանված կարգով հանձնաժողովի կազմում անդամ ներգրավվելու հնարավորությունը:
13. Վերանայել դատախազների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների փուլերը՝ նախատեսելով նաև գրավոր փուլ: Սահմանել, որ ԿԿՀ-ի կողմից դատախազների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունը իրականացվում է միայն այն թեկնածուների նկատմամբ, ովքեր հաղթահարել են մրցույթի գրավոր փուլը և թույլատրվել են մասնակցելու հարցազրույցի փուլին:
14. Վերանայել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանցից պահանջվող փաստաթղթերի շրջանակը և սահմանել նաև հայտին կից պետական տուրքի նվազագույն չափով վճարման մասին ապացույց ներկայացնելու պահանջ՝ ապահովելու հայտ ներկայացնողների լիարժեք մասնակցությունը մրցույթի բոլոր փուլերին:

15. Սահմանել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց համար առնվազն երեք տարվա իրավաբանի աշխատանքային փորձ:
16. Սահմանել կարգավորում, ըստ որի որակավորման հանձնաժողովի կողմից դատախազների թեկնածուների համալրման մրցույթի արդյունքների հաստատումից հետո թեկնածուների ցուցակից որևէ մեկի բացառման պատճառները լինեն հրապարակային, ինչը կազդի գլխավոր դատախազի հայեցողական որոշումների հաշվետվողականության վրա:

ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ հաշվեքննիչ պալատին (վերահսկողության մասով)՝

17. ՀՀ դատախազության նկատմամբ իրական և բազմաշերտ արտաքին վերահսկողություն ապահովելու նպատակով նպատակահարմար է ստեղծել գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ, ընդլայնել խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը:
18. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսել ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ ընտրանքային հաշվեքննության և թեմատիկ վերահսկողության մեխանիզմներ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ ամբողջական հաշվեքննություն նախատեսված չէ տարեկան ծրագրով:

ՀՀ դատախազությանը՝

19. Կազմակերպել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումների դատախազների կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ՝ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
20. Արդարադատության ակադեմիայում և Դատախազությունում պետք է տարեկան մեկ անգամ իրականացնել կարիքների գնահատում՝ գնահատելով ակադեմիայի կրթության որակը և արդյունավետությունը, միաժամանակ ներգրավելով արտաքին ռեսուրսներ՝ օբյեկտիվության և մասնագիտական գնահատման ապահովման նպատակով:
21. Ուսումնասիրել ՀՀ դատախազության անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:
22. Ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի վերականգնման և կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրման ու վերլուծության համակարգ: Այս առնչությամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանումը և առկա կառուցակարգերի կատարելագործումը:
23. ՀՀ դատախազության տարեկան հաշվետվության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել հաշվետվության պարտադիր բովանդակությունը՝ այն համապատասխանեցնելով ՏՀԶԿ և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի չափանիշներին և ներառելով քրեական վարույթների ամբողջական վիճակագրություն, գործերի կարճման հիմքեր, բյուջեի կատարողականի տվյալներ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկություն: Միաժամանակ նպատակահարմար է ներդնել կիսամյակային հրապարակային հաշվետվությունների

մեխանիզմ և ապահովել հաշվետվությունների մեթոդաբանության և հավելվածների ամբողջական հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքում՝ բաց տվյալների ձևաչափով:

24. Տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ներդնել հարցումների կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ, սահմանել պատասխանների որակի և ժամկետների վերահսկման չափորոշիչներ, ինչպես նաև ուժեղացնել համապատասխան ստորաբաժանումների մարդկային ռեսուրսներն ու մասնագիտական կարողությունները:
25. Ներքին վերահսկողության համակարգի ամրապնդման համար անհրաժեշտ է մշակել և հրապարակել ՀՀ դատախազության ռազմավարական զարգացման փաստաթղթեր, հստակեցնել ներքին աուդիտի մանդատը և ապահովել դրա արդյունքների պարբերական հրապարակայնացումը, ինչպես նաև ներդնել ռիսկերի կառավարման և ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:
26. Պարբերաբար իրականացնել անկախ հանրային ընկալումների հարցումներ, մշակել և կիրառել հաղորդակցության և իրազեկման համապարփակ ռազմավարություն, ինչպես նաև ապահովել հանրության մասնակցության մեխանիզմների զարգացումը՝ բաց քննարկումների և խորհրդատվական հարթակների միջոցով:
27. ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննության և բարեվարքության համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է ապահովել բողոքների վերաբերյալ կառուցվածքային վիճակագրության հավաքագրումը և հրապարակումը, ուժեղացնել էթիկայի հանձնաժողովի անկախությունը, ինչպես նաև ներդնել կանխարգելիչ ուսուցման և բարեվարքության մշտադիտարկման մեխանիզմներ:
28. Ազդարարների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է ապահովել ազդարարումների վերաբերյալ մանրամասն վիճակագրության հրապարակումը, ներդնել անվտանգ հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր և հրապարակել հաջողված դեպքերի անանուն օրինակներ՝ վստահության ամրապնդման նպատակով:
29. Վերանայել ու ավելացնել ՀՀ դատախազության հետ հանրային հաղորդակցման ուղիները, ներառյալ պարբերական հրապարակային հաշվետվություններում՝ մատնանշելով ստացված հաղորդումների, դրանց ընթացքի և դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների քանակը, ինչպես նաև կանխարգելիչ պարզաբանումները, որպեսզի հանրությունը տեսնի իրական կատարողականը:
30. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումների թափանցիկությունը պետք է ապահովվի՝ հրապարակելով գործերի ընթացքի, արդյունքների և կիրառված պատժի մասին առանձնացված տվյալները, ինչը կնվազեցնի քաղաքական ազդեցությամբ պայմանավորված ընտրովի հետապնդումների ռիսկը և կբարձրացնի հանրային վստահությունը:
31. ՀՀ դատախազության կողմից իրականացնել կամ պատվիրել ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
32. Բարձրացնել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության աշխատանքի նախաձեռնողականությունը, ինչը պահանջում է գործընթացի ռիսկերի և գույքի ուսումնասիրության առաջնահերթությունների վերահստակեցում, ինչպես նաև անձնակազմի պրոֆեսիոնալ հմտությունների ուժեղացում:

33. Ապահովել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցերի և դրանց արդյունքում ընդունված դատական ակտերի իրականացման վերահսկում և ակտիվների վերականգնման բարձր տոկոս:
34. Մշակել ՀՀ դատախազության հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել մարմնի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
35. Բարձրացնել ՀՀ դատախազության հակակոռուպցիոն գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
36. Իրականացնել ՀՀ դատախազության հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու ՀՀ դատախազության դերը և նշանակությունը հակակոռուպցիոն և ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման ոլորտներում:
37. Վերակազմակերպել ՀՀ դատախազության կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:
38. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով ՀՀ դատախազությունը համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:
39. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Հակակոռուպցիոն կոմիտե, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել ՀՀ դատախազության վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:
40. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
41. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
42. Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը դարձնել ավելի համակարգված և բազմաշերտ:
43. ՀՀ դատախազության կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա կանխարգելման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ դատախազության գործունեության ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի շարունակական բարեփոխումներով և միջազգային ստանդարտներին համապատասխանելու հրամայականով:

Սույն հետազոտությունը հատկապես կարևոր է այս ժամանակահատվածում՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը և միջազգային գործընկերները արձանագրել են քաղաքական կամքի առկայությունը կոռուպցիայի դեմ պայքարում հաջողության հասնելու համար: Հետազոտության արդյունքները կնպաստեն ՀՀ կառավարության կողմից որդեգրած հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրերի ավելի արդյունավետ իրագործմանը, ինչպես նաև կուժեղացնեն հանրային վստահությունը նորաստեղծ հակակոռուպցիոն ինստիտուտների նկատմամբ:

Հետազոտությունը կարևորվում է նաև այն առումով, որ ՀՀ հակակոռուպցիոն համակարգի արդյունավետությունը մեծապես կախված է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունները բարձր մասնագիտական մակարդակով կանխելու և հետապնդելու կարողությունից:

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ՀՀ դատախազությանը՝ ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիոն հանցագործությունների կանխման և հետապնդման արդյունավետությունը:

Այդ առումով, ՀՀ դատախազության գործունեության վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու առկա մարտահրավերները, ի հայտ բերելու բարելավման կարիք ունեցող ոլորտները և ներկայացնելու հստակ և հիմնավորված առաջարկություններ: Այս առաջարկությունները դիտարկվում են ՀՀ դատախազության ռազմավարական զարգացման համատեքստում և ուղղված կլինեն ՀՀ դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ինստիտուցիոնալ կարողությունների և անկախության ամրապնդմանը, ինչպես նաև արդյունավետության բարձրացմանը՝ միջազգային չափանիշներին առավելագույն համապատասխանություն ապահովելու նպատակով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տարվող քաղաքականության պատասխանատուն ՀՀ կառավարությունն է, որն իրացնում է իր լիազորությունը պետության հակակոռուպցիոն ռազմավարություններ և դրանց իրականացման միջոցառումների ծրագրեր ընդունելու, հակակոռուպցիոն մարմիններ (ՀԿՄ) ձևավորելու և դրանց կայացմանն աջակցելու միջոցով:

Հակակոռուպցիոն մարմինների կազմավորման և դրանց գործունեությանն աջակցման գործում Հայաստանն առաջնորդվում է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (ՄԱԿԴԿ)[2] և «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայում ընդունված հայտարարությամբ[3] սահմանված չափանիշներով, որոնք բնութագրում են երկրում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը:

2003 թ. հոկտեմբերի 31-ին ընդունված ՄԱԿԴԿ-ի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթներն առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցներն իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և ռեսուրսներով:

2012 թ. նոյեմբերի 26-27-ին Ջակարտայում տարբեր երկրների հակակոռուպցիոն մարմինների ներկա և նախկին ղեկավարների, հակակոռուպցիոն ոլորտի պաշտոնյաների և փորձագետների կողմից ընդունված «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» (Ջակարտայի սկզբունքներ) հայտարարությամբ ամրագրվել են հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքները: Դրանք ներառում են ՀԿՄ-ների մանդատը, համագործակցությունը այլ կառույցների հետ, մշտականությունը, նշանակումը, շարունակականությունը, ղեկավարների հեռացումը, էթիկական վարքագիծը, անձեռնմխելիությունը, վարձատրությունը, իրավասությունը մարդկային ռեսուրսների նկատմամբ, համարժեք և հուսալի ռեսուրսների առկայությունը, ֆինանսական ինքնավարությունը, ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային հաշվետվությունը, հանրային հաղորդակցությունն ու ներգրավումը:

Հայաստանում ՀԿՄ-ների նոր և ամբողջական համակարգ ունենալու հանձնառությունն ամրագրվել է 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ:[4] Արդյունքում ձևավորվել են հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները՝ Կոռուպցիայի

[2] Հայաստանը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 ստորագրել է 2005 թ., որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. հոկտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 2006 թ. նոյեմբերի 11-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28164

[3] «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ., https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

[4] ՀՀ կառավարության «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, 03.10.2019 թ., https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.2.pdf

կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), Հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազության կազմում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունները, իսկ դատական համակարգում՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանները: ՀՀ կառավարության գործունեության 2021-2026 թթ. ծրագրով ամրագրվել է Կառավարության հակակոռուպցիոն գործընթացներում հաջողելու բավարար քաղաքական կամքի առկայությունն ու այդ կամքն իրական արդյունքի վերածելու պատրաստակամությունը:[5] ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ ընդունված հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել են ՀԿՄ-ների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:[6]

ՀՀ դատախազությունը, համարվելով սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ և գործում է հրապարակայնության, դատախազի ինքնուրույնության, քաղաքական չեզոքության և գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքների հիման վրա:

ՀՀ դատախազությունը, Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն,

1. հարուցում է քրեական հետապնդում,
2. հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ,
3. դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
4. բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,
5. հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ ՀՀ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Դատախազության կառուցվածքի մեջ մտնում են՝

- ՀՀ գլխավոր դատախազը,
- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները (5 հաստիք),
- ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը և գլխավոր քարտուղարի տեղակալները,
- ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականները, օգնականները և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների օգնականները,
- ՀՀ գլխավոր դատախազությունը, Երևան քաղաքի դատախազությունը, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, մարզային դատախազությունները, ՀՀ զինվորական դատախազությունը, որը կազմված է զինվորական կենտրոնական դատախազությունից, Երևանի, Կապանի, Լոռու,

[5] ՀՀ կառավարության 2021-2026 թթ. միջոցառումների ծրագիր, 18.08.2021 թ., https://www.gov.am/files/docs/4586.pdf
[6] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, 26.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674

Գեղարքունիքի, Շիրակի, Արարատի, Տավուշի և Սիսիանի կայազորների զինվորական դատախազություններից,
- դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:[7]

Գլխավոր դատախազության հիմնական ստորաբաժանումներն են՝
- ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով,
- ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության,
- սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների,
- ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով,
- պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով,
- պետական շահերի պաշտպանության,
- սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով,
- տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով,
- միջազգային-իրավական համագործակցության,
- մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով,
- բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով,
- պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության,
- կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունները:

Զինվորական կենտրոնական դատախազության գլխավոր ստորաբաժանումներն են՝
- զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության,
- կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և
- պետական շահերի պաշտպանության բաժինները:

ՀՀ դատախազության կառավարումն իրականացնում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազը ղեկավարում է դատախազության գործունեությունը: Գլխավոր դատախազին հաշվետու են գլխավոր դատախազի տեղակալները, գլխավոր դատախազության ավագ դատախազները և դատախազները, գլխավոր դատախազի խորհրդականները, օգնականները, դատախազության կազմում գտնվող դատախազությունների ղեկավարները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարը, գլխավոր քարտուղարի տեղակալները:

ՀՀ դատախազության գործունեության ֆինանսական ապահովվածությունը իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պետական բյուջեի ծախսային մասում ՀՀ դատախազության ծախսերը ներկայացվում են առանձին տողով: ՀՀ դատախազությունը ապահովված է

[7] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թ. հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրաման, 24.09.2019 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf

շենքային պայմաններով, գրասենյակային գույքով, համակարգչային սարքավորումներով, տեղեկատվական էլեկտրոնային համակարգերով:

Սույն հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը և ՀՀ դատախազությանը՝ բարելավելու կոռուպցիայի դեմ մղվող պայքարի արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրն է գնահատել ՀՀ դատախազության համապատասխանությունը հակակոռուպցիոն մարմինների գնահատման համար ընդունված միջազգային չափանիշներին, այն է՝ ՄԱԿԴԿ-ից բխող պահանջներին ու «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությամբ» սահմանված սկզբունքներին, և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

Որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել 2021 թ. հունվարի 1-ից մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդը

ՀՀ դատախազության կարողությունների ու գործունեության գնահատումն իրականացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի (ԹԻ) կողմից մշակված հակակոռուպցիոն մարմինների գործունեության գնահատման մեթոդաբանական գործիքով,[8] որը տեղայնացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերով, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով ՀՀ դատախազությանը վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացման սահմանված պահանջները:

ՀՀ դատախազության գնահատումն արվել է 48 ցուցանիշների դիտարկմամբ՝ յուրաքանչյուրի համար իրականացնելով փաստաթղթային ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն: Որպես կանոն, հետազոտությունը անդրադարձել է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության գործունեության գնահատմանը, սակայն վերլուծությունը հիմնականում վերաբերում է ՀՀ դատախազությանը՝ որպես ամբողջական ինստիտուտի:

Մեթոդաբանությունը նախատեսում է երեք մոտեցում՝ ըստ դիտարկվող ցուցանիշների տարբեր դասակարգումների:

Ա. Գնահատում՝ ըստ միջազգային սկզբունքներից բխող հետևյալ 6 չափման խմբերի (Հավելված 1-2), որոնք ներառել են՝

1. ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը (9 ցուցանիշ),

[8] Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018.

2. ՀՀ դատախազության ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով (8 ցուցանիշ),
3. ՀՀ դատախազության հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը (9 ցուցանիշ),
4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդումը (9 ցուցանիշ),
5. Կանխարգելումը, կրթությունը և իրազեկումը (7 ցուցանիշ),
6. Համագործակցությունը և արտաքին հարաբերությունները (6 ցուցանիշ):

Բ. Գնահատում՝ ըստ Ջակարտայի հայտարարությամբ սահմանված ՀԿՄ գործունեության սկզբունքների (Հավելված 3), որոնք են՝

1. Մանդատը (5 ցուցանիշ),
2. Գործակցությունը (5 ցուցանիշ),
3. Մշտականությունը (1 ցուցանիշ),
4. Նշանակումը (1 ցուցանիշ),
5. Շարունակականությունը (1 ցուցանիշ),
6. Հեռացումը (1 ցուցանիշ),
7. Էթիկական վարքագիծը (1 ցուցանիշ),
8. Անձեռնմխելիությունը (1 ցուցանիշ),
9. Վարձատրությունը (2 ցուցանիշ),
10. Իրավասությունը մարդկային ռեսուրսների նկատմամբ (2 ցուցանիշ),
11. Համարժեք և հուսալի ռեսուրսները (4 ցուցանիշ),
12. Ֆինանսական ինքնավարությունը (1 ցուցանիշ),
13. Ներքին հաշվետվողականությունը (5 ցուցանիշ),
14. Արտաքին հաշվետվողականությունը (2 ցուցանիշ),
15. Հրապարակային հաշվետվությունները (2 ցուցանիշ),
16. Հանրային հաղորդակցությունը և գործակցությունը (3 ցուցանիշ):

Գ. Գնահատում՝ ըստ կատարողականի և ազդեցության գործոնների (Հավելված 4), որոնք ներառել են՝

1. ՀՀ դատախազության վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոնները (16 ցուցանիշ),
2. ՀՀ դատախազության վերահսկողության ներքո գտնվող ներքին նպաստավոր գործոնները (13 ցուցանիշ),
3. ՀՀ դատախազության գործունեության կատարողականը բնութագրող ուղղակի գործոնները (19 ցուցանիշ):

Գնահատումը

Դիտարկված ցուցանիշները գնահատվել են փորձագիտական մոտեցմամբ՝ յուրաքանչյուրին տալով ցածր (0), միջին (1) կամ բարձր (2) միավոր: Տվյալների համարժեք, վստահելի և ստուգելի աղբյուրների բացակայության պայմաններում մեթոդաբանությունը նախատեսել է «Հնարավոր չէ գնահատել» ցուցանիշը: Տեսանելիության ապահովման նպատակով համապատասխան միավորները հավելվածներում գունավորվել են. այսպես՝ «բարձր» միավորները ներկայացվել են կանաչ, «միջին»-ը՝ դեղին, իսկ «ցածր»-ը՝ կարմիր գույներով: Մոխրագույն գույնով ներկայացված են այն ցուցանիշները, որոնք հնարավոր չեն եղել գնահատել:

Գնահատականները ներկայացվել են տոկոսային արտահայտությամբ, որտեղ կիրառվել է միևնույն բանաձևը. հաշվարկվել է դիտարկվող խմբի ցուցանիշների փաստացի գնահատված միավորների գումարի և տվյալ խմբի ցուցանիշների առավելագույն հնարավոր միավորների հանրագումարի հարաբերակցությունը:

Գնահատման նախնական արդյունքները ներկայացվել են ՀՀ դատախազությանը, ինչպես նաև քննարկվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների փորձագիտական խմբում: ՀՀ դատախազությունից ստացված պարզաբանումների և անկախ փորձագետների կարծիքների հիման վրա զեկույցում կատարվել են որոշ ճշգրտումներ:

Գնահատման արդյունքները համապատասխանաբար ներկայացված են հավելվածներում և պատկերված գծապատկերներում: Այսպես, ՀՀ դատախազության գործունեության,

- ըստ 6 չափման խմբերի, գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 1-ում և Գծապատկերներ 2-7-ում, իսկ ամփոփ՝ Հավելված 2-ում և Գծապատկեր 1-ում,
- ըստ Ջակարտայի հակակոռուպցիոն մարմինների մասին հայտարարությամբ սահմանված 16 սկզբունքներին համապատասխանության, գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում և Գծապատկեր 8-ում,
- ըստ գործոնների, այն է՝ գործունեության կատարողականի և վերջինիս վրա ներքին ու արտաքին ազդեցությունների, գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 4-ում և Գծապատկեր 9-ում:

Տեղեկության հավաքագրման եղանակներն ու աղբյուրները

ՀՀ դատախազության գործունեության գնահատման համար պահանջվող տեղեկությունը հավաքագրվել է պաշտոնական բաց աղբյուրներից, այդ թվում՝

- ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներից,
- ՀՀ գլխավոր դատախազության կողմից հրապարակվող կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տարեկան հաղորդումներից,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տարեկան հաշվետվություններից,
- ՀՀ գլխավոր դատախազության կողմից հրապարակվող հանցագործությունների քննության վերաբերյալ տարեկան հաղորդումներից,
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրից,
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թթ. միջոցառումների ծրագրից,
- ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի տարեկան հաշվետվություններից (հաղորդումներից):

Տեղեկության հավաքագրման եղանակների շարքում իրականացվել են՝

- պաշտոնական հարցումներ՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազությանը և ՀՀ ՔԾԳ-ին,
- հարցազրույցներ և փորձագիտական քննարկումներ:

Տեղեկատվության աղբյուր են ծառայել նաև կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում առանձին հետազոտությունները, միջազգային աջակցության ծրագրերի շրջանակներում մշակված փաստաթղթերը, գնահատման զեկույցները, մամուլում, էլեկտրոնային սոցիալական ցանցերում կոռուպցիոն հանցագործությունների հետաքննությանը վերաբերելի առանձին հոդվածները, հրապարակային ելույթներն ու հարցազրույցներից տվյալները:

Զեկույցի նախագիծը քննարկվել է ՀՀ դատախազության ներկայացուցիչների հետ:

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀՀ դատախազության գործունեության գնահատումը՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների

ՀՀ դատախազության գործունեության գնահատումն իրականացվել է 6 չափման խմբերով, որոնք ներառում են անկախությունը և կարգավիճակը, ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, կոռուպցիոն հանցագործությունների հետապնդումը, կանխարգելումը, կրթությունը և իրազեկումը, համագործակցությունը և արտաքին հարաբերությունները:

ՀՀ դատախազության գործունեության ընդհանուր պատկերը, ըստ չափման խմբերի և ցուցանիշների գնահատման, ներկայացված է ստորև գծապատկերում:

Գծապատկեր 1. ՀՀ դատախազության գործունեության ընդհանուր պատկերը՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների



1.1. ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը

ՀՀ դատախազության անկախության և կարգավիճակի գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Ինստիտուցիոնալ անկախությունը,** որը գնահատում է Կառավարությունից ՀՀ դատախազության անկախության աստիճանը, որը բնորոշվում է կառույցի կարգավիճակով՝ պետական կամ սահմանադրական մարմին լինելուց մինչև որևէ գերատեսչության կամ նախարարության ստորաբաժանում հանդիսանալը:
- **ՀՀ գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման և հեռացման գործընթացը,** որը գնահատում է ՀՀ գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) հեռացման կամ փոխարինման պայմանները, անկողմնակալության ապահովման երաշխիքները, ընտրության չափանիշների անաչառությունը և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը:
- **ՀՀ դատախազության մանդատը,** որը գնահատում է ՀՀ դատախազության գործառույթների շրջանակը և բնութագրվում է հետաքննության/հետապնդման, կրթման և կանխարգելման գործառույթների առկայությամբ:
- **ՀՀ դատախազությանը վերապահված իրավասության շրջանակը,** որը գնահատում է ՀՀ դատախազության մանդատի ոլորտային և աշխարհագրական ընդգրկվածությունը՝ վարչական կառավարման բոլոր մակարդակներում, ներառյալ պետական և ՏԻՄ մարմինները, մասնավոր հատվածը (այդ թվում՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները):
- **Հետապնդման լիազորությունները,** որը գնահատում է ՀՀ դատախազության իրավասությունը նախաձեռնողական վարույթ սկսելու, այլ պետական և ՏԻՄ մարմիններից պահանջելու համագործակցել, կատարել օպերատիվ-հետախուզական աշխատանքներ, տրամադրել տեղեկություն և փորձագիտական եզրակացություններ, հասանելիություն ունենալ այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրել կասկածելի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն:
- **Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները,** որը գնահատում է ՀՀ դատախազության իրավասությունը՝ մշակելու և այլ գերատեսչություններին կամ ՀՀ կառավարությանը ներկայացնելու հակակոռուպցիոն ոլորտին առնչվող և կատարման ենթակա առաջարկություններ ՝ ընդհանուր հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ, հրապարակայնորեն զեկուցելու դրանց մասին, բացահայտելու խնդիրները և անցկացնելու հանրային լսումներ ու հարցումներ:
- **Իրավական ինքնավարությունը**, որը գնահատում է կոռուպցիոն հանցագործություններով հետապնդումների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում լիակատար հայեցողությունը, ՀՀ դատախազության լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար ՀՀ դատախազության ղեկավար կազմի և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմի անձեռնմխելիությունը քրեական և (կամ) քաղաքացիական հետապնդումից, բարձրաստիճան պաշտոնյաների կամ այլ մարմինների ղեկավարների հրահանգներին չենթարկվելը:
- **Գործառնական ինքնավարությունը,** որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և

տեղափոխման նկատմամբ անմիջական վերահսկողության իրականացման, ՀՀ գլխավոր դատախազի բացակայության դեպքում ՀՀ դատախազության բնականոն գործունեության շարունակականության ապահովման, Կառավարության կողմից ՀՀ դատախազության առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության մեխանիզմների առկայությունը:

- **Լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործումը,** որով գնահատվում է ՀՀ կառավարության կողմից ՀՀ դատախազությունը՝ քաղաքական հակառակորդների դեմ կամ այլ քաղաքական դրդապատճառներով որպես գործիք օգտագործելու մեխանիզմների առկայությունը:

Գծապատկեր 2. ՀՀ դատախազության անկախության և կարգավիճակի գնահատման մակարդակը



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, ՀՀ դատախազության անկախության և կարգավիճակի չափանիշով գնահատման մակարդակը կազմել է 77.7 %՝ առավելագույն 18-ից ապահովելով 14 միավոր:

Ինստիտուցիոնալ անկախությունը (2 միավոր)

ՀՀ դատախազության ինստիտուցիոնալ անկախությունը բխում է սահմանադրական և օրենսդրական կարգավորումներից: ՀՀ Սահմանադրության 8-րդ գլխով Դատախազությունը սահմանվում է որպես Սահմանադրությամբ նախատեսված միասնական համակարգ, որը ղեկավարում է գլխավոր դատախազը և գործում է օրենքի հիման վրա (հոդված 176): «Դատախազության մասին» ՀՀ օրենքով ամրագրված են Դատախազության գործունեության հիմնական սկզբունքները՝ հրապարակայնություն, դատախազի ինքնուրույնություն, ապաքաղաքականացվածություն, գործունեությանը միջամտելու անթույլատրելիություն և դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելը: Միաժամանակ ապահովվում է հաշվետվողականությունը՝ տարեկան զեկույցների

ներկայացման և հրապարակման միջոցով, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ առանձին տեղեկատվությամբ: Այս մոտեցումը համահունչ է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին՝ մարմնի գործառույթների իրականացումը անհարկի ազդեցությունից զերծ պայմաններում ապահովելու առումով:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազության գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր քննարկելու, դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները որոշելու համար դատախազությունում գլխավոր դատախազի նախագահությամբ գործում է կոլեգիա: Այն կազմված է գլխավոր դատախազից, նրա տեղակալներից, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և Երևան քաղաքի դատախազից:

Թեև «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են ՀՀ դատախազության կոլեգիայի կազմավորման և գործունեության կարգավորումներ, այն իր մանդատով, կազմով և ձևավորման մեխանիզմներով չի կարող դիտարկվել որպես դատախազների անկախությունն ու ինքնուրույնությունն ապահովող մարմին: ՏՀԶԿ 5-րդ գնահատման զեկույցում նույնպես արձանագրվել է գլխավոր դատախազից անկախ ինքնակառավարման կոլեգիալ մարմնի (դատախազական խորհուրդ կամ համանման մարմին) բացակայության խնդիրը:[9]

ՀՀ գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման և հեռացման գործընթացը (1 միավոր)

ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածով սահմանված է, որ գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ: Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

Սահմանադրությամբ սահմանված են նաև գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող հիմնական պահանջները. թեկնածուն պետք է լինի առնվազն 35 տարեկան, միայն ՀՀ քաղաքացի, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով, բարձրագույն իրավաբանական կրթությամբ և իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառությամբ: Օրենքով կարող են սահմանվել նաև լրացուցիչ պահանջներ:

Գլխավոր դատախազի, նրա տեղակալների նշանակման, պաշտոնի դադարեցման և դադարեցման հիմքերի մանրամասն կարգավորումները ամրագրված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխում: Օրենքի 35-րդ հոդվածը վերահաստատում է Սահմանադրությամբ սահմանված ընտրության կարգը՝ հղում կատարելով նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին, որը սահմանում է թեկնածուի առաջադրման, քննարկման և ընտրության ընթացակարգերը:[10]

[9] OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/fb158bf9-en (դիտված՝ 05.05.2026 թ.):
[10] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,հոդված 35, https://www.arlis.am/hy/acts/203931

Գլխավոր դատախազի թեկնածուն առաջադրվում է խմբակցության որոշմամբ, որին կցվում են սահմանադրական և օրենսդրական պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը և ԿԿՀ-ի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը: Գլխավոր դատախազն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ և պաշտոնը ստանձնում է երդմամբ:[11] Սահմանադրությամբ նախատեսված պահանջներից զատ, թեկնածուի վրա տարածվում են դատախազ նշանակվելու ընդհանուր սահմանափակումները, ներառյալ դատվածության, քաղաքացիության, զինվորական ծառայության, առողջական վիճակի, շահերի բախման և նախկին կարգապահական պատասխանատվության վերաբերյալ պայմանները:[12]

Այսպես, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն՝ գլխավոր դատախազի թեկնածության առաջադրումն ու ընտրությունը կազմակերպվում է խորհրդարանական ընթացակարգով. թեկնածուն առաջադրվում է խմբակցության կողմից, և քննարկվում ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովում: Թեև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է, որ մշտական հանձնաժողովը կարող է նախագծերի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով դիմել գիտական կամ ուսումնական հաստատություններին, ինչպես նաև նիստերին հրավիրել մասնագետներ, այս լիազորությունը հայեցողական է և չի հանդիսանում գլխավոր դատախազի ընտրության գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության բավարար երաշխիք: Հետևաբար, օրենսդրությունը չի նախատեսում անկախ փորձագետների (օրինակ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ) ներգրավվածություն գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների ընտրության գործընթացում: Այնուհանդերձ, գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ սահմանված է որպես դիտորդ ներգրավվելու հնարավորություն:[13]

Բացի այդ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազի պաշտոնում: Կրկին նշանակվելու հնարավորությունը խնդրահարույց է գլխավոր դատախազի անկողմնակալության տեսանկյունից, քանի որ կարող է մի կողմից որոշակի կաշկանդվածություն ձևավորել թեկնածուի համար, մյուս կողմից՝ ակնկալիքներ՝ վերընտրող քաղաքական կառույցի՝ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության մոտ, ինչը հարցականի տակ է դնում թեկնածուի անկախությունը և ՀՀ դատախազության գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը:

Ինչ վերաբերում է գլխավոր դատախազի տեղակալի նշանակմանը, ապա «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի տեղակալ կարող է նշանակվել դատախազ նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները բավարարող, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, բարձր մասնագիտական

[11] «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ., հոդված 145, https://www.arlis.am/hy/acts/201755
[12] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 35:
[13] ՀՀ գլխավոր դատախազի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրաման, 23.05.2020 թ.:

որակներ և բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն ունեցող անձը: Տեղակալի նշանակումը կարող է իրականացվել առանց մրցույթի, եթե թեկնածուն արդեն զբաղեցնում է դատախազի պաշտոն, իսկ մյուս դեպքերում՝ մրցութային կարգով՝ որակավորման հանձնաժողովի միջոցով:[14]

Մրցույթը ներառում է թեկնածուների փաստաթղթերի ուսումնասիրություն, հարցազրույց և մասնագիտական ու կառավարչական հմտությունների գնահատում: Մրցույթի ընթացքում հաշվի է առնվում նաև ԿԿՀ-ի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը: Մրցույթի արդյունքներով գլխավոր դատախազը նշանակում է տեղակալ:

Առանձին կարգավորում է նախատեսված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթները համակարգող տեղակալի համար, որի ընտրությունը կատարվում է բաց մրցույթի միջոցով և բարձր ձայների շեմով:[15] Ստուգման ենթակա հանգամանքների հետ մեկտեղ, հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ ԿԿՀ-ի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարելու հիմքերը սահմանված են «Դատախազության մասին» օրենքի 63-րդ հոդվածով և հիմնականում կրում են օբյեկտիվ բնույթ: Միաժամանակ, օրենքը նախատեսում է նաև լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հայեցողական հիմքեր, ինչպիսիք են՝ օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումը, որը «վարկաբեկել է դատախազության հեղինակությունը», կամ «այլ անհաղթահարելի խոչընդոտների» առկայությունը:

Այս հիմքերը բազմիցս քննադատվել են իրավական որոշակիության տեսանկյունից: ՏՀԶԿ-ի 5-րդ գնահատման զեկույցում նշվում է, որ նշված ձևակերպումները չափազանց ընդհանուր են և կարող են լայն մեկնաբանության տեղիք տալ, ինչը ստեղծում է քաղաքական կամ հայեցողական ազդեցության ռիսկեր:[16]

Գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու ընթացակարգը սահմանված է «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 153-րդ հոդվածով և ներառում է խմբակցության նախաձեռնություն, քննարկում ԱԺ նիստում, ԿԿՀ-ի եզրակացության ներկայացում և գաղտնի քվեարկություն՝ երեք հինգերորդ ձայների շեմով:[17] Գլխավոր դատախազի տեղակալների լիազորությունների դադարեցման հատուկ կարգավորում օրենքում չկա, և նրանց նկատմամբ կիրառվում են դատախազների համար նախատեսված ընդհանուր հիմքերը:

Գործնականում գործող գլխավոր դատախազն ընտրվել է 2022 թ. հունիսի 29-ին՝ միայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ձայներով: Ընդդիմադիր

[14] Նույն տեղում, հոդված 36:
[15] ՀՀ գլխավոր դատախազի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրաման, 23.05.2020 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf
[16] OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris.
[17] «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ., հոդված 145:

խմբակցությունները բոյկոտել են քվեարկությունը:[18] Միջազգային և տեղական փորձագետների գնահատմամբ՝ ընտրության գործընթացը չի ունեցել մրցակցային և արժանիքահեն բնույթ, իսկ քաղաքական ազդեցության գործոնը եղել է էական:[19]

ՀՀ դատախազության մանդատը (2 միավոր)

ՀՀ դատախազությունն ունի հստակ մանդատ: Այն Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1. հարուցում է քրեական հետապնդում,
2. հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ,
3. դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
4. բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,
5. հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Այս սահմանադրական կարգավորումները զարգացվում և կոնկրետացվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, որով սահմանվում է ՀՀ դատախազության գործառույթների և լիազորությունների ամբողջական շրջանակը: Նշված նորմատիվ հիմքերը լրացվում են ՀՀ դատախազության կանոնադրությամբ, որտեղ առավել մանրամասն ներկայացված են մարմնի խնդիրները, գործառույթները և գործունեության կազմակերպման մեխանիզմները:[20]

ՀՀ դատախազության կանոնադրությամբ սահմանված խնդիրները արտացոլում են մարմնի համակարգային դերակատարումը քրեական արդարադատության և իրավական պետության ապահովման գործում: Դրանք մասնավորապես ներառում են՝

- Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների պատշաճ և արդյունավետ իրականացումը, դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, այլ մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև այդ խնդիրների լուծմանը խոչընդոտող հանգամանքների և պայմանների բացահայտումն ու վերացումը,
- միասնական քրեական քաղաքականության մշակումը և հանցավորության դեմ համակարգված պայքարի ապահովումը,

[18] ՀՀ Ազգային Ժողովի պաշտոնական կայք, նորություններ բաժին, «Աննա Վարդապետյանն ընտրվել է ՀՀ գլխավոր դատախազ», 29.06.2022 թ., http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=06&year=2022&NewsID=16991&lang=arm (դիտված՝ 05.05.2026 թ.):
[19] OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris.
[20] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թ. հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրաման, 24.09.2019 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf

- դատախազական քաղաքականության միատեսակ իրականացումը ՀՀ ողջ տարածքում,
- հանցավորության մակարդակի նվազեցմանն ու դրա որակական ցուցանիշների բարելավմանն ուղղված գործունեությունը,
- մինչդատական քրեական վարույթի լրիվության, օբյեկտիվության, արդյունավետության և բազմակողմանիության ապահովումը,
- մարդու իրավունքների և քրեական դատավարության հիմնարար սկզբունքների երաշխավորումը,
- պատժողական քաղաքականության միատեսակ և կանխատեսելի կիրառումը,
- պետության շահերի պաշտպանությունն ու պետությանը պատճառված վնասների վերականգնումը:

Այս խնդիրների համախումբը վկայում է, որ ՀՀ դատախազությունը ոչ միայն քրեական հետապնդման մարմին է, այլ նաև քրեական քաղաքականության առանցքային ինստիտուցիոնալ դերակատար:

Դատախազության գործառույթները[21] կառուցվածքային առումով բաժանվում են մի քանի հիմնական ոլորտների.

Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն

ՀՀ դատախազությունն իրականացնում է հսկողություն և վերահսկողություն հետաքննության և նախաքննության մարմինների գործունեության նկատմամբ, ուսումնասիրում և ամփոփում է դատախազական հսկողության պրակտիկան, մշակում է մեթոդական հանձնարարականներ և առաջարկություններ վարույթի արդյունավետության բարձրացման նպատակով:

Դատարաններում մեղադրանքի պաշտպանություն

ՀՀ դատախազությունը պաշտպանում է մեղադրանքը առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, իրականացնում է դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգում, պատրաստում և պաշտպանում է բողոքներ, ինչպես նաև վերլուծում է մեղադրանքի պաշտպանության որակը:

Պետական շահերի պաշտպանություն

Օրենքով սահմանված դեպքերում ՀՀ դատախազությունն իրականացնում է պետական շահերի պաշտպանություն, այդ թվում՝ պետական մարմիններից տեղեկատվություն պահանջելու, վնասի կամավոր հատուցման նախազգուշացման, հայցերի հարուցման և դրանց դատարանում պաշտպանության միջոցով:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն

[21] Նույն տեղում:

ՀՀ դատախազությունը վերահսկում է ազատությունից զրկման և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականությունը, ապահովում է մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքների միատեսակ կիրառումը:

Կազմակերպական, իրավական և միջազգային համագործակցության գործառույթներ

ՀՀ դատախազությունն իրականացնում է իրավական ակտերի նախագծերի մշակում, օրենսդրական վերլուծություն, մասնակցում է միջազգային ծրագրերի և համագործակցության մեխանիզմների ձևավորմանը, աջակցում է աշխատողների վերապատրաստմանն ու ինստիտուցիոնալ զարգացմանը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթ

2020 թվականի հունիսի 3-ի հրամանով ՀՀ դատախազության կանոնադրությունը համալրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում նոր գործառույթներով: Նորաստեղծ վարչությունն իրականացնում է գույքի ուսումնասիրություն, ապացույցների հավաքում, հայցերի նախապատրաստում և ներկայացում, ինչպես նաև քաղաքացիական բռնագանձման գործերի վարում: Այս գործառույթը էապես ընդլայնում է ՀՀ դատախազության դերը հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման շրջանակում:[22]

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատախազությունը օժտված է լայն և համապարփակ մանդատով, որը թույլ է տալիս իրականացնել քրեական հետապնդման, հսկողության, մեղադրանքի պաշտպանության և հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական ցիկլը: Նորմատիվ հիմքերի և գործառույթների ծավալը վկայում է մարմնի ինստիտուցիոնալ կարողությունների բարձր մակարդակի մասին, ինչը, համապատասխան երաշխիքների առկայության դեպքում, կարող է նպաստել դրանց արդյունավետ և անկախ գործունեությանը ՀՀ իրավական համակարգում:

Իրավասության շրջանակը (2 միավոր)

ՀՀ դատախազությանն օրենսդրությամբ վերապահված է իրավասության բավականին լայն շրջանակ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված մանդատի իրականացումն ապահովելու նպատակով:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է՝ գլխավոր դատախազի ղեկավարությամբ, որն իր սահմանադրական լիազորությունները իրականացնում է դատախազների միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է, որ նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: Միևնույն ժամանակ, օրենսգրքի 35-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, մինչդատական վարույթի

[22] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թ. սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացումներ կատարելու մասին» N 50 հրաման, 03.06.2020 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_212_1685023080.pdf

օրինականության, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման կամ չբողոքարկման իրավաչափության համար:[23] ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա:[24]

Իրավական նորմերի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ՀՀ դատախազությանը վերապահված լիազորությունների շրջանակում վերջինիս իրավասությունը տարածվում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր կոռուպցիոն դրսևորումների վրա՝ ներառելով և՛ կենտրոնական, և՛ ենթազգային մակարդակները:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն օժտված է ապօրինի ծագում ունեցող գույքի բացահայտման, ուսումնասիրության, ապացույցների ապահովման և քաղաքացիական բռնագանձման ամբողջական գործիքակազմով, ներառյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախաձեռնումը և միջազգային տեղեկատվական համագործակցությունը: Այս լիազորությունները ամրապնդում են ոչ միայն քրեական պատժիչ, այլ վերականգնողական մոտեցումը՝ պետական և հանրային շահերի պաշտպանության, անպատժելիության նվազեցման և իրավական պետության սկզբունքների իրացման տեսանկյունից:

Հետապնդման լիազորություններ (2 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածների համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատախազությունը լիարժեքորեն իրավասու է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցելու հանրային քրեական հետապնդում և իրականացնելու մինչդատական վարույթի օրինականության հսկողություն, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող վարույթների նկատմամբ: Դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման կամ դադարեցման, հարկադրանքի միջոցների կիրառման, հանրային մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման իրավաչափության համար:[25]

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ վարույթի նյութերի կամ քննիչի միջնորդության հիման վրա, ինչպես նաև դատախազի սեփական նախաձեռնությամբ: Միևնույն ժամանակ, դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարելու ներկայացնել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն կամ կազմել այդպիսի որոշման նախագիծ:

Կարևոր է նշել, որ ՀՀ դատախազությունը չի համարվում նախաքննության մարմին, հետևաբար, քրեական հետապնդում հարուցելու որոշումը կայացնելուց հետո նախաքննությունն իրականացնում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

[23] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ., հոդված 181, https://www.arlis.am/hy/acts/208871
[24] ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021 թ., հավելված 1, https://www.arlis.am/hy/acts/153080
[25] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ., հոդված 35:

Մինչդատական վարույթում դատախազ–քննիչ փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-38-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ հսկող դատախազն իրավասու է տալու պարտադիր հանձնարարություններ անօրինական գործողությունները կամ որոշումները վերացնելու, էական հանգամանքներ պարզելու և վարույթի օրինականությունն ապահովելու նպատակով, ընդ որում՝ այդ հանձնարարությունները կարող են բողոքարկվել վերադաս դատախազին:[26]

Ընդհանուր առմամբ, ՀՀ դատախազությանը վերապահված լիազորությունները ձևավորում են քրեական հետապնդման և մինչդատական վերահսկողության կենտրոնական դեր՝ միաժամանակ պահպանելով քննչական մարմնի գործառութային ինքնուրույնությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության՝ որպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավասու մարմնի լիազորություններին, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նշված վարչությունը իրավասու է սկսել ուսումնասիրություն, եթե առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ անձին կամ նրա հետ փոխկապակցված անձանց պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք: Ուսումնասիրությունը կարող է նախաձեռնվել ինչպես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կամ ընթացիկ քրեական հետապնդման առկայության, այնպես էլ այն դեպքերում, երբ քրեական հետապնդումն անհնար է կամ կասեցված է, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների կամ վարչության սեփական վարույթում ձեռք բերված տվյալների հիման վրա:

Ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացվում է, եթե առկա է օրենքով սահմանված առնվազն մեկ հիմք, և ենթադրվող գույքի շուկայական արժեքը կարող է գերազանցել 50 մլն դրամը: Որոշումը ենթակա է վերահսկողության՝ ուղարկվելով գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալին, որը կարող է այն վերացնել սահմանված ժամկետում:

Ուսումնասիրության շրջանակում վարչության դատախազներն օժտված են տեղեկատվություն և փաստաթղթեր պահանջելու և ստանալու, այդ թվում՝ օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տվյալներ, հարցումներ իրականացնելու, պետական և միջազգային տեղեկատվական բազաներից օգտվելու, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ նախաձեռնելու (օրենքով սահմանված սահմանափակումներով), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մասնագետներ ներգրավելու լիազորություններով:[27]

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը կարող է դիմել առաջին ատյանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված ծառայողական տեղեկություններ, «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված ծառայողական, վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն պահանջելու դիմում: Դատարանը

[26] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ., հոդվածներ 36-38:
[27] «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020 թ., հոդված 11, https://www.arlis.am/hy/acts/208596,
«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, 22.10.2007 թ., հոդված 11, https://www.arlis.am/hy/acts/190391

պահանջը քննում է առանց նիստ հրավիրելու և որոշում է կայացնում դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում հայցվող տեղեկությունները պահանջելու վերաբերյալ, եթե իրավասու մարմինը հիմնավորում է, որ տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանման համար:[28]

Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ (1 միավոր)

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման, իսկ այլ նորմատիվ ակտերի նախագծերի դեպքում հանրային քննարկումը կազմակերպվում է ընդունող կամ մշակող մարմնի նախաձեռնությամբ:[29] Այս համատեքստում ՀՀ դատախազությունը՝ որպես նորմատիվ իրավական ակտեր մշակող մարմին, իրավասու է կազմակերպելու հանրային քննարկումներ՝ հանրային քննարկումների կազմակերպման սահմանված կարգի համաձայն:[30]

2024 թվականի ընթացքում ՀՀ դատախազությունը, հանցավորության վիճակագրության և քննչական պրակտիկայի վերլուծության հիման վրա, մշակել և իրավասու մարմիններին ներկայացրել է չորս օրենսդրական նախաձեռնություն, այդ թվում՝ Հակակոռուպցիոն դատարանի վարույթների միացման, քրեակատարողական օրենսդրության կատարելագործման, քրեական վարույթներով իրավական օգնության և հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման միասնական մեխանիզմների վերաբերյալ:[31] Բացի այդ, ՀՀ դատախազությունը դիտարկումներ և դիրքորոշումներ է ներկայացրել տարբեր պետական մարմինների կողմից մշակված ավելի քան 190 իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:[32] Այնուամենայնիվ, ՀՀ դատախազության առաջարկությունների կիրարկումը՝ որպես պարտադիր միջոց, կախված է ընդունող մարմնից, քանի որ ներկայացված լուծումները կարող են չընդունվել Կառավարության կամ ԱԺ-ի կողմից: Միաժամանակ, տարեկան հաղորդումներում բացակայում են տվյալներ ՀՀ դատախազության կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման մակարդակի վերաբերյալ: ԹԻՀԿ-ի հարցման շրջանակում նույնպես հնարավոր չի եղել իրականացնել քանակական վերլուծություն, քանի որ ՀՀ դատախազությունը չի տրամադրել համապատասխան վիճակագրական տեղեկատվությունը:

Միաժամանակ, դատախազը կարող է ընդունել որոշումներ, հրամաններ, կարգադրություններ, միջնորդագրեր կամ հանձնարարականներ՝ իր լիազորությունների շրջանակում: Հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական (համայնքային) շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազը կարող է միջնորդագիր ներկայացնել դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է դրա քննարկման արդյունքների և ձեռնարկած

[28] «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020 թ., հոդված 12:
[29] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018 թ., հոդված 3, https://www.arlis.am/hy/acts/120733
[30] ՀՀ կառավարության «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» սահմանելու մասին» 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշում: https://www.arlis.am/hy/acts/126002
[31] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Պետությանը և համայնքին պատճառված վնասի վերականգնմանն ուղղված դրամական միջոցները կվճարվեն «Վերականգնված միջոցների միասնական հաշվին», 05.12.2024 թ., https://prosecutor.am/article/4702 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[32] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հայտնել միջնորդագիրը ներկայացրած դատախազին:[33]

Այսպես, 2021-2024 թթ. դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի դինամիկան հետևյալն է՝

- 2021 թ. – 972 միջնորդագիր,
- 2022 թ. – 843 միջնորդագիր (նվազում 13.3 %-ով),
- 2023 թ. – 212 միջնորդագիր (նվազում 74.9 %-ով),
- 2024 թ. – 360 միջնորդագիր (աճ 69.8 %-ով):[34]

Այս տվյալները ցույց են տալիս միջնորդագրերի ներկայացման դինամիկայի կտրուկ փոփոխականություն: 2021 թ. համեմատ 2024 թ.-ին միջնորդագրերի թիվը նվազել է մոտ 63 %-ով, ինչը ցույց է տալիս ներկայացման դինամիկայի լուրջ կրճատում: Ինչ վերաբերում է միջնորդագրերի արդյունավետության վերաբերյալ տվյալներին, ապա, թեև առանձին համապարփակ վիճակագրություն հրապարակված չէ, այնուամենայնիվ, ՀՀ գլխավոր դատախազության 2024 թ. գործունեության վերաբերյալ Ազգային ժողով ներկայացված հաղորդման մեջ ներառված է տեղեկություն որոշ միջնորդագրերի և դրանց հիման վրա իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցների մասին, ինչը որոշ չափով հնարավորություն է տալիս գնահատել դրանց գործնական ազդեցությունը:[35]

«Միջնորդագրերի դինամիկայի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին շեշտը դրվում է ոչ այնքան դատախազական ներգործության տվյալ միջոցի քանակական ցուցանիշների, որքան որակական բաղադրիչի վրա»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Իրավական ինքնավարությունը (2 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը: Դատախազությունը ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով:[36]

Այսպես, ՀՀ դատախազությունը՝ համարվելով սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանվում է քրեական վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:

[33] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,հոդված 30:
[34] Հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2022 և 2024 թթ. հաղորդումներ, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_294_4340070921.pdf, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_61_8560493694.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[35] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, էջ 34, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[36] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 4:

Այսպես, դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման կամ չբողոքարկման իրավաչափության համար: Քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս դատախազը գործում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի հանձնարարությունների վրա: Դատախազը պատասխանատու է ներքին համոզմունքի վրա հիմնված իր վարութային ակտերի համար:[37]

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանվում են դրույթներ, որոնք կարգավորում են ՀՀ դատախազության ղեկավար կազմի անձեռնմխելիության հարցերը: Այսպես, գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին չի թույլատրվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկել առանց էթիկայի հանձնաժողովի համաձայնության՝ բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերի, կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Գլխավոր դատախազի տեղակալի կամ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և տվյալ վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, իսկ գլխավոր դատախազի նկատմամբ՝ գլխավոր դատախազի տեղակալը:

Գործառնական ինքնավարությունը (2 միավոր)

Դատախազության բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք՝ ըստ օրենքի հանդիսանում են ՀՀ գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կազմում գործող վարչությունները և բաժինները: Դատախազության կազմում գործում են նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք աջակցում են դատախազներին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների իրականացման հարցում:

Դատախազության կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատողների քանակը հաստատվում են գլխավոր դատախազի կողմից:

Գլխավոր դատախազին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալները: Գլխավոր դատախազի տեղակալների նշանակումն ու ազատումը նույնպես իրականացվում է գլխավոր դատախազի կողմից: Գլխավոր դատախազին լիազորություն է վերապահված գլխավոր դատախազի տեղակալների պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել տեղակալ: Բացի այդ, գլխավոր դատախազը նշանակում և ազատում է իր խորհրդականին, օգնականին, գլխավոր դատախազի տեղակալի օգնականին, Դատախազության համապատասխան

[37] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ., հոդված 35:

աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

Դատախազության կառավարումն իրականացնում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազը ղեկավարում է ՀՀ դատախազության գործունեությունը: Գլխավոր դատախազին անմիջական հաշվետու են գլխավոր դատախազի տեղակալները, գլխավոր դատախազության ավագ դատախազները և դատախազները, գլխավոր քարտուղարը, գլխավոր դատախազի խորհրդականները, օգնականները, դատախազության կազմում գտնվող դատախազությունների ղեկավարները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթների միջոցով՝ գլխավոր դատախազի հրամանով սահմանված կարգով: Բաց մրցույթն անցկացնում է որակավորման հանձնաժողովը: Հանձնաժողովը ստանում է ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունը, և դրական գնահատված թեկնածուները ներկայացվում են գլխավոր դատախազին՝ վերջինիս կողմից որոշում ընդունելու նպատակով:[38]

Ինչ վերաբերում է ՀՀ դատախազության քաղաքացիական ծառայողներին, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի՝ ՀՀ դատախազությունում գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր դատախազը: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը:[39] Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող անձը:

Գլխավոր դատախազի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը նախատեսում է. «Գլխավոր դատախազի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով գլխավոր դատախազի տեղակալներից մեկը փոխարինում է գլխավոր դատախազին: Նման հրաման ընդունելու անհնարինության դեպքում, ինչպես նաև գլխավոր դատախազի պաշտոնն օրենքով սահմանված կարգով թափուր մնալու դեպքում գլխավոր դատախազին ժամանակավորապես փոխարինում է գլխավոր դատախազի՝ ՀՀ դատախազության համակարգում առավել երկար փորձառություն ունեցող տեղակալը»:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը անմիջական վերահսկողություն է իրականացնում իր անձնակազմի ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ, ինչպես նաև գլխավոր դատախազի բացակայության դեպքում ապահովում է լիազորությունների շարունակականությունը:

[38] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,հոդված 38:
[39] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ., հոդված 16, https://www.arlis.am/hy/acts/175823

Լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործումը (0 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում ամրագրված է դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքը, որի համաձայն դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատախազը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին դատախազը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող): Դատախազը չի կարող մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը: Դատախազն իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը: Հավաքներին մասնակցելիս դատախազը չպետք է կրի ծառայողական համազգեստ:

Հանրային և մեդիա դիսկուրսում լայնորեն շրջանառվող տեղեկությունները՝ կապված գործող գլխավոր դատախազի նախորդ դերակատարման, գործադիր իշխանության ղեկավարի հետ ունեցած սերտ աշխատանքային հարաբերությունների և իրավապահ համակարգի վրա ոչ ֆորմալ ազդեցության առանձին դրվագների հետ, ստեղծում են հնարավոր քաղաքական կախվածության և ընտրովի արդարադատության վերաբերյալ ընկալումներ: Այդ ընկալումները խորանում են նաև այն հանգամանքով, որ ներկայիս բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ հարուցված գործերի զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի և տեսանելի չէ ապօրինությունների պատժելիությունը:[40]

Հայաստանում ընդդիմադիր քաղաքական ուժերն ու պատգամավորները ժամանակ առ ժամանակ հնչեցրել են մեղադրանքներ, ըստ որոնց՝ պետական մարմինները, այդ թվում՝ իրավապահ համակարգը և ՀՀ դատախազությունը, որոշ դեպքերում գործել են քաղաքական դրդապատճառներով՝ թիրախավորելով իշխանությունների քննադատներին կամ ընդդիմադիր գործիչներին: Մասնավորապես, մեղադրանքները վերաբերել են դատարանների և իրավական մեխանիզմների կիրառմանը՝ որպես քաղաքական ճնշման կամ վախեցման գործիք,[41] իսկ Ազգային ժողովում ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում նախաձեռնելու գործընթացները մեկնաբանվել են որպես քաղաքական պատվերով պայմանավորված քայլեր:[42] Միաժամանակ, թերևս կարևոր է նշել, որ ընդդիմախոսները, որպես կանոն, չեն անդրադարձել քրեական հետապնդումների համար հիմք հանդիսացող հանցակազմերին:

Միաժամանակ, մամուլում արձանագրվել են դեպքեր, երբ գլխավոր դատախազը չի մասնակցել քաղաքականապես զգայուն հարցերի վերաբերյալ խորհրդարանական լսումներին, այդ թվում՝ քաղաքական ենթատեքստ ունեցող գործերի շուրջ քննարկումներին,

[40] «Փաշինյանի օգնականից՝ գլխավոր դատախազ. ՔՊ-ի փակ նիստում որոշում են կայացրել», 16.06.2022 թ., https://factor.am/523581.html, «Փաշինյանի խորհրդականն է ցուցում տալիս՝ ինչ մեղադրանք առաջադրեն Հայրապետյաններին», 10.03.2021 թ., https://arm.sputniknews.ru/20210310/ruben-hayrapetyan-qrgorc-pashinyani-xorhrdakan-26759375.html, «Քննչական կոմիտեն չի հերքում վարչապետի խորհրդականին առնչվող սկանդալային տեսանյութերի իսկությունը», 11.03.2021 թ., https://auroranews.am/news/2021-03-11-qnnchakan-komiten-chi-hergum-varchapeti-khorhrdakanin-arnchvogh-skandalayin-tesanyuteri-iskutyuny (դիտված՝ 05.05.2026 թ.):

[41] Panorama.am, «Սա է ավտորիտարիզմի բաստիոնի բերած բարքերը. Աբրահամյանը՝ ընդդիմադիրների նկատմամբ քաղաքական հետապնդումների մասին», 08.01.2026 թ., https://www.panorama.am/am/news/2026/01/08/%D5%8F-%D4%B1%D5%A2%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6/3149177 (դիտված՝ 05.05.2026 թ.):

[42] Ազատություն ռադիոկայան, «Հայաստանի խորհրդարանը թույլատրել է երկու ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում», 27.03.2025 թ., https://www.azatutyun.am/a/33362139.html (դիտված՝ 05.05.2026 թ.):

ինչը որոշ շրջանակների կողմից գնահատվել է որպես խորհրդարանական վերահսկողությունից խուսափելու փորձ:[43]

Գլխավոր դատախազի՝ օրենքով սահմանված կարգով ԱԺ-ում տարեկան հաղորդման ներկայացման ընթացքում ընդդիմության կողմից բարձրացված քաղաքական պատվերի վերաբերյալ դիտարկումները չեն ստացել պատշաճ, փաստարկված արձագանք կամ ինստիտուցիոնալ գնահատում:[44] Արդյունքում, քաղաքականապես զգայուն գործերի շուրջ ձևավորված հանրային ընկալումներում շարունակում է պահպանվել Դատախազության քաղաքականացված լինելու ռիսկը:

Առաջարկություններ

1. Վերանայել և վերացնել գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում 2 անգամ անընդմեջ ընտրվելու հնարավորությունը:
2. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում թափանցիկությունն ու արժանիքահեն մոտեցումն ապահովելու նպատակով թեկնածուների առաջադրման փուլում սահմանել լրացուցիչ մեխանիզմներ, այդ թվում՝ մինչև ԱԺ ներկայացնելը բաց մրցույթի կազմակերպում՝ սահմանված պահանջներին համապատասխանող ցանկացած անձի մասնակցության և ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովի կողմից մեկ թեկնածուի փոխարեն ԱԺ-ի քննարկմանը մինչև երեք թեկնածուի ներկայացման հնարավորությամբ:
3. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում ապահովել անկախ փորձագետների մասնակցությունը (այդ թվում՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ), որոնք չեն հանդիսանում հանրային ծառայողներ և ենթակա չեն որևէ պետական մարմնի:
4. Վերանայել գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերից որոշ հայեցողական գնահատման հնարավորություն ստեղծող հիմքեր սահմանող կարգավորումները (օրինակ՝ օրենքի խախտումը, որը վարկաբեկել է ՀՀ դատախազության հեղինակությունը):
5. Սահմանել անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ՝ դատախազների ինքնուրույնությունն ու անկախությունն ապահովելու, Գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմնի ձևավորման կամ գործող մարմինների կազմավորման կարգի վերանայման նպատակով՝ դրանց կազմում ներառելով նաև ոչ դատախազ անդամներ (օրինակ՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ, նշված ոլորտում առնվազն 5 տարվա փորձառություն ունեցող իրավաբաններ), իսկ դատախազ անդամների ընտրությունն իրականացնել դատախազների կողմից՝ ապահովելով համակարգի տարբեր օղակների ներկայացվածությունը:
6. ՀՀ դատախազությանն օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի

[43] Panorama.am, «Գլխավոր դատախազը չի մասնակցի քաղբանտարկյալների հարցով վաղը խորհրդարանում սպասվող լսումներին. Վարդանյան», 25.11.2025 թ., https://www.panorama.am/am/news/2025/11/25/%D5%94-%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/3146097 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[44] Հետք, «Գլխավոր դատախազն ԱԺ-ում ներկայացրել է Դատախազության 2024 թ. հաղորդումը», 08.05.2025 թ., https://hetq.am/hy/article/174229 (դիտված՝ 05.05.2026 թ.):

ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար:

7. ՀՀ դատախազության լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործման ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է գլխավոր դատախազի թեկնածուների ընտրության չափանիշներում սահմանել առնվազն վերջին երեք տարիների ընթացքում որևէ կուսակցության անդամ հանդիսանալու կամ քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվելու սահմանափակում:

1.2. ՀՀ դատախազության ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով

ՀՀ դատախազության ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը գնահատելու համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Բյուջեի համամասնությունը,** որը գնահատում է ՀՀ դատախազության բյուջեի միջին հարաբերակցությունը ընդհանուր պետական բյուջեի նկատմամբ:
- **Բյուջեի բավարար լինելը**, որը գնահատում է ՀՀ դատախազության բյուջեի բավարարությունը իր գործառույթներն իրականացնելու համար, սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթները և դրա արդյունքում դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանն ապավինելը:
- **Բյուջեի անվտանգությունը և կայունությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում առաջացող խնդիրները, բյուջեի հատկացման ժամկետները, հաստատված բյուջեում կատարված էական փոփոխությունները, դրանց պատճառները, բյուջետային հատկացումներին կցված պայմանները, ինչպես նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումները:
- **Աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները, վարձատրության և խրախուսումների փոփոխությունները՝ աշխատավարձերի մրցունակությունը մասնավոր հատվածի, ինչպես նաև պետական հատվածի այլ քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի համեմատ:
- **Աշխատակազմի ընտրությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերը, դրանց արժանիքահենությունը (հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա) և թափանցիկությունը:
- **Փորձագիտությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի հետապնդման ոլորտում: Այն հաշվարկվում է ՀՀ դատախազության անձնակազմի կրթական կամ որակավորման մակարդակի և վերապատրաստումների, ինչպես նաև ՀՀ դատախազության անձնակազմի միջին աշխատանքային ստաժի տեղեության հիման վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցիչ կիրառվում է նաև ՀՀ դատախազության՝ կոռուպցիայի հետապնդման գործառույթների համար պատասխանատու աշխատակիցների թափուր հաստիքների քանակը:

- **Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի վերապատրաստման մակարդակը և հիմնված է վերապատրաստման հասանելի դասընթացների քանակի ու տեսակի, ինչպես նաև դրանց մասնակցած աշխատակիցների քանակի ու վերապատրաստմանը հատկացված բյուջեի ցուցանիշների վրա:
- **Անձնակազմի կայունությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության կադրերի հոսունության մակարդակը, Դատախազության և այլ պետական մարմիններ կամ հակառակը անձնակազմի ժամանակավորապես գործուղման, փոխադրման կամ ռոտացիայի պայմանները:

Գծապատկեր 3. ՀՀ դատախազության ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության մակարդակը



Ինչպես երևում է գծապատկերից, ՀՀ դատախազության ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության մակարդակը գնահատվել է 68.7 %՝ առավելագույն 16-ից կազմելով 11 միավոր:

Բյուջեի համամասնությունը (0 միավոր)

ՀՀ դատախազության գործունեության ֆինանսական ապահովվածությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,[45] պետական բյուջեի ծախսային մասում ՀՀ դատախազության ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

[45] «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24.06.1997 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=175826

Տարի	Փաստացի ֆինանսավորում (մլն ՀՀ դրամ)	Կատարման մակարդակ	Տարեկան փոփոխություն	Պետբյուջեում տեսակարար կշիռ
2021	>6,100	99.9%	+13.5%	0.00306%
2022	7,267.9	99.5%	+18.4%	0.00324%
2023	10,125.1	99.5%	+39.3%	0.00397%
2024	10,377.5	99.5%	+0.97%	0.00351%

Այսպիսով, 2021-2024 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: 2023 թ., 2022 թ. համեմատ, ՀՀ դատախազության փաստացի ֆինանսավորումն աճել է 28.2 % (7,267,887.7-ից հասնելով 10,125,032.3 հազ. ՀՀ դրամի): 2024 թ., 2023 թ. համեմատ, ՀՀ դատախազության փաստացի ֆինանսավորումն աճել է ընդամենը 0.97 %-ով՝ հասնելով 10,377,285.8 հազ. ՀՀ դրամի: ՀՀ դատախազությանը հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը համեմատաբար մնացել է անփոփոխ՝ 2021 թ. 0.00306 %-ից 2024 թ. կազմելով պետական բյուջեի ընդհանուր ծախսերի միայն 0.00351 %:[46]

Բյուջեի բավարար լինելը (2 միավոր)

Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների համաձայն՝ 2022–2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազության բյուջետային ծրագրերը հիմնականում կատարվել են բարձր արդյունավետությամբ:[47] 2022 թ. իրականացվել է 3 ծրագիր, որոնցից հիմնականին հատկացվել է 6.5 մլրդ. ՀՀ դրամ՝ ապահովելով 99.4 % կատարողական: Ծախսերի 18.4 % աճը հիմնականում պայմանավորված է քրեական հետապնդման և դատավարական ղեկավարման ծախսերի, ինչպես նաև փորձաքննությունների քանակի և արժեքի ավելացմամբ:

2023 թ. նույնպես իրականացվել է 3 ծրագիր, որոնցից հիմնականին հատկացվել է 9.3 մլրդ. ՀՀ դրամ՝ 99.5 % կատարողականով: Ծախսերի շուրջ 39.3 % աճը պայմանավորված է պետական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացմամբ և ծառայությունների ծավալի ընդլայնմամբ: Փորձաքննության ծառայությունների ծախսերը կազմել են 849.4 մլն. ՀՀ դրամ՝ ապահովելով ամբողջական կատարողական:

2024 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրված միջոցների գերակշիռ մասը՝ 9.5 մլրդ. ՀՀ դրամը, ուղղվել է նույն ծրագրին՝ 99.5 % կատարողականով: Ծրագրի շրջանակում նախաձեռնվել է 39,397 քրեական վարույթ, ավարտվել՝ 38,058-ը, պետական շահերի պաշտպանության արդյունքում վերականգնվել է շուրջ 2.9 մլրդ. ՀՀ դրամ, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ներկայացված հայցագինը կազմել է շուրջ 287.7 մլրդ. ՀՀ դրամ: «Փորձաքննության ծառայություններ» ծրագրի կատարողականը կազմել է 99.9 %:

ՀՀ դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2021-2024 թթ. բյուջետային սահմանափակումներ չեն արձանագրվել, որոնք կհանգեցնեին

[46] ՀՀ Ազգային ժողովի որոշումը «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9804&lang=arm
[47] ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններ, https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

գործառույթների չիրականացման, իսկ 2022-2024 թթ. դոնորային ֆինանսավորում չի տրամադրվել:

Այսպիսով, թեև հատկացված ֆինանսական միջոցները հիմնականում ապահովել են ՀՀ դատախազության ընթացիկ գործունեության իրականացումը, դրանք չեն բավարարել կառույցի կարողությունների զարգացման և առկա ռեսուրսային բացերի հաղթահարման պահանջները, ինչի հետևանքով գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացումը շարունակում է սահմանափակվել:

Բյուջեի անվտանգությունը և կայունությունը (2 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին և ներառվում է բյուջետային հայտում՝ առանձին տողով: Սակայն բյուջետային հայտի վերջնական ներառումը պետական բյուջեի նախագծում կախված է Կառավարության որոշումից, իսկ առարկությունների դեպքում Դատախազության առաջարկները Ազգային ժողով են ներկայացվում Կառավարության դիրքորոշման շրջանակում:

2021-2024 թթ. ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեով ՀՀ դատախազությանը կատարված հատկացումները ցուցաբերել են կայուն աճի միտում: Բոլոր դիտարկվող տարիներին փաստացի ֆինանսավորումը գրեթե ամբողջությամբ համընկել է ԱԺ կողմից հաստատված և ՀՀ կառավարության կողմից ճշտված բյուջետային մեծությունների հետ՝ ապահովելով շուրջ 99-100 % կատարողական:

2021 թ.-ին ՀՀ դատախազության փաստացի ֆինանսավորումը փոքր տարբերությամբ զիջել է ճշտված բյուջեին, սակայն, ընդհանուր առմամբ, ապահովվել է 99.9 % կատարողական: Տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված ծրագրերը, և չօգտագործված էական միջոցներ չեն արձանագրվել:

2022 թ.-ին ՀՀ կառավարությունը ճշտել (ավելացրել) է ԱԺ կողմից հաստատված բյուջեն, ինչի արդյունքում ՀՀ դատախազությանը տրամադրված միջոցները աճել են: Այդուհանդերձ, փաստացի ֆինանսավորումը մնացել է բարձր մակարդակի վրա՝ ապահովելով 99.4 % կատարողական: Միջոցների չօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

2023 թ.-ին ՀՀ կառավարությունը կրկին էականորեն ավելացրել է ՀՀ դատախազությանը հատկացվող բյուջետային միջոցները: Փաստացի ֆինանսավորումը գրեթե ամբողջությամբ իրականացվել է՝ ապահովելով 99.5 % կատարողական: Ճշտված միջոցների չօգտագործման դեպքեր չեն արձանագրվել, իսկ բյուջետային փոփոխությունը (107.4 մլն. ՀՀ դրամ) նպատակաուղղվել է մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը:

2024 թ.-ին ՀՀ դատախազության ֆինանսավորումը պահպանվել է բարձր մակարդակի վրա, իսկ փաստացի կատարողականը կազմել է շուրջ 99.5 %: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թ.-ին, հատկացված և ճշտված միջոցների չօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

Վերը շարադրվածը վկայում է, որ ՀՀ դատախազության դեպքում պետական բյուջեով նախատեսված և ճշտված միջոցները հիմնականում ամբողջությամբ և նպատակային օգտագործվել են, ինչը վկայում է բյուջետային պլանավորման և կատարման հարաբերական արդյունավետության մասին:

ՀՀ դատախազության հավաստմամբ՝ 2021-2024 թթ. տարեկան բյուջետային հայտերի հաստատման ընթացքում խնդիրներ չեն առաջացել, իսկ հատկացված բյուջետային միջոցները տրամադրվել են սահմանված ժամկետներում:

Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազության ֆինանսական ինքնուրույնության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է մնում ՀՀ կառավարության լիազորությունը՝ ԱԺ կողմից հաստատված բյուջետային հատկացումները փոփոխելու կամ վերաբաշխելու՝ առանց վերջինիս համաձայնության:

Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում (2 միավոր)

ՀՀ դատախազության ինստիտուցիոնալ գրավչությունը և մարդկային ռեսուրսների կայունությունը մեծապես պայմանավորված են աշխատակազմի վարձատրության և խրախուսման համակարգով: ՀՀ կառավարության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով հանրային կառավարման և դատաիրավական համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը դիտարկվում է որպես կարևոր նախապայման ոլորտային բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացման համար:[48]

Դատախազության աշխատակիցների վարձատրության և խրախուսման հարցերը կարգավորվում են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում են պաշտոնային դրույքաչափերը, գործակիցները, հավելումները և հավելավճարները:[49] Օրենքի հավելվածներով ամրագրված են ՀՀ դատախազության համակարգում զբաղեցվող պաշտոնների վարձատրության գործակիցները, իսկ հիմնական աշխատավարձը հաշվարկվում է բազային աշխատավարձի և համապատասխան գործակցի արտադրյալով: Դատախազները, բացի հիմնական աշխատավարձից, ունեն հավելումների և հավելավճարների իրավունք, այդ թվում՝ ծառայողական ստաժի, դասային աստիճանի և առանձնակի ռիսկային ու մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնելու համար:

Դատախազին վճարվում է հավելավճար յուրաքանչյուր տարվա ծառայության համար, ինչպես նաև դասային աստիճանի համար, ընդ որում՝ հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 %-ը: Միաժամանակ, բոլոր դատախազներին՝ որպես առանձնակի ռիսկային և բարձր մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց, տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի մինչև 92 %-ի չափով, ինչը չի ենթարկվում նշված սահմանափակմանը:

[48] ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 - Ն որոշում, հավելված, «ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», https://www.gov.am/files/docs/1322.pdf
[49] «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք, Հոդված 14, 12.12.2013 թ., https://www.arlis.am/hy/acts/194990

Բացի այդ, ՀՀ կառավարության որոշմամբ առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների ցանկում ընդգրկված են ՀՀ դատախազության մի շարք առանցքային պաշտոններ, այդ թվում՝ գլխավոր դատախազը, նրա տեղակալները և կոռուպցիոն հանցագործությունների ու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում վերահսկողություն իրականացնող դատախազները:[50] Այդ պաշտոնների համար նախատեսված են հավելումներ՝ հաշվի առնելով կոռուպցիոն բնույթի գործերով վերահսկողության և մեղադրանքի պաշտպանության առանձնահատուկ բարդությունն ու ռիսկայնությունը: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազը ստանում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 100 %-ի չափով, ՀՀ գլխավոր դատախազի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալը՝ 85 %-ի չափով, իսկ ՀՀ գլխավոր դատախազն ու գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկով նախատեսված գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը և մեղադրանքի պաշտպանությունը, ինչպես նաև այդ գործերով պետության շահերի պաշտպանության ոլորտը համակարգող տեղակալները՝ 95 %-ի չափով:

Միաժամանակ, վարձատրության համակարգում առկա է ներքին տարբերակվածություն ՀՀ դատախազության տարբեր պաշտոնների միջև, որը դրսևորվում է գործակիցների և դրույքաչափերի տարբերությամբ, օրինակ, գլխավոր դատախազի տեղակալների, վարչությունների ղեկավարների, Երևան քաղաքի և մարզային դատախազների միջև:

Դատախազների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից: Այսպես, Հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 %-ի չափով: Մասնավոր հատվածի համեմատությամբ՝ դատախազների և ոչ պետական հատվածում իրավաբանների վարձատրության մրցունակությունը սահմանափակ է: ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի 2024 թ. զեկույցի համաձայն՝ ոչ պետական հատվածում իրավաբանների միջին աշխատավարձը կազմում է 434,484 ՀՀ դրամ, ինչը զգալիորեն ցածր է դատախազների աշխատավարձից՝ ներառյալ հավելումները:[51] Այսպիսով, թեև դատախազների վարձատրությունը թվային արտահայտությամբ գերազանցում է մասնավոր հատվածի իրավաբանների միջին աշխատավարձը, այնուամենայնիվ այն չի ձևավորում լիարժեք մրցունակ համակարգ, քանի որ բարձր ցուցանիշը պայմանավորված է հիմնականում հավելումների մեծ կշռով, այլ ոչ թե կայուն և շուկայականորեն համադրելի հիմնական աշխատավարձի դրույքաչափերով:

Հավելումների լայն կիրառումը ՀՀ դատախազության վարձատրության համակարգում խնդրահարույց է մի քանի փոխկապակցված պատճառներով: Նախ, հավելումները ձևավորվել են որպես հիմնական աշխատավարձը շրջանցող մեխանիզմ. թեև օրենքով

[50] ՀՀ կառավարության «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների առանձնահատկություններով պայմանավորված տրվող հավելումների վճարման չափերը, կարգը, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանելու մասին» N 446 - Ն որոշում, 07.04.2022թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/38025/

[51] ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ, Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2024, https://cso.gov.am/static/website/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%202024.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

սահմանված է, որ հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 %-ը, այս սահմանափակումը փաստացի չեզոքացվում է «առանձնակի ռիսկային և բարձր մասնագիտացում պահանջող պաշտոն» հավելումների միջոցով, որոնք հասնում են մինչև 92-100 % և չեն ենթարկվում նույն սահմանափակմանը: Արդյունքում հիմնական աշխատավարձը դադարում է լինել վարձատրության առանցքը, իսկ համակարգը կառուցվում է հավելումների վրա: Բացի այդ, հավելումները նվազեցնում են վարձատրության համակարգի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը:

Այսպիսով, ՀՀ դատախազության աշխատակիցների աշխատավարձերի ծավալը 2021-2024 թթ. ընթացքում էականորեն աճել է՝ 2021 թ. 4.0 մլրդ. ՀՀ դրամից հասնելով 2024 թ. 7.8 մլրդ. ՀՀ դրամի: Միաժամանակ, խրախուսումների ծավալները կտրուկ նվազել են՝ 2021 թ. կազմելով աշխատավարձերի շուրջ 26.8 %-ը, իսկ 2024 թ.՝ ընդամենը 1 %: Այս դինամիկան վկայում է, որ ՀՀ դատախազության անձնակազմի վարձատրության կառուցվածքում խրախուսումների դերը էականորեն նվազել է՝ փոխարինվելով հիմնական աշխատավարձի և հավելումների բարձրացմամբ:

Աշխատակազմի ընտրություն (1 միավոր)

ՀՀ դատախազության մարդկային ռեսուրսներով ապահովվածության համար նշանակալի ազդեցություն ունեն աշխատակազմի ընտրության մեխանիզմները: ՀՀ դատախազության ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում գլխավոր դատախազի կողմից:

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է ՀՀ դատախազության որակավորման հանձնաժողովը, որպես կանոն, տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ բաց մրցույթ կարող է անցկացվել գլխավոր դատախազի հանձնարարությամբ: Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվում է բաց մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:[52]

Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ

[52] ՀՀ գլխավոր դատախազի «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թ. հունվարի 29-ի N 8 և հոկտեմբերի 20-ի N 77 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 43 հրաման, 26.04.2018 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_21_1685023080.pdf
ՀՀ գլխավոր դատախազի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրաման, 23.05.2020 թ.:

տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:[53]

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում որակավորման հանձնաժողովը կազմված է տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական, ինչպես նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի ժամկետի, վայրի, անհրաժեշտ փաստաթղթերի մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և ՀՀ դատախազության կայքում (www.prosecutor.am):

Դատախազի թեկնածությունների համալրման մրցույթը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝

- փաստաթղթերի ուսումնասիրություն
- բարեվարքության ուսումնասիրություն
- հարցազրույց
- արդյունքների ամփոփում

Հայտերի ընդունումից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովի նախագահը թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է ԿԿՀ: Որակավորման հանձնաժողովը ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն), ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին: Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ ԿԿՀ-ի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ դատախազի թեկնածությունների համալրման մրցույթում բարեվարքության ուսումնասիրության փուլը նախորդում է հարցազրույցի

[53] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 42 հրաման, 26.04.2021 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_457_1685023080.pdf

փուլին, ինչը կարող է հանգեցնել գործընթացի կազմակերպման արդյունավետության նվազմանը և ռեսուրսների ոչ նպատակային օգտագործմանը:

Խնդիր է դիտարկվել նաև այն հանգամանքը, որ նախապես հայտ ներկայացրած թեկնածուներից մի մասը հետագայում չի մասնակցում մրցույթի հարցազրույցի փուլին, մինչդեռ նրանց համար արդեն իսկ ծախսվել է զգալի պետական ռեսուրս. ԿԿՀ-ն կազմել ու ներկայացրել է բարեվարքության եզրակացություններ, իսկ որակավորման հանձնաժողովն իրականացրել է հարցազրույցի կազմակերպչական աշխատանքներ:

«Գործնականում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ԿԿՀ-ն իրականացրել է դատախազների թեկնածուների համալրման մրցույթին դիմած բոլոր անձանց բարեվարքության մանրամասն ուսումնասիրություն, սակայն հարցազրույցի փուլում դիմորդները պարզապես չեն ներկայացել: Արդյունքում ԿԿՀ-ն ծանրաբեռնում է իր աշխատակիցներին՝ սահմանված ժամկետներում բարեվարքության ստուգումներ իրականացնելու նպատակով, մինչդեռ որոշ դիմորդներ չեն մասնակցում գործընթացի հաջորդ փուլին: Այս իրավիճակը լուրջ խնդիր է առաջացնում, քանի որ վարչական և մարդկային ռեսուրսները փաստացի անարդյունավետ են օգտագործվում»:

(Փորձագետ)

Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն ՀՀ արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր:[54]

«Խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ մրցույթի բոլոր փուլերը հաջողությամբ հաղթահարած դատախազի թեկնածուի վերջնական ընդգրկումը թեկնածուների ցուցակում իրականացվում է գլխավոր դատախազի կողմից: Այսպիսով, գլխավոր դատախազը փաստացի ունի հայեցողական լիազորություն ցուցակում ընդգրկելու հարցում, ինչի հետևանքով հնարավոր է, որ որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած բարձր որակավորում ունեցող մասնագետը տարբեր պատճառներով չընդգրկվի դատախազների թեկնածությունների ցուցակում: Միաժամանակ, նման որոշումների հիմնավորումները հրապարակային չեն, և դրանց պատճառները չեն դառնում հայտնի, մինչդեռ նման դեպքերը գործնականում հազվադեպ չեն»:

(Փորձագետ)

Այսպես, 2021-2024 թթ. ՀՀ դատախազությունում անցկացվել է 8 բաց մրցույթ համապատասխան պաշտոնների համալրման համար. 2021 թ.՝ 2, 2022 թ.՝ 3, 2023 թ.՝ 1, 2024 թ.՝ 2 մրցույթ: Նշված մրցույթներում հաղթող է ճանաչվել ընդհանուր 117 անձ, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոնների:

2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության

[54] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,Հոդված 38:

վարչությունում ընդհանուր 13 հաստիքից առկա էր 4 թափուր հաստիք: 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նույն վարչությունում թափուր հաստիքների քանակը փոփոխության չի ենթարկվել, իսկ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 9 հաստիքներից թափուր էին 2-ը: 2023 թ. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում առկա էր 2 թափուր հաստիք, ինչպես նաև 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում թափուր հաստիքների թիվը կազմում էր 5, իսկ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում՝ 2:

Այսպիսով, 2024 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 61.5 %, իսկ ՀՀ գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի համալրման աստիճանը՝ 77.7 %:[55]

Նշենք նաև, որ ՀՀ գլխավոր դատախազի 2024 թ. դեկտեմբերի 24-ի N 103-Ի հրամանով ՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի հաստիքների թիվն ավելացել է եւս 4-ով՝ ընդհանուր կազմելով 17 հաստիք:[56]

Այսպիսով, 2024 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության թափուր հաստիքների թիվը զգալի է, ինչը վկայում է, որ անձնակազմի համալրման գործընթացը դեռևս լիարժեք ապահովված չէ: Նշված վարչության գրեթե 40 % հաստիքները համալրված չեն: Ի համեմատություն, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության համալրման աստիճանը բարձր է՝ 77.7 %, սակայն նույնպես առկա է լրացուցիչ աշխատակիցների անհրաժեշտություն, քանի որ թափուր հաստիքների առկայությունը կարող է նվազեցնել վարչությունների արդյունավետությունը, ավելացնել աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և թերացումներ առաջացնել գործառույթների իրականացման մեջ:

2021-2024 թթ. ընթացքում վերոնշյալ վարչությունների անձնակազմի թափուր հաստիքների համալրման գործընթացի առնչությամբ եղել է 21 բողոքարկում, որից 15-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթների գործընթացի, իսկ 6-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ

[55] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության հաստիքացուցակը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրաման, 27.06.2022 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_695_1685023080.pdf

[56] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազի 2022 թ. հունիսի 27-ի N 47 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 103-L հրաման, 24.12.2024 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_3235_3624696867.pdf

հսկողության վարչության անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթների գործընթացի առնչությամբ:

Փորձագիտությունը (2 միավոր)

ՀՀ գլխավոր դատախազության՝ Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների բոլոր դատախազները պարտավոր են ունենալ իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված իրավաբանական կրթություն:[57] Միաժամանակ, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ՀՀ արդարադատության ակադեմիայում անցնում են ուսումնառության ծրագիր՝ այնուհետև նշանակվում դատախազի պաշտոնում:

Բոլոր դատախազները երեք տարին մեկ անգամ պարտավոր են անցնել ատեստավորում: Ատեստավորումն անցկացնում է որակավորման հանձնաժողովը՝ զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով: Օրենքով սահմանված է նաև արտահերթ ատեստավորման անցկացման հնարավորություն: Այն կարող է անցկացվել դատախազի պաշտոն զբաղեցնելուց, հերթական կամ արտահերթ ատեստավորումից առնվազն վեց ամիս հետո: Դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով՝ իր պատճառաբանված որոշմամբ կամ դատախազի ցանկությամբ: Ընդ որում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն չունեն ներգրավվելու ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներում ո՛չ որպես դիտորդ, ո՛չ որպես հանձնաժողովի անդամ:

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը չի տրամադրել տեղեկություն ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների՝ մասնագիտական կրթություն և/կամ որակավորման աստիճան (մասնագիտական որակավորում, որակավորման հավաստագրերի առկայություն) ունեցող աշխատակիցների քանակի վերաբերյալ:

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2023 թ. անցկացված բաց մրցույթի դիտարկումների արդյունքում՝ մասնագիտացված հասարակական կազմակերպությունը մտահոգիչ է գնահատել դատախազ դառնալու համար դիմած թեկնածուների մասնագիտական և անձնային պատրաստվածության մակարդակը: Մասնավորապես, արձանագրվել են թերություններ թեկնածուների վերլուծական մտածողության, խոսքի և մտքի հստակ ու կառուցված արտահայտման, ինչպես նաև հիմնավորված փաստարկման կարողությունների ոլորտում: Բացի այդ, թեկնածուների զգալի մասը, լինելով համեմատաբար երիտասարդ տարիքի, կամ առհասարակ չի ունեցել աշխատանքային փորձ կամ ունեցել է կարճատև կամ ոչ մասնագիտական փորձառություն: Այս հանգամանքների պայմաններում նրանց մասնագիտական պատրաստվածությունը

[57] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 51:

դատախազի պաշտոնում արդյունավետ գործունեություն ծավալելու տեսանկյունից հաճախ եղել է անբավարար:[58]

«Հաճախ մրցույթին դիմում են անգամ մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ, որոնք քննությունը հանձնում են հիմնականում անգիր պատրաստվածությամբ և կարճ ուսումնառությունից հետո նշանակվում են դատախազ՝ առանց բավարար գործնական փորձի: Արդյունքում, դատարանում մեղադրանք պաշտպանելիս ի հայտ են գալիս մասնագիտական հմտությունների և փորձի պակասից բխող խնդիրներ, ինչի հետևանքով որոշ կարևոր գործեր չեն հասնում իրենց տրամաբանական ավարտին»:

(Փորձագետ)

Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը (1 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, պարտավոր են երկու տարին մեկ անցնել վերապատրաստում Արդարադատության ակադեմիայում:[59]

2021-2024 թթ. ՀՀ դատախազության անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը բարելավելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ծրագրերի շրջանակներում՝ ըստ 2023-2026 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և 2024 թվականի միջոցառումների մոնիտորինգի և գնահատման տվյալների:[60] Վերապատրաստումները կազմակերպվել են Արդարադատության ակադեմիայի և միջազգային կառույցների աջակցությամբ՝ հիմք ընդունելով միջազգային չափանիշներն ու շահառուների կարիքները, սակայն ծրագրերը չեն եղել լիովին պլանավորված կամ բոլոր բացահայտված կարիքների վրա հիմնված: Վերապատրաստման դասընթացներն ընդգրկել են կոռուպցիոն հանցագործությունների, հանրային շահերի դեմ ուղղված հանցագործությունների, կոռուպցիայի կանխարգելման, ներդրողների իրավունքների պաշտպանության և այլ համապատասխան թեմաներ:

Այսպես, 2024 թվականին 62 դատախազ մասնակցել է «ՀՀ-ում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության միջոցառումներ» դասընթացին, 15 դատախազ՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն» դասընթացին, իսկ 41 դատախազ՝ «Հանրային շահերի դեմ հանցագործությունների քննության առանձնահատկություններ» դասընթացին: Բացի այդ, դատախազները մասնակցել են միջազգային դասընթացների, այդ թվում՝ ԱՄՆ դեսպանության և Միջազգային իրավապահ ակադեմիայի (ILEA) դասընթացներին Բուդապեշտում, Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների կրթություն իրավական մասնագետների համար» (HELP) առցանց դասընթացներին, Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների միջազգային ասոցիացիայի (IAACA) վեբինար-կոնֆերանսին Հոնկոնգում և Բալկանյան ակտիվների կառավարման

[58] Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Ամփոփում. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2023 թ. անցկացված բաց մրցույթի դիտարկում, էջ 13, 2023, https://prwb.am/2023/05/05/amphvophvo%d6%82m%e2%80%a4-dataxazneri-theknatcuthyunneri-cucakeh-hamalrelu-hamar-2023th-anckacvatc-bac-mrcuythi-ditarkum/ (դիտված՝ 05.05.2026 թ.):
[59] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 51:
[60] ՀՀ արդարադատության նախարարություն, «Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի եվ գնահատման 2024 թվականի տարեկան զեկույց», https://moj.am/storage/uploads/Annual_Report_2024.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

միջգերատեսչական ցանցի (BAMIN) ու Եվրոպայի խորհրդի մասնագիտական դասընթացներին:[61]

Ներպետական վերապատրաստումներին մասնակցության թվերը ցույց են տալիս անձնակազմի ընդգրկվածության փոփոխություն. 2021 թվականին մասնակցել է 167, 2022-ին՝ 116, 2023-ին՝ 261, իսկ 2024-ին՝ 140 դատախազ:

Բյուջեի առումով, 2021-2024 թվականներին «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» միջոցառմանը հատկացվել է ընդհանուր բյուջեի 1 %-ից պակաս, ինչը վկայում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել: Փաստացի ծախսերը կազմել են 2022 թ.՝ 13,381.1 մլն. ՀՀ դրամ, 2023 թ.՝ 6,660 մլն. ՀՀ դրամ, 2024 թ.՝ 5,880 մլն. ՀՀ դրամ:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային տվյալների համակարգի տվյալների՝ 2021 թ. վերապատրաստումներին մասնակցել է ՀՀ դատախազության անձնակազմի 57 քաղաքացիական ծառայող, որից 4-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ, 2022 թ.՝ 75 քաղաքացիական ծառայող, որից 8-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ, 2023 թ.՝ 88 քաղաքացիական ծառայող, որից 4-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ: 2024 թ. կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է 23 քաղաքացիական ծառայող, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումներին՝ 73 քաղաքացիական ծառայող:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ թեև կազմակերպված վերապատրաստումները, հավանաբար, նպաստել են անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը, սակայն դրանք չեն եղել համակարգված և լիովին պլանավորված: Բյուջետային չնչին հատկացումը և ուսումնական հատուկ պլանների բացակայությունը սահմանափակում են արդյունավետությունն ու շարունակականությունն իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրների լուծման գործում: Միջազգային վերապատրաստումներին մասնակցությունը մեծացրել է անձնակազմի փորձն ու գիտելիքները, սակայն այն ակնհայտորեն սահմանափակ է և չի կարող ծածկել բոլոր կարիքները:

Անձնակազմի կայունությունը (1 միավոր)

2021-2024 թվականներին ՀՀ դատախազությունում շարունակվել են անձնակազմի համալրման գործընթացները: Գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը տարեցտարի տարբերվել է՝ 2022 թ. դեկտեմբերի դրությամբ կազմելով 69.2 %, 2023 թ. դեկտեմբերի դրությամբ՝ 84.6 %, իսկ 2024 թ. դեկտեմբերի դրությամբ՝ 61.5 %:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 2022-2024 թթ. թափուր հաստիքների թիվը շարունակաբար 2 է մնացել, իսկ անձնակազմի համալրման աստիճանը՝ 77.7 %: Ընդհանուր առմամբ, 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 31 թափուր հաստիք, 2023 թ.

[61] Նույն տեղում:

դեկտեմբերի 31-ին՝ 56, իսկ 2024 թ. դեկտեմբերի 31-ին՝ 60, որոնցից որոշ մասով ընդգրկված են հիշյալ երկու վարչությունները:

Հոսունության առումով, 2022 թ. Գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում արձանագրվել է 0 %, 2023 թ.՝ 9.9 %, իսկ 2024 թ.՝ 16.5 %, ինչը ցույց է տալիս կադրերի հոսունության որոշակի աճ: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 2022-2024 թթ. հոսունությունը կազմել է 0 %:

«Հոսունության առաջնային պատճառն աշխատակիցների ծանրաբեռնվածությունն է, որը սահմանափակում է նրանց կարողությունները արդյունավետ կերպով իրականացնելու պրակտիկ գործունեությունը: Հաջորդը՝ պրակտիկ աշխատանքի որոշ առանցքային հարցերում մասնագիտական անհամաձայնությունները, որոնք ստեղծում են գործառնական լարվածություն և դժվարացնում թիմային աշխատանքը: Պատճառների մեջ մտնում են նաև առաջխաղացման և կարգացման հնարավորությունների սահմանափակությունը, ինչպես նաև ներդրված փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչը ազդում է մասնագիտական հետաքրքրության և մոտիվացիայի վրա: Վերջապես, առկա է պետական ծառայությունից հոգնածության գործոնը, որը համադրաբար բերում է աշխատակիցների շարժունակության և հաստատության ներսում շարունակականության նվազման»:

(Փորձագետ)

Ընդհանուր առմամբ, 2021-2024 թթ. վիճակագրության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին՝ արձանագրելով կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ՝ բարձր աշխատավարձերի ու հավելավճարների պայմաններում:

Առաջարկություններ

1. Մեծացնել ՀՀ դատախազության բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
2. ՀՀ դատախազության ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից ՀՀ դատախազության ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով ՀՀ դատախազության համաձայնությունը:
3. Վերանայել և բարձրացնել դատախազների հիմնական աշխատավարձի դրույքաչափերը, ինչը հնարավորություն կտա ձևավորել պարզ, թափանցիկ և կայուն վարձատրության համակարգ՝ ապահովելով, որ եկամտի առանցքը հանդիսանա հիմնական աշխատավարձը, իսկ հավելումները ունենան բացառիկ և հիմնավորված բնույթ՝ առանց խաթարելու համակարգի ամբողջականությունն ու ինստիտուցիոնալ անկախությունը:
4. Վերանայել խրախուսման մեխանիզմները՝ հիմնվելով կատարողականի, մասնագիտացման և ծանրաբեռնվածության գործոնների վրա:
5. Վերանայել դատախազների ընտրության և նշանակման, առաջխաղացման համար անցկացվող փակ մրցույթների նպատակահարմարությունը՝ սահմանելով օբյեկտիվ և արժանիքահեն չափանիշներ դատախազների առաջխաղացման համար: Օրենքով

սահմանել թափանցիկության ապահովման հստակ մեխանիզմներ՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որակավորման հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ մասնակցելու, ինչպես նաև սահմանված կարգով հանձնաժողովի կազմում անդամ ներգրավվելու հնարավորությունը:

6. Վերանայել դատախազների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների փուլերը՝ նախատեսելով նաև գրավոր փուլ: Սահմանել, որ ԿԿՀ-ի կողմից դատախազների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունը իրականացվում է միայն այն թեկնածուների նկատմամբ, ովքեր հաղթահարել են մրցույթի գրավոր փուլը և թույլատրվել են մասնակցելու հարցազրույցի փուլին:
7. Վերանայել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանցից պահանջվող փաստաթղթերի շրջանակը և սահմանել նաև հայտին կից պետական տուրքի նվազագույն չափով վճարման մասին ապացույց ներկայացնելու պահանջ՝ ապահովելու հայտ ներկայացնողների լիարժեք մասնակցությունը մրցույթի բոլոր փուլերին:
8. Սահմանել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց համար առնվազն երեք տարվա իրավաբանի աշխատանքային փորձ:
9. Սահմանել կարգավորում, ըստ որի որակավորման հանձնաժողովի կողմից դատախազների թեկնածուների համալրման մրցույթի արդյունքների հաստատումից հետո թեկնածուների ցուցակից որևէ մեկի բացառման պատճառները լինեն հրապարակային, ինչը կազդի գլխավոր դատախազի հայեցողական որոշումների հաշվետվողականության վրա:
10. Կազմակերպել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումների դատախազների կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
11. Արդարադատության ակադեմիայում և Դատախազությունում պետք է տարեկան մեկ անգամ իրականացնել կարիքների գնահատում՝ գնահատելով ակադեմիայի կրթության որակը և արդյունավետությունը, միաժամանակ ներգրավելով արտաքին ռեսուրսներ օբյեկտիվության և մասնագիտական գնահատման ապահովման նպատակով:
12. Ուսումնասիրել ՀՀ դատախազության անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:

1.3. ՀՀ դատախազության ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը

ՀՀ դատախազության ներքին բարեվարքության և հաշվետվողականության չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Տարեկան հաշվետվությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատում է նաև ՀՀ դատախազության ամենամյա հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունների ամբողջականությունը և հաշվետվության հասանելիությունը հանրությանը:
- **Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին**, որը գնահատում է ՀՀ դատախազության թափանցիկությունը հանրության հարցումներին արձագանքելու տեսանկյունից:
- **Արտաքին վերահսկողության մեխանիզմները**, որը գնահատում է ՀՀ դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ դատախազության գործունեությունն անմիջականորեն վերահսկող կառույցին: Բացի այդ, դիտարկվում է վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների առկայությունը՝ կանոնավոր հաշվետվությունների ներկայացումը խորհրդարանին, արտաքին աուդիտի անցկացումը և ոլորտային վերահսկողության այլ մեխանիզմները:
- **Ներքին վերահսկողության մեխանիզմները**, որը գնահատում է ՀՀ դատախազության ներքին վերահսկողության գործընթացները՝ ներառյալ ՀՀ դատախազության՝ որպես կազմակերպության, «կառավարման ծրագրի (կորպորատիվ պլան)», «մոնիտորինգի և գնահատման շրջանակի» և «կատարողականի գնահատման մեխանիզմների» առկայությունը:
- **Գործընթացների պատշաճ պահպանումը**, որը գնահատում է հանրության վստահությունը ՀՀ դատախազության կողմից իր լիազորություններն օգտագործելիս և քրեական վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի կիրառման ու պահպանման գործում պատշաճությունը, անկողմնակալությունը և արդարացի վերաբերմունքը:
- **Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը**, որը գնահատում է ազդարարողների, հաղորդում ներկայացնողների վստահությունը ՀՀ դատախազության գործընթացների հանդեպ:
- **Անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը**, որը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի կիրառման արդյունավետությունը:
- **Բողոքների արդյունքները**, որը գնահատում է ՀՀ դատախազության և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները, Դատախազության և նրա անձնակազմի սխալ վարքագծի համար ներկայացված հիմնավոր բողոքների քանակը, դրա արդյունքներով նշանակված պատասխանատվության միջոցները:
- **Բարեվարքության ներքին մեխանիզմները**, որը գնահատում է ՀՀ դատախազության և նրա անձնակազմի վարքագծի կանոնների ամբողջականությունը (գույքի և ակտիվների հայտարարագրում, շահերի բախման կանոններ, նվերների և հյուրասիրության ընդունման, հետաշխատանքային և այլ սահմանափակումներ,

անհամատեղելիության պահանջներ) և դրանց խախտումների վերացմանն ուղղված, գործնականում կիրառելի ընթացակարգերն ու ներքին բողոքների քննությունը:

Գծապատկեր 4. ՀՀ դատախազության հաշվետվողականության և ներքին բարեվարքության մակարդակը

Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, ՀՀ դատախազության ներքին բարեվարքության և հաշվետվողականության մակարդակը գնահատվել է 44.4 %՝ ապահովելով առավելագույն 18-ից 8 միավոր:

Տարեկան հաշվետվությունը (1 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով սահմանված է դատախազության գործունեության հրապարակայնության սկզբունքը: Այսպես, ՀՀ դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը:[62]

Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը Ազգային ժողովին ներկայացնում է հաղորդում Դատախազության նախորդ տարվա գործունեության մասին, որը պարունակում է վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ:[63] Ազգային ժողովում հաղորդումը քննարկվում է սահմանված կանոնակարգով՝ հիմնական զեկուցմամբ, հարց ու պատասխանի փուլով, մտքերի փոխանակմամբ և եզրափակիչ ելույթներով:[64] Հաղորդումը ներկայացվելուց հետո հինգ

[62] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 5:
[63] Նույն տեղում:
[64] «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ., հոդված 126:

աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է Դատախազության պաշտոնական կայքում:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունը տարեկան հրապարակում է նաև հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումներ, ներառյալ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասին առանձին հաշվետվություններ, որոնք կազմվում են նախաքննության մարմինների կողմից տրամադրված տվյալների հիման վրա և գլխավոր դատախազի հաստատած մեթոդաբանությամբ: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված է, որ համապատասխան վարչությունը նույնպես տարեկան հաշվետվություն է հրապարակում բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների մասին՝ պահպանելով գաղտնիության պահանջները:[65]

ՀՀ գլխավոր դատախազության կայքում առկա են 2008-2024 թթ. Ազգային ժողովին ներկայացված տարեկան հաղորդումները,[66] 2017-2024 թթ. հաղորդումները հանցագործությունների քննության վերաբերյալ,[67] 2017-2024 թթ. հաղորդումները կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ,[68] ինչպես նաև 2020-2024 թթ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաշվետվությունները:[69] Սակայն կիսամյակային հաշվետվություններ ՀՀ դատախազության կայքում չեն հրապարակվում, և օրենքով դրանց ներկայացման պարտավորություն նույնպես չկա:

ՀՀ դատախազության պաշտոնական www.prosecutor.am կայքում առկա չէ որևէ իրավակարգավորում, որը կսահմաներ տարեկան հաղորդման բովանդակությունը և ներկայացման պահանջները, տեղեկատվության կառուցվածքը, հաղորդման մեջ ներառված հարցերի շրջանակը: Տեղեկություն առկա է «ՀՀ դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու մասին» գլխավոր դատախազի 2023 թ. հունվարի 11-ի հրամանում,[70] սակայն դրա հավելվածները բացակայում են պաշտոնական կայքում:

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից նշել են, որ ըստ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների՝ մինչդատական վարույթում առկա է հետևյալ տեղեկությունը՝

- ստացված հաղորդումների թիվը,
- նախաձեռնված վարույթների թիվը (այդ թվում՝ դատախազի հանձնարարությամբ),
- քրեական վարույթ հարուցելուց հրաժարվելու դեպքերի թիվը,
- բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վարույթի փոխակերպված քրեական վարույթների թիվը,

[65] «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020 թ., հոդված 33:
[66] Հաղորդումներ Ազգայի ժողովին, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report
[67] Հաղորդումներ կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report1
[68] Հաղորդումներ հանցագործությունների քննության վերաբերյալ, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report3
[69] Հաշվետվություններ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report2
[70] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. հուլիսի 8-ի N 54 հրամանում լրացումներ կատարելու մասին», N 1-Լ հրաման, 11.01.2023 թ., https://www.prosecutor.am/storage/orders/orders_2705_8630604601.pdf

- նախորդ հաշվետու ժամանակաշրջանում անավարտ մնացած և տվյալ հաշվետու ժամանակաշրջան փոխանցված վարույթների թիվը,
- համագործակցության վարույթների թիվը,
- քրեական հետապնդում հարուցված անձանց թիվը (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց թիվը),
- հեռակա վարույթների թիվը,
- կարճված քրեական վարույթների թիվը (այդ թվում՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդում չհարուցված կամ դադարեցված),
- դատարան հանձնված քրեական վարույթների և մեղադրյալների (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց) թիվը,
- բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարան հանձնված վարույթների թիվը,
- քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու ժամկետների որոշումների թիվը,
- այլ ստորաբաժանում կամ մարմին ուղարկված քրեական վարույթների թիվը,
- միացված վարույթների թիվը,
- կալանք խափանման միջոցի փոփոխման կամ վերացման թիվը,
- անավարտ մնացած վարույթների թիվը,
- ինչպես նաև տվյալ վարույթներով կալանքի տակ գտնվող մեղադրյալների թիվը:

Ըստ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների՝ դատաքննության փուլում առկա է հետևյալ տեղեկությունը՝

- քննված և ավարտված քրեական գործերի և մեղադրյալների (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց) թվերը,
- կիրառված համաձայնության և արագացված վարույթների գործերի և մեղադրյալների թվերը,
- մեղադրական դատավճիռ կայացված քրեական գործերի և մեղադրյալների թվերը,
- մեղադրյալների թվերը՝ ըստ պատժատեսակների (հիմնական, լրացուցիչ, պայմանականորեն չի կիրառվել, կիրառվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, պատժի կատարումը հետաձգվել է, պատժից ազատվել են վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, համաներման հիմքով պատժից ազատվել է կամ պատիժը կրճատվել է),
- կիրառված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներով գործերի և մեղադրյալների թվերը,
- կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներով գործերի և մեղադրյալների թվերը:

Միևնույն ժամանակ, առկա տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք համապարփակ չեն և չեն համապատասխանում ՏՀԶԿ-ի կողմից սահմանված կոռուպցիոն հանցանքների վիճակագրությանը վերաբերող չափանիշներին: Մասնավորապես, դրանցում առկա չեն՝

- քրեական վարույթների կարճման հիմքերը,
- քրեական հետապնդումները դադարեցնելու վերաբերյալ տվյալները, հիմքերը,
- բյուջեի կատարողականի հաշվետվությունները,

- բարձրաստիճան պաշտոնատար անձանց և/կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տարանջատված տեղեկությունները և այլն:[71]

ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի վերաբերյալ 5-րդ փուլի առաջընթացի գնահատման զեկույցում կրկին արձանագրվել է, որ Գլխավոր դատախազության հաշվետվություններում ներկայացվում են կիրառված պատժատեսակների և դատապարտված պաշտոնատար անձանց վերաբերյալ տվյալներ, սակայն առանց իրավախախտումների տեսակների տարանջատման: Միաժամանակ, առանձին ներկայացվում են ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական բռնագանձման արդյունքները՝ առանց ընդգրկելու քրեական վարույթներով կիրառված բռնագանձումը:[72]

Չափորոշիչ 9.1.8. Կոռուպցիոն իրավախախտումների տեսակներով տարանջատված կիրառման (enforcement) վիճակագրությունը տարեկան հրապարակվում է առցանց՝ ներառելով հետևյալ տեղեկությունը.		
Տարր	**Համապատասխանություն**	
	սկզբնական	**առաջընթաց**
Ա. Բացված գործերի քանակ	✓	✓
Բ. Դատարան ուղարկված գործերի քանակ	✓	✓
Գ. Վճռով ավարտված գործերի քանակ (դատապարտված անձինք)	✓	✓
Դ. Կիրառված պատժատեսակները	✓	✗
Ե. Կիրառված բռնագանձման միջոցները	✗	✗
Զ. Պատասխանատվության ենթարկված պաշտոնատար անձանց տեսակներն ու մակարդակները	✓	✗

Ինչպես երևում է աղյուսակից, ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի վերաբերյալ 5-րդ փուլի առաջընթացի գնահատման զեկույցում արձանագրվել է հետընթաց: Այսպես, վերոնշյալ տվյալների անբավարար լինելը թույլ չի տալիս վերլուծելու մի շարք ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ առկա իրավիճակը, ստանալու ամբողջական պատկեր գործի քննության ողջ շղթայի վերաբերյալ և այլն: Միևնույն ժամանակ, հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների շրջանակում կոռուպցիոն վիճակագրական առանձին տվյալների ինքնին բացակայությունը հանգեցնում է պարտավորությունը՝ տարեցտարի որպես չկատարված գնահատվելուն:

[71] Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2024 թ. հաղորդում, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[72] OECD (2025), Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Follow-Up Report: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/3d273009-en (դիտված՝ 05.05.2026 թ.):

Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության կողմից հարցումներին (0 միավոր)

ՀՀ դատախազության վրա տարածվում են տեղեկատվության ազատությունը կարգավորող ՀՀ օրենսդրության դրույթները: Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու, ինչպես նաև առանց միջամտության տեղեկություն որոնելու, ստանալու և տարածելու իրավունք: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություն տնօրինողին և ստանալու իր փնտրած տեղեկությունը:

Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, մասնավորապես՝ եթե տեղեկությունը պարունակում է պետական, բանկային, առևտրային կամ ծառայողական գաղտնիք, խախտում է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ներառում է քրեական վարույթի հրապարակման ոչ ենթակա տվյալներ, բացահայտում է մասնագիտական գաղտնիք կամ խախտում է հեղինակային և հարակից իրավունքները:[73]

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը հայտնել է, որ հանրության հարցումների քանակը 2021-2024 թթ. ընթացքում զգալիորեն աճել է (312-ից մինչև 843), և անարձագանք թողնված հարցումներ չեն արձանագրվել: Խնդրահարույց կարող է լինել նաև արձագանքման որակը: Մասնավորապես, ԹԻՀԿ՝ նշված հարցմանն արձագանքելիս ՀՀ դատախազությունից պահանջված տեղեկությունների զգալի մասը մնացել է անպատասխան:

«Վիճակագրության վարման ոլորտում խնդիրն այն է, որ հստակ կարգավորող ակտ, որը սահմաներ տվյալների հավաքագրման և մշակման ընթացակարգը, առկա չէր: Կոնկրետ վարչության աջակցող ստորաբաժանման աշխատակիցը վարում էր առավելագույնի հասցված և առանցքային տվյալների վիճակագրություն Excel ֆայլերում, սակայն եթե առաջանում էր նոր հարց, որի վերաբերյալ տվյալներ չկային, դրանք հավաքվում էին վրոյից»:

(Փորձագետ)

Ընդհանուր առմամբ, հանրության հետ հաղորդակցության և տեղեկատվության տրամադրման գործող մեխանիզմները չեն ապահովում բավարար թափանցիկություն և վստահություն:

«Նշվածը կարող է պայմանավորված լինել համապատասխան աջակցող ստորաբաժանումների կադրային սղությամբ, ինչպես նաև տեղեկությունների հավաքագրման և պահպանման կայացած մեխանիզմների բացակայությամբ»:

(Փորձագետ)

[73] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003 թ., հոդված 8, https://www.arlis.am/hy/acts/175858

Արտաքին վերահսկողության մեխանիզմները (1 միավոր)

ՀՀ դատախազությունը հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին, որի գործունեությունը նախատեսված է Սահմանադրության 176-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, իսկ դրա կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:[74]

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված է դատախազության տարեկան գործունեության հաղորդումների բանավոր ներկայացումը Ազգային ժողովին: Միևնույն ժամանակ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով Ազգային ժողովի կողմից Դատախազության գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ օրենսդրական նախաձեռնությունների կամ խորհրդարանական լսումների շրջանակում քննարկումների:

Դատախազության գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացվել նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից՝ հանրային ֆինանսների օգտագործման օրինականության և արդյունավետության գնահատման շրջանակում: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություններ իրականացնում է իր կողմից հաստատվող տարեկան գործունեության ծրագրերի համաձայն: Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրերի կազմման համար կիրառվող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության համաձայն՝ հնարավոր էր ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ հաշվեքննություն իրականացնել, քանի որ 2021-2023 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը գերազանցել է 5 միլիարդ ՀՀ դրամը, ինչը մեթոդաբանությամբ դասվում է միջին ռիսկայնության չափանիշի, իսկ 2024 թ. այն գերազանցել է 10 միլիարդ ՀՀ դրամը՝ համարվելով բարձր ռիսկայնության ցուցանիշ:[75] Սակայն Հաշվեքննիչ պալատի 2021-2024 թթ. տարեկան ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատախազության գործունեության հաշվեքննություն այդ տարիներին նախատեսված չի եղել և չի իրականացվել:[76]

Ընդհանուր գնահատմամբ՝ ՀՀ դատախազության արտաքին վերահսկողության մեխանիզմները թերի են: Բացակայում են անկախ վերահսկողական հանձնաժողովները, հանրության մասնակցության մեխանիզմները: Գործող արտաքին վերահսկողության եղանակները հիմնականում ձևական են և չեն ապահովում ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ իրական, բազմաշերտ և հանրային վստահություն ամրապնդող վերահսկողություն:

Ներքին վերահսկողության մեխանիզմները (1 միավոր)

ՀՀ դատախազության ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են Դատախազության կանոնակարգով, որի համաձայն դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները՝ ստորաբաժանումների միջոցով իրականացվող ուսումնասիրությունների և ստուգումների ձևով: Ստուգումները կատարվում են՝

[74] ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով), https://www.arlis.am/hy/acts/143723
[75] Հաշվեքննիչ պալատի 2018 թ. նոյեմբերի 22-ի «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 16/4 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 28/21 որոշում, 24.12.2019 թ., https://armsai.am//files/decrees/2019/voroshum28.21.pdf
[76] ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրեր, http://armsai.am/hy/annual-program

հաշվետվությունների, աշխատանքային ծրագրերի, հանձնարարությունների կամ այլ անհրաժեշտությունից ելնելով և իրականացվում են հատուկ կարգադրությամբ՝ սահմանված նպատակով և ժամկետներով: Վերահսկողությունն ապահովվում է նաև հսկողական քարտերի միջոցով:[77]

Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազության կայքում բացակայում են ռազմավարական պլանավորման փաստաթղթեր և ներքին կարգապահական կանոնների հաստատման վերաբերյալ հրապարակային տվյալներ: ՀՀ դատախազությունում գործող ներքին կարգապահական կանոնները հաստատվել են ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության և ՀՀ դատախազության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2012 թվականի մարտի 2-ի N 5 հրամանով: Թեպետ դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները նույնպես սահմանված են գլխավոր դատախազի հրամանով,[78] դրանք չեն փոխարինում ներքին կառավարման համապարփակ համակարգին:

Դատախազության կանոնադրությամբ նախատեսված է ներքին աուդիտի բաժնի առկայությունը, սակայն դրա գործառույթները կանոնադրությամբ սահմանված չեն:[79] Չնայած 2024 թվականին հաստատվել է ներքին աուդիտի կոմիտեի կազմը,[80] ՀՀ դատախազության կայքում բացակայում են տեղեկություններ 2021-2024 թվականներին իրականացված ներքին աուդիտների և դրանց գնահատման հաշվետվությունների մասին: Սա համընկնում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ղեկավարման և կառավարման բարելավմանը» (ՍԻԳՄԱ) նախաձեռնության կողմից «Հայաստանի հանրային կառավարման ելակետային իրավիճակի գնահատման» 2025 թ. զեկույցի գնահատման եզրակացության հետ, ըստ որի՝ Հայաստանի հանրային կառավարման համակարգում, մասնավորապես՝ հանրային ֆինանսական հսկողության ոլորտում, ներքին աուդիտն օրենսդրորեն կանոնակարգված է, սակայն գործընթացների որակի ապահովում, հաշվետվողականություն և անկախ գնահատումներ առկա չեն, ինչը սահմանափակում է ներքին աուդիտի ազդեցությունն ու տեսանելիությունը:[81]

ԹԻՀԿ հարցման արդյունքներով ՀՀ դատախազությունը չի տրամադրել տվյալներ ռազմավարական ծրագրի, ներքին կարգապահական կանոնների, ներքին աուդիտի մեխանիզմների և հանրային ընկալման տվյալների օգտագործման վերաբերյալ, ինչը վկայում է ներքին վերահսկողության համակարգի բացակայության, թերացման և/կամ դրա թափանցիկության սահմանափակ մակարդակի մասին:

---

[77] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնակարգը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի N 59 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 72 հրաման, 18.12.2019 թ., https://www.prosecutor.am/page/40

[78] ՀՀ գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրաման, հավելված «Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները», https://www.prosecutor.am/storage/orders/orders_46_1685023080.pdf

[79] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության ներքին աուդիտի կոմիտեի կազմը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թ. հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրաման, 24.09.2019 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf

[80] ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2023 թ. հոկտեմբերի 9-ի N 80-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 78-Լ հրաման, 16.10.2024 թ. https://www.prosecutor.am/storage/orders/orders_3349_4479258664.pdf

[81] ՍԻԳՄԱ նախաձեռնություն, «Հայաստանի հանրային կառավարման ելակետային իրավիճակի գնահատման» զեկույց, 2025 թ., https://www.sigmaweb.org/content/dam/sigma/en/publications/reports/2025/12/public-administration-in-armenia-2025_5c12af02/f996600c-en.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

Գործընթացների պատշաճ պահպանումը (0 միավոր)

2022-2024 թթ. տարբեր հարցումների համադրությունը վկայում է հակակոռուպցիոն ոլորտում հանրային իրազեկվածության և վստահության խնդիրների մասին: Այսպես, 2022 թ.-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) աջակցությամբ իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022» զեկույցի տվյալները վկայում են հանրության հակակոռուպցիոն ոլորտի պետական դերակատարների վերաբերյալ չափազանց ցածր իրազեկվածության մասին: Հարցվածների 44.1 %-ը նշել է, որ ընդհանրապես չգիտի հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող որևէ պետական մարմին կամ հասարակական կազմակերպություն, ևս 20.7 %-ը դժվարացել է պատասխանել, իսկ 0.3 %-ը հրաժարվել է պատասխանել: Ընդհանուր առմամբ՝ հարցվածների շուրջ 65.1 %-ը չունի հստակ պատկերացում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ դաշտի մասին:[82]

Ըստ նշված ուսումնասիրության՝ Դատախազության վերաբերյալ իրազեկվածությունը հատկապես ցածր է. հարցվածների ընդամենը 4.7 %-ն է նշել, որ գիտի Դատախազության հակակոռուպցիոն գործունեության մասին: Միևնույն ժամանակ, կոռումպացվածության վերաբերյալ հանրային ընկալումները մտահոգիչ են. հարցվածների 28.7 %-ը դատախազությունը համարում է մեծապես կոռումպացված, իսկ 31.6 %-ը՝ որոշ չափով կոռումպացված, ինչը վկայում է վստահության էական պակասի մասին:

Այս ֆոնին 2023-2024 թթ. Միջազգային հանրապետական ինստիտուտի Հարցումների հետազոտության կենտրոնի կողմից անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ դատախազության գործունեության գնահատականները նույնպես բարձր չեն: Մասնավորապես, 2023 թ. դեկտեմբերին անցկացված հարցմամբ՝ հարցվածների 11 %-ը լիովին գոհ է Դատախազության աշխատանքից, 28 %-ը՝ ավելի շուտ գոհ, մինչդեռ 17 %-ը ավելի շուտ դժգոհ է, 26 %-ը՝ ընդհանրապես գոհ չէ: 2024 թ. սեպտեմբերի տվյալներով էական փոփոխություն չի արձանագրվում. լիովին գոհ է 12 %-ը, ավելի շուտ գոհ՝ 25 %-ը, իսկ դժգոհության ցուցանիշները մնում են համադրելի (17 %՝ ավելի շուտ դժգոհ, 28 %՝ ընդհանրապես գոհ չէ)[83]:

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը չի տրամադրել տեղեկություն իր կողմից իրականացված կամ պատվիրված հանրային ընկալումների հարցումների առկայության վերաբերյալ, որոնք, հավանաբար, բացակայում են: Չեն ներկայացվել նաև տվյալներ այն մասին, թե արդյոք հանրային ընկալման արդյունքները կիրառվում են ՀՀ դատախազության կարողությունների զարգացման, հաղորդակցության կամ իրազեկման գործընթացներում:

Ընդհանուր դիտարկումներով՝ ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է ու սահմանափակ: Հանրային վստահության վերաբերյալ համակարգված տվյալների բացակայությունը,

[82] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[83] Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) Հարցումների հետազոտության կենտրոն, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, Երևան, 2024, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia/ (դիտված՝ 05.05.2026 թ.):

քրեական վարույթների ներքո գտնվող անձանց նկատմամբ կիրառվող ընթացակարգերի պատշաճության վերաբերյալ գործնական գնահատումների կամ ուսումնասիրությունների բացակայությունը, կարող են զգալիորեն սահմանափակել ՀՀ դատախազության գործունեության արդարացիության և անկողմնակալության վերաբերյալ հիմնավորված գնահատման հնարավորությունը:

Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը (0 միավոր)

ՀՀ դատախազությանը վերապահված է Հայաստանում ազդարարման հիմնական մեխանիզմի գործարկման պատասխանատվությունը: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող ազդարարման միասնական էլեկտրոնային համակարգով (azdararir.am) ներկայացվող հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը, որը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապահովում է հաղորդումների հաշվառումը, քննարկումը, դրանց ընթացքավորումը և, ըստ բովանդակության, վերահասցեագրումը համապատասխան մարմիններին, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական մարմիններին կամ ԿԿՀ-ին, իսկ կոռուպցիոն հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում՝ նաև Հակակոռուպցիոն կոմիտեին:[84]

Ազդարարման azdararir.am հարթակով են ստացվում նաև ՀՀ դատախազությանը վերաբերող ազդարարումները, սակայն այս համակարգը չի ներկայացնում ազդարարման առարկա հանդիսացող մարմինների կամ ազդարարումներին ընթացք տալու որևէ տվյալներ ուստի պարզ չէ կոնկրետ Դատախազությանն առնչվող ազդարարումների պատկերը:

ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2021-2023 թթ. տարեկան հաղորդումները չեն պարունակում ՀՀ դատախազության վերաբերյալ ազդարարման դեպքերի քանակի տվյալներ: Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազությունը, ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան, չի տրամադրել տվյալներ ՀՀ դատախազության անձնակազմի դեմ ներկայացված, արձանագրված բողոքների քանակի վերաբերյալ:

«ՀՀ դատախազությունում 2021-2024 թթ. ընթացքում ներքին ազդարարման դեպքեր չեն արձանագրվել: Ինչ վերաբերում է ազդարարման էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված՝ ՀՀ դատախազությանը վերաբերող ազդարարումների տվյալներին, ապա հարկ է նշել, որ նման վիճակագրություն վարելու պահանջ նախատեսված չէ»:

ՀՀ գլխավոր դատախազություն

ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը (1 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ դատախազի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի

[84] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, 09.06.2017 թ., հոդված 9, https://www.arlis.am/hy/acts/114364

իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, ինչպես նաև պաշտոնից ազատում:[85]

Դատախազի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այն է՝ ՀՀ գլխավոր դատախազը: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի նկատմամբ որոշ կարգապահական տույժեր նշանակվում են ՀՀ նախագահի կողմից՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ:[86]

Դատախազի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որը ներառում է նախնական ուսումնասիրության և կարգապահական վարույթի փուլերը: Կարգապահական վարույթ հարուցելու հիմնական իրավասությունը վերապահված է ՀՀ գլխավոր դատախազին, որը կարող է հանդես գալ սեփական նախաձեռնությամբ կամ հիմք ընդունել քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետական մարմինների հաղորդումները, դատավորների գրությունները, ՁԼՄ հրապարակումները կամ դատախազների զեկուցագրերը:[87] Միաժամանակ, կարևոր դեր ունի ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը, որը կարող է ինքնուրույն հարուցել կարգապահական վարույթներ և տրամադրել պարտադիր նշանակություն ունեցող եզրակացություններ՝ հատկապես ծանր տույժերի կիրառման դեպքում:[88] Գլխավոր դատախազի տեղակալների որոշ խախտումների դեպքում կարգապահական վարույթն իրականացվում է ԿԿՀ-ի կողմից:

Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացման կարգը սահմանվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով:[89]

2021-2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազության համակարգում նկատվում է բողոքների քննության ակտիվացում և ծառայողական ու կարգապահական մեխանիզմների գործարկման աճ: 2022 թ. իրականացվել է 77 ծառայողական քննություն 86 դատախազի նկատմամբ: Նույն թվականին իրականացվել է 22 կարգապահական վարույթ 30 դատախազի նկատմամբ, որոնց արդյունքում կիրառվել են տարբեր կարգապահական տույժեր, ներառյալ նկատողություններ, խիստ նկատողություններ, պաշտոնի իջեցում և մեկ դեպքում՝ պաշտոնից ազատում:[90] 2023 թ. վերահսկողական գործընթացները առավել ընդգրկուն են եղել: Իրականացվել է 83 ուսումնասիրություն 129 դատախազի նկատմամբ, որոնք նախաձեռնվել են քաղաքացիների, փաստաբանների, դատավորների, ՁԼՄ-ների և գլխավոր դատախազի զեկուցագրերի հիման վրա: Ընդհանուր առմամբ 2023 թվականին իրականացվել է 29 կարգապահական վարույթ 41 դատախազի նկատմամբ, որոնց արդյունքում կիրառվել են կարգապահական տարբեր տույժեր, նշանակվել են արտահերթ ատեստավորումներ, ինչպես նաև արձանագրվել են պաշտոնից ազատման դեպքեր:

[85] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 54:
[86] Նույն տեղում, հոդված 55:
[87] Նույն տեղում, հոդված 56:
[88] ՀՀ գլխավոր դատախազի «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 30-ի N 20 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 49 հրաման, 05.06.2018 թ., https://www.prosecutor.am/storage/orders/orders_47_4705905205.PDF
[89] Նույն տեղում:
[90] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

Էթիկայի հանձնաժողովը այդ տարվա ընթացքում անցկացրել է 17 նիստ և մեծ մասամբ հաստատել է կարգապահական խախտումների առկայությունը:[91]

2024 թվականի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ դատախազության որոշ վարչությունների անձնակազմի դեմ բողոքների քանակը սահմանափակ է: ԹԻՀԿ հարցման պատասխանի համաձայն՝ 2021-2023 թվականներին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի դեմ բողոքներ չեն եղել, իսկ 2024 թվականին արձանագրված 2 բողոքների արդյունքում կարգապահական տույժեր չեն կիրառվել:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ ՀՀ դատախազության ամենամյա հաղորդումները չեն պարունակում բողոքողների սոցիալ-դեմոգրաֆիկ բնութագրեր, մասնավորապես՝ սեռի, տարիքի, զբաղմունքի և կրթական որակավորման վերաբերյալ տվյալներ: Նաև չի հավաքվում վիճակագրություն խնդիրների տեսակի վերաբերյալ, ինչը հիմք կհանդիսանար հետագա վերլուծությունների և Դատախազության հակակոռուպցիոն միջոցառումների համար:

Ընդհանուր առմամբ, ՀՀ դատախազությունում առկա են իրավականորեն ձևավորված և գործնականում կիրառվող բողոքների քննության և կարգապահական պատասխանատվության մեխանիզմներ, որոնք 2021-2024 թթ. գործել են հարաբերականորեն ակտիվ և բազմաշերտ ձևով:

Բողոքների արդյունքները (2 միավոր)

ՀՀ դատախազության 2021-2024 թթ. ամենամյա հաղորդումները պարունակում են տեղեկություններ անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության և կիրառված կարգապահական միջոցների վերաբերյալ:

2022 թվականին իրականացվել է 77 ծառայողական քննություն 86 դատախազի նկատմամբ, մինչդեռ 2021 թվականին՝ 71 քննություն 79 դատախազի նկատմամբ: 6 դեպքով խախտումները քննարկվել են գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 50 դատախազի դեպքում խախտումներ չեն հայտնաբերվել: 2022 թվականին հարուցվել է 22 կարգապահական վարույթ 30 դատախազի նկատմամբ: Նրանց նկատմամբ կիրառվել են «նկատողություն» (12 դատախազ), «խիստ նկատողություն» (3 դատախազ), «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» (1 դատախազ) և «պաշտոնից ազատում» (1 դատախազ՝ առանձին կարգապահական վարույթի արդյունքում):

2023 թվականին իրականացվել է 83 ուսումնասիրություն 129 դատախազի նկատմամբ: 36 դատախազի կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են օպերատիվ խորհրդակցություններում, 39 դատախազի դեպքում խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ 41 դատախազի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ: Արդյունքում՝

[91] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

կիրառվել են համապատասխան կարգապահական տույժեր և արտահերթ ատեստավորում:[92]

2024 թվականին իրականացվել է 43 ուսումնասիրություն 49 դատախազի նկատմամբ: 9 դատախազի վերաբերյալ հարուցվել են կարգապահական վարույթներ, 30 դատախազի դեպքում խախտումներ չեն հայտնաբերվել, 2 դատախազ ազատվել է պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն, 1 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, իսկ 3 վարույթ դեռևս ավարտված չէ: 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն», 4 դատախազ ազատվել են տույժից, 1 դատախազի խախտումները քննարկվել են օպերատիվ խորհրդակցությունում:[93]

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից նշել են, որ 2021-2023 թվականներին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությանև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների անձնակազմերի դեմ բողոքներ չեն եղել, իսկ 2024 թվականին արձանագրվել է 2 բողոք, որոնց արդյունքում տույժ չի կիրառվել:

«Դատախազի կողմից առերևույթ կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ ցանկացած պնդում դառնում է ուսումնասիրության առարկա: Եթե դրա արդյունքներով չի հաստատվում կարգապահական խախտման կամ դրանում դատախազի մեղավորության առկայությունը, բնականաբար, դատախազի նկատմամբ տույժ չի կիրառվում»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Ընդհանուր առմամբ, տվյալները վկայում են, որ ՀՀ դատախազության կարգապահական համակարգն առկա է և գործում է, սակայն դրա ազդեցությունը տարբեր է. մի շարք դեպքերում խախտումների մասին բողոքները չեն հանգեցրել տույժի կիրառման:

Բարեվարքության ներքին մեխանիզմները (2 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված է, որ դատախազի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատախազների համար, և դրանց կատարումն ապահովվում է գլխավոր դատախազի հրամանով:[94] Դատախազն իր գործունեությամբ պետք է պահպանի դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անաչառությունը, ինչպես նաև նպաստի հանրային վստահության ձևավորմանը: Անմիջական վերադաս դատախազը պարտավոր է վերահսկել, որ ստորադաս դատախազները պահպանեն վարքագծի կանոնները:

Գլխավոր դատախազին առընթեր գործում է էթիկայի հանձնաժողով: Էթիկայի հանձնաժողովը յոթ անդամից կազմված կոլեգիալ մարմին է, որը ներառում է գլխավոր դատախազի կողմից նշանակվող մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և

[92] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[93] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[94] ՀՀ գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրաման, հավելված «Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները», https://www.prosecutor.am/storage/orders/orders_46_1685023080.pdf

դատախազների կողմից ընտրված երեք դատախազ, և որի նախագահը գլխավոր դատախազի տեղակալն է:[95] Հանձնաժողովը քննության է առնում դատախազների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների արդյունքները, գաղտնի քվեարկությամբ գնահատում է կարգապահական խախտման և մեղավորության առկայությունը, ինչպես նաև ձևավորում է եզրակացություն համապատասխան կարգապահական տույժի, այդ թվում՝ պաշտոնից ազատման հնարավորության վերաբերյալ:

Գլխավոր դատախազի տեղակալների համար գործում են ԿԿՀ-ի վարքագծի կանոնագրքի պահանջները (հաստատված 2022 թ. հունիսի 17-ին),[96] սակայն Սահմանադրությամբ ամրագրված դատախազական լիազորությունների իրականացման ընթացքում նրանց գործունեությունը դուրս է մնում նշված կանոնագրքի կիրառության շրջանակից և ենթակա է հատուկ ոլորտային կարգավորման:

Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման սահմանափակումը սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-74.1 հոդվածներում: Ընդ որում, կանոնակարգված են ինչպես դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները, այնպես էլ դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում: Օրենքը հղում է կատարում նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, մասնավորապես՝ նվերներ ընդունելու սահմանափակումներին, շահերի բախման իրավիճակներին և այլն:[97]

Բացի այդ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ով սահմանված են դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները: Այս դեպքում ևս օրենքը հղում է կատարում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին՝ սահմանելով, որ սույն հոդվածում նշված եզրույթների մեկնաբանման և կիրառման համար, համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները:[98]

Սահմանափակումների կամ անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով դատախազի նկատմամբ վարքագծի կանոնների խախտումների քննությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ էթիկայի հանձնաժողովը: Հաղորդումներ կամ միջնորդություններ ստանալուց հետո գլխավոր դատախազը կամ էթիկայի հանձնաժողովը 3 օրվա ընթացքում դրանք ուղարկում է ԿԿՀ: Եթե նախաձեռնողը գլխավոր դատախազն է, նա նույն ժամկետում ԿԿՀ է ներկայացնում անհրաժեշտ տեղեկություն՝ խախտման փաստի մասին:

Գլխավոր դատախազը 3-օրյա ժամկետում ստեղծում է կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ կամ դրա իրականացումը վստահում մեկ այլ դատախազի: Կարգապահական վարույթը հարուցվում է խախտման հայտնաբերումից 30 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան խախտումից 12 ամիս անց: Ծառայողական քննությունը

[95] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 23:
[96] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշում, 17.06.2022 թ. https://www.arlis.am/hy/acts/164523
[97] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ., https://www.arlis.am/hy/acts/120832
[98] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ., հոդված 49:

հարուցվում է ԿԿՀ-ի բացասական բնույթի եզրակացությունը տրամադրվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց վեց տարի հետո:

Կարգապահական վարույթի ավարտից հետո՝ 7 օրվա ընթացքում, գլխավոր դատախազը հարցը ներկայացնում է էթիկայի հանձնաժողովին, որը գաղտնի քվեարկությամբ որոշում է խախտման փաստի առկայությունը, դատախազի մեղավորությունը և «պաշտոնից ազատում» կարգապահական տույժի կիրառման հնարավորությունը:

Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից:[99] Քաղաքացիական ծառայողների համար վարքագծի խախտումների ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից:

Գործնականում, ՀՀ դատախազության կողմից 2021-2024 թթ. ընթացքում որևէ արձանագրված խախտում վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման կամ շահերի բախման առնչությամբ չի արձանագրվել, ինչը փաստվում է նաև ՀՀ դատախազության՝ ԹԻՀԿ հարցման պատասխանի արդյունքներով:

Առաջարկություններ

1. Ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի վերականգնման և կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրման ու վերլուծության համակարգ: Այս առնչությամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանումը և առկա կառուցակարգերի կատարելագործումը:
2. ՀՀ դատախազության տարեկան հաշվետվության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել հաշվետվության պարտադիր բովանդակությունը՝ այն համապատասխանեցնելով ՏՀՁԿ և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի չափանիշներին և ներառելով քրեական վարույթների ամբողջական վիճակագրություն, գործերի կարճման հիմքեր, բյուջեի կատարողականի տվյալներ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկություն: Միաժամանակ նպատակահարմար է ներդնել կիսամյակային հրապարակային հաշվետվությունների մեխանիզմ և ապահովել հաշվետվությունների մեթոդաբանության և հավելվածների ամբողջական հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքում՝ բաց տվյալների ձևաչափով:
3. Տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ներդնել հարցումների կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ, սահմանել պատասխանների որակի և ժամկետների վերահսկման չափորոշիչներ, ինչպես նաև ուժեղացնել համապատասխան ստորաբաժանումների մարդկային ռեսուրսներն ու մասնագիտական կարողությունները:
4. Ներքին վերահսկողության համակարգի ամրապնդման համար անհրաժեշտ է մշակել և հրապարակել ՀՀ դատախազության ռազմավարական զարգացման փաստաթղթեր,

[99] ՀՀ փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 697-Ն որոշում, 04.10.2022 թ. https://www.arlis.am/hy/acts/169106

հստակեցնել ներքին աուդիտի մանդատը և ապահովել դրա արդյունքների պարբերական հրապարակայնացումը, ինչպես նաև ներդնել ռիսկերի կառավարման և ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

5. Պարբերաբար իրականացնել անկախ հանրային ընկալումների հարցումներ, մշակել և կիրառել հաղորդակցության և իրազեկման համապարփակ ռազմավարություն, ինչպես նաև ապահովել հանրության մասնակցության մեխանիզմների զարգացումը՝ բաց քննարկումների և խորհրդատվական հարթակների միջոցով:
6. ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննության և բարեվարքության համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է ապահովել բողոքների վերաբերյալ կառուցվածքային վիճակագրության հավաքագրումը և հրապարակումը, ուժեղացնել էթիկայի հանձնաժողովի անկախությունը, ինչպես նաև ներդնել կանխարգելիչ ուսուցման և բարեվարքության մշտադիտարկման մեխանիզմներ:
7. ՀՀ դատախազության նկատմամբ իրական և բազմաշերտ արտաքին վերահսկողություն ապահովելու նպատակով նպատակահարմար է ստեղծել գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ, ընդլայնել խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը:
8. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսել ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ ընտրանքային հաշվեքննության և թեմատիկ վերահսկողության մեխանիզմներ նույնիսկ այն դեպքերում, երբ ամբողջական հաշվեքննություն նախատեսված չէ տարեկան ծրագրով:

1.4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում

ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարներին**, որը գնահատում է ազդարարումներին և (կամ) տեղեկատվություն հաղորդողներին ՀՀ դատախազության հասանելիության մակարդակը: Հաշվարկվում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիային առնչվող հաղորդումների (ազդարարումների, դիմումներին և բողոքների) քանակը երկրի բնակչության թվաքանակի մեջ (10,000 կամ 20,000 բնակչի հաշվով) կշռելու միջոցով:
- **Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիայի վերաբերյալ բողոքների և ստացված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին արձագանքման մակարդակը: Հաշվարկվում է քննված բողոքների մասնաբաժինը ՀՀ դատախազությանը ներկայացված հաղորդումների, դիմումների և բողոքների ընդհանուր թվի մեջ:
- **Նախաձեռնողականությունը**, որը գնահատվում է ՀՀ դատախազության կողմից նախաձեռնված քրեական հետապնդումների քանակը նույն ժամանակահատվածում դատախազության կողմից իրականացված հետապնդումների ընդհանուր թվի մեջ կշռելու միջոցով:
- **Արդյունավետությունը և արհեստավարժությունը**, որտեղ արդյունավետության մակարդակի ցուցանիշը գնահատվում է կոռուպցիոն գործերի քննությունն ավարտելու

համար ՀՀ դատախազությունից պահանջված միջին ժամանակով, իսկ արհեստավարժությունը՝ հաջողությամբ նախաձեռնված կոռուպցիոն քրեական հետապնդումների և դատապարտված անձանց թվով:

- **Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող դեպքերի հետապնդումները**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից քննված կոռուպցիոն դեպքերի հետապնդման միջին մակարդակը: Հետապնդման ցուցանիշը համարվում է ցածր, եթե այն պակաս է 50%-ից:
- **Դատապարտումների ցուցանիշը**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն գործերով դատարանում մեղադրանքի պաշտպանության արդյունքում դատապարտման միջին մակարդակը: Դատապարտման ցուցանիշը համարվում է ցածր, եթե այն պակաս է 50%-ից:
- **Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումները**, որը գնահատում է ՀՀ դատախազության պատրաստակամությունը «առանց վախի և բարեհաճության» իրականացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետապնդումներ: Հաշվարկվում է քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործերով իրականացված հետապնդումների և կիրառված պատասխանատվության միջոցների քանակով:
- **Փոխհատուցումը և ակտիվների վերականգնումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության դերը փոխհատուցման, ակտիվների վերականգնման, սառեցման և բռնագրավման գործում: Հաշվարկվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրավված ընդհանուր գումարները՝ համեմատելով երկրում գողացված ակտիվների գնահատված ընդհանուր ծավալի հետ:
- **ՀՀ դատախազության կատարողականի ընկալումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության կատարողականը հանրային ընկալումներում՝ հանրային հարցումների արդյունքներով:

Գծապատկեր 5. ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների հետապնդումը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, ՀՀ դատախազության կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման մակարդակը գնահատվել 44.4 %՝ ապահովելով առավելագույն 18-ից 8 միավոր:

Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարներին (2 միավոր)

ՀՀ դատախազության հասանելիությունը բողոքատուներին, տեղեկատվություն ներկայացնողներին և ազդարարողներին ապահովվել է ՀՀ դատախազության կայքի,[100] էլեկտրոնային փոստի,[101] ֆեյսբուքյան էջի,[102] +374-10-511-527 հեռախոսահամարի կամ գրավոր՝ ՀՀ դատախազության հասցեով[103] առաքված նամակների տեսքով: Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request.am հարթակի միջոցով հաղորդումները փոխանցվում են ՀՀ դատախազության էլեկտրոնային հասցեին:

Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազությունը չունի թեժ գիծ, հետադարձ կապի առցանց գործիք կամ անանուն հաղորդումների ընդունման առանձին մեխանիզմ, բացառությամբ azdararir.am հարթակի, որով բոլոր մարմիններին առնչվող անանուն հաղորդումներն են հասցեագրվում ՀՀ գլխավոր դատախազությանը:

«Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն – 2022» զեկույցի համաձայն՝ հարցվածների ընդամենը 2.9 %-ն է պատրաստակամություն հայտնել դիմելու ՀՀ դատախազություն՝ պաշտոնատար անձանց կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու նպատակով,[104] ինչը վկայում է ինչպես ինստիտուցիոնալ անվստահության, այնպես էլ հնարավոր ռիսկերի ընկալման բարձր մակարդակի մասին:

Այսպես, 2021 թվականին ՀՀ դատախազությունում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացվել է 1,177 դիմում-հաղորդում, ինչի արդյունքում դատախազության հասանելիությունը ՀՀ 10 հազար բնակչի հաշվով կազմել է 3.9 (1,177/2,961,400*10,000): 2022 թվականին ստացվել է 1,684 դիմում-հաղորդում, իսկ հասանելիության մակարդակը կազմել է 5.6 (1,684/2,977,100*10,000): 2023 թվականին կոռուպցիոն բնույթի հաղորդումների թիվը կազմել է 1,578, ինչի հետևանքով հասանելիությունը կազմել է 5.2 (15,78/2,991,200*10,000): 2024 թվականին ՀՀ դատախազությունում գրանցվել է 1,529 դիմում-բողոք, և հասանելիության մակարդակը ՀՀ 10 հազար բնակչի հաշվով 2024 թ.-ին կազմել է 4.9 (1,529/3,076,200*10,000):[105]

ՀՀ դատախազության 2024 թ. տարեկան հաղորդման համաձայն՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով 2024 թվականին ստացվել է 380 հաղորդում, որից 301-ը եղել են անանուն, իսկ միայն 79-ը՝ տվյալներով ներկայացված: Այսպիսով,

---

[100] ՀՀ դատախազության կայք, https://www.prosecutor.am/
[101] info@prosecutor.am
[102] https://www.facebook.com/GenProcArmenia
[103] ՀՀ, ք. Երևան, 0010 Վազգեն Սարգսյան փ. 5:
[104] Նույն տեղում:
[105] ՀՀ դատախազության հասանելությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին ցուցանիշը հաշվարկվել է որպես ՀՀ դատախազության հասցեգրված բոլոր դիմումների, բողոքների ու հաղորդումների թվի հարաբերությունը ՀՀ բնակչության թվին՝ բազմապատկած 20,000-ով: ՀՀ դատախազության 2021, 2022, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումներ, ՀՀ բնակչության թվաքանակի մասին ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի հրապարակված տվյալներ՝ 2021՝ 2,961,400, 2022՝ 2,977,100, 2023՝ 2,991,200, 2024՝ 3,076,200: https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf, https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf, https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf, https://armstat.am/file/article/population_01_01_25.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

ազդարարողների և բողոքողների միայն փոքր մասն է պատրաստակամ եղել բացահայտել իր ինքնությունը. ստորագրված հաղորդումների տեսակարար կշիռը կազմել է շուրջ 24.9 %:

Չնայած ազդարարման համակարգի օրենսդրական առկայությանը և հաղորդումների ընթացքավորման հստակ մեխանիզմներին՝ գործնական տվյալները վկայում են, որ ազդարարողների մեծամասնությունը շարունակում է նախընտրել անանուն հաղորդումները: Սա մատնանշում է ՀՀ դատախազության, ինչպես նաև առհասարակ պետական մարմինների նկատմամբ սահմանափակ վստահությունը, ինչպես նաև ազդարարման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ ցածր ընկալումը: Միևնույն ժամանակ, ազդարարների կողմից ահազանգման դրական օրինակներ կամ հաջողության պատմություններ հայտնի չեն, ինչը ևս չի նպաստում հանրության վստահության ամրապնդմանը:

Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին (2 միավոր)

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը: ՀՀ դատախազության կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին, տեղեկատվություն ներկայացնողներին, լրատվամիջոցների հրապարակումներին արձագանքողականության քանակական գնահատականը կազմել է 2021 թ. 97.7 %, 2022 թ.՝ 98.4 %, 2023 թ.՝ 98.3 %, իսկ 2024 թ.՝ 96.2 %:

2021-2024 թթ. ՀՀ դատախազությունում քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների ընդհանուր թիվը կայուն աճ է արձանագրել՝ 2021 թ.՝ 10,918, 2022 թ.՝ 11,305, 2023 թ.՝ 13,705 և 2024 թ.՝ 14,000: Դրանցից կոռուպցիոն բնույթի հանցագործություններին վերաբերել է համապատասխանաբար 1,177 (10.8 %), 1,684 (14.9 %), 1,578 (11.5 %) և 1,529 (10.9 %) դիմում:

Բոլոր տարիներին դիմումների զգալի մասը եղել է կրկնակի (2021 թ.՝ 2,183, 2022 թ.՝ 2,300, 2023 թ.՝ 2,671, 2024 թ.՝ 2,627) կամ փոխանցվել է այլ մարմինների՝ ըստ ենթակայության (2021 թ.՝ 4,473, 2022 թ.՝ 4,827, 2023 թ.՝ 6,307, 2024 թ.՝ 6,656): Միաժամանակ, ամեն տարի որոշակի թվով դիմումների արդյունքում նախաձեռնվել են քրեական վարույթներ՝ 2021 թ.՝ 346, 2022 թ.՝ 296, 2023 թ.՝ 146, 2024 թ.՝ 63, ինչը վկայում է, որ դիմումների փոքր մասն է հանգեցրել քրեական հետապնդման:[106]

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում նույնպես նկատվում է ակտիվություն. 2023 թ. ընթացքում ուսումնասիրվել է 82 դեպք, իսկ 2024 թ.՝ 163 դեպք, ընդ որում 2024 թվականին զեկուցագրերն ու նյութերը վերաբերվել են ընդհանուր առմամբ 217

[106] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2021 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_48_8560338567.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

անձի:[107] Միաժամանակ արձանագրվել են նաև ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին զգալի թվով որոշումներ (2023 թ.՝ 26, 2024 թ.՝ 45):[108]

Վերլուծությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն բնույթի բողոքների ընդհանուր ծանրաբեռնվածությունը աճել է հատկապես 2022-2024 թթ., երբ և՛ ընդհանուր դիմումների, և՛ կոռուպցիոն բնույթի հաղորդումների քանակը շարունակաբար բարձրացել են: Միևնույն ժամանակ, բավարարված դիմումների տոկոսը համեմատաբար ցածր է, մինչդեռ զգալի մասի դեպքում տրվել են պարզաբանումներ:

Այնուամենայնիվ, թեև դիմում-բողոքների քանակը և կոռուպցիոն բնույթի հաղորդումները պահպանվում են բարձր մակարդակում, դրանց զգալի մասը լուծվում է պարզաբանման, մերժման կամ այլ մարմիններին փոխանցման միջոցով:

Նախաձեռնողականություն (1 միավոր)

2021-2024 թթ. ընթացքում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում իրականացված ուսումնասիրությունների գերակշիռ մասը մեկնարկել է ոչ սեփական նախաձեռնությամբ: 2024 թ. ընթացքում կայացվել է ուսումնասիրություն սկսելու 163 որոշում, որոնցից սեփական նախաձեռնությամբ մեկնարկել է ընդամենը 7 ուսումնասիրություն (4.29 %): 2023 թ. նախաձեռնողականությունը կազմել է 10.9 % (9/82), 2022 թ.՝ 2.5 % (2/77), իսկ 2021 թ.՝ 0 %:

Այսպիսով, 2021-2024 թվականների ընթացքում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության միջինացված նախաձեռնողականությունը կազմել է շուրջ 4.4 %, ինչը վկայում է, որ ուսումնասիրությունների շուրջ 95-100 %-ը մեկնարկել է արտաքին ազդակների հիման վրա, և վարչության գործունեությունը հիմնականում կրել է ռեակտիվ, այլ ոչ թե պրոակտիվ բնույթ:

«Վարչության կողմից իրականացվող ուսումնասիրությունների դեպքում նախաձեռնողականության ցածր տոկոսը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վարչության կողմից ուսումնասիրություն իրականացնելիս ուսումնասիրվում է ոչ միայն ուսումնասիրվող անձի ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը, այլ նաև վերջինիս փոխկապակցված անձանց [գույքը]: Այն դեպքերում է սեփական նախաձեռնությամբ սկսվում ուսումնասիրությունը, երբ ուսումնասիրվող անձի և փոխկապակցված անձի միջև չի հաստատվում համատեղ տնտեսություն վարելու հանգամանքը»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության նախաձեռնողականությունը հանրային քրեական հետապնդումների մասով վերջին տարիներին աճի միտում է ունեցել: 2022 թ. նախաձեռնվել է 31 հանրային քրեական հետապնդում՝ 486 վերահսկվող վարույթների պայմաններում (6.3

[107] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2023 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[108] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2024 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

%): 2023 թ. նախաձեռնվել է 83 հանրային քրեական հետապնդում՝ 642 վարույթների պայմաններում (12.9 %): 2024 թ. նախաձեռնված հանրային քրեական հետապնդումների թիվը կազմել է 156՝ 749 վերահսկվող վարույթների պարագայում (20.8 %): Այսպիսով, չնայած գրեթե քառապատիկ աճին, 2022-2024 թթ. միջին նախաձեռնողականությունը շարունակում է մնալ համեմատաբար ցածր՝ մոտ 13.3 %:

Քաղաքական ազդեցություն ունեցող կամ բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ սեփական նախաձեռնությամբ հարուցված քրեական հետապնդումների վերաբերյալ տվյալներ չեն տրամադրվել:

Արդյունավետություն և արհեստավարժություն (1 միավոր)

ԹԻՀԿ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված հարցման շրջանակում չեն ներկայացվել տվյալներ՝ օրենքով սահմանված ժամկետներում նախաձեռնված հանրային քրեական հետապնդումների փաստացի տևողության, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների միջին տևողության վերաբերյալ:[109] Տրամադրվել են միայն հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշումների քանակական ցուցանիշներ, որոնք 2022 թ. կազմել են 129, 2023 թ.՝ 480, իսկ 2024 թ.՝ 591:

2022-2024 թթ. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից հսկողություն է իրականացվել համապատասխանաբար 486, 642 և 749 ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական վարույթների նկատմամբ: Նույն ժամանակահատվածում դատարան են ուղարկվել 85 (2022 թ.), 169 (2023 թ.) և 159 (2024 թ.) քրեական վարույթներ:[110]

Նշված տվյալների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ պայմանական միջին ակտիվության ցուցանիշը 2022 թ. կազմել է 26.2 օր, 2023 թ.՝ 39.4 օր, իսկ 2024 թ.՝ 31.8 օր: Միաժամանակ, մեկ դատախազի վարույթում առկա վարույթի նյութերի միջինացված թիվը աճել է՝ 2021 թ. կազմելով 55, 2022 թ.՝ 75, 2023 թ.՝ 80 և 2024 թ.՝ 90: Սակայն պայմանական ակտիվության ցուցանիշը չի արտացոլում կոնկրետ վարույթների փաստացի տևողությունը, այլ ներկայացնում է միայն համեմատական գնահատական՝ հիմնված գործերի քանակի և օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի ժամկետների հարաբերակցության վրա:[111]

---

[109] Այս ցուցանիշը գնահատելու համար հավաքագրել են տվյալներ 2021-2024 թթ. ընթացքում կոռուպցիոն գործով վարույթը ավարտելու համար ՀՀ դատախազությունից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ՝ գնահատելու կոռուպցիայի հետապնդման արդյունավետության մակարդակը: ՀՀ դատախազության արհեստավարժությունը կոռուպցիոն դեպքերը հետապնդելու հարցում արտացոլված է 2021-2024 թթ. ընթացքում հաջողությամբ նախաձեռնված քրեական հետապնդումների թվով, դատապարտված անձանց թվով և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հարցումների գնահատականներով:

[110] Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2022 թ. տեղեկանք, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf, Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2023 թ. հաղորդում, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf, Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2024 թ. հաղորդում, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

[111] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ., Հոդված 192:

Դատական փուլում արձանագրված տվյալների համաձայն՝ 2022 թ. ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է 99 կոռուպցիոն բնույթի գործ՝ 132 անձի դատապարտմամբ, 2023 թ.՝ 149 գործ՝ 140 դատապարտմամբ, իսկ 2024 թ.՝ 163 գործ՝ 272 դատապարտմամբ: Հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշումների և դատապարտված անձանց թվի հարաբերակցությամբ ՀՀ դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պայմանական արդյունավետության մակարդակը կազմել է 97.7 % (2022 թ.), 29.1 % (2023 թ.) և 36.3 % (2024 թ.):

Տվյալների համադրությունը վկայում է դատախազների ծանրաբեռնվածության կայուն աճի մասին, ինչն արտահայտվում է մեկ դատախազի վարույթում գտնվող նյութերի թվի շարունակական ավելացմամբ: Արդյունքում, առկա միտումները կարող են բացասաբար անդրադառնալ վարույթների արդյունավետության, որակի և ժամկետների պահպանման վրա՝ ընդգծելով մարդկային և կազմակերպչական ռեսուրսների ուժեղացման անհրաժեշտությունը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի համաձայն՝ ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի: Նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով:

Այսպես, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության մասով 2021-2024 թթ. ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ կայացվել է համապատասխանաբար 65, 77, 82 և 163 որոշում, որոնց արդյունքում դատարան են ուղարկվել թվով 3, 21, 73 և 44 գործեր: Նշված ժամանակահատվածում հաշտության համաձայնություններ են կնքվել 2023 թ.՝ 1, իսկ 2024 թ.՝ 4 դեպքերում: Արդյունավետության հարաբերական ցուցանիշը այսպիսով կազմել է՝ 4.6 % (2021 թ.), 27.2 % (2022 թ.), 90 % (73+1/82*100) և 29.4 % (44/163*100): Ընդ որում, 2023 թ. արձանագրված բարձր ցուցանիշը չի պահպանվել հաջորդ տարում և չի կարող դիտարկվել որպես կայուն աճի միտում: 2021-2024 թթ. ընթացքում վերականգնված վնասների համադրությունը ընդհանուր վնասների հետ կազմում է ընդամենը 24.6 %, ինչը վկայում է վնասների վերականգնման արդյունավետության համակարգային սահմանափակումների մասին՝ անկախ Դատախազության գործառնական ակտիվությունից:

Ընդհանուր առմամբ, թե՛ հանրային քրեական հետապնդումների, թե՛ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում ՀՀ գլխավոր դատախազության գործունեության արդյունավետությունը բնութագրվում է էական տատանումներով: Ուսումնասիրությունների և վարույթների քանակի աճն ինքնին չի ապահովում արդյունքների համաչափ բարելավում, ինչը մատնանշում է համակարգի գերծանրաբեռնվածությունը, սահմանափակ ռեսուրսները և որակի կայուն պահպանման հետ կապված կառուցվածքային մարտահրավերները:

«Նշված վարույթներով գործի քննությունը իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր հայցային վարույթի կարգով, ինչը, ի տարբերություն հատուկ հայցային վարույթների, գործի քննության իրականացման հստակ ժամկետներով սահմանափակված չէ, որպիսի պայմաններում գործի քննությունը կարող է ձգձգվել տարիներով՝ չապահովելով առերևույթ տեսանելի արդյունք»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Հետապնդումների ցուցանիշը (0 միավոր)

Համաձայն կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքների տվյալների՝

2021 թ. նախաքննական մարմինների վարույթում քննված 2312 քրեական գործից ավարտվել է 730-ը, որոնցից 543-ը կարճվել է (414 արդարացնող, 129 ոչ արդարացնող հիմքով), 187-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպես, ավարտված քրեական գործերի 74 %-ը կարճվել է, որոնցից 76 %՝ արդարացնող հիմքերով, իսկ 34 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2021 թ. համար կազմում է 13.6 % (730-414/2,312):

2022 թ. 2,718 քննված գործից ավարտվել է 567-ը, որոնցից 388-ը կարճվել է (286 արդարացնող, 102 ոչ արդարացնող հիմքով), 178-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպես, ավարտված քրեական գործերի 68 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 73.7 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 26.2 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2022 թ. համար կազմում է 10.3 % (567-286/2,718):

2023 թ. 3,556 քննված գործից ավարտվել է 908-ը, 602-ը կարճվել է (502 արդարացնող, 100 ոչ արդարացնող հիմքով), 306-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Ավարտված քրեական գործերի 66 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 83.3 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 16.6 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2023 թ. համար կազմում է 11.4 % (908-502/3,556):

2024 թ. 3,526 քննված գործից ավարտվել է 1097-ը, 880-ը կարճվել է (473 արդարացնող, 407 ոչ արդարացնող հիմքով), 217-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպես, ավարտված քրեական գործերի 80 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 53.7 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 46.2 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2023 թ. համար կազմում է 17.6 % (1097-473/3,526):

Այսպիսով, 2021-2024 թթ. Հայաստանում կոռուպցիայի հետապնդումների միջին մակարդակը, ըստ Գլխավոր դատախազության տեղեկանքի, միջինում կազմում է 13.2 %, ինչը, համաձայն գնահատման մեթոդաբանության, համարվում է ցածր ցուցանիշ: Այն էականորեն ցածր է միջազգային ընդունված նվազագույն շեմից (մոտ 50%), որը, ընդհանուր առմամբ, ապահովում է հակակոռուպցիոն վարույթների արդյունավետությունը: Չնայած 2024 թ. որոշակի աճին՝ ընդհանուր միտումը մնում է ցածր և անկայուն:

Բացի այդ, արդարացման հիմքով քրեական վարույթների կարճման տոկոսային հարաբերությունը բավականին մեծ է: Այն 2021 թ.-ին եղել է 76 %, 2022 թ.-ին՝ 73.7 %, 2023 թ.-ին՝ 83.3 %, 2024 թ.-ին՝ 53.7 %: Նման պատկերը պայմանավորված է քրեադատավարական կարգավորումներով, որոնց շրջանակում առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդման յուրաքանչյուր դեպքում նախաքննական մարմինը պարտավոր է նախաձեռնել քրեական վարույթ: Այդ հանգամանքը բերում է նրան, որ ոչ բոլոր նախաձեռնված վարույթներն են ավարտվում մեղադրական եզրակացությամբ և ուղարկվում դատարան:

Դատապարտումների ցուցանիշը (1 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտման մակարդակը գնահատվել է՝ համաձայն կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տարեկան տեղեկանքի տվյալների:[112]

Այսպես, 2021 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 83 քրեական գործ՝ 150 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 53-ով (64 %) 97 անձ դատապարտվել է, որոնցից 30-ը՝ ազատազրկման, 46-ը՝ տուգանքի, 1-ը՝ հիմնական այլ պատժի, 20 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 18-ի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 6 գործով 11 անձ արդարացվել է: Կարճվել է 24 գործ՝ 42 անձի վերաբերյալ: 2022 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ՝ 197 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 67-ով (67 %) 132 անձ դատապարտվել է, որոնցից 30 անձ՝ ազատազրկման, 63 անձ՝ տուգանքի, հիմնական այլ պատժի որևէ անձ չի դատապարտվել, 39 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 8 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 7 գործով 18 անձ արդարացվել է: Կարճվել է 24 գործ՝ 46 անձի վերաբերյալ: Իսկ 2023 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ՝ 249 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 97-ով (65 %) 140 անձ դատապարտվել է, որոնցից 25-ը՝ ազատազրկման, 39-ը՝ տուգանքի, 3-ը՝ հիմնական այլ պատժի, 73 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 9 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 9 գործով 14 անձ արդարացվել է: 2024 թ. ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 163 քրեական գործ՝ 362 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 126-ով (75 %) 272 անձ դատապարտվել է, որոնցից 37 անձ՝ ազատազրկման, 46 անձ՝ տուգանքի, 4 անձ՝ հիմնական այլ պատժի, 185 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 17 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 11 գործով 17 անձ արդարացվել է:

Այսպիսով, 2021 թ. համար դատապարտումների ցուցանիշը կազմում է 64 %, 2022 թ. համար՝ 67 %, 2023 թ. համար՝ 56 %, իսկ 2024 թ. համար՝ 75 %:

Դատարանում մեղադրանքների պաշտպանության արդյունքում դատապարտման միջին մակարդակը կազմում է շուրջ 60-65 %, սակայն ցուցանիշը տարեցտարի զգալի տատանվում է՝ 56 %-ից մինչև 75 %:

Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետապնդումներ (1 միավոր)

ԹԻՀԿ հարցմանը տրված պատասխանում ասվում է, որ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2021-2024 թթ. ընթացքում նախաձեռնված քրեական հետապնդումների շրջանակում ներգրավվել են մի շարք բարձրաստիճան պաշտոնատար

[112] ՀՀ գլխավոր դատախազություն, 2021, 2022, 2023, 2024 թվականների ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքներ, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

անձինք: ՀՀ գլխավոր դատախազությունը չի տրամադրել կոնկրետ անուններ, դատավճիռների կամ պատիժների մասին տեղեկություններ: Սա հանգեցնում է եզրահանգման, որ քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ առանձին հաշվառում կամ հրապարակային հաշվետվություն իրականում չի իրականացվում, թեպետև ԱԺ ներկայացված հաղորդումների մեջ ներկայացվում է առանձին հանրային հնչեղություն ունեցող կոռուպցիոն գործերով կայացված դատավճիռների կամ դատարան ուղարկված գործերի մասին տեղեկություն:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ նախաձեռնված քրեական հետապնդումները 2021-2024 թթ. կազմել են.

- 2021 թ.՝ 7 բարձրաստիճան պաշտոնյա, որոնցից 1-ը՝ նախկինում պաշտոնավարող,
- 2022 թ.՝ 7 բարձրաստիճան պաշտոնյա, որոնցից 5-ը՝ նախկինում պաշտոնավարող,
- 2023 թ.՝ 13 բարձրաստիճան պաշտոնյա, որոնցից 11-ը՝ նախկինում պաշտոնավարող,
- 2024 թ.՝ 15 բարձրաստիճան պաշտոնյա, որոնցից 12-ը՝ նախկինում պաշտոնավարող:

Ընդհանուր հաշվով 2021-2024 թթ. արձանագրվել է 42 բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ նախաձեռնված հետապնդում, որոնցից մոտ 29-ը վերաբերում են նախկին պաշտոնյաների, ինչը կազմում է քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետապնդումների մոտավորապես 69 %: Տվյալները վկայում են, որ ՀՀ դատախազության կողմից բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ նախաձեռնված քրեական հետապնդումները հիմնականում վերաբերում են նախկին պաշտոնյաներին, մինչդեռ հանրային մակարդակում բացակայում է այդ գործերի արդյունքների և կիրառված պատիժների վերաբերյալ բավարար ու հասանելի տեղեկությունը:

Միաժամանակ, Freedom House իրավապաշտպան կազմակերպության *Nations in Transit* 2023 և 2024 զեկույցներն արձանագրում են նախկին մի շարք բարձրաստիճան անձանց գործերի փակումը կամ դադարեցումը՝ հիշատակելով, որ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործը երկու անգամ դադարեցվել է ապացույցների անբավարարության հիմնավորմամբ, նախկին նախարար Արամ Հարությունյանի նկատմամբ գործը դադարեցվել է Դատախազության նախաձեռնությամբ, իսկ նախկին նախագահներ Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի գործերը փակվել են՝ համապատասխանաբար ապացույցների բացակայության և վաղեմության ժամկետի լրանալու պատճառներով:[113]

Այս օրինակները վկայում են, որ բարձրաստիճան պաշտոնյաներին վերաբերող վարույթների զգալի հատվածը ժամանակին չի հասնում դատավարական ավարտի: Միաժամանակ նկատվում են նաև ինստիտուցիոնալ անհամաձայնություններ, մասնավորապես՝ Դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև, ինչը դրսևորվել է նաև Վ. Գասպարյանի գործի շրջանակում հնչած փոխադարձ գնահատականներում:[114] Այս

[113] Freedom House իրավապաշտպան կազմակերպություն, Nations in Transit 2023 զեկույց, 2024 թ. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023, Nations in Transit 2024 զեկույց, 2025 թ. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[114] Ազատություն ռադիոկայան, «Գլխավոր դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև վեճ է սկսվել Վլադիմիր Գասպարյանի քրգործի շուրջ», 19.01.2022 թ., https://www.azatutyun.am/a/31661424.html (դիտված՝ 05.05.2026 թ.):

երևույթները կարող են բացասաբար անդրադառնալ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վրա:

Ընդհանուր առմամբ՝ 2021-2024 թթ. տվյալները վկայում են, որ թեև բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ նախաձեռնված գործերի թիվը աճում է, վերջնական արդյունքների բացակայությունը, թափանցիկության պակասը և իրավապահ մարմինների միջև հակասությունները վնասում են հակակոռուպցիոն քաղաքականության վստահելիությանը և թույլ չեն տալիս հաստատել իրական պատասխանատվության կիրառման առկայությունը: Այս համատեքստում բարձր է մնում ընտրովի, ոչ կայուն կամ քաղաքական ազդեցություններով պայմանավորված հետապնդումների ռիսկը, իսկ անպատժելիության ընկալումը՝ զգալի:

Փոխհատուցում և ակտիվների վերականգնում (0 միավոր)

Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2021-2024 թթ. ՀՀ դատախազությունը զգալիորեն ընդլայնել է իր մասնակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացներին: Ներկայացված հայցադիմումների թիվը աճել է՝ 3-ից մինչև 44, ինչը ցույց է տալիս գործիքի ակտիվ գործարկում և համակարգային հաստատում:

Այսպես, 2021 թ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով ներկայացվել է 3 հայցադիմում, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 18,958,605,653 ՀՀ դրամ:[115] 2022 թ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով ներկայացվել է 21 հայցադիմում, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 51,360,000,000 ՀՀ դրամ: 2022 թվականին ներկայացված հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 100 միլիարդ ՀՀ դրամ:[116] 2023 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ դատարան է ներկայացվել 71 հայցադիմում, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 384,055,372,049 ՀՀ դրամ: Դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 417,591,062,222 ՀՀ դրամ:[117] 2024 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ դատարան է ներկայացվել 44 հայցադիմում, որից 43-ը ներկայումս քննվում են դատարանում, իսկ ներկայացված մեկ հայցադիմումից իրավասու դատախազը հրաժարվել է: Դատարանում քննվող 43 հայցադիմումներով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 96,961,344,000 ՀՀ դրամ: Դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 100,354,660,000 ՀՀ դրամ:[118]

[115] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների վերաբերյալ 2021 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[116] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2022 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[117] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2023 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[118] ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2024 թ. հաշվետվություն, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

Ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների ընդհանուր հայցագնին, ապա, ըստ ՀՀ դատախազության տվյալների՝

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ընդհանուր հայցագինը կազմում է շուրջ 585,856,507,899 ՀՀ դրամ (այս թիվը չունի ստատիկ բնույթ, պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայում ոչ բոլոր գույքերի շուկայական արժեքն է պարզված, մի շարք դեպքերում պարզված չեն նաև իրավաբանական անձանցում մասնակցությունների արժեքները, բացի այդ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 16-ի 1776 որոշմամբ պայմանավորված կատարվել են ներկայացված հայցերի առարկայում փոփոխություններ)»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Այսպիսով, 2021-2024 թթ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունը զգալիորեն ընդլայնել է իր մասնակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացներին. ներկայացված հայցադիմումների թիվը աճել է 3-ից մինչև 44, ինչը ցույց է տալիս արդարադատության տվյալ մեխանիզմի կայացում և ակտիվ գործարկում: Աճը հատկապես նկատելի է 2023-2024 թթ., սակայն հենց այս տարիներին այդ աճին զուգահեռ դիտվում է նաև հայցադիմումների արժեքի (հայցագնի) զգալի տատանում:[119]

«Հայցագնի տատանումը պայմանավորված է ուսումնասիրության արդյունքով պահանջվող ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքերից, որը ոչ թե կախված է Վարչության լիազորությունների իրականացումից, այլ ուսումնասիրվող անձանց ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքերի շրջանակից»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Հայցադիմումների ծավալների միտումները հետևյալն են՝

- 2021 թ.՝ 3 հայց, ~ 19 մլրդ. ՀՀ դրամ,
- 2022 թ.՝ 21 հայց, ~ 100 մլրդ. ՀՀ դրամ,
- 2023 թ.՝ 73 հայց, ~ 417 մլրդ. ՀՀ դրամ,
- 2024 թ.՝ 44 հայց, ~100 մլրդ. ՀՀ դրամ:

Թեև 2023 թ. առկա է արտառոց մեծ աճ թե՛ քանակի, թե՛ հայցագնի առումով, 2024 թ.-ին ցուցանիշները կրկին նվազում են՝ մոտենալով 2022 թ. մակարդակին:

Սակայն գործընթացի արդյունավետության հիմնական չափումը միայն հայցերի ներկայացման աստիճանը չէ, այլ վերականգնված վնասների իրական չափը: 2021-2024 թթ. ընթացքում վնասների վերականգնումը կազմել է՝

[119] Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2024 թ. հաղորդում, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf, Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2023 թ. հաղորդում, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf, Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2022 թ. տեղեկանք, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf, Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2021 թ. տեղեկանք, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

2021-2024 թթ. քրեական վարույթներով վերականգնումների, պետական (համայնքային) շահերի պաշտպանության, դատարանում ավարտված քրեական գործերով, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղություններով վերականգնվել է՝

- 2021 թ. – 15 մլրդ.145 մլն. 432 հազար 888 դրամ,
- 2022 թ. - 32 մլրդ. 463 մլն. 334 հազար 96 դրամ,
- 2023 թ. - 44 մլրդ. 50 մլն. 392 հազար 541 դրամ,
- 2024թ. - 52 մլրդ. 277 մլն. 338 հազար 376 դրամ:

Այսպիսով, նշված ժամանակահատվածում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վերականգնված վնասների համադրությունը ընդհանուր վնասների հետ կազմում է ընդամենը 24.6 %:

Ինչ վերաբերում է կոռուպցիոն հանցագործություններով վերականգնված վնասներին, 2021-2024 թթ. դրանք կազմել են՝

- 2021 թ.՝ 400 մլն. ՀՀ դրամ (ընդհանուր վնաս՝ 4.5 մլրդ. ՀՀ դրամ),
- 2022 թ.՝ 873 մլն. ՀՀ դրամ (ընդհանուր վնաս՝ 2.2 մլրդ. ՀՀ դրամ),
- 2023 թ.՝ 1.36 մլրդ. ՀՀ դրամ (ընդհանուր վնաս՝ 32.8 մլրդ. ՀՀ դրամ),
- 2024 թ.՝ 1.16 մլրդ. ՀՀ դրամ (ընդհանուր վնաս՝ 9 մլրդ. ՀՀ դրամ):

Կոռուպցիոն հանցագործություններով վերականգնված վնասների համադրությունը ընդհանուր վնասների հետ վկայում է ցածր արդյունավետության մասին: 2021 թ.-ին այն կազմել է ընդամենը 9 %, 2022 թ.՝ 39 %, 2023 թ.՝ 4 %, 2024 թ.՝ 13 %: Ուստի, չնայած ՀՀ դատախազության ակտիվ աշխատանքին, վնասների վերականգնումը մնում է անկայուն և ընդհանուր վնասների համեմատ՝ անբավարար:

Ընդհանուր գնահատմամբ, ՀՀ դատախազության դերը 2021-2024 թթ. ընթացքում ուժեղացել է, սակայն համակարգը դեռևս չի ապահովում իրական, տեսանելի և զգալի ակտիվների վերադարձ պետությանը:

ՀՀ դատախազության կատարողականի ընկալում (0 միավոր)

ՀՀ դատախազության գործունեության հանրային ընկալումների վերաբերյալ առանձին համապարփակ ուսումնասիրություններ Հայաստանում գրեթե չեն իրականացվել կամ այդ մասին հայտնի չէ:

Համաձայն ՀՌԿԿ-Հայաստան կազմակերպության կողմից Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի 2022 թ. ուսումնասիրության՝[120] Դատախազության վերաբերյալ հանրային տեղեկացվածությունը չափազանց ցածր է. Դատախազության մասին գիտի հարցվածների ընդամենը 4.7 %-ը: Ավելին՝ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության

[120] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022 թ.:

ընդհանրապես չգիտի, 20.7 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0.3 %-ը հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65.1 %):

Ընդ որում, տարբեր անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու վերաբերյալ ընկալումների պատկերը վկայում է, որ հարցվածների 28.7 %-ը Դատախազությունը համարում է «մեծապես կոռումպացված», իսկ 31.6 %-ը՝ «որոշ չափով կոռումպացված», այսինքն՝ հանրային ընկալումների մեջ Դատախազությունն ունի համեմատաբար բարձր կոռուպցիոն ընկալում: Այս իմաստով այն ավելի մոտ է իրավապահ համակարգի այն կառույցներին, որոնց նկատմամբ ավանդաբար ձևավորվում են վստահության ցածր գնահատականներ:

Բացի այդ, Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ՝ 2024 թ. սեպտեմբերին իրականացված հարցման արդյունքներով, հարցման մասնակիցների ընդամենը 12 %-ն է նշել, որ լիովին գոհ է Դատախազության աշխատանքից, 25 %-ը՝ ավելի շուտ գոհ է Դատախազության աշխատանքից: Ավելի շուտ գոհ չի եղել հարցվածների 17 %-ը, ընդհանրապես գոհ չի եղել 28 %-ը, իսկ հարցման մյուս մասնակիցները դժվարացել կամ հրաժարվել են պատասխանելուց:[121] Այսպիսով, հանրային վստահությունը Դատախազության նկատմամբ չի գերազանցում միջինը:

Ընդհանուր գնահատմամբ՝ հանրային ընկալումները պայմանավորված են ոչ միայն Դատախազության աշխատանքի իրական որակով, այլև դրա գործունեության ոչ պատշաճ հանրայնացմամբ, ինչի հետևանքով նույնիսկ բարեփոխումները մնում են անտեսանելի: Մինչդեռ հակակոռուպցիոն ինստիտուտների նկատմամբ վստահության ձևավորումը հենց այն ոլորտներից է, որտեղ հանրային ընկալումը նույնքան կարևոր է, որքան իրական կատարողականը:

Առաջարկություններ

1. Ազդարարների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է ապահովել ազդարարումների վերաբերյալ մանրամասն վիճակագրության հրապարակումը, ներդնել անվտանգ հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր և հրապարակել հաջողված դեպքերի անանուն օրինակներ վստահության ամրապնդման նպատակով:
2. Վերանայել ու ավելացնել ՀՀ դատախազության հետ հանրային հաղորդակցման ուղիները, ներառյալ պարբերական հրապարակային հաշվետվություններում՝ մատնանշելով ստացված հաղորդումների, դրանց ընթացքի և դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների քանակը, ինչպես նաև կանխարգելիչ պարզաբանումները, որպեսզի հանրությունը տեսնի իրական կատարողականը:
3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումների թափանցիկությունը պետք է ապահովվի՝ հրապարակելով գործերի ընթացքի, արդյունքների և կիրառված պատժի մասին առանձնացված տվյալները, ինչը կնվազեցնի քաղաքական ազդեցությամբ պայմանավորված ընտրովի հետապնդումների ռիսկը և կբարձրացնի հանրային վստահությունը:

[121] Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) Հարցումների հետազոտության կենտրոն, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, Երևան, 2024:

4. ՀՀ դատախազության կողմից իրականացնել կամ պատվիրել ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
5. Բարձրացնել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության աշխատանքի նախաձեռնողականությունը, ինչը պահանջում է գործընթացի ռիսկերի և գույքի ուսումնասիրության առաջնահերթությունների վերահստակեցում, ինչպես նաև անձնակազմի պրոֆեսիոնալ հմտությունների ուժեղացում:
6. Ապահովել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցերի և դրանց արդյունքում ընդունված դատական ակտերի իրականացման վերահսկում և ակտիվների վերականգնման բարձր տոկոս:

1.5. Կանխարգելում, կրթություն և իրազեկում

ՀՀ դատախազության կողմից կանխարգելում, կրթություն և իրազեկում չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Հատկացված բյուջեն**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից հանրային իրազեկմանը և հաղորդակցմանը հատկացված գործառնական ծախսերի միջին մասնաբաժինը:
- **Կոռուպցիայի կանխարգելման, կրթման և իրազեկման ռազմավարական պլանավորումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության՝ կանխարգելման, հակակոռուպցիոն թեմաներով կրթման և իրազեկման ծրագրերի ամբողջականությունը և դրանց իրականացումը:
- **Կրթությունը (դասընթացներ) և զարգացումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից նախաձեռնված կրթական նախաձեռնությունները: ՀՀ դատախազության կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, ՀՀ դատախազություն այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը:
- **Կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները**, որը գնահատում է ՀՀ դատախազության գործունեության ընթացքում վեր հանված խնդիրներով կոռուպցիայի կանխարգելմանը միտված առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) քանակը և դրանց տեսակարար կշիռը իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների (եզրակացություններ, վարույթների քանակ և այլն) թվում:
- **Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտությունները**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները:
- **Տեղեկատվության տարածումը և քարոզարշավները**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների

նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տարածման տեսակը, տարածման մակարդակը:

- **Առցանց հաղորդակցումը**, որը գնահատում է ՀՀ դատախազության կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար:

Գծապատկեր 6. ՀՀ դատախազության կողմից կանխարգելման, կրթության և իրազեկման ապահովումը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, ՀՀ դատախազության կանխարգելման, կրթության և իրազեկման մակարդակը գնահատվել է 21.4 %՝ ապահովելով առավելագույն 14-ից 3 միավոր:

Հատկացված բյուջե (0 միավոր)

2021-2024 թթ. ՀՀ դատախազության հանրային իրազեկման և հաղորդակցության գործառույթներն իրականացվել են հիմնականում հանրային կապերի բաժնի միջոցով՝ ներառելով միջոցառումների լուսաբանում, տեսա- և լուսանկարահանում, պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների սպասարկում, ինչպես նաև ԶԼՄ-ների մշտադիտարկում և պարզաբանումների տրամադրում: 2022-2024 թթ. ընթացքում ակտիվացվել է ՀՀ դատախազության ներկայությունը Facebook, Telegram և Youtube հարթակներում, պատրաստվել են հարյուրավոր տեսանյութեր, հրապարակվել են հարյուրավոր հաղորդագրություններ, իրականացվել է ԶԼՄ-ների լայնածավալ մշտադիտարկում և 2023 թվականին գործարկվել է նորացված պաշտոնական՝ www.prosecutor.am կայքը:[122]

[122] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության

Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազությունը, հարցմանն ի պատասխան, չի տրամադրել 2021-2024 թթ. բյուջեներում հանրային իրազեկման և հաղորդակցման ծրագրերին հատկացված ծախսերի վերաբերյալ տվյալներ: Բաց տվյալներից հասանելի է միայն 2024 թվականի տեղեկատվական ծառայությունների փաստացի ծախսը, որը կազմել է 2,600.6 հազար ՀՀ դրամ կամ մոտ 0.025 % ՀՀ դատախազության ընդհանուր գործառնական ծախսերից:[123]

Այսպիսով, առկա տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատախազության կողմից հանրային իրազեկման և հաղորդակցության ծրագրերին հատկացվող ֆինանսական ռեսուրսները ծայրահեղ սահմանափակ են և միջինում կազմում են ընդամենը շուրջ 0.02–0.03 % ընդհանուր գործառնական ծախսերից, ինչը չի համապատասխանում իրականացվող գործունեության ծավալին և հանրային վստահության բարձրացման անհրաժեշտությանը:

Կոռուպցիայի կանխարգելման, կրթության և իրազեկման ռազմավարական պլանավորում (0 միավոր)

ՀՀ դատախազությունում բացակայում է կանխարգելման, հակակոռուպցիոն թեմաներով կրթության և հանրային իրազեկման համապարփակ և երկարաժամկետ ռազմավարությունը: Դատախազության պաշտոնական կայքում հասանելի չեն նշված նպատակներով ծրագրեր և միջոցառումներ:

Բացի այդ, ՀՀ դատախազության հարցման արդյունքներով չեն ներկայացվել տվյալներ 2021-2024 թթ. գործունեության ընթացքում ՀՀ դատախազությունում կոռուպցիոն ռիսկերի վրա հիմնված հակակոռուպցիոն կամ բարեվարքության ծրագրի առկայության, դրանց կատարման ընթացքի, ինչպես նաև կրթությանը և կանխարգելմանը միտված միջոցառումների իրականացման վերաբերյալ, թեև նման գործիքակազմը գործող օրենսդրությամբ նախատեսված և պարտադիր չէ:

Այս հանգամանքները վկայում են, որ ՀՀ դատախազությունը չի որդեգրում կոռուպցիայի կանխարգելման, այդ մասին կրթության և իրազեկման ռազմավարություն: Բացակայում են հստակ նպատակներ, չափելի արդյունքներ, ինչպես նաև հաշվետվողականության և հանրային թափանցիկության մեխանիզմներ:

Կրթություն (դասընթացներ) և զարգացում (1 միավոր)

ՀՀ դատախազությունը չունի կոռուպցիոն թեմաներով կրթությանը և զարգացմանը միտված հրապարակված ծրագիր:

2021-2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազությունը իրականացրել է մի շարք հակակոռուպցիոն կրթական և վերապատրաստման նախաձեռնություններ, որոնք հիմնականում ուղղված են եղել դատախազների մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Այդ նախաձեռնությունները ներառել են թեմատիկ հանդիպում-քննարկումներ, մասնագիտական երկխոսություններ, սեմինարներ, ինչպես նաև

2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

[123] ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/ (դիտված՝ 05.05.2026 թ.):

միջազգային վերապատրաստման ծրագրերի, աշխատաժողովների և համաժողովների մասնակցություն՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Միջոցառումների շրջանակում ներգրավվել են դատախազներ, քննիչներ, դատավորներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, իսկ որոշ դեպքերում իրականացվել են նաև փորձագետների փոխայցելություններ:[124]

Միևնույն ժամանակ, իրականացված նախաձեռնությունները կրում են հատվածային և ոչ համակարգային բնույթ: Դատախազության կողմից չի իրականացվել հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման միջոցառումների ամբողջական քանակական հաշվառում՝ մասնակիցների ընդհանուր թվի, վերապատրաստումների պարբերականության, թիրախային խմբերի և ակնկալվող կամ չափելի արդյունքների մասով: Իրականացված միջոցառումների գերակշիռ մասն ուղղված է եղել ներքին և մասնագիտական լսարանին, մինչդեռ քաղաքացիների, քաղաքացիական հասարակության և լայն հանրության համար նախատեսված կրթական կամ իրազեկման նախաձեռնությունները սահմանափակ են և չեն ձևավորվել որպես առանձին, շարունակական քաղաքականություն:

Այսպիսով, թեև արձանագրվում են առանձին դրական փորձեր և միջազգային ներգրավվածություն, ՀՀ դատախազության հակակոռուպցիոն թեմաներով կրթման և վերապատրաստման գործունեությունը չի կարող գնահատվել որպես համապարփակ, ռազմավարական և կայուն համակարգ:

Կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ (0 միավոր)

2021-2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազությունը տարեկան հաղորդումներում ներկայացրել է օրենսդրական նախաձեռնությունների և տարբեր իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման վերաբերյալ ընդհանուր քանակական տվյալներ: Մասնավորապես, 2023 թվականին Դատախազության կողմից իրավասու մարմիններին ուղարկվել է 10 օրենսդրական նախաձեռնություն,[125] իսկ 2024 թվականին՝ 4 նախաձեռնություն, ինչպես նաև ուսումնասիրվել են տասնյակ օրենսդրական փաթեթներ, կառավարության և այլ իրավական ակտերի նախագծեր:[126] Սակայն այդ նախաձեռնությունների շրջանակում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կոնկրետ առաջարկների քանակը, տեսակները և տեսակարար կշիռը առանձնացված կերպով չեն հաշվառվել և չեն ներկայացվել տարեկան հաղորդումներում: ԹԻՀԿ հարցման արդյունքներով ՀՀ դատախազությունը նույնպես չի տրամադրել 2021-2024 թթ. ընթացքում մշակված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների քանակական տվյալներ:

[124] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Դատախազներն ու քննիչները հանդիպել են ՄԻԵԴ դատավորին», 21.07.2023 թ., https://prosecutor.am/article/4264, «Մասնագիտական երկխոսություն դատավորների ու դատախազների միջև՝ դատավարական էթիկայի թեմայով», 26.10.2023 թ., https://prosecutor.am/article/4381, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[125] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[126] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

Միաժամանակ, դատախազը կարող է ներկայացնել միջնորդագրեր՝ հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական (համայնքային) շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով: Միջնորդագրերը ներկայացվում են դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է դրա քննարկման արդյունքների և ձեռնարկած միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հայտնել միջնորդագիրը ներկայացրած դատախազին:[127] 2021 թ. համեմատ 2024 թ.-ին միջնորդագրերի թիվը նվազել է մոտ 63 %-ով, ինչը ցույց է տալիս ներկայացման դինամիկայի լուրջ կրճատում:[128] Սակայն միջնորդագրերի արդյունավետության և դրանց արդյունքների վերաբերյալ որևէ պաշտոնական տվյալ ՀՀ դատախազությունը չի հրապարակել, ինչը թույլ չի տալիս գնահատել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջնորդագրերի տեսակարար կշիռը:

Առկա սահմանափակ հրապարակային տվյալները թույլ չեն տալիս եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը իր գործառնական փորձի և վերհանված խնդիրների վերլուծության հիման վրա համակարգված կերպով ձևակերպել և իրավասու մարմիններին է ներկայացրել կոռուպցիայի կանխարգելմանը միտված բովանդակային առաջարկություններ:

Այս հանգամանքները վկայում են, որ ՀՀ դատախազությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հիմնականում հանդես է գալիս որպես արձագանքող, այլ ոչ թե նախաձեռնողական մարմին՝ համակարգային խնդիրների բացահայտման և կանխարգելիչ քաղաքական առաջարկությունների մշակման ուղղությամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության և ոլորտային ռիսկերի վերհանման վերաբերյալ հետազոտություններ (0 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործընթացում ՀՀ դատախազության կողմից կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի, պատճառների և պայմանների վերաբերյալ հետազոտությունների և վերլուծությունների համակարգային օգտագործման հնարավորությունները սահմանափակ են: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը տեղեկություններ չի տրամադրել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, և պայմանների վերաբերյալ հետազոտությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ, ինչից կարելի է եզրակացնել, որ նմանատիպ ուսումնասիրություններ ՀՀ դատախազությունը չի իրականացնում:

Այս հանգամանքը վկայում է, որ ՀՀ դատախազության գործունեությունը կոռուպցիոն հանցագործությունների ոլորտում հիմնականում հիմնված է դեպքահեն (case-based) մոտեցման վրա: Չեն վերլուծվում հանցագործությունների տարածվածությունը, առավել ռիսկային ոլորտները, պաշտոնները, հնարավոր բացերը, օրինաչափությունները, որոնք հնարավորություն կտային փաստահեն (evidence-based) և կանխարգելիչ քաղաքականության և թիրախային միջամտությունների ձևավորման:

[127] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,Հոդված 30:
[128] Հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2022 և 2024 թթ. հաղորդումներ, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_294_4340070921.pdf, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_61_8560493694.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

«Յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաստատվում է տվյալ ժամանակահատվածի համար ՀՀ դատախազության աշխատանքային ծրագիրը: ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, ի թիվս դատախազության այլ ստորաբաժանումների, վերլուծում է կոնկրետ կոռուպցիոն հոդվածով մինչդատական վարույթի օրինականության և դատարանում մեղադրանքի պաշտպանության վիճակը և ներկայացնում կոնկրետ առաջարկություններ»:

(ՀՀ գլխավոր դատախազություն)

Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ (1 միավոր)

2021-2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազությունը չի իրականացրել կոռուպցիոն հանցագործությունների կանխման կամ հակազդման վերաբերյալ տեղեկատվական կամ քարոզչական արշավներ: Դատախազության պաշտոնական կայքում և տարեկան գործունեության վերաբերյալ հաղորդումներում բացակայում են տվյալներ ինքնուրույն մշակված և իրականացված հակակոռուպցիոն հանրային քարոզարշավների կամ նպատակային հաղորդակցման ռազմավարությունների վերաբերյալ:

ՀՀ վարչապետի 2022 թ. N 820-L որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որով նախատեսվել են հաղորդակցման գործողությունների շրջանակը, հաղորդակցման եղանակները և միջոցները, ակնկալվող արդյունքները:[129] Այսպես, «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ» գործողության շրջանակներում ակնկալվում էր իրազեկող տեսահոլովակների հեռարձակումը (ցուցադրումը) կամ տեղեկատվական նյութերի սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում հրապարակումը, հնարավորության դեպքում ՁԼՄ-ներում հրապարակումը: Որպես ակնկալվող արդյունք նախատեսվում էր, որ հանրային իրազեկման արշավների արդյունքում հասարակությունը պետք է տեղեկացվի Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից Գլխավոր դատախազությունը հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարող հանդես է գալիս Արդարադատության նախարարությունը՝ ի դեմս Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի վարչության:

ՀՀ կառավարության «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-L որոշման[130] շրջանակներում նույնպես առկա են համապատասխան գործողություններ՝ կապված ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ իրազեկման ծրագրերի և միջոցառումների հետ: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից ՀՀ դատախազությունը կրկին հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարողներ հանդես են գալիս այլ պետական մարմինները:

[129] ՀՀ վարչապետի «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 820-L որոշում, 18.07.2022 թ., https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2022/820_1.pdf
[130] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-L որոշում, 26.10.2023 թ.:

Թեև Դատախազության հանրային կապերի բաժինը նշված ժամանակահատվածում իրականացրել է ակտիվ տեղեկատվական գործունեություն՝ ներառյալ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների սպասարկումը, տեսանյութերի պատրաստումը, մամուլի մշտադիտարկումը և լրատվամիջոցներին պարզաբանումների տրամադրումը, այդ գործունեությունը հիմնականում կրել է տեղեկատվական և հաշվետվողական բնույթ:[131] Այն ուղղված է եղել արդեն իրականացված գործողությունների լուսաբանմանը (օրինակ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում, կոռուպցիոն գործերի քննություն), այլ ոչ թե կանխարգելիչ, վարքագծային կամ արժեքահեն հաղորդակցման նպատակներին:[132]

Առցանց հաղորդակցում (1 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման տեղեկատվության տարածման և հանրությանն իրազեկելու հիմնական գործիքը ՀՀ դատախազության պաշտոնական կայքն է,[133] որում պարբերաբար տեղադրվում են ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2021 թ.-ին ՀՀ դատախազության պաշտոնական կայքում շուրջ 276 հրապարակում է տեղադրվել, 2022 թ.-ին՝ 298, 2023 թ.-ին՝ 402 իսկ 2024 թ.-ին՝ 253:

Ուսումնասիրված ժամանակահատվածում ՀՀ դատախազության լսարանն ընդարձակվել է: 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էջն ուներ մոտ 30,000 հետևորդ: ՀՀ դատախազության յութուբյան հարթակն ուներ 1,360, իսկ տելեգրամյան այիքը՝ 1,949 հետևորդ:

ՀՀ դատախազության կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կառուցվածքը, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, կառուցվածքի վերաբերյալ տեղեկություններ, Դատախազության ամենամյա հաշվետվությունները՝ Ազգային ժողովին, կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաղորդումները, հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները:

Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, գլխավոր դատախազի հրամաններ: ՀՀ դատախազության կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկություն:

ՀՀ դատախազության պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Նշված 3 սոցիալական հարթակներից բոլորը գործում են:

Կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ՝ ակտիվ հղումներով: Կայքում գործում է որոնման համակարգը: Առկա է տեղեկություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին

[131] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[132] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[133] ՀՀ դատախազության պաշտոնական կայք, www.prosecutor.am

ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները ներկայացված են:

Կայքում առանձին բաժնով հրապարակված են մարմնի բյուջետային հատկացումների մասին տեղեկությունները: Կայքում առկա է ազդարարման առանձնացված պատուհան: Կայքում առկա չէ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը:

Միևնույն ժամանակ, կայքում հրապարակվող փաստաթղթերը, մասնավորապես՝ գլխավոր դատախազի հրամանները, չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք չունեն մատչելի ձևաչափ, ներկայացվում են միայն PDF ձևաչափով, չունեն պատճենելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկությունը առկա չէ այլընտրանքային ձևաչափերով: Առկա չէ տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիք:

Առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «Հայտարարություններ» ընդհանուր բաժնում: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են:

Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր: Բացակայում է քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին տեղեկությունը:

Արդյունքում, թեև ՀՀ դատախազությունը ակտիվորեն օգտագործում է առցանց հաղորդակցման ուղիները՝ հատկապես պաշտոնական կայքը և սոցիալական ցանցերը, իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար, այդ առցանց հաղորդակցումը կրում է հիմնականում տեղեկատվական և հաշվետվողական բնույթ և սահմանափակ չափով է ուղղված հանրության հետ երկկողմանի հաղորդակցության զարգացմանը կամ կանխարգելիչ ուղերձների նպատակային տարածմանը:

Առաջարկություններ

1. Մշակել ՀՀ դատախազության հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել մարմնի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
2. Բարձրացնել ՀՀ դատախազության հակակոռուպցիոն գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
3. Իրականացնել ՀՀ դատախազության հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու ՀՀ դատախազության դերը և նշանակությունը հակակոռուպցիոն և ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման ոլորտներում:

4. Վերակազմակերպել ՀՀ դատախազության կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:
5. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով ՀՀ դատախազությունը համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:

1.6. Համագործակցություն և արտաքին հարաբերություններ

ՀՀ դատախազության կողմից համագործակցություն և արտաքին հարաբերություններ չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Վստահությունը Կառավարության կողմից ցուցաբերվող աջակցության հանդեպ**, որը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը ՀՀ դատախազությանը տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար: Գնահատման համար հիմք են ընդունվել հիմնականում հանրային հարցումները, նշված թեմայով հետազոտությունների արդյունքները, ՔՀԿ և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցները:
- **Համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ**, որը գնահատում է ՀՀ դատախազության՝ կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված այլ մարմինների հետ հարաբերությունները՝ կոռուպցիոն հանցագործությունների նախականխման ու հետապնդման գործընթացում:
- **Համագործակցությունը ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ**, որը գնահատում է կոռուպցիայի դեմ պայքարի գործունեության հանրայնացման առումով ՀՀ դատախազության և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, մասնավոր ընկերությունների, պետական մասնակցությամբ ձեռնարկությունների, դոնոր կառույցների հետ գործակցությունը:
- **Միջազգային հակակոռուպցիոն ցանցերը**, որը գնահատում է ՀՀ դատախազության մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և դրանցում մասնակցության (ներգրավվածության) աստիճանը:
- **Համագործակցությունն այլ երկրների հետ**, որը գնահատում է ՀՀ դատախազության գործակցությունը այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ՝ համատեղ ծրագրերի, տրամադրված փորձագիտական օժանդակության, տեղեկության փոխանակման տեսանկյունից:
- **Հասանելիությունը մարգինալացված խմբերին**, որը գնահատում է ՀՀ դատախազության արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված (խոցելի) խմբերին: Դիտարկում է ըստ մարգինալացված առանձին խմբերի, դրանց տվյալների մոնիտորինգի ընթացակարգերի առկայությունը, այդ տվյալների օգտագործումը կոռուպցիայի նախականխման և իրազեկման ծրագրերի մշակման ու հանրայնացման համար:

Գծապատկեր 7. ՀՀ դատախազության համագործակցության և արտաքին հարաբերությունների չափանիշով ապահովումը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, ՀՀ դատախազության համագործակցության և արտաքին հարաբերությունների չափանիշով գործունեության մակարդակը գնահատվել է 58.3 %՝ ապահովելով առավելագույն 12-ից 7 միավոր:

Վստահությունը Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության հանդեպ (0 միավոր)

Հասարակության վստահությունը ՀՀ դատախազության նկատմամբ՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործիք, մնում է սահմանափակ և հակասական: ՀՀ դատախազությունը չի իրականացրել կամ պատվիրել հանրային ընկալումների մասնագիտացված հարցումներ, որոնք կգնահատեին հասարակության վստահությունը դատախազությանը տրամադրված լիազորությունների, անկախության և ռեսուրսների բավարարության նկատմամբ:

Ինչպես նշվել է վերևում, Հայաստանում Դատախազության գործունեության վերաբերյալ համապարփակ հանրային ընկալումների ուսումնասիրությունների պակասը վկայում է հանրային հաղորդակցության և թափանցիկության խնդիրների մասին. առկա սահմանափակ տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ դատախազությունը հանրության շրջանում քիչ ճանաչելի է և ունի համեմատաբար բարձր կոռուպցիոն ընկալում:[134]

Միաժամանակ, ՄՀԻ-ի կողմից 2023-2024 թթ. անցկացված հարցումները ցույց են տալիս, որ Դատախազության աշխատանքի նկատմամբ հանրային գնահատականները շարունակում են մնալ միջինից ցածր. դրական գնահատականները էականորեն չեն գերազանցում դժգոհության ցուցանիշները, իսկ ժամանակի ընթացքում նկատելի փոփոխություն չի արձանագրվում:[135]

[134] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022:
[135] Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) Հարցումների հետազոտության կենտրոն, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, Երևան, 2024:

Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ Դատախազության նկատմամբ հանրային վստահությունը բարձր չէ, հանրային տեղեկացվածությունը՝ ծայրահեղ ցածր է, իսկ հանրային ընկալումների պարբերական գնահատման համակարգված մեխանիզմները բացակայում են: Այս պայմաններում հասարակությունը դժվարությամբ է գնահատում Դատախազությանը տրամադրված լիազորությունների և ռեսուրսների արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում:

Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված այլ մարմինների հետ (2 միավոր)

ՀՀ դատախազությունը սերտորեն համագործակցում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ներգրավված մի շարք պետական մարմինների հետ: Մասնավորապես, Գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում:[136] Բացի այդ, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վիճակագրական տվյալները ՀՀ գլխավոր դատախազությունը ստանում է Հակակոռուպցիոն կոմիտեից, իսկ դրանց ամփոփված վերլուծությունը ներկայացվում է տարեկան հաղորդումներում՝ օրենքով սահմանված կարգով:[137]

ՀՀ դատախազությունը համագործակցում է նաև ԿԿՀ-ի հետ՝ տեղեկատվության փոխանակման և իրավական գործընթացների ապահովման ուղղությամբ: Տարբեր տարիների ընթացքում ԿԿՀ-ի հարցումներին ի պատասխան ՀՀ դատախազությունը տրամադրել է տեղեկատվություն հարյուրավոր անձանց վերաբերյալ՝ նրանց քրեական հետապնդման, հայտարարագրերի օգտագործման կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հարցերով: Այդ փոխգործակցությունը նաև հիմք է հանդիսացել դատախազների նկատմամբ ծառայողական ուսումնասիրությունների և կարգապահական վարույթների իրականացման համար, որոնք նախաձեռնվել են քաղաքացիների, փաստաբանների դիմում-բողոքների, ԶԼՄ հրապարակումների և վերադաս դատախազների զեկուցագրերի հիման վրա:[138]

Բացի այդ, ՀՀ դատախազությունը համագործակցում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ ազդարարման ոլորտում: Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է համակարգային մոնիտորինգ և տվյալների հավաքագրում, վերահսկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց և կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանումը, ինչպես նաև նպաստում է դրանց վերականգնմանը:[139] «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 30.2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ Պաշտպանը իր տարեկան

[136] ՀՀ դատախազության կայք, Կառուցվածք, https://www.prosecutor.am/structure
[137] «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.,Հոդված 56:
[138] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf, Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):
[139] Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թ. հաղորդում, https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf (դիտված՝ 05.05.2026 թ.):

հաղորդման շրջանակում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունն ու վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած տվյալների հիման վրա:[140] Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված կարգավորումների համաձայն, իրավասու մարմինները պարտավոր են իրենց կողմից վարվող ազդարարման վիճակագրական տվյալները՝ տարեկան հաշվետվությունների ձևով, մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ը ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանին: Այս դրույթի շրջանակում ՀՀ գլխավոր դատախազությունը հանդես է գալիս որպես տվյալներ ներկայացնող մարմին և մասնակցում է ազդարարման համակարգի ընդհանուր մոնիտորինգին:

Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ (1 միավոր)

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում իրականացվում է ճանաչողական այցերի, հանդիպումների և աշխատաժողովների միջոցով:[141]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը կազմակերպվում է նաև միջազգային դոնոր կազմակերպությունների ծրագրերի, աշխատաժողովների և հետազոտական զեկույցների շնորհանդեսների միջոցով: Այսպես, 2024 թ. դեկտեմբերի 9-ին Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետը մասնակցել է «Արդարադատության բարոմետր. գնահատելով դատական արձագանքը կոռուպցիային» ծրագրի շնորհանդեսին՝ ներկայացնելով իրավական նոր գործիքակազմերը, ոլորտի մարտահրավերները և Դատախազության ձեռքբերումները:[142]

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվում է նաև ՀՀ դատախազության՝ օրենքով սահմանված որոշ պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների շրջանակներում որպես դիտորդ ներգրավվելու, ինչպես նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելու շրջանակներում: Մասնավորապես, գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի և դատախազների նշանակման գործընթացի նկատմամբ սահմանված է որպես դիտորդ ներգրավվելու հնարավորություն:[143] Բացի այդ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց

[140] «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ., հոդված30.2, https://www.arlis.am/hy/acts/123524

[141] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Դատախազությունը զգայուն վերաբերմունք ունի հատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ. Աննա Վարդապետյանն ընդունել է «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի սաներին» 20.05.2023 թ., https://www.prosecutor.am/article/2518, «Աննա Վարդապետյանը հանդիպել է «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի ուսանողներին» 07.06.2024 թ. https://www.prosecutor.am/article/4581 (դիտված՝ 05.05.2026 թ.):

[142] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Պետական շահերի պաշտպանության ոլորտում 2023 թվականին նկատվում է արդյունավետության էական աճ. ներկայացվել են հետազոտական զեկույցի արդյունքները», 10.12.2024 թ., https://www.prosecutor.am/article/4707 (դիտված՝ 05.05.2026 թ.):

[143] ՀՀ գլխավոր դատախազի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրաման, 23.05.2020 թ.:

մրցույթի դեպքում որակավորման հանձնաժողովում ներգրավվում են նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր (2 միավոր)

ՀՀ դատախազությունը ներգրավված է ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրին,[144] «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին,[145] ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործին:[146]

Ինչպես նշված է ՏՀԶԿ «Բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքար Արևելյան Եվրոպայում. պատկերացումներ և լուծումներ» զեկույցում, Հայաստանում հակակոռուպցիոն ոլորտում միջգերատեսչական համագործակցությունը պաշտոնապես հաստատվում է համապատասխան շահագրգիռ կողմերի միջև հուշագրերով: Դրանք նպատակ ունեն զարգացնել համագործակցության մեխանիզմներ, հատկապես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում: Դրանք սովորաբար ընդգրկում են համագործակցության երեք հիմնական ոլորտ՝ տեղեկության փոխանակում, իրավական ակտերի քննարկում և մշակում, ինչպես նաև համատեղ ուսումնական սեմինարների իրականացում:[147]

Գլխավոր դատախազությունը համագործակցում է միջազգային և երկկողմ կառույցների հետ՝ ներառյալ Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ը, ԵՄ-ը, Եվրաջասթը, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհուրդը, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհուրդը, Դատախազների միջազգային ասոցիացիան և այլ միջկառավարական ու դիվանագիտական մարմիններ:

Հայաստանի և ԵՄ միջև 2024 թ. ստորագրվել է քրեական վարույթներով իրավական համագործակցության համաձայնագիր, որը ԵՄ-ի կողմից նախատեսում է ՀՀ դատախազի գործուղում ԵՄ անդամ պետությունների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման համար:[148] Նույն տարում իրականացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուի շնորհանդես, որտեղ ներկայացվել են կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի արդի

---

[144] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm (դիտված՝ 05.05.2026 թ.):
[145] Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի Հայաստանի Հանրապետության գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia (դիտված՝ 05.05.2026 թ.):
[146] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի կողմից ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վիճակի գնահատման 2021 թ. զեկույցի ամփոփագիր, https://shorturl.at/D3EPd (դիտված՝ 05.05.2026 թ.):
[147] OECD (2024), Combatting High-level Corruption in Eastern Europe: Insights and Solutions, OECD Publishing, Paris, p. 79, https://doi.org/10.1787/3c82f87d-en (դիտված՝ 05.05.2026 թ.):
[148] Հաղորդում՝ ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf https://prosecutor.am/article/4629

մարտահրավերները և դատախազների դերը դրանց դիմագրավման գործում:[149]

Համագործակցություն այլ երկրների հետ (1 միավոր)

ՀՀ դատախազությունը մշտական կապի մեջ է միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և վերջինիս լավագույն տարրերի որդեգրման նպատակով:

2023-2024 թթ. ՀՀ գլխավոր դատախազությունը ստորագրել է փոխըմբռնման հուշագրեր Լիտվայի,[150] Իտալիայի,[151] Հունգարիայի,[152] Ռումինիայի,[153] Մոլդովայի,[154] Կիպրոսի,[155] Հունաստանի,[156] Իրանի,[157] Ուզբեկստանի,[158] Ռուսաստանի,[159] Վրաստանի,[160] Եգիպտոսի[161] և այլ պետությունների դատախազությունների հետ: ՀՀ գլխավոր դատախազությունը 2020-ից անդամ է CARIN.NETWORK՝ իրականացնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցումներին իրավասու մարմինների ուղարկում և դրանցով ստացված պատասխանների վերլուծություն: 2024 թ. ընթացքում ուղարկվել է ավելի քան 17 միջազգային հարցում, որոնցից մի մասի վերաբերյալ արդեն ստացվել են պատասխաններ, մի մասի դեպքում դեռևս սպասվում են: Ընդ որում, 2024 թ. ուղարկված հարցումներից 4-ի դեպքում վարչությունը ստացել է մերժում (24 %): 2023 թ. ուղարկված 7 միջազգային հարցումներից վարչությունը մերժում է ստացել 2-ի դեպքում (29 %):[162]

Փորձագիտական գնահատմամբ՝ ներկայացված վիճակագրությունը վկայում է միջազգային իրավական համագործակցության արդյունավետության հետ կապված համակարգային խնդիրների մասին: Մերժումների հիմնավորումներից առանձնանում են ինչպես իրավապայմանագրային հիմքերի բացակայությունը (փոխօգնության պայմանագրերի կամ

[149] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Ներկայացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուն», 15.11.2024 թ., https://prosecutor.am/article/4684 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[150] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Աննա Վարդապետյանը և Իտալիայի գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր», 30.06.2023 թ., https://prosecutor.am/article/4203 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[151] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Լիտվայի դատախազությունները խորացնում են համագործակցությունը. Աննա Վարդապետյանը լիտվացի գործընկերոջ հետ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր», 30.06.2023 թ., https://prosecutor.am/article/4208 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[152] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Հունգարիայի գլխավոր դատախազները ստորագրեցին համագործակցության հուշագիր», 06.07.2007 թ., https://www.prosecutor.am/article/35 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[153] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ Հայաստանի և Ռումինիայի դատախազությունների միջև», 15.09.2010 թ., https://www.prosecutor.am/article/441 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[154] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանն ընդունել է ՀՀ դատախազության 95-ամյա հոբելյանի կապակցությամբ Հայաստան ժամանած պատվիրակությունների ղեկավարներին», 01.07.2013 թ., https://www.prosecutor.am/article/340 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[155] Նույն տեղում:
[156] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Հունաստանի գլխավոր դատախազությունների միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել», 03.07.2018 թ., https://www.prosecutor.am/article/1169 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[157] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպանին», 28.12.2018 թ., https://www.prosecutor.am/article/1366 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[158] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազը մասնակցել է Բիշքեկում կայացած ԱՊՀ և Շանհայան համագործակցության կազմակերպության երկրների գլխավոր դատախազների նիստերին», 02.10.2019 թ., https://www.prosecutor.am/article/1522 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[159] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, « ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն», 02.06.2021 թ., https://www.prosecutor.am/article/1876 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[160] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հրավերով Հայաստան է ժամանել Վրաստանի գլխավոր դատախազը. ստորագրվել է համագործակցության հուշագիր», 19.04.2022 թ., https://www.prosecutor.am/article/2157 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[161] ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպել է Եգիպտոսի գլխավոր դատախազին. ստորագրվել է համագործակցության հուշագիր», 17.05.2022 թ., https://www.prosecutor.am/article/2182 (դիտված՝ 05.05.2026 թ.):
[162] ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2023 թ. և 2024 թ. հաշվետվություններ:

հուշագրերի բացակայություն), այնպես էլ փոխադարձ ճանաչելիության սահմանափակումները: Սակայն, փորձագիտական դիտարկմամբ, խնդիրը միայն միջազգային իրավական շրջանակների պակասով չի պայմանավորվում. այն կարող է պայմանավորված լինել նաև հարցումների ոչ լիարժեք իրավական հիմնավորմամբ, ձևակերպման թերություններով և միջազգային պահանջներին ոչ լիարժեք համապատասխանությամբ:

«Դատախազները հաճախ չեն կարողանում ձևակերպել բավարար չափով հիմնավորված և իրավական տեսանկյունից պատշաճ հարցումներ, ինչի հետևանքով դժվարանում է անհրաժեշտ տեղեկատվության ստացումը: Մասնավորապես, արձանագրվում են դեպքեր, երբ օտարերկրյա իրավասու մարմինները չեն տրամադրում պահանջվող տվյալները՝ հարցումների ոչ լիարժեք կամ ոչ պատշաճ ձևակերպման, ինչպես նաև համապատասխան իրավական հիմքերի ոչ հստակ նշման պատճառով»:

(Փորձագետ)

Ուստի, միջազգային հարցումների մի զգալի մասի դեպքում առկա են ձևակերպման, հիմնավորման կամ ընթացակարգային բնույթի խնդիրներ, որոնք կարող են նպաստել մերժումների բարձր տոկոսին:

Հասանելիությունը մարգինալացված խմբերին (0 միավոր)

ՀՀ դատախազության 2021-2024 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի մասով տվյալների առանձնացված հաշվառում չի իրականացնում:

Առաջարկություններ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Հակակոռուպցիոն կոմիտե, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել ՀՀ դատախազության վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:
2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
3. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
4. Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը դարձնել ավելի համակարգված և բազմակողմ, օրինակ, ՀՀ դատախազությանը կից հասարակական խորհրդի ստեղծման միջոցով:
5. ՀՀ դատախազության կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա կանխարգելման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

2. ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության

ՀՀ դատախազության անկախության և գործունեության արդյունավետությունը գնահատվել է «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարության» 16 սկզբունքների[163] և դրանց՝ տեղայնացված մեկնաբանություններին համապատասխանության տեսանկյունից, որոնք ներկայացված են Հավելված 4-ում: ՀՀ դատախազության գործունեության համապատասխանության գնահատականը ստացվել է 37 ցուցանիշների միավորների հիման վրա, որոնք ամբողջապես ներառում են նախորդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ չափանիշներով սահմանված ցուցանիշները:

Գծապատկեր 8. ՀՀ դատախազության գործունեության գնահատականը՝ հակակոռուպցիոն մարմինների գործունեության Ջակարտայի հայտարարության սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից

[163] «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ.:

Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, ՀՀ դատախազության գործունեության համապատասխանությունը Ջակարտայի հայտարարության սկզբունքների մասով կազմել է 66.2 %՝ առավելագույն 74-ից ապահովելով 49 միավոր:

1. Մանդատ (7 միավոր)

Ջակարտայի սկզբունքների համաձայն՝ ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով:

Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով սահմանված է ՀՀ դատախազությանը վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը, որի բովանդակությունը համապատասխանում է Սահմանադրության 176-րդ հոդվածի բովանդակությանը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է՝ գլխավոր դատախազի ղեկավարությամբ, որը իր սահմանադրական լիազորությունները իրականացնում է դատախազների միջոցով: Քրեական դատավարության օրենսգրքով նախաքննությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ իրականացվում է հակակոռուպցիոն կոմիտեի կողմից, մինչդեռ ՀՀ դատախազությունը պատասխանատու է քրեական հետապնդման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության և դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության համար: ՀՀ դատախազության իրավասությունը տարածվում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի կոռուպցիոն դրսևորումների վրա՝ կենտրոնական և ենթազգային մակարդակներում: Միաժամանակ, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը օժտված է ապօրինի գույքի բացահայտման, ուսումնասիրության և քաղաքացիական բռնագանձման ամբողջական գործիքակազմով, ինչը նպաստում է ոչ միայն պատժիչ, այլ նաև վերականգնողական հակակոռուպցիոն մոտեցման իրագործմանը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի և Քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունից բխում է, որ դատախազությունը իրավասու է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցելու հանրային քրեական հետապնդում և իրականացնելու մինչդատական վարույթի օրինականության հսկողություն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության միջոցով: Դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման կամ դադարեցման իրավաչափության, ինչպես նաև դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության համար: Հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող

դատախազի որոշմամբ՝ հանցանքի փաստերը հաստատող տվյալների հիման վրա, այդ թվում՝ նաև դատախազի սեփական նախաձեռնությամբ: Միևնույն ժամանակ, դատախազությունը չի հանդիսանում նախաքննության մարմին, և քրեական հետապնդում հարուցելուց հետո նախաքննությունն իրականացնում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

Դատախազը մինչդատական վարույթում օժտված է լայն վերահսկողական լիազորություններով՝ անօրինական գործողություններն ու որոշումները վերացնելու, քննիչին պարտադիր հանձնարարություններ տալու, քրեական հետապնդում հարուցելու կամ դադարեցնելու, մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան հանձնելու մասով:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում Գլխավոր դատախազության համապատասխան վարչությունը իրավասու է սկսել ուսումնասիրություն ինչպես քրեական վարույթների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական տվյալների հիման վրա, այդ թվում՝ այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը անհնար է կամ կասեցված: Վարչությունը կարող է գործել ինչպես ներկայացված նյութերի, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ՝ պայմանով, որ ենթադրյալ ապօրինի գույքի շուկայական արժեքը գերազանցում է 50 մլն ՀՀ դրամը: Ուսումնասիրության շրջանակում վարչությունն օժտված է փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ նախաձեռնելու (սահմանված բացառություններով), միջազգային տեղեկատվական համագործակցություն իրականացնելու և դատարանի միջոցով գաղտնի տեղեկություններ պահանջելու լիազորություններով: Այս իրավական գործիքակազմը ՀՀ դատախազությանը հնարավորություն է տալիս իրականացնել ոչ միայն քրեական հետապնդման, այլև ակտիվ ֆինանսական վերլուծության և քաղաքացիական բռնագանձման գործառույթներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում:

ՀՀ դատախազությունը, որպես նորմատիվ իրավական ակտեր մշակող մարմին, իրավասու է կազմակերպելու հանրային քննարկումներ: Դատախազության կանոնակարգի համաձայն՝ Գլխավոր դատախազը և նրա տեղակալները ընդունում են ներքին և անհատական իրավական ակտեր, որոնց նախագծերը մշակվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից և պետք է համապատասխանեն օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

2024 թ. ընթացքում Դատախազությունը մասնակցել է քրեական արդարադատության ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի մշակմանը, ներկայացրել է 4 օրենսդրական նախաձեռնություն և դիրքորոշումներ է հայտնել շուրջ 200 այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ներկայացված առաջարկությունների ընդունման մակարդակի վերաբերյալ տվյալներ չեն հրապարակվել:

Դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքի համաձայն՝ դատախազը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, մասնակցել քարոզչությանը կամ կազմակերպել քաղաքական չեզոքությունը կասկածի տակ դնող հավաքներ և ընտրություններին մասնակցում է միայն որպես ընտրող: Միևնույն ժամանակ, հանրային և մեդիա դիսկուրսում շրջանառվող տեղեկությունները գլխավոր դատախազի նախկին դերակատարման և գործադիր իշխանության հետ կապերի վերաբերյալ ձևավորում են քաղաքական կախվածության և ընտրովի արդարադատության ընկալումներ: Այս

ընկալումները խորանում են, երբ բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ հարուցված գործերի զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի:

2. Համագործակցություն (7 միավոր)

ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսի: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝միջազգային համագործակցությունը:

ՀՀ դատախազությունը համակարգված համագործակցում է հակակոռուպցիոն ոլորտի առանցքային պետական մարմինների հետ: Դատախազության համապատասխան վարչությունը հսկողություն է իրականացնում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, իսկ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրական տվյալները ստացվում և ամփոփվում են տարեկան հաղորդումներում: Դատախազությունը համագործակցում է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Կենտրոնական բանկի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ՝ տեղեկատվության փոխանակման, փողերի լվացման, կարգապահական վարույթների և ազդարարման համակարգի մոնիտորինգի շրջանակում:

ՔՀԿ-ների հետ փոխգործակցությունը հիմնականում իրականացվում է հանդիպումների, ճանաչողական այցերի, աշխատաժողովների և դոնոր ծրագրերի շրջանակում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավվում են նաև Դատախազությունում մրցույթների և հանձնաժողովների դիտորդական գործընթացներում: Սակայն համագործակցությունը կրում է առավելապես իրազեկման և խորհրդատվական բնույթ:

ՀՀ դատախազությունը ներգրավված է ՏՀԶԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿԴԿ-ի և այլ միջազգային հակակոռուպցիոն մեխանիզմներում, մասնակցում է գնահատման, մոնիտորինգի և հաշվետվությունների պատրաստման գործընթացներին: Համագործակցությունը ներառում է տեղեկատվության փոխանակում, իրավական ակտերի մշակում և համատեղ վերապատրաստումներ:

2023-2024 թթ. ՀՀ գլխավոր դատախազությունը ստորագրել է փոխըմբռնման հուշագրեր մի շարք երկրների դատախազությունների հետ և շարունակում է անդամակցությունը CARIN.NETWORK-ին՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ: Դատախազության ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում են միջազգային միջոցառումների, վերապատրաստումների և երկկողմ հանդիպումների՝ կոռուպցիայի, ֆինանսական և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտներում:

3. Մշտականություն (2 միավոր)

ՀԿՄ-ները, երկրների հիմնական իրավական սկզբունքներին համաձայն, պետք է ստեղծվեն պատշաճ և կայուն օրենսդրական դաշտով՝ Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա:

ՀՀ Սահմանադրության հոդված 176-ը սահմանում է, որ Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի՝ Դատախազությունը գործում է հրապարակայնության, դատախազի ինքնուրույնության և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիության, դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելու, դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքների վրա:

4. Նշանակում (1 միավոր)

ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և կոմպետենտությունը:

ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածով սահմանված է, որ գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ: Սահմանադրությամբ սահմանված են նաև գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող հիմնական պահանջները. թեկնածուն պետք է լինի առնվազն 35 տարեկան, միայն ՀՀ քաղաքացի, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով, բարձրագույն իրավաբանական կրթությամբ և իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառությամբ: Օրենքով կարող են սահմանվել նաև լրացուցիչ պահանջներ:

Գլխավոր դատախազի և նրա տեղակալների նշանակման ու պաշտոնի դադարեցման կարգավորումները սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով: Գլխավոր դատախազի թեկնածուն առաջադրվում է ԱԺ խմբակցության կողմից, անցնում է իրավասու մշտական հանձնաժողովի և ԿԿՀ-ի բարեվարքության գնահատում, ապա ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ և պաշտոնը ստանձնում է երդմամբ:

Գլխավոր դատախազի տեղակալները նշանակվում են օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ՀՀ քաղաքացիներից՝ որոշ դեպքերում առանց մրցույթի, իսկ մյուս դեպքերում՝ որակավորման հանձնաժողովի կողմից անցկացվող մրցույթի միջոցով՝ հաշվի առնելով նաև ԿԿՀ-ի եզրակացությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալի համար սահմանված է հատուկ՝ բաց մրցութային կարգ:

Օրենսդրությունը չի նախատեսում քաղաքացիական հասարակության լիարժեք ներգրավվածություն գլխավոր դատախազի և նրա տեղակալների ընտրության գործընթացում, ինչը սահմանափակում է թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Միաժամանակ, նույն անձի կրկնակի անընդմեջ նշանակման հնարավորությունը կարող է ստեղծել քաղաքական կախվածության և անկախության ռիսկեր:

5. Շարունակականություն (2 միավոր)

Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ համապատասխան պաշտոնյային մինչև կառույցի նոր ղեկավարի նշանակումը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը նախատեսում է. «Գլխավոր դատախազի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով գլխավոր դատախազի տեղակալներից մեկը փոխարինում է գլխավոր դատախազին: Նման հրաման ընդունելու անհնարինության դեպքում, ինչպես նաև գլխավոր դատախազի պաշտոնն օրենքով սահմանված կարգով թափուր մնալու դեպքում գլխավոր դատախազին ժամանակավորապես փոխարինում է գլխավոր դատախազի՝ ՀՀ դատախազության համակարգում առավել երկար փորձառություն ունեցող տեղակալը»:

6. Հեռացում (1 միավոր)

ՀԿՄ ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և հեռացվեն միայն իրավականորեն սահմանված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատար անձանց պաշտոնազրկման ընթացակարգին:

Գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարելու հիմքերը սահմանված են «Դատախազության մասին» օրենքի 63-րդ հոդվածով և հիմնականում կրում են օբյեկտիվ բնույթ: Միաժամանակ, օրենքը նախատեսում է նաև լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հայեցողական հիմքեր, ինչպիսիք են՝ օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումը, որը «վարկաբեկել է դատախազության հեղինակությունը», կամ «այլ անհաղթահարելի խոչընդոտների» առկայությունը: Այս հիմքերը բազմիցս քննադատվել են իրավական որոշակիության տեսանկյունից: ՏՀՁԿ-ի 5-րդ գնահատման զեկույցում նշվում է, որ նշված ձևակերպումները չափազանց ընդհանուր են և կարող են լայն մեկնաբանության տեղիք տալ, ինչը ստեղծում է քաղաքական կամ հայեցողական ազդեցության ռիսկեր:

Գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու ընթացակարգը սահմանված է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածով և ներառում է խմբակցության նախաձեռնություն, քննարկում ԱԺ նիստում, ԿԿՀ-ի եզրակացության ներկայացում և գաղտնի քվեարկություն՝ երեք հինգերորդ ձայների շեմով:

Գլխավոր դատախազի տեղակալների լիազորությունների դադարեցման հատուկ կարգավորում օրենքում առկա չէ, և նրանց նկատմամբ կիրառվում են դատախազների համար նախատեսված ընդհանուր հիմքերը:

7. Էթիկական վարքագիծ (2 միավոր)

ՀԿՄ-ները պետք է սահմանեն վարքագծի կանոններ, որոնք անձնակազմից կպահանջեն էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության պահանջների պահպանման խիստ ռեժիմ:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են օրենքով և գլխավոր դատախազի հրամանով: Դրանք պարտադիր են բոլոր դատախազների համար, իսկ վերադաս դատախազը պարտավոր է հետևել ստորադասների վարքագծի կանոնների պահպանմանը: Դատախազը պետք է իր գործունեությամբ ապահովի Դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անկախությունը:

Գլխավոր դատախազի տեղակալները հետևում են ԿԿՀ-ի վարքագծի կանոնագրքին՝ բացառությամբ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում թույլատրելի գործողությունների: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատվում են փոխվարչապետի կողմից:

Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը կարգավորվում են «Դատախազության մասին» օրենքի 72-74.1 հոդվածներով՝ հղում կատարելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Դատախազի նկատմամբ սահմանափակումներն ու անհամատեղելիությունը սահմանված են նույն օրենքի 49-րդ հոդվածով, որի խախտումները քննվում են գլխավոր դատախազի կամ 7 անդամից բաղկացած էթիկայի հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրում է փաստերը, գաղտնի քվեարկությամբ որոշում է ընդունում կարգապահական խախտման և հնարավոր տույժի մասին: Հայտարարագրման պարտականությունը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ ընդգրկելով ՀՀ դատախազության որոշ պաշտոնյաների:

8. Անձեռնմխելիություն (2 միավոր)

ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանվում են դրույթներ, որոնք կարգավորում են ՀՀ դատախազության ղեկավար կազմի անձեռնմխելիության հարցերը: Այսպես, գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին չի թույլատրվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկել առանց էթիկայի հանձնաժողովի համաձայնության, բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերի, կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Եթե քննարկվում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու հարցը, ապա նրանք էթիկայի հանձնաժողովի կողմից նշված հարցի քննարկմանը չեն մասնակցում: Գլխավոր դատախազի տեղակալի կամ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և տվյալ վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, իսկ գլխավոր դատախազի նկատմամբ՝ գլխավոր դատախազի տեղակալը:

9. Վարձատրություն (3 միավոր)

ՀԿՄ աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված անձանց:

ՀՀ դատախազության աշխատակազմի վարձատրությունը կարգավորվում է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: Դատախազների հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) լրացվում է հավելումներով և հավելավճարներով՝ հաշվի առնելով փորձառությունը, դասային աստիճանը և պաշտոնի առանձնահատուկ ռիսկայնությունը: Օրենքով սահմանված է՝ հավելավճարների ընդհանուր չափը չպետք է գերազանցի հիմնական աշխատավարձի 30%-ը, իսկ առանձնակի ռիսկային պաշտոնների դեպքում տրվում է հավելում՝ 85-100 %-ի չափով: Վարձատրության համակարգը դասակարգված է ըստ պաշտոնների՝ ընդհանրացնելով տարբերակված դրույքաչափերը՝գլխավոր դատախազի տեղակալի, վարչության պետի և մարզային դատախազների համար:

ՀՀ դատախազության խրախուսումների տեսակարար կշիռը ՀՀ դատախազության անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում կազմում է՝ 2021 թ.՝ 26.8 %, 2022 թ.՝ 26.7 %, 2023 թ.՝ 11.4 %, իսկ 2024 թ.՝ 1 %: 2021-2024 թթ. դինամիկան վկայումն է, որ խրախուսումների հատկացումները զգալիորեն նվազել են՝ 26.8 %-ից հասնելով ընդամենը 1 %:

2021-2024 թթ. Գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության հոսունության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին, ինչի պայմաններում արձանագրվել է կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ:

10. Իրավասություն մարդկային ռեսուրսների նկատմամբ (3 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն՝ ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն:

ՀՀ դատախազության ծառայողները նշանակվում են մրցութային կարգով՝ գլխավոր դատախազի կողմից: Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթներով, որոնք կազմակերպում է Դատախազության որակավորման հանձնաժողովը: Բաց մրցույթները, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատախազների համար, անցկացնում են տարին մեկ անգամ, և անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ: Հանձնաժողովը բաղկացած է 9-11 անդամից՝ գլխավոր դատախազի տեղակալ, դատախազներ, իրավաբան-գիտնականներ և ոլորտի փորձագետներ, այն ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

Մրցույթը բաժանվում է փուլերի՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, բարեվարքության ուսումնասիրություն, հարցազրույց և արդյունքների ամփոփում: Հարցաթերթիկի միջոցով բարեվարքության վերաբերյալ կարծիքը տրամադրվում է ԿԿՀ-ի կողմից: Թեկնածուները գնահատվում են մասնագիտական, գործնական հմտությունների և անձնական որակների (ինքնատիրապետում, հաղորդակցման ու վերլուծական հմտություններ) հիման վրա:

Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտերը ներառել կամ բաց թողնել ցուցակում, որոշումը հնարավոր է բողոքարկել դատական կարգով: Ցուցակում ընդգրկվածները անցնում են ուսումնառության ծրագիր Արդարադատության ակադեմիայում:

Բացի այդ, դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և տեղակալների, պարտավոր են յուրաքանչյուր երկու տարին մեկ անցնել վերապատրաստում՝ Արդարադատության ակադեմիայի ծրագրերով: 2024 թ. նրանց վերապատրաստումները ներառել են՝ կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունների, հանրային շահերի պաշտպանության, միջազգային փորձագիտական դասընթացների (Բուդապեշտ, ԱՄՆ դեսպանության ԹՊԻՀ, BAMIN, Եվրոպայի խորհուրդ, Դատախազների միջազգային ասոցիացիա) թեմաները:

Արդարադատության ակադեմիայի դասընթացներին 2021 թ. մասնակցել են թվով 167, 2022 թ.՝ 116, 2023 թ.՝ 261, 2024 թ.՝ 140 դատախազներ, իսկ քաղաքացիական ծառայողների վերապատրաստումներին՝ 2021 թ.՝ 57, 2022 թ.՝ 75, 2023 թ.՝ 88, 2024 թ.՝ 73 մասնակիցներ:

11. Համարժեք և հուսալի ռեսուրսներ (5 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և տարածքը: ՀԿՄ-ները պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ-ի մանդատի իրագործման համար:

ՀՀ դատախազության ֆինանսավորումը իրականացվում է «Դատախազության մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի համաձայն՝ Դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում առանձին տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատախազություն:

Դատախազության բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Բյուջետային հայտի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ Դատախազության դիրքորոշումն Ազգային ժողովում ներկայացնում է Դատախազության գլխավոր քարտուղարը:

2021-2024 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 0.1 %-ից պակաս է՝ փոքր աճով՝ 2021 թ. 6.1 մլրդ. ՀՀ դրամից մինչև 2024 թ. 10.4 մլրդ. ՀՀ դրամ: Հատկացումները հիմնականում ուղղվել են «Փորձաքննության ծառայություններ», «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» և «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» ծրագրերին:

Աշխատանքների գերակշիռ մասը՝ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծախսերն են, որոնք կատարելագործվել են, մասնավորապես՝ քրեական հետապնդման և փորձաքննությունների ծառայությունների ծախսերի աճով:

Բյուջեի հատկացումների հաստատման և տրամադրման գործընթացում խախտումներ չեն եղել, իսկ ճշտված միջոցների չօգտագործման դեպքեր նույնպես չեն արձանագրվել: 2023 թ. 107,4 մլն. ՀՀ դրամ հատկացվել է քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ձեռքբերման համար:

Պետական բյուջեից ՀՀ դատախազության անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների և հատկացված բյուջեի մեծության համադրությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել:

12. Ֆինանսական ինքնավարություն (2 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ստանան բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունենան կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին:

2023-2024 թթ. ՀՀ կառավարությունն ու ԱԺ-ն ամբողջությամբ բավարարել են ՀՀ դատախազության բյուջետային հայտը: Հատկացումները հիմնականում ուղղվել են «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն», «Փորձաքննության ծառայություններ» և մեկ այլ ծրագրերին՝ գերակշռող մասով Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին՝ շուրջ 99.4-99.5 % կատարման մակարդակով:

2022-2024 թթ. ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների ծավալի մեծացմամբ, բազային աշխատավարձերի բարձրացմամբ և դատահիրավական համակարգի բարեփոխումներով: 2024 թ. ծրագրերի շրջանակներում իրականացվել է 39,397 քրեական վարույթ, ավարտվել է 38,058-ը, պետական շահերի պաշտպանության ոլորտում վերականգնվել է 2,862 մլրդ. ՀՀ դրամ, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցագումարը կազմել է 287,742 մլրդ. ՀՀ դրամ: «Փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում օգտագործվել է միջոցների 99.9 %-ը՝ 15,013 իրականացրած փորձաքննություն:

2021-2024 թթ. բյուջետային միջոցների սահմանափակումներ չեն եղել, դոնոր կազմակերպությունների ֆինանսավորում չի տրամադրվել: Հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել ՀՀ դատախազության առաջադրված խնդիրները լուծելու համար:

13. Ներքին հաշվետվողականություն (6 միավոր)

ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, ներառյալ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու որևէ սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում:

ՀՀ դատախազությունում ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են ՀՀ դատախազության կանոնակարգով: Գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը վերահսկողությունն իրականացնում են ստորաբաժանումների ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով, որոնց դեպքում լրացվում է հսկողական քարտ: Ստուգումների կարգը ներառում է հանձնարարություն, իրավական հիմք, նպատակ և ժամկետ:

Գլխավոր դատախազը հաստատում է Դատախազության ներքին կարգապահական կանոնները: Դատախազի վարքագծի կանոնները սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով և գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրամանով:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են օրենքով և գլխավոր դատախազի հրամանով: Դրանք պարտադիր են բոլոր դատախազների համար, իսկ վերադաս դատախազը պարտավոր է հետևել ստորադասների վարքագծի կանոնների պահպանմանը: Դատախազը պետք է իր գործունեությամբ ապահովի Դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անկախությունը:

Գլխավոր դատախազի տեղակալները հետևում են ԿԿՀ-ի վարքագծի կանոնագրքին՝ բացառությամբ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում թույլատրելի գործողությունների: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատվում են փոխվարչապետի կողմից:

Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը կարգավորվում են «Դատախազության մասին» օրենքի 72-74.1 հոդվածներով՝ հղում կատարելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Հայտարարագրման պարտականությունը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ ընդգրկելով Դատախազության որոշ պաշտոնյաների:

Դատախազությունում առկա է ներքին աուդիտի բաժին, սակայն դրա գործառույթները կանոնադրությամբ մանրամասնված չեն: Գլխավոր դատախազի 2024 թ. հոկտեմբերի 16-ի N 78-Լ հրամանով հաստատվել է ներքին աուդիտի կոմիտեի կազմը, սակայն կայքում բացակայում են գնահատման հաշվետվություններ և 2021-2024 թթ. աուդիտի արդյունքները:

ՀՀ գլխավոր դատախազությունը azdararir.am միասնական էլեկտրոնային հարթակով ստանում է ազդարարումներ, դրանք քննարկում, հաշվառում է և անհրաժեշտության դեպքում համապատասխան ակտ է ընդունում կամ ուղարկում օպերատիվ-հետախուզական մարմնին կամ Հակակոռուպցիոն կոմիտե: Անանուն ու ստորագրված բողոքների համադրությունը վկայում է, որ ազդարարողների միայն 24.85 %-ն է վստահել ինքնությունը բացահայտելուն:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի գլխավոր դատախազը և գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը: Կարգապահական տույժերը կախված են խախտման ծանրությունից՝ նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում, պաշտոնի իջեցում, պաշտոնից ազատում: Տույժերը նշանակվում են գլխավոր դատախազի,

որոշ դեպքերում՝ ՀՀ նախագահի կողմից, էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

14. Արտաքին հաշվետվողականություն (1 միավոր)

ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմներով, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար:

ՀՀ դատախազությունը հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով կարգավորվում ՀՀ դատախազության տարեկան գործունեության հաղորդումների բանավոր եղանակով ներկայացումը Ազգային ժողովին: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով՝ ԱԺ-ի կողմից ՀՀ դատախազության գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով ՀՀ դատախազությանը վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով ՀՀ դատախազության գործունեության հաշվեքննություն չի իրականացվել:

15. Հրապարակային հաշվետվություններ (1 միավոր)

ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարին մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանն իրենց գործունեության մասին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն՝ Դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու իրավունքները, ազատությունները, օրինական շահերը և օրենքով պաշտպանվող գաղտնիքները: Գլխավոր դատախազը ամեն տարի մինչև ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին տարեկան հաղորդում, որը քննարկվում է նիստում՝ հիմնական զեկուցման, հարցերի և մտքերի փոխանակության կարգով, և հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է ՀՀ դատախազության կայքում:

ՀՀ գլխավոր դատախազությունը հրապարակում է նաև հանցագործությունների, կոռուպցիոն հանցագործությունների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Սակայն առկա տվյալները ցույց են տալիս՝ հաղորդումները լիարժեք չեն, բացակայում են քրեական վարույթների կարճման հիմքերը, բյուջեի կատարողականը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունները և այլ անհրաժեշտ տվյալներ:

ՀՀ դատախազությունը հասանելիություն ունի էլեկտրոնային e-request.am հարթակին, որի վիճակագրությունը վկայում է, որ այն չի գտնվում ամենապահանջված պետական մարմինների շարքում:

2021 թ. ՀՀ դատախազությանը ներկայացված հանրության հարցումների քանակը կազմել է 312, 2022 թ.՝ 433, 2023 թ.՝ 830, 2024 թ.՝ 843: Չնայած վերջին տարիներին հարցումների քանակի կրկնապատկմանը՝ ՀՀ դատախազությանը ներկայացված և անարձագանք թողնված հանրության հարցումներ չեն արձանագրվել:

16. Հանրային հաղորդակցություն և գործակցություն (1 միավոր)

ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և համագործակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության վստահությունն իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ:

ՀՀ դատախազության կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել:

ՀՀ դատախազության հանրության հետ հաղորդակցության ու գործակցության հիմնական գործիքը շարունակում է մնալ https://prosecutor.am պաշտոնական կայքը: ՀՀ դատախազության կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կառուցվածքը, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, կառուցվածքի վերաբերյալ տեղեկություններ, Դատախազության ամենամյա հաշվետվությունները՝ Ազգային ժողովին, կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաղորդումները, հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները: Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, գլխավոր դատախազի հրամաններ:

ՀՀ դատախազության կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկություն: ՀՀ դատախազության պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Նշված 3 սոցիալական հարթակներից բոլորը գործում են:

Հասարակության վստահությունը ՀՀ դատախազության նկատմամբ միջինից ցածր է, հանրային տեղեկացվածությունը շատ ցածր է, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ ընկալումները հակասական են: Այս հանգամանքները վկայում են հաղորդակցության պակասի, հանրային ընկալումների ուսումնասիրությունների բացակայության և վստահության բարձրացման անհրաժեշտության մասին:

ՀՀ դատախազության 2021-2024 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի կտրվածքով ագրեգացված վիճակագրական տվյալները բացակայում են:

3. ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի

ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ ազդեցության գործոնների և կատարողականի, բացահայտում է ՀՀ դատախազության գործունեության արդյունքների վրա օրենսդրական կարգավորումների, ռեսուրսներով ապահովածության, ՀՀ

դատախազությանը վերապահված լիազորությունների ու իրավասությունների տեսանկյունից Կառավարության աջակցության և պատրաստակամության մակարդակը:

ՀՀ դատախազության գործունեության արձանագրված արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում և ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում:

Գծապատկեր 9. ՀՀ դատախազության գործունեության կատարողականի գնահատումը՝ ըստ արտաքին ու ներքին ազդեցության գործոնների



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ ՀՀ դատախազության գործունեության մակարդակը գնահատվել է 62.5 %՝ առավելագույն 32-ից ապահովելով 20 միավոր, ներքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ գնահատվել է 73 %՝ առավելագույն 26-ից ապահովելով 19 միավոր, իսկ կատարողականի ցուցանիշներով պայմանավորված՝ գնահատվել է 36.8 %՝ առավելագույն 38-ից ապահովելով 14 միավոր:

ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին գործոնների (20 միավոր)

Արտաքին գործոնների շարքում դիտարկվել են ինստիտուցիոնալ անկախությունը, Գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակումը և հեռացումը, մանդատը, իրավասությունը, հետապնդման լիազորությունները, առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները, իրավական և գործառնական ինքնավարությունը, լիազորությունների քաղաքական օգտագործումը, բյուջեի համամասնությունը, բավարար լինելը, անվտանգությունը և կայունությունը, կրթության և իրազեկման նպատակով հատկացված բյուջեն, արտաքին վերահսկողական մեխանիզմները, դատապարտումների ցուցանիշը, հանրային վստահությունը Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության առնչությամբ:

Հատկանշական է, որ արտաքին գործոնների առումով համեմատաբար բարձր մակարդակն ապահովել են անկախության և կարգավիճակի ցուցանիշների գնահատականները: Դրանց շարքում առավելագույն գնահատականներ են ապահովել ՀՀ դատախազության ինստիտուցիոնալ անկախությունը, ՀՀ դատախազության մանդատի, իրավասության, իրավական ու գործառնական ինքնավարության, հետապնդման լիազորությունների ցուցանիշները:

Արտաքին գործոնների շարքում առավել խնդրահարույց են ֆինանսական անկախության ու ապահովության ցածր մակարդակները, ինչպես նաև Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության առնչությամբ հանրային վստահության բացակայությունը:

ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ ներքին գործոնների (19 միավոր)

Ներքին գործոնների շարքում դիտարկվել են աշխատակազմի ընտրությունը, աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը, հետապնդման փորձագիտությունը, անձնակազմի ուսուցումը, վերապատրաստումը, կայունությունը, տարեկան հաշվետվությունը, արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին, ներքին վերահսկողական և բարեվարքության մեխանիզմները, համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային հակակոռուպցիոն ցանցերի, այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների հետ:

Ներքին գործոնների շարքում առավելագույն բարձր միավորներ են ապահովել աշխատակազմի փորձագիտության, վարձատրության, ինչպես նաև միջազգային հակակոռուպցիոն ցանցերին անդամակցության ցուցանիշները, իսկ միջին մակարդակի գնահատականներ են ստացվել աշխատակազմի ընտրության, անձնակազմի կայունության, վերապատրաստման, հանրության դիմումներին արձագանքողականության, ոչ կառավարական կազմակերպությունների և այլ երկրների հետ համագործակցության, ներքին վերահսկողության մեխանիզմների ցուցանիշները:

ՀՀ դատախազության գործունեության գնահատումն՝ ըստ կատարողականը բնութագրող գործոնների (14 միավոր)

Կատարողականի գնահատման համար դիտարկվել են գործընթացների պատշաճ պահպանումը, ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը, ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը և արդյունքները, հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին, արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին, նախաձեռնողականությունը, արդյունավետությունը և արհեստավարժությունը, հետապնդումների ցուցանիշը, քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետապնդումները, փոխհատուցումը և ակտիվների վերականգնումը, ՀՀ դատախազության կատարողականի ընկալումը, կոռուպցիայի կանխարգելման, կրթության և իրազեկման ռազմավարական պլանավորումը, կրթությունը (դասընթացները) և զարգացումը, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին

ներկայացված առաջարկությունները, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտությունները, տեղեկատվության տարածումը և քարոզարշավները, առցանց հաղորդակցումը, հասանելիությունը մարգինալացված խմբերին:

ՀՀ դատախազության կատարողականի բարձր մակարդակը ապահովել է բողոքների արդյունքների ցուցանիշները: ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը, նախաձեռնողականությունը, արդյունավետությունը և արհեստավարժությունը, տարածումը և քարոզարշավները, կրթությունը (դասընթացները) և զարգացումը, կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին արձագանքողականությունը, առցանց հաղորդակցումն ապահովել են ՀՀ դատախազության կատարողականի միջին գնահատականները: ՀՀ դատախազության կատարողականի ցածր մակարդակի վրա իրենց ազդեցությունն են ունեցել բողոքատուներին/տեղեկատուներին/ ազդարարումներին հասանելիության, արձագանքողականության, ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը, գործընթացների պատշաճ պահպանման, հետապնդումների, փոխհատուցման և ակտիվների վերականգնման, կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխարգելման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորման, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտությունների, մարգինալացված խմբերին հասանելիության, քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետապնդումների և ՀՀ դատախազության կատարողականի ընկալման ցուցանիշները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ՀՀ դատախազության գործունեության գնահատմամբ վերհանված խնդիրների առնչությամբ ներկայացվել են հետևյալ առաջարկությունները՝ ըստ չափման խմբերի:

1.1. ՀՀ դատախազության անկախությունը և կարգավիճակը

1. Վերանայել և վերացնել Գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում 2 անգամ անընդմեջ ընտրվելու հնարավորությունը:
2. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում թափանցիկությունն ու արժանիքահեն մոտեցումն ապահովելու նպատակով թեկնածուների առաջադրման փուլում սահմանել լրացուցիչ մեխանիզմներ, այդ թվում՝ մինչև ԱԺ ներկայացնելը բաց մրցույթի կազմակերպում՝ սահմանված պահանջներին համապատասխանող ցանկացած անձի մասնակցության և ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովի կողմից մեկ թեկնածուի փոխարեն ԱԺ-ի քննարկմանը մինչև երեք թեկնածուի ներկայացման հնարավորությամբ:
3. Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում ապահովել անկախ փորձագետների մասնակցությունը (այդ թվում՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ), որոնք չեն հանդիսանում հանրային ծառայողներ և ենթակա չեն որևէ պետական մարմնի:
4. Վերանայել Գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերից որոշ հայեցողական գնահատման հնարավորություն ստեղծող հիմքեր

սահմանող կարգավորումները (օրինակ՝ օրենքի խախտումը, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը):

5. Սահմանել անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ՝ դատախազների ինքնուրույնությունն ու անկախությունն ապահովելու, Գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմնի ձևավորման կամ գործող մարմինների կազմավորման կարգի վերանայման նպատակով՝ դրանց կազմում ներառելով նաև ոչ դատախազ անդամներ (օրինակ՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ, նշված ոլորտում առնվազն 5 տարվա փորձառություն ունեցող իրավաբաններ), իսկ դատախազ անդամների ընտրությունն իրականացնել դատախազների կողմից՝ ապահովելով համակարգի տարբեր օղակների ներկայացվածությունը:
6. ՀՀ դատախազությանն օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար:
7. ՀՀ դատախազության լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործման ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է Գլխավոր դատախազի թեկնածուների ընտրության չափանիշներում սահմանել առնվազն վերջին երեք տարիների ընթացքում որևէ կուսակցության անդամ հանդիսանալու կամ քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվելու սահմանափակում:

1.2. ՀՀ դատախազության ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով

8. Մեծացնել ՀՀ դատախազության բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
9. ՀՀ դատախազության ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից ՀՀ դատախազության ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով ՀՀ դատախազության համաձայնությունը:
10. Վերանայել և բարձրացնել դատախազների հիմնական աշխատավարձի դրույքաչափերը, ինչը հնարավորություն կտա ձևավորել պարզ, թափանցիկ և կայուն վարձատրության համակարգ՝ ապահովելով, որ եկամտի առանցքը հանդիսանա հիմնական աշխատավարձը, իսկ հավելումները ունենան բացառիկ և հիմնավորված բնույթ՝ առանց խաթարելու համակարգի ամբողջականությունն ու ինստիտուցիոնալ անկախությունը:
11. Վերանայել խրախուսման մեխանիզմները՝ հիմնվելով կատարողականի, մասնագիտացման և ծանրաբեռնվածության գործոնների վրա:
12. Վերանայել դատախազների ընտրության և նշանակման, առաջխաղացման համար անցկացվող փակ մրցույթների նպատակահարմարությունը՝ սահմանելով օբյեկտիվ և արժանիքահեն չափանիշներ դատախազների առաջխաղացման համար: Օրենքով սահմանել թափանցիկության ապահովման հստակ մեխանիզմներ՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որակավորման հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ մասնակցելու, ինչպես նաև

սահմանված կարգով հանձնաժողովի կազմում անդամ ներգրավվելու հնարավորությունը:

13. Վերանայել դատախազների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների փուլերը՝ նախատեսելով նաև գրավոր փուլ: Սահմանել, որ ԿԿՀ-ի կողմից դատախազների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունը իրականացվում է միայն այն թեկնածուների նկատմամբ, ովքեր հաղթահարել են մրցույթի գրավոր փուլը և թույլատրվել են մասնակցելու հարցազրույցի փուլին:
14. Վերանայել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանցից պահանջվող փաստաթղթերի շրջանակը և սահմանել նաև հայտին կից պետական տուրքի նվազագույն չափով վճարման մասին ապացույց ներկայացնելու պահանջ՝ ապահովելու հայտ ներկայացնողների լիարժեք մասնակցությունը մրցույթի բոլոր փուլերին:
15. Սահմանել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց համար առնվազն երեք տարվա իրավաբանի աշխատանքային փորձ:
16. Սահմանել կարգավորում, ըստ որի որակավորման հանձնաժողովի կողմից դատախազների թեկնածուների համալրման մրցույթի արդյունքների հաստատումից հետո թեկնածուների ցուցակից որևէ մեկի բացառման պատճառները լինեն հրապարակային, ինչը կազդի Գլխավոր դատախազի հայեցողական որոշումների հաշվետվողականության վրա:
17. Կազմակերպել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումների դատախազների կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ՝ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
18. Արդարադատության ակադեմիայում և Դատախազությունում պետք է տարեկան մեկ անգամ իրականացնել կարիքների գնահատում՝ գնահատելով ակադեմիայի կրթության որակը և արդյունավետությունը, միաժամանակ ներգրավելով արտաքին ռեսուրսներ՝ օբյեկտիվության և մասնագիտական գնահատման ապահովման նպատակով:
19. Ուսումնասիրել ՀՀ դատախազության անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:

1.3. ՀՀ դատախազության ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը

20. Ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի վերականգնման և կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրման ու վերլուծության համակարգ: Այս առնչությամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանումը և առկա կառուցակարգերի կատարելագործումը:
21. ՀՀ դատախազության տարեկան հաշվետվության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել հաշվետվության պարտադիր բովանդակությունը՝ այն համապատասխանեցնելով ՏՀԶԿ և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի չափանիշներին և ներառելով քրեական վարույթների ամբողջական վիճակագրություն, գործերի կարճման հիմքեր, բյուջեի կատարողականի տվյալներ և

բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ նպատակահարմար է ներդնել կիսամյակային հրապարակային հաշվետվությունների մեխանիզմ և ապահովել հաշվետվությունների մեթոդաբանության և հավելվածների ամբողջական հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքում՝ բաց տվյալների ձևաչափով:

22. Տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ներդնել հարցումների կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ, սահմանել պատասխանների որակի և ժամկետների վերահսկման չափորոշիչներ, ինչպես նաև ուժեղացնել համապատասխան ստորաբաժանումների մարդկային ռեսուրսներն ու մասնագիտական կարողությունները:
23. Ներքին վերահսկողության համակարգի ամրապնդման համար անհրաժեշտ է մշակել և հրապարակել ՀՀ դատախազության ռազմավարական զարգացման փաստաթղթեր, հստակեցնել ներքին աուդիտի մանդատը և ապահովել դրա արդյունքների պարբերական հրապարակայնացումը, ինչպես նաև ներդնել ռիսկերի կառավարման և ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:
24. Պարբերաբար իրականացնել անկախ հանրային ընկալումների հարցումներ, մշակել և կիրառել հաղորդակցության և իրազեկման համապարփակ ռազմավարություն, ինչպես նաև ապահովել հանրության մասնակցության մեխանիզմների զարգացումը՝ բաց քննարկումների և խորհրդատվական հարթակների միջոցով:
25. ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննության և բարեվարքության համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է ապահովել բողոքների վերաբերյալ կառուցվածքային վիճակագրության հավաքագրումը և հրապարակումը, ուժեղացնել էթիկայի հանձնաժողովի անկախությունը, ինչպես նաև ներդնել կանխարգելիչ ուսուցման և բարեվարքության մշտադիտարկման մեխանիզմներ:
26. ՀՀ դատախազության նկատմամբ իրական և բազմաշերտ արտաքին վերահսկողություն ապահովելու նպատակով նպատակահարմար է ստեղծել գլխավոր դատախազից անկախ դատախազական ինքնակառավարման կոլեգիալ մարմին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ, ընդլայնել խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը:
27. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսել ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ ընտրանքային հաշվեքննության և թեմատիկ վերահսկողության մեխանիզմներ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ ամբողջական հաշվեքննություն նախատեսված չէ տարեկան ծրագրով:

1.4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում

28. Ազդարարների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է ապահովել ազդարարումների վերաբերյալ մանրամասն վիճակագրության հրապարակումը, ներդնել անվտանգ հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր և հրապարակել հաջողված դեպքերի անանուն օրինակներ՝ վստահության ամրապնդման նպատակով:
29. Վերանայել ու ավելացնել ՀՀ դատախազության հետ հանրային հաղորդակցման ուղիները, ներառյալ պարբերական հրապարակային հաշվետվություններում՝ մատնանշելով ստացված հաղորդումների, դրանց ընթացքի և դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների քանակը, ինչպես նաև կանխարգելիչ պարզաբանումները, որպեսզի հանրությունը տեսնի իրական կատարողականը:

30. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումների թափանցիկությունը պետք է ապահովվի՝ հրապարակելով գործերի ընթացքի, արդյունքների և կիրառված պատժի մասին առանձնացված տվյալները, ինչը կնվազեցնի քաղաքական ազդեցությամբ պայմանավորված ընտրովի հետապնդումների ռիսկը և կբարձրացնի հանրային վստահությունը:
31. ՀՀ դատախազության կողմից իրականացնել կամ պատվիրել ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
32. Բարձրացնել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության աշխատանքի նախաձեռնողականությունը, ինչը պահանջում է գործընթացի ռիսկերի և գույքի ուսումնասիրության առաջնահերթությունների վերահստակեցում, ինչպես նաև անձնակազմի պրոֆեսիոնալ հմտությունների ուժեղացում:
33. Ապահովել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցերի և դրանց արդյունքում ընդունված դատական ակտերի իրականացման վերահսկում և ակտիվների վերականգնման բարձր տոկոս:

1.5. Կանխարգելում, կրթություն և իրազեկում

34. Մշակել ՀՀ դատախազության հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել մարմնի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
35. Բարձրացնել ՀՀ դատախազության հակակոռուպցիոն գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
36. Իրականացնել ՀՀ դատախազության հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու ՀՀ դատախազության դերը և նշանակությունը հակակոռուպցիոն և ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման ոլորտներում:
37. Վերակազմակերպել ՀՀ դատախազության կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:
38. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով ՀՀ դատախազությունը համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:

1.6. Համագործակցություն և արտաքին հարաբերություններ

39. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Հակակոռուպցիոն կոմիտե, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել ՀՀ դատախազության

վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:

40. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
41. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
42. Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը դարձնել ավելի համակարգված և բազմաշերտ:
43. ՀՀ դատախազության կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա կանխարգելման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

Հավելված 1. ՀՀ դատախազության գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	Անկախությունը և կարգավիճակը (9 ցուցանիշ)					Բարձր	ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխում սահմանված են Դատախազությանը նվիրված իրավակարգավորումները, ինչից կարելի է եզրահանգել, որ դատախազությունը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, չնայած Սահմանադրության տեքստում դատախազության անկախության մասին որևէ դրույթ նախատեսված չէ: ՀՀ Սահմանադրության հոդված 176-ը սահմանում է, որ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: https://www.arlis.am/hy/acts/143723 Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի՝ դատախազությունը գործում է հրապարակայնության, դատախազի ինքնուրույնության և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիության, դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելու, դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքների վրա: https://www.arlis.am/hy/acts/203931 ՀՀ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում: Ընդ որում, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին:
1.	Ինստիտուցիոնալ անկախություն	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության ղեկավար կազմի, անձնակազմի հետ	Ոստիկանության կամ նախարարության ներսում	Առանձին գերատեսչություն, որը հաշվետու է նախարարությանը	Օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմին		
			Ուղղորդում: Միավորներն արտացոլում են ՀՀ կառավարությունից ՀՀ դատախազության անկախության աստիճանը՝ պետական կամ սահմանադրական մարմին լինելուց մինչև որևէ գերատեսչության կամ նախարարության ստորաբաժանում լինելը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://www.prosecutor.am/dynamicWebPages/report ՄԱԿԴԿ-ի 6-րդ հոդվածը պահանջում է, որ «Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված»: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի համաձայն՝ դատախազության գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր քննարկելու, դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները որոշելու համար գլխավոր դատախազի նախագահությամբ գործում է կոլեգիա: Դատախազության կոլեգիան կազմված է գլխավոր դատախազից, գլխավոր դատախազի տեղակալներից, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և Երևան քաղաքի դատախազից: Կոլեգիայի նիստին առանց ձայնի իրավունքի կարող են մասնակցել գլխավոր դատախազի հրավիրած այլ դատախազներ: Դատախազության կոլեգիայի գործունեության կարգը սահմանում է գլխավոր դատախազը: https://www.prosecutor.am/storage/orders/orders_38_1685023080.pdf Այնուամենայնիվ, թեև օրենսդրորեն ամրագրված է դատախազական կոլեգիալ մարմնի առկայությունը, միջազգային պարտավորությունների կատարման տեսանկյունից ՀՀ դատախազությունը չունի անկախ կոլեգիալ մարմին: Այսպես, ՏՀԶԿ գնահատման 5-րդ զեկույցում արձանագրվել են դատախազների անկախությունն ապահովելու նպատակով Գլխավոր դատախազից անկախ ինքնակառավարման դատախազական կոլեգիալ մարմնի (դատախազական խորհրդի) բացակայության և դրանից բխող մի շարք խնդիրներ: ՏՀԶԿ եզրահանգել է, որ ՀՀ դատախազական մարմինները չեն համապատասխանում ինքնակառավարման կոլեգիալ մարմինների չափանիշներին, դրանց կազմերն ընտրվում են գլխավոր դատախազի կողմից՝ առանց հստակ չափանիշների և թափանցիկության: Ավելին, դրանց գործունեության

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կարգը հաստատվում է գլխավոր դատախազի կողմից: https://doi.org/10.1787/fb158bf9-en
2.	Գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության ղեկավար կազմի, անձնակազմի հետ	Վարչապետը /Նախագահը/ պետության ղեկավարը նշանակման մասին որոշում է կայացնում՝ առանց անկողմնակալության ապահովման երաշխիքների (այդ թվում՝ թափանցիկ ընթացակարգի), և/կամ ՀՀ գլխավոր դատախազը և իր տեղակալները (ղեկավար կազմը) չունեն հաստատագրված	Նախարարական հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում՝ անկողմնակալության ապահովման որոշ երաշխիքներով (օրինակ՝ թափանցիկ ընթացակարգ), և/կամ ՀՀ գլխավոր դատախազը և իր տեղակալները (ղեկավար կազմը) ունեն հաստատագրված ժամկետ (առանց պաշտոնավա	Անկախ հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում՝ անկողմնակալության ապահովման ուժեղ երաշխիքներով (ներառյալ թափանցիկ ընթացակարգը), և ՀՀ գլխավոր դատախազը և իր տեղակալները (ղեկավար կազմը) ունեն հաստատագրված ժամկետ (պաշտոնավարության ժամկետով) և	Միջին	ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ: Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: Սահմանադրությամբ նաև սահմանված են գլխավոր դատախազի պաշտոնին հավակնելու համար հիմնական պահանջները: Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխով կարգավորվում են գլխավոր դատախազի, նրա տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման, նրանց ներկայացվող պահանջների, պաշտոնի դադարեցման գործընթացները: https://www.arlis.am/hy/acts/203931 Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ժամկետ և կարող են հեշտությամբ փոխարինվել	ման ժամկետի), բայց նրանց հեռացնելը դժվար չէ	չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ՝ անձեռնահասություն կամ սխալ վարքագիծ)		վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ: Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով ճանաչվելու և նրա կողմից գլխավոր դատախազի թեկնածուի առաջադրման և ընտրության կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի լիազորությունների ավարտից առնվազն հարյուր օր առաջ, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, ԱԺ աշխատակազմն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավասու մշտական հանձնաժողովին և խմբակցություններին: Գլխավոր դատախազի թեկնածուն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին է առաջադրվում խմբակցության որոշմամբ: Որոշման մեջ նշվում են թեկնածուի և նրան ներկայացնելու իրավասություն ունեցող խմբակցության ներկայացուցչի անունները, ազգանունները: Որոշմանը կցվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև թեկնածուի լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը: Սահմանադրության կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը որոշումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է խմբակցությանը՝ նշելով պատճառների մասին: Սահմանադրության և օրենքի պահանջները բավարարելու դեպքում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր դատախազի թեկնածուի բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է ԿԿՀ՝ երկշաբաթյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց և առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ գլխավոր դատախազի թեկնածուի դեպքում՝ այն ժամկետում, որ ապահովվի թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից խորհրդատվական եզրակացության
			Ուղղորդում: Այս ցուցանիշը նկարագրում է ՀՀ գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման և հեռացման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անձինք և նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները: Անկողմնակալության ապահովման երաշխիքները ներառում են ընտրության անաչառ չափանիշները և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը: Հետազոտողը պետք է իր դատողությամբ որոշի, թե նշանակման և հեռացման բոլոր հատկանիշների համադրությունը, որն առկա է ՀՀ դատախազությունում, ցածր, միջին, թե բարձր միավոր է կազմում՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							տրամադրումը, Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող է քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դատախազի մեկ թեկնածու: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը, ինչպես նաև ԿԿՀ-ի տրամադրած խորհրդատվական եզրակացությունը: Ազգային ժողովի նիստում գլխավոր դատախազի պաշտոնում ընտրվելու մասին հարցը քննարկվում է հետևյալ ընդհանուր կարգով. 1) մինչև տասական որպե տևողությամբ ելույթներով՝ ըստ թեկնածուների ազգանվան այբբենական հաջորդականության հանդես են գալիս թեկնածուներին ներկայացնելու իրավասություն ունեցող անձինք. 2) մինչև քսանական որպե տևողությամբ ելույթներով հանդես են գալիս թեկնածուները. 3) թեկնածուին ներկայացնող անձը և թեկնածուն ելույթ են ունենում հաջորդաբար. 4) ելույթից հետո թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին կարող են հարցեր տրվել. 5) մտքերի փոխանակություն. 6) մինչև տասական որպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները: Գլխավոր դատախազը ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ազգային ժողովի կողմից ընտրված անձը պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված երդմամբ: Նորընտիր գլխավոր դատախազը պաշտոնը ստանձնում է պաշտոնավարող գլխավոր դատախազի լիազորությունների ավարտման օրը: https://www.arlis.am/hy/acts/201755

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Թեև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է, որ մշտական հանձնաժողովը կարող է նախագծերի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով դիմել գիտական կամ ուսումնական հաստատություններին, ինչպես նաև նիստերին հրավիրել մասնագետներ, այս հայեցողական լիազորությունը չի հանդիսանում գլխավոր դատախազի ընտրության գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության բավարար երաշխիք: Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Վերոնշյալ պահանջներից բացի, գլխավոր դատախազի թեկնածուների վրա են տարածվում դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջները. 1) ունի ՀՀ բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով. 2) տիրապետում է հայերենին. 3) որի նկատմամբ չեն տարածվում հետևյալ սահմանափակումները. • դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. • դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզգույշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել. • ունի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, որոնք ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով. • որի նկատմամբ դիտավորյալ հանցագործության համար հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով. • ունի նաև այլ պետության քաղաքացիություն. • նախկինում դատախազի կամ դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքում, եթե կարգապահական տույժի կիրառումից չի անցել մեկ տարի. • օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկված է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից: https://www.arlis.am/hy/acts/203931 Ինչ վերաբերում է գլխավոր դատախազի տեղակալի նշանակմանը, ապա «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազի տեղակալ կարող է նշանակվել սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, բարձր մասնագիտական որակներ և բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն ունեցող անձը: Գլխավոր դատախազի տեղակալ չի կարող նշանակվել այն անձը, որը նախկինում դատախազի, դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման հետևանքով: Այն դեպքում, եթե գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն զբաղեցնում է դատախազի պաշտոն, ապա նա, գլխավոր դատախազի կողմից, խորհրդակցելով դատախազության կոլեգիայի հետ, կարող է նշանակվել գլխավոր դատախազի տեղակալ՝ առանց մրցույթի: Գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու դեպքում գլխավոր դատախազի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							տեղակալի թեկնածուն ընտրվում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կողմից՝ սահմանած կարգով անցկացվող մրցույթի միջոցով՝ գաղտնի քվեարկությամբ, որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն վեց ձայնով ընդունված որոշմամբ: Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Գլխավոր դատախազը գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուներից մեկին նշանակում է գլխավոր դատախազի տեղակալ: https://www.arlis.am/hy/acts/203931 Այսպես, որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն առաջանալու դեպքում դրան հաջորդող յոթնօրյա ժամկետում ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և դատախազության կայքում (www.prosecutor.am) հրապարակում է գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնի համար մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման ժամկետը, վայրը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մրցույթն անցկացնելու վայրը, օրը և ժամը, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի հղումը: Տվյալ պաշտոնի համար մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման ժամկետը ոչ պակաս, քան մեկ շաբաթ, և ոչ ավելի, քան մեկ ամիս է: Հայտերի ընդունումից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովի նախագահը թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է ԿԿՀ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ մրցույթից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Թեկնածուի վերաբերյալ որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում ԿԿՀ-ից ստացված խորհրդատվական եզրակացությունը տրամադրվում է նաև գլխավոր դատախազին: Մրցույթն անցկացնում է որակավորման հանձնաժողովը թեկնածուի հետ անցկացվող հարցազրույցի միջոցով հետևյալ փուլերով՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							1) *յուրաքանչյուր թեկնածուի փաստաթղթերի և մասնագիտական փորձառության ուսումնասիրություն:* Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ, իսկ որակավորման հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ թեկնածուին՝ նրա մասնագիտական փորձառությունը, աշխատանքային ձեռքբերումները, գիտական հետաքրքրությունները, տվյալ պաշտոնում նրա մոտիվացիան, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները գնահատելու համար. *2) դատախազի վարքագծի կանոններին և ղեկավարման ու կառավարչական հմտություններին վերաբերող իրավիճակի ներկայացմամբ թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝* դատախազի վարքագծի կանոնների և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտությունների տիրապետման, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, վերլուծական կարողություններ և այլն). *3) համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝* կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար: Թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը բացառություն է սահմանում գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ: Նշված պաշտոնի նշանակման կարգավորումները սահմանված են օրենքի 38.1 հոդվածով: Այսպես, գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվում է *բաց մրցույթ*, իսկ թեկնածուներն ընտրվում են որակավորման հանձնաժողովի կողմից՝ բաց քվեարկությամբ, որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն ութ ձայնով ընդունված որոշմամբ: Մրցույթի անցկացման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով: https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf Մրցույթը նույնպես անցկացվում է որակավորման հանձնաժողովի՝ թեկնածուի հետ անցկացվող հարցազրույցի միջոցով՝ վերոշարադրյալ երեք փուլերով: Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն), ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին: Այն դեպքերում, երբ հայտատուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա որակավորման հանձնաժողովն ստուգում է միայն հայտատուի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու նպատակով (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում): Նշված ստուգման ենթակա հանգամանքների հետ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ ԿԿՀ-ի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար գլխավոր դատախազին ներկայացվում են հանձնաժողովի կողմից առավելագույն ձայներով դրական եզրակացություն ստացած երեք հայտատուները: Ցուցակներում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով: Գլխավոր դատախազը գլխավոր դատախազի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածուներից մեկին նշանակում է գլխավոր դատախազի տեղակալ: Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու և դադարեցնելու գործընթացները կանոնակարգված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով, որտեղ առկա են գլխավոր դատախազի պաշտոնից հեռացման հայեցողական հիմքեր: Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝ դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրան անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը, նրա մահը, օրենքով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, դատախազի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը ոչ արդարացնող հիմքով, հրաժարականի դիմում ներկայացնելը Ազգային ժողով: Ազգային ժողովի նախագահը համապատասխան տեղեկությունն ստանալու պահից պաշտոնական հաղորդագրություն է տարածում գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին: Հրաժարականի դեպքում գլխավոր դատախազի լիազորությունները դադարում են, եթե գլխավոր դատախազի կողմից հրաժարականի դիմումը ներկայացվելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում կրկին հրաժարականի դիմում է ներկայացվում: Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարմանը, կատարել է օրենքի կամ դատախազի վարքագծի կանոնների խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը, խախտել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները, առկա են իր լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ: Վերոնշյալ դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդված 153-ը սահմանում է գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու ընթացակարգի հիմնական փուլերը, որոնք ներառում են հետևյալը՝ պաշտոնանկության վերաբերյալ որոշման նախագիծը կարող է

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ներկայացվել ԱԺ որևէ խմբակցության կողմից, քննարկման ընթացքում գլխավոր դատախազն իրավունք ունի ելույթ ունենալու ԱԺ նիստում և պատասխանելու պատգամավորների հարցերին, ԿԿՀ-ն ներկայացնում է իր եզրակացությունը՝ անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, և այդ եզրակացությունը հրապարակվում է: Պաշտոնավարման դադարեցման որոշումը ընդունվում է գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի կողմ քվեարկությամբ: https://www.arlis.am/hy/acts/201755 Իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց է «կատարել է օրենքի կամ դատախազի վարքագծի կանոնների խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը» պաշտոնը դադարեցնելու հիմքը: Տվյալ փաստն արձանագրվել է նաև ՏՀԶԿ գնահատման 5-րդ զեկույցում: Այսպես, «Վերոնշյալ հիմքերից երկուսն են խնդրահարույց: Առաջինը՝ «օրենքի կամ դատախազների վարքականոնի խախտում, որն ազդել է դատախազության հեղինակության վրա», հստակ չի սահմանում, թե որ խախտումը կարող է դիտվել որպես հիմք և ինչ կարող է դիտվել որպես «դատախազության հեղինակության վրա ազդող» վարք: Դատախազության մասին օրենքով սահմանված դատախազների վարքականոնի կանոնները չափազանց ընդհանրական են և պարունակում են բազմաթիվ անորոշ դրույթներ, որոնցից որոշները նաև իրար հետ համընկնում են: Երկրորդ խնդրահարույց հիմքը «իր լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայությունն» է, որն անորոշ է և չափազանց ընդհանրական, և որի շրջանակում կարելի է ընդգրկել գրեթե ցանկացած հանգամանք»: Ինչ վերաբերում է գլխավոր դատախազի տեղակալների լիազորությունների վաղաժամկետ դադարմանը կամ դադարեցմանը, ապա «Դատախազության մասին» ՀՀ օրենքում բացակայում են հատուկ կարգավորումներ: Հետևաբար, դատախազին պաշտոնից ազատելու

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ընդհանուր հիմքերը տարածվում են նաև գլխավոր դատախազի տեղակալների վրա և թվարկված են օրենքի 62-րդ հոդվածում: Ինչպես իրավացիորեն նշված է ՏՀՁԿ գնահատման 5-րդ զեկույցում, «Պաշտոնանկության հիմքերը մտահոգություն չեն առաջացնում, քանի որ դրանք հիմնականում հիմնված են օբյեկտիվ պատճառների վրա և բավականաչափ հստակ են: Մյուս կողմից, կարգապահական պատասխանատվության հիմքերը ներառում են՝ • պարտականությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում, • դատախազի վարքականոնների կամ շահերի բախման կարգավորման խախտում, բացառությամբ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված նվերներ ընդունելու կանոնների խախտման, • աշխատանքի ներքին կարգապահական կանոնների պարբերաբար խախտում, • սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների և անհամատեղելիության պահանջների չպահպանում: Առաջին երկու հիմքերը խնդիր են ներկայացնում, քանի որ ձևակերպված են անորոշ»: https://doi.org/10.1787/fb158bf9-en Գործնականում, գործող գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը (ով մինչև իր թեկնածության առաջադրումը զբաղեցրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի օգնականի պաշտոնը և չի ունեցել աշխատանքային փորձ դատախազությունում) ընտրվել է 2022 թվականի հունիսի 29-ին՝ Ազգային ժողովի կողմից: Աննա Վարդապետյանի թեկնածությունն առաջադրվել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներկայացուցիչների կողմից և նա ընտրվել է ՀՀ գլխավոր դատախազ՝ ստանալով 70 կողմ ձայն: Ազգային ժողովի 107 պատգամավորներից քվեարկությանը մասնակցել է միայն 70-ը, և նրանք բոլորը եղել են «Քաղաքացիական պայմանագիր»

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							խմբակցության պատգամավորներ: Ընդդիմադիր խմբակցությունները բոյկոտել են Ազգային ժողովի նիստերը և չեն մասնակցել քվեարկությանը: http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=06&year=2022&NewsID=16991&lang=arm ՀՀ գլխավոր դատախազի ընտրության պայմաններում փորձագետների գնահատումներով առկա էր քաղաքական ազդեցության գործոնի նշանակալի ազդեցություն: Ինչպես վկայում են միջազգային կազմակերպությունների զեկույցները, գլխավոր դատախազի ընտրությունը չի հիմնվել արժանիքների և մրցակցային գործընթացի վրա, այլ առաջնորդվել է քաղաքական շահերով: https://doi.org/10.1787/fb158bf9-en Գլխավոր դատախազի թեկնածուների ընտրության գործընթացում հասարակական կազմակերպությունների ներգրավվածության հնարավորություն օրենսդրորեն նախատեսված չէ: Նմանատիպ կարգավորումներ բացակայում են նաև գլխավոր դատախազի տեղակալների ընտրության գործընթացի համար: Այնուհանդերձ, գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ սահմանված է որպես դիտորդ ներգրավվելու հնարավորություն: https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf Չնայած «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազի պաշտոնում, նշված սահմանափակումը խնդրահարույց է գլխավոր դատախազի անկողմնակալության տեսանկյունից, քանի որ կրկին նշանակվելու հիմքը կարող է որոշակի ակնկալիքներ ստեղծել և՛ թեկնածուի, և՛ ընտրող քաղաքական կառույցի՝ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության մոտ, ինչը հարցականի տակ է դնում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							թեկնածուի անկախությունը և դատախազության գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը:
3.	Մանդատ	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	Կրթություն և կանխարգելում առանց հետաքննության	Հիմնական ուշադրությունը՝ հետաքննության վրա	Ուշադրության կենտրոնում են հետաքննությունը, ինչպես նաև կրթությունը և կանխարգելումը	Բարձր	Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ 1) հարուցում է քրեական հետապնդում. 2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ. 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը. 4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները. 5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով սահմանված է դատախազությանը վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը, որի բովանդակությունը համապատասխանում է Սահմանադրության 176-րդ հոդվածին: ՀՀ դատախազության կանոնադրությամբ առավել մանրամասն են սահմանված դատախազության խնդիրներն ու գործառույթները: Այսպես, դատախազության խնդիրներն են՝ 1) Սահմանադրությամբ, օրենքով ու այլ օրենքներով դատախազությանը վերապահված գործառույթների ու լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումը, դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, այդ նպատակով պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության հետ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է ՀՀ դատախազության մանդատի և գործառույթների վրա, և նշանակվում է բարձր միավոր, երբ ՀՀ դատախազությունն իրականացնում է հետաքննության, կրթման և կանխարգելման գործառույթները: Նշանակվում է միջին միավոր, երբ ՀՀ դատախազությունն ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես հետաքննության վրա: ՀՀ դատախազությունը ցածր միավոր է ստանում, եթե չի հետաքննում կոռուպցիոն դեպքերը և ուշադրությունը կենտրոնացնում է միայն կրթման և կանխարգելման վրա:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							արդյունավետ համագործակցության իրականացումը, ինչպես նաև այս խնդիրների լուծմանը խոչընդոտող հանգամանքների և պայմանների բացահայտումն ու վերացումը. 2) միասնական քրեական քաղաքականություն մշակելու միջոցով Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ համակարգված պայքարի մղումը. 3) ՀՀ ողջ տարածքում Սահմանադրությամբ, օրենքով ու այլ օրենքներով դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացման քաղաքականության միասնականության ապահովումը. 4) հանցավորության մակարդակի դրական շարժընթացի ապահովումը, հանցավորության մակարդակի որակական ցուցանիշների բարելավումը. 5) մինչդատական քրեական վարույթի լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման վերաբերյալ օրենսդրական պահանջների անշեղ իրացումը. 6) անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, օրենքի և դատարանի առջև հավասարության, անձի և բնակարանի անձեռնմխելիության, գործի արդարացի քննության, անմեղության կանխավարկածի, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը, սահմանադրական, քրեադատավարական ու միջազգային իրավական այլ հանրաճանաչ սկզբունքների պատշաճ իրացումը. 7) պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում օրենքի գերակայությունը և միատեսակ կիրառումը. 8) միասնական և կանխատեսելի պատժողական քաղաքականության ապահովումը. 9) պետության շահերի արդյունավետ պաշտպանությունը և պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնումը, ինչպես նաև պետությանը պատճառվելիք հնարավոր վնասների կանխումը. 10) օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովումը: https://www.prosecutor.am/page/37

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Դատախազության գործառույթները ներառում են՝ 1) Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և վերահսկողության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ 1.1) իրականացնում է հսկողություն և վերահսկողություն հետաքննության և նախաքննության մարմինների համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ. 1.2) ստուգում է հետաքննության և նախաքննության մարմինների համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող մինչդատական քրեական վարույթի օրինականության վիճակը. 1.3) ստուգում է դատախազություններում գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի, ինչպես նաև մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության իրականացման վիճակը. 1.4) ուսումնասիրում և ամփոփում է դատախազություններում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության պրակտիկան. 1.5) մշակում և գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին առաջարկություններ է ներկայացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության կազմակերպման և իրականացման, արդյունավետության բարձրացման մասին. 1.6) նախապատրաստում է հանցագործությունների քննության և դրա օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հարցերի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների նախագծեր. 1.7) մասնակցում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հրավիրած խորհրդակցություններում դատախազների հաշվետվությունների և հաղորդումների քննարկմանը՝ կապված մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության կազմակերպման և իրականացման ընթացքի հետ.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							1.8) ապահովում է ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին կատարված ծանր հանցագործությունների և արտակարգ դեպքերի մասին գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին իրազեկումը. 1.9) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: 2) Դատարաններում մեղադրանքի պաշտպանության ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ 2.1) պաշտպանում է մեղադրանքը դատարաններում. 2.2) վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում պաշտպանում է դատավճիռների ու որոշումների դեմ բերված բողոքները. 2.3) օրենքով սահմանված ժամկետում և կարգով, իր իրավասության սահմաններում, ստուգում է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում է օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվող վերաքննիչ բողոքներ, ինչպես նաև նախապատրաստում է օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների դեմ բերվող վճռաբեկ բողոքների նախագծեր և պաշտպանում այդ բողոքները վճռաբեկ դատարանում. 2.4) ստուգում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի՝ ոլորտին վերաբերող դատախազական ակտերի կատարման, ինչպես նաև դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատավճիռների ու որոշումների բողոքարկման աշխատանքների իրականացման վիճակը. 2.5) ուսումնասիրում և ամփոփում է դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատավճիռների ու որոշումների բողոքարկման պրակտիկան. 2.6) վերլուծում է ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում մեղադրանքի պաշտպանության որակի նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2.7) նախապատրաստում է դատարաններում մեղադրանքի պաշտպանության հարցերի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների նախագծեր. 2.8) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: 3) Պետական շահերի պաշտպանության ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ 3.1) օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական շահերի պաշտպանություն. 3.2) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, պետության շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքում, պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան. 3.3) պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով պահանջում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ դատարանների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպություններից հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ. 3.4) մինչև պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը, նախազգուշացնում է պետական շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին. 3.5) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան, մասնակցում դատարանում գործի քննությանը. 3.6) հանցագործության դեպք հայտնաբերելիս հարուցում է քրեական գործ. 3.7) օրենքով սահմանված կարգով և ժամկետում ստուգում է պետության շահերին առնչվող դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների նախագծեր, իրականացնում բերված բողոքների պաշտպանությունը.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							3.8) եզրակացություն է ներկայացնում դատախազության կազմում գտնվող դատախազությունների դատախազների բերած բողոքների օրինականության և հիմնավորվածության մասին. 3.9) քննարկում է պետության շահերին առնչվող դատական ակտերի օրինականության վերաբերյալ դատախազների, պետական մարմինների, կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց միջնորդությունները և դրանց վերաբերյալ եզրակացություն ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին. 3.10) ներկայացվող ոլորտում դատախազություններին ցույց է տալիս գործնական և մեթոդական օգնություն. 3.11) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ ստուգում է դատախազություններում պետական շահերի պաշտպանության հարցերով՝ գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի կատարման, պետական շահերի պաշտպանության հայցերի նախապատրաստման, հարուցման, դատարաններում դրանց քննությանը մասնակցելու և պետության շահերին առնչվող՝ դատական ակտերի բողոքարկման աշխատանքների կազմակերպման և իրականացման վիճակը. 3.12) նախապատրաստում է պետական շահերի պաշտպանության հարցերի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների նախագծեր. 3.13) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: 4) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ 4.1) իրավական ակտերով սահմանված կարգով ապահովում է համապատասխան մարմիններում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ անմիջական հսկողության իրականացումը.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							4.2) վերահսկում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում իրականացվող աշխատանքները, ինչպես նաև գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի՝ ոլորտին վերաբերող իրավական ակտերի կատարումը. 4.3) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ դատախազության կազմում գտնվող դատախազություններում իրականացնում է ստուգումներ. 4.4) ուսումնասիրում ու ամփոփում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում դատախազության գործունեության կազմակերպման ու իրականացման պրակտիկան. 4.5) մշակում և գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին առաջարկություններ է ներկայացնում պատիժների, հարկադրանքի և կատարողական հարցերով դատախազության գործունեության կազմակերպման ու իրականացման արդյունավետության բարձրացման մասին. 4.6) նախապատրաստում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման հարցերին վերաբերող մեթոդական հանձնարարականների նախագծեր. 4.7) գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին եզրակացություն է ներկայացնում դատախազների դատախազական ակտերի, ինչպես նաև բողոքների, միջնորդությունների, հայցադիմումների օրինականության և հիմնավորվածության մասին. 4.8) աջակցում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում դատախազների աշխատանքներին. 4.9) պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրերում ապահովում է օրենքների պահանջների միատեսակ կիրառությունը. 4.10) ազատությունից զրկման, ազատության սահմանափակման, ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և օրենքով նախատեսված զենքի գործադրման դեպքերում ապահովում է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							4.11) ապահովում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում պետության շահերի պաշտպանությունը. 4.12) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: 5) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտներում իր իրավասության իրացման սահմաններում՝ 5.1) մշակում է դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր. 5.2) ամփոփում է դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքները. 5.3) գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին է ներկայացնում դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ամփոփ կարծիք. 5.4) նախապատրաստում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հրամանների, կարգադրությունների և հանձնարարությունների նախագծեր. 5.5) անցկացնում է դատախազությունում նախապատրաստված իրավական ակտերի նախագծերի, գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հրամանների, կարգադրությունների և հանձնարարականների նախագծերի իրավական փորձաքննություն. 5.6) աջակցում է դատախազության վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով, ինչպես նաև վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված, ՀՀ Սահմանադրական կամ վարչական դատարան դիմելու, Սահմանադրական կամ վարչական դատարանում քննությանը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի մասնակցելու լիազորության իրականացմանը. 5.7) դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա ներկայացնում է օրենսդրության կատարելագործմանն ու

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							դատախազության գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ. 5.8) դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու և օրենսդրությունը կատարելագործելու ուղղությամբ առաջարկություններ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին. 5.9) դատախազությունում առկա հիմնախնդիրների լուծման վերաբերյալ գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին ներկայացնում է վերլուծություններ, զեկույցներ և այլ նյութեր. 5.10) մշակում է դատախազության գործունեության զարգացման հայեցակարգեր և ծրագրեր. 5.11) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ մասնակցում է դատախազության գործունեությանը վերաբերող հայեցակարգերի, օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքներին, ինչպես նաև դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի և իր իրավասությանը վերապահված այլ հարցերի քննարկմանը՝ համապատասխան մարմիններում ու կազմակերպություններում. 5.12) դատախազության բարեփոխումների գործընթացի շրջանակներում համագործակցում է այլ պետությունների դատախազությունների, իրավասու այլ մարմինների և հաստատությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ. 5.13) կազմակերպում է դատախազության գործունեության բարելավման հարցերով միջազգային և ներպետական համաժողովներ և սեմինարներ, մասնակցում է տվյալ ոլորտում միջազգային բնույթի ծրագրերին ու միջոցառումներին.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							5.14) աջակցում է դատախազության աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման գործընթացի արդյունավետության բարելավմանը. 5.15) մասնակցում է ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի հրատարակման աշխատանքներին. 5.16) համապատասխան առաջարկների հիման վրա մշակում է դատախազության կիսամյակային աշխատանքային ծրագիրը, ուսումնասիրում և ամփոփում է ծրագրային միջոցառումների իրականացման վիճակը. 5.17) վերահսկում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի կատարումը. 5.18) ապահովում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հրավիրած խորհրդակցությունների նախապատրաստումն ու աշխատանքների կազմակերպումը, վերահսկում ընդունված որոշումների կատարումը. 5.19) ապահովում է դատախազության կոլեգիայի աշխատանքների նախապատրաստումն ու կազմակերպումը, վերահսկում ընդունված որոշումների կատարումը. 5.20) վերահսկում է հսկողության վերցված դիմումների և բողոքների քննարկման ժամկետների պահպանումը, քաղաքացիների և պաշտոնատար անձանց դիմումների ու բողոքների քննարկման կարգի պահպանմանն առնչվող գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարականների կատարումը. 5.21) կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայությունը պարզելու համար սահմանված կարգով անցկացնում է ծառայողական ուսումնասիրություն. 5.22) գլխավոր դատախազի հանձնարարությամբ իրականացնում է կարգապահական վարույթ և կազմում համապատասխան եզրակացություն.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							5.23) ըստ անհրաժեշտության՝ վերլուծում է դատախազության ստորաբաժանումներից ստացվող կազմակերպական բնույթի փաստաթղթերը և համապատասխան առաջարկներ ներկայացնում գլխավոր դատախազին. 5.24) ըստ անհրաժեշտության՝ գլխավոր դատախազին ներկայացնում է զեկույցներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր՝ դատախազական գործունեության ոլորտներում իրավիճակի և զարգացման միտումների մասին, ինչպես նաև առաջարկություններ՝ դրանց առնչվող հիմնահարցերի լուծման վերաբերյալ. 5.25) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: 6) Միջազգային-իրավական համագործակցության բնագավառում, իր իրավասության իրացման սահմաններում՝ 6.1) մասնակցում է միջազգային-իրավական համագործակցության հարցերով ՀՀ միջազգային պայմանագրերի, հուշագրերի կամ ծրագրերի, գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի նախագծերի մշակմանը. 6.2) ուսումնասիրում է դատախազություն ուղարկված միջազգային պայմանագրերի, հուշագրերի կամ ծրագրերի նախագծերը՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով գլխավոր դատախազության իրավասու ներկայացուցիչների մասնակցությունը նշված փաստաթղթերի նախապատրաստման համար անցկացվող խորհրդակցություններին և բանակցություններին. 6.3) իրականացնում է ՀՀ և այլ պետությունների դատախազությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի, հուշագրերի կամ ծրագրերի օրինակների պահպանությունը, մշակում և գլխավոր դատախազության ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացնում գործող միջազգային պայմանագրերում, հուշագրերում կամ ծրագրերում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							նոր միջազգային պայմանագրերի, հուշագրերի նախագծեր մշակելու անհրաժեշտության վերաբերյալ. 6.4) գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումների հետ մասնակցում է դատախազության իրավասության մեջ մտնող՝ միջազգային-իրավական համագործակցության ոլորտում միջազգային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը. 6.5) ապահովում է ՀՀ և այլ պետությունների դատախազությունների ու իրավապահ մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության իրականացումը, այդ թվում՝ նշված կառույցների հետ նախատեսված միջոցառումներին անմիջական մասնակցության եղանակով. 6.6) ուսումնասիրում է անձանց միջազգային հետախուզում հայտարարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ԱԿԲ) հարցումները. 6.7) հետևում է Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով կոնկրետ գործերով միջազգային հետախուզման գործընթացի իրավաչափության ապահովմանը. 6.8) օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին է ներկայացնում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումներ. 6.9) ապահովում է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված հարցումների կատարումը. 6.10) օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին է ներկայացնում քրեական հետապնդման ենթարկելու նպատակով անձանց էքստրադիցիայի (հանձնման) մասին միջնորդություններ. 6.11) ապահովում է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված անձանց էքստրադիցիայի (հանձնման) հետ կապված իրավական գործընթացը.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							6.12) օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին է ներկայացնում քրեական հետապնդման միջնորդություններ (քրեական գործեր և նյութեր). 6.13) ապահովում է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից քրեական հետապնդման միջնորդությունների (քրեական գործերի և նյութերի) ստացումը և հետագա ընթացքը. 6.14) մինչդատական վարույթում գտնվող գործերով լուծում է միջազգային պայմանագրերով, ինչպես նաև փոխադարձության հիման վրա, նախատեսված իրավական օգնություն (հանձնում, վարույթների փոխանցում) ցույց տալու հարցերը. 6.15) ամփոփում է դատախազության գործունեությունը միջազգային-իրավական համագործակցության ոլորտում. 6.16) համագործակցում է օտարերկրյա պետությունների դատախազությունների, պետական և այլ մարմինների հետ. 6.17) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում, իրականացնում է այլ գործառույթներ: https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf https://www.prosecutor.am/page/37 Գլխավոր դատախազի 2020 թ. հունիսի 3-ի հրամանով ՀՀ դատախազության կանոնադրությունը լրացվել է նոր գործառույթներով: Այսպես, նորաստեղծ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման սահմաններում՝ 7.1) ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացնում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն. 7.2) ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում սկսում է ուսումնասիրություն. 7.3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կամ համայնքային, ինչպես նաև պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից պահանջում և ստանում է ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող տեղեկություններ, նախնական քննության տվյալներ. 7.4) իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով օրենքով սահմանված շրջանակներում հանձնարարում է իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ. 7.5) ՀՀ սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվում է անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկատվության տրամադրման՝ ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով. 7.6) ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո դիմում է ներկայացնում առաջին ատյանի դատարան հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին. 7.7) ուսումնասիրության արդյունքներով դիմում է ներկայացնում առաջին ատյանի դատարան ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին. 7.8) շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն. 7.9) օրենքի հիման վրա հարուցում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայց.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							7.10) օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կնքում է հաշտության համաձայնություն. 7.11) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ նոր երևան եկած հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերահսկում է ավարտված ուսումնասիրությունը. 7.12) իրականացնում է Օրենքով և այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ: https://www.prosecutor.am/storage/orders/orders_212_1685023080.pdf Կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը լիարժեքորեն օժտված է ՀՀ իրավական համակարգի/մոդելի մեջ հաստատված իրավապահ մարմինների գործառույթներով:
4.	Իրավասություն	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի	Միայն պետական հատվածը՝ կենտրոնական մակարդակում	Ե՛վ պետական, և՛ մասնավոր հատվածը, բայց միայն կենտրոնական մակարդակում կամ միայն պետական հատվածը, բայց թե՛ կենտրոնական, թե՛ ենթազգային	Թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածները և՛ կենտրոնական, և՛ ենթազգային մակարդակներում	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է ՀՀ գլխավոր դատախազը: Դատախազությունը ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով: https://www.arlis.am/hy/acts/203931 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է, որ նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: Միևնույն ժամանակ, օրենսգրքի 35-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, դատարանում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ղեկավար պաշտոնյանե րի հետ		մակարդակնե ռում			հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման կամ չբողոքարկման իրավաչափության համար: https://www.arlis.am/hy/acts/208871 ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա: https://www.arlis.am/hy/acts/153080 Իրավական նորմերի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ դատախազությանը վերապահված լիազորությունների շրջանակում վերջինիս իրավասությունը տարածվում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր կոռուպցիոն դրսևորումների վրա՝ ներառելով և՛ կենտրոնական, և՛ ենթազգային մակարդակները: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն օժտված է ապօրինի ծագում ունեցող գույքի բացահայտման, ուսումնասիրության, ապացույցների ապահովման և քաղաքացիական բռնագանձման ամբողջական գործիքակազմով՝ ներառյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախաձեռնումը և միջազգային տեղեկատվական համագործակցությունը: Այս լիազորությունները ամրապնդեցին ոչ միայն քրեական պատժիչ, այլ վերականգնողական մոտեցումը՝ պետական և հանրային շահերի պաշտպանության, անպատժելիության նվազեցման և իրավական պետության սկզբունքների իրացման տեսանկյունից:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է ՀՀ դատախազության ոլորտային և աշխարհագրական ընդգրկման վրա: Նշանակվում է բարձր միավոր, եթե ՀՀ դատախազությունն անդրադառնում է կոռուպցիային ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում (ներառյալ պետական ձեռնարկությունները)՝ բոլոր վարչական մակարդակներում: Տրվում է միջին միավոր, եթե այս պայմաններից միայն որոշներն են բավարարված, իսկ ցածր միավոր տրվում է, եթե ՀՀ դատախազությունն անդրադառնում է կոռուպցիային միայն պետական հատվածում՝ կենտրոնական կառավարման մակարդակում:				
5.	Հետապնդման լիազորություններ	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազու	Սակավաթիվ լիազորություններ կամ	Որոշ լիազորություններ	Ընդարձակ լիազորություններ՝ ներառյալ վարույթներ,	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ դատախազությունը իրավասու է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցելու քրեական հետապնդում, ինչպես նաև իրականացնելու հսկողություն ենթադրյալ կոռուպցիոն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		թյան գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	ոչ մի լիազորություն		վերլուծություններ և եզրակացությունների տրամադրման լիազորություններ		հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ՝ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման կամ չբողոքարկման իրավաչափության համար: https://www.arlis.am/hy/acts/208871
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է ՀՀ դատախազության՝ իր մանդատն իրականացնելու գործնական լիազորությունների վրա (ինչպես նկարագրված է 3-րդ ցուցանիշի ներքո): Տրվում է բարձր միավոր, եթե ՀՀ դատախազությունն իրավասու է նախաձեռնողական վարույթ սկսելու և ունի լիազորությունների լայն շրջանակ (օրինակ՝ ստիպել այլ պետական մարմիններին՝ գործակցել. քրեական հետապնդումներ իրականացնել, օպերատիվ - հետախուզական աշխատանքներ կատարել, հասանելիություն ունենալ այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրել կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն): ՀՀ դատախազությանը պետք է նշանակվի միջին միավոր, եթե ունի վերը նշված լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե գործում է ոչ թե նախաձեռնողական, այլ արձագանքում է				Հ՝ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված է հանրային քրեական հետապնդում հարուցելու կարգը: Այսպես, անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա: Նշված փաստերի առկայության դեպքում քննիչն իրավասու է հսկող դատախազին ներկայացնելու անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն՝ նշելով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև կցելով վարույթի վերաբերելի նյութերը: Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձի ձերբակալված լինելու դեպքում քննիչը սույն մասով նշված միջնորդությունը և նյութերը հսկող դատախազին է ներկայացնում ոչ ուշ, քան ձերբակալման որոշումն անձին հանձնելու պահից 24 ժամվա ընթացքում: Միջնորդությունը և այն հիմնավորող նյութերը ստանալուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, հսկող դատախազը որոշում է կայացնում անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ քրեական հետապնդում հարուցելու հիմքի բացակայության դեպքում իր որոշմամբ մերժում է քննիչի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			կատարվածին և (կամ) ունի վերը նշված լիազորություններից միայն մեկը կամ երկուսը:				միջնորդությունը: Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը հսկող դատախազը կարող է կայացնել նաև իր նախաձեռնությամբ՝ վարույթի նյութերի հիման վրա: Դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարելու ներկայացնել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն կամ կազմել այդպիսի որոշման նախագիծ: Ընդ որում, կարևոր է նշել, որ դատախազությունը չի համարվում նախաքննության մարմին, հետևաբար, քրեական հետապնդում հարուցելու որոշումը կայացնելուց հետո՝ նախաքննությունն իրականացնում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն, քննիչը մեղադրյալին մեղադրանք է ներկայացնում քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումն ստանալուց հետո՝ 18 ժամվա ընթացքում, բացառությամբ հետևյալ դեպքերի. • Ձերբակալման ներքո չգտնվող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման հետ համաձայն չլինելու դեպքում քննիչն իրավասու է առանց մեղադրանք ներկայացնելու առարկություն ներկայացնելու վերադաս դատախազին որոշումն ստանալուց հետո՝ 18 ժամվա ընթացքում: Առարկությունը մերժվելու դեպքում մեղադրանքը ներկայացվում է մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 18 ժամվա ընթացքում: • Այն դեպքում, երբ մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ է, կամ այլ պատճառով անհնար է ապահովել նրա հասանելիությունը, մեղադրանք ներկայացնելու սահմանված 18-ժամյա ժամկետն ընդհատվում է, իսկ մեղադրանքը ներկայացվում է մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտնվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-38-րդ հոդվածները սահմանում են դատախազի լիազորությունները և փոխհարաբերությունները մինչդատական վարույթում: Ի լրումն այլ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							լիազորությունների, հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալու՝ 1) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու կամ դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ. 2) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ. 3) քննիչին՝ քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ: Իր իրավասության սահմաններում հսկող դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի և հետաքննության մարմնի պետի համար, սակայն վերջիններս իրավասու են իրենց հասցեագրված հանձնարարության վերաբերյալ առարկություն ներկայացնելու վերադաս դատախազին: Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը լիազորված է նաև. • իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քննիչին անհապաղ հանձնարարել նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն, իսկ ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը կամ դրան տրված իրավական գնահատականը շտկելու անհրաժեշտության դեպքում՝ փոփոխություն կատարել քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության մեջ. • ստուգման համար հետաքննության մարմնից գրավոր պահանջել քրեական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գործողությունների վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը կամ դրանք ստուգել դրանց գտնվելու վայրում. • ստուգման համար քննիչից գրավոր պահանջել քրեական վարույթի նյութերը կամ այդպիսիք ստուգել դրանց գտնվելու վայրում. • վարույթի նյութերի հիման վրա իր նախաձեռնությամբ որոշում կայացնել քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին. • հաստատել մեղադրական եզրակացությունը կամ եզրափակիչ ակտը և վարույթի նյութերը հանձնել դատարան, հաստատել քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը և այլն: https://www.arlis.am/hy/acts/208871 Ինչ վերաբերում է դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության՝ որպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավասու մարմնի լիազորություններին, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը կարող է սկսել ուսումնասիրություն այն դեպքերում, երբ 1) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով. 2) նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք. 3) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով. ա. անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից, բ. անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից, գ. անձը մահացել է, դ. անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքին. 4) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով. 5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք. 6) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Վերոնշյալ 1-4-րդ կետերի առնչությամբ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, իսկ 5-րդ կետի առնչությամբ համապատասխան միջոցառումներն իրականացրած մարմինը պարտավոր են ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դառնալու պահից՝ տասնօրյա ժամկետում, այդ մասին տեղեկացնել իրավասու մարմնին և փոխանցել այն բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք կարող են վերաբերել սույն օրենքով սահմանված ուսումնասիրություն սկսելու հիմքերին: Ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման արդյունքով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը սկսում է ուսումնասիրություն ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, եթե՝ 1) առկա է ուսումնասիրություն սկսելու հիմքերից առնվազն մեկը, և 2) առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ ուսումնասիրությամբ հայտնաբերվելիք ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել 50 միլիոն ՀՀ դրամը: Ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացման պահից անհապաղ ուղարկվում է գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, որը ստացման պահից՝ յոթնօրյա ժամկետում, իրավասու է վերացնել կայացված որոշումը: Ուսումնասիրություն իրականացնելիս Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազները իրավունք ունեն՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							1) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կամ համայնքային, ինչպես նաև պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից պահանջելու և ստանալու ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող տեղեկություններ, նախնական քննության տվյալներ. 2) ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու իրենց տիրապետության ներքո գտնվող տեղեկություններ և փաստաթղթեր, գործով տեղեկություններ ունեցող անձանց հարցման ենթարկելու՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ այդ մասին կազմելով արձանագրություն. 3) անվճար օգտվելու ծառայողական նպատակներով օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից (այդ թվում՝ էլեկտրոնային). 4) պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին անհրաժեշտության դեպքում ներգրավելու համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության). 5) իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով հանձնարարելու իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, բացառությամբ անձի նույնացում, նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, օպերատիվ ներդրում, ֆինանսական գործարքների վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառումները. 6) ՀՀ սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվելու անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկատվության տրամադրման խնդրանք ուղարկելու օտարերկրյա պետության իրավասու մարմիններին՝ ՀՀ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով. 7) իրականացնելու օրենքով նախատեսված այլ լիազորություններ: https://www.arlis.am/hy/acts/208596 https://www.arlis.am/hy/acts/190391 Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ուսումնասիրության իրականացման ընթացքում կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ: Այդ նպատակով վերջինը ձեռնարկում է ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը կարող է դիմել առաջին ատյանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված՝ ծառայողական տեղեկություններ, «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված՝ ծառայողական, վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն պահանջելու դիմում: Դատարանը պահանջը քննում է առանց նիստ հրավիրելու և որոշում է կայացնում դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում հայցվող տեղեկությունները պահանջելու վերաբերյալ, եթե իրավասու մարմինը հիմնավորում է, որ տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանման համար: https://www.arlis.am/hy/acts/208596
6.	Առաջարկությունները ներկայացնելու և	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազու	Սակավաթիվ լիազորություններ կամ	Որոշ լիազորություններ	Ընդարձակ լիազորություններ	Միջին	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	կիրարկելու լիազորություններ	թյան գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	ոչ մի լիազորություն				կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ: https://www.arlis.am/hy/acts/120733 Հոդվածի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը՝ որպես նորմատիվ իրավական ակտը մշակող մարմին, նույնպես իրավասու է կազմակերպելու և անցկացնելու հանրային քննարկում: Այսպես, Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի համաձայն, հանրային քննարկումը կազմակերպվում է նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմնի կամ ՀՀ կառավարության անդամի կողմից (հանրային քննարկում իրականացնող մարմին): https://www.arlis.am/hy/acts/126002 Հակակոռուպցիոն քաղաքականության մասնակցության մասով իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները պարտադիր չեն կիրարկման, քանի որ դրանք կրում են օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ լուծումներ, որոնք կարող են չընդունվել Կառավարության կամ ԱԺ-ի կողմից: ՀՀ դատախազության կանոնակարգի համաձայն՝ գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալները, իրենց իրավասության սահմաններում ընդունում են ներքին և անհատական իրավական ակտեր: Իրավական ակտերը պետք է համապատասխանեն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոններին: Իրավական ակտերի նախագծերը մշակում են գլխավոր դատախազի տեղակալները, ստորաբաժանումները, ինչպես նաև դատախազությունները: Նախագծի մշակման նպատակով, գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի կարգադրությամբ, կարող է ստեղծվել նախագծի մշակման աշխատանքային խումբ: Նախագծերի մշակումն իրականացվում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի սահմանած ժամկետում:
			Ուղղորդում: ՀՀ դատախազությունը ստանում է բարձր միավոր, եթե իրավասու է մշակելու և կիրարկելու կատարման առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ առավել ընդհանրական, Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է առաջարկությունների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը: ՀՀ դատախազությունը ստանում է միջին միավոր, եթե ունի վերոնշյալ լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե չունի իր առաջարկությունները կիրարկելու որևէ լիազորություն և (կամ) ենթարկվում է քննարկումների արգելքի կանոնին:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի նոր իրավական ակտի ընդունման անհրաժեշտության դեպքում գլխավոր դատախազի տեղակալը այդ կապակցությամբ զեկուցագիր է ներկայացնում գլխավոր դատախազին, իսկ ստորաբաժանումները և դատախազությունների ղեկավարները՝ գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին: Նախագծին կարող են կցվել դրա ընդունման հիմնավորումը, նախագծի ընդունման կապակցությամբ իրավական այլ ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջի անհրաժեշտության կամ բացակայության մասին տեղեկանքներ: Նախագծին, ըստ անհրաժեշտության, կարող են կցվել նաև իրավական ակտի մշակման համար հիմք հանդիսացած վիճակագրական տվյալներ, ամփոփագրեր, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր: Նախագծում պարտադիր պետք է նշվեն իրավական ակտի տեսակը և դրա անվանումը, որը պետք է հակիրճ և հստակ արտահայտի իրավական կարգավորման առարկան ու նրա բովանդակությունը: https://www.prosecutor.am/page/40 Այսպես, 2024 թ. ՀՀ դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման համաձայն, 2024 թվականի ընթացքում հանցավորության վիճակագրության և հանցագործությունների քննության պրակտիկայի վերլուծության հիման վրա մշակվել են քրեական արդարադատության ոլորտին վերաբերող և Դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված են եղել առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմի կատարելագործմանը և տարբեր հանցագործությունների քննության ժամանակ երևան եկած օրենսդրական բացերի հաղթահարմանը: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2024 թ. ընթացքում Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 4 օրենսդրական նախաձեռնություն: Նշված օրենսդրական նախաձեռնություններից են՝ 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվել է սահմանել իրավակարգավորումներ, որոնց համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով, մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, կարող է թույլատրել մեկ վարույթում միացնել տարբեր վարույթներում քննվող մի քանի գործեր, եթե նման միջնորդություն ներկայացնող կողմը հիմնավորում է, որ դրանց միջև առկա է փոխադարձ կապ և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը: Գործերը միացվում են հայցադիմումը ներկայացնելու պահին առավել մեծ հայցագին ունեցող վարույթում: 2. Արդարադատության նախարարություն են ներկայացվել Քրեակատարողական օրենսգրքի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղղությունների վերաբերյալ Դատախազության առաջարկությունները: Առաջարկությունները վերաբերում են օրենսդրական փոփոխությունների միջոցով միջին և բարձր անվտանգային գոտում ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց հիշյալ անվտանգային գոտիների մեղմ պայմաններ տեղափոխելու համար դրական վարքագիծ դրսևորելը՝ որպես պարտադիր բաղադրիչ, սահմանելուն: 3. 2024 թվականի դեկտեմբերի 12-ին ուժի մեջ է մտել «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքը, որի մշակման աշխատանքներում ներգրավվածություն է ունեցել ՀՀ գլխավոր դատախազությունը: Հիշյալ օրենքով կարգավորվել են ՀՀ տարածքից

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							դուրս հանցանք կատարած անձանց հետաքննության մարմին ներկայացնելու և ձերբակալման կարգը, իրավական օգնության մասին միջնորդություններին ներկայացվող պահանջները: Լրամշակվել են նաև ժամանակավոր, հանձնման նպատակով, ինչպես նաև փաստացի հանձնման համար անձանց կալանավորման ժամկետներն ու կարգը, փաստաբան, թարգմանիչ ներգրավելու կարգը և այլ կարևոր հարցեր: 4. Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ, ստեղծվել է Վերականգնված միջոցների միասնական հաշիվ: https://prosecutor.am/article/4702 Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված՝ 82 օրենսդրական նախաձեռնությունների փաթեթների, կառավարության որոշումների՝ 92, ՀՀ վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի՝ 23 նախագծեր, որոնց վերաբերյալ Դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Դատախազությունն ակտիվորեն ներգրավված է եղել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին», «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024 թվականների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ազգային ռազմավարության», «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներից բխող՝ Դատախազության մասնակցությունը նախատեսող գործողությունների կատարմանը: Իրավասու պետական մարմիններ են ներկայացվել նաև հիշյալ ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները: Թե ներկայացված առաջարկությունների և դիտողությունների քանի տոկոսն է ընդունվել նախագիծը մշակած մարմնի կողմից, տարեկան հաղորդումների մեջ այդպիսի տեղեկությունները բացակայում են: ԹԻՀԿ-ի կողմից ՀՀ դատախազության հարցման արդյունքների վերլուծություն հնարավոր չէ իրականացնել, քանի որ ՀՀ դատախազությունը չի տրամադրել քանակական տվյալներ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ: Այսպես, 2021-2024 թթ. դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի դինամիկան հետևյալն է. • 2021 թ. – 972 միջնորդագիր, • 2022 թ. – 843 միջնորդագիր (նվազում 13.3 %-ով), • 2023 թ. – 212 միջնորդագիր (նվազում 74.9 %-ով), • 2024 թ. – 360 միջնորդագիր (աճ 69.8 %-ով): Այս տվյալները ցույց են տալիս միջնորդագրերի ներկայացման դինամիկայի կտրուկ փոփոխականություն: 2021 թ. համեմատ 2024 թ.-ին միջնորդագրերի թիվը նվազել է մոտ 63 %-ով, ինչը ցույց է տալիս ներկայացման դինամիկայի լուրջ կրճատում: Հատկանշական է նաև, որ միջնորդագրերի արդյունավետության և դրանց արդյունքների վերաբերյալ որևէ պաշտոնական տվյալ չի հրապարակվել, ինչը թույլ չի տալիս

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գնահատել, թե ներկայացված միջնորդագրերը իրականում որքանով են նպաստել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացմանը: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_61_8560493694.pdf https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_294_4340070921.pdf
7.	Իրավական ինքնավարություն	«Դատախազության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	Իրավական ինքնավարություն չունի	Որոշ չափով ունի իրավական ինքնավարություն	Ունի լիարժեք իրավական ինքնավարություն	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է ՀՀ գլխավոր դատախազը: Դատախազությունը ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով: https://www.arlis.am/hy/acts/203931 ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով նույնպես սահմանվում է, որ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: https://www.arlis.am/hy/acts/143723
			Ուղղորդում: Բարձր միավոր է տրվում այն դեպքում, երբ ՀՀ դատախազությունը լիակատար հայեցողություն ունի հետաքննությունների և (կամ) հետապնդումների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում, և եթե ղեկավար կազմը և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմը անձեռնամխելի են քրեական և (կամ) քաղաքացիական հետապնդումից իրենց լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար: Տրվում է միջին միավոր, եթե ՀՀ դատախազությունն որոշ չափով ենթարկվում է նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի կամ մարմնի հրահանգներին կամ եթե ՀՀ դատախազության ղեկավար կազմը և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմի անդամները իրենց				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			գործունեության համար պատասխանատու են հետապնդման: Տրվում է ցածր միավոր, եթե ՀՀ դատախազությունը և նրա աշխատակազմը ենթարկվում են նախարարի կամ պետական մարմնի ղեկավարի հրահանգներին և պատասխանատու են հետապնդման համար:				Այսպես, դատախազությունը, համարվելով սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանվում է քրեական վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը: Այսպես, դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման և դադարեցման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման կամ չբողոքարկման իրավաչափության համար: Քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս դատախազը գործում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի հանձնարարությունների վրա: Դատախազը պատասխանատու է ներքին համոզմունքի վրա հիմնված իր վարութային ակտերի համար: https://www.arlis.am/hy/acts/208871 «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանվում են դրույթներ, որոնք կարգավորում են դատախազության ղեկավար կազմի անձեռնմխելիության հարցերը: Այսպես, գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին չի թույլատրվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկել առանց էթիկայի հանձնաժողովի համաձայնության, բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերի, կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Եթե քննարկվում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու հարցը, ապա նրանք

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							էթիկայի հանձնաժողովի կողմից նշված հարցի քննարկմանը չեն մասնակցում: Գլխավոր դատախազի տեղակալի կամ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և տվյալ վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, իսկ գլխավոր դատախազի նկատմամբ՝ գլխավոր դատախազի տեղակալը:
8.	Գործառնական ինքնավարություն	Հարցազրույցներ ՀՀ դատախազության ղեկավար կազմի, աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ-ների հետ, ՁԼՄ-ներ	Գործառնական ինքնավարության ցածր աստիճան	Գործառնական ինքնավարության սահմանափակ աստիճան	Գործառնական ինքնավարության բարձր աստիճան	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «դատախազություն» հասկացության տակ ներառված է՝ ՀՀ գլխավոր դատախազությունը, զինվորական կենտրոնական դատախազությունը, Երևան քաղաքի դատախազությունը, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, մարզերի դատախազությունները, կայազորների զինվորական դատախազությունները: Դատախազության բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք, ըստ օրենքի, հանդիսանում են գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կազմում գործող վարչությունները և բաժինները: Դատախազության կազմում գործում են նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք աջակցում են դատախազներին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների իրականացման հարցում: Դատախազության կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատողների քանակը հաստատվում են գլխավոր դատախազի կողմից: Դատախազության կառուցվածքի մեջ մտնում են՝ • ՀՀ գլխավոր դատախազը • ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները (5 հաստիք) • ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը և գլխավոր քարտուղարի տեղակալը,
			Ուղղորդում: Տրվում է բարձր միավոր, եթե ՀՀ դատախազությունն անմիջական (օպերատիվ) վերահսկողություն է իրականացնում անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ (այդ թվում՝ գլխավոր դատախազի բացակայության դեպքում ապահովված է շարունակականությունն ապահովելու մեխանիզմները) և եթե չկա Կառավարության կողմից ՀՀ դատախազության առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության որևէ ապացույց: Տրվում է միջին միավոր, որտեղ առկա են կա՛մ անձնակազմի ընտրության, հեռացման և փոխադրման վրա արտաքին ազդեցության, կա՛մ ՀՀ դատախազության գործունեության				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			այլ ասպեկտներին քաղաքական միջամտության որոշակի ապացույցներ: Ցածր միավոր է տրվում այն դեպքում, եթե այս տեսակի միջամտությունները համատարած են: Եթե ՀՀ դատախազությունն իր ամենօրյա գործունեության մեջ հանդիպում է Կառավարության կողմից քաղաքական միջամտություն, պետք է տրամադրվեն այդ դեպքերի թիվը և մանրամասները, ներառյալ լրատվամիջոցների հաղորդումները, եթե առկա են:				• ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականները, օգնականները և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների օգնականները, • ՀՀ գլխավոր դատախազությունը, • Երևան քաղաքի դատախազությունը, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, մարզային դատախազությունները, • ՀՀ զինվորական դատախազությունը, որը կազմված է՝ զինվորական կենտրոնական դատախազությունից, Երևանի կայազորի զինվորական դատախազությունից, Գորիսի կայազորի զինվորական դատախազությունից, Լոռու կայազորի զինվորական դատախազությունից, Սևանի կայազորի զինվորական դատախազությունից, Շիրակի կայազորի զինվորական դատախազությունից, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազությունից, Թիվ 1 կայազորի զինվորական դատախազությունից, Թիվ 2 կայազորի զինվորական դատախազությունից, Թիվ 3 կայազորի զինվորական դատախազությունից, • դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները: https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf https://www.prosecutor.am/page/37 Դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ • *Գլխավոր դատախազության ստորաբաժանումները.* - Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն - ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							- Սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչություն - Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - Պետական շահերի պաշտպանության վարչություն - Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - Միջազգային-իրավական համագործակցության վարչություն - Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն - Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն - Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն • *Զինվորական կենտրոնական դատախազության ստորաբաժանումները.* - Զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին, - Կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին, - Պետական շահերի պաշտպանության բաժին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Դատախազության կառավարումն իրականացնում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազը ղեկավարում է դատախազության գործունեությունը: Գլխավոր դատախազին անմիջական հաշվետու են գլխավոր դատախազի տեղակալները, գլխավոր դատախազության ավագ դատախազները, գլխավոր քարտուղարը, գլխավոր դատախազի խորհրդականները, օգնականները, դատախազության կազմում գտնվող դատախազությունների ղեկավարները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Գլխավոր դատախազին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը: Գլխավոր դատախազի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազին լիազորություն է վերապահված գլխավոր դատախազի տեղակալների պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել տեղակալ: Բացի այդ, գլխավոր դատախազը նշանակում և ազատում է իր խորհրդականին, օգնականին, գլխավոր դատախազի տեղակալի օգնականին, դատախազության համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը սահմանում է, որ գլխավոր դատախազը հաստատում է գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը, դատախազության կանոնադրությունը, կանոնակարգը, կառուցվածքը, հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը, հաստիքների քանակը և հաստիքացուցակը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 38-ի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով: Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի ժամկետի, վայրի, անհրաժեշտ փաստաթղթերի մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և դատախազության կայքէջում (www.prosecutor.am): Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը: Հայտերի ընդունումից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովի նախագահը թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է ԿԿՀ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ստանալուց հետո՝ մրցույթից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին: Գլխավոր դատախազին են տրամադրվում նաև ԿԿՀ-ից ստացված խորհրդատվական եզրակացությունները: Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում ՀՀ արդարադատության ակադեմիայում: https://www.arlis.am/hy/acts/203931 Ինչ վերաբերում է ՀՀ դատախազության քաղաքացիական ծառայողներին, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի՝ ՀՀ դատախազությունում գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր դատախազը: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը: https://www.arlis.am/hy/acts/175823 Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող անձը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Գլխավոր դատախազի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը նախատեսում է. «Գլխավոր դատախազի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով գլխավոր դատախազի տեղակալներից մեկը փոխարինում է գլխավոր դատախազին: Նման հրաման ընդունելու անհնարինության դեպքում, ինչպես նաև գլխավոր դատախազի պաշտոնն օրենքով սահմանված կարգով թափուր մնալու դեպքում գլխավոր դատախազին ժամանակավորապես փոխարինում է գլխավոր դատախազի՝ դատախազության համակարգում առավել երկար փորձառություն ունեցող տեղակալը»: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ դատախազությունը անմիջական վերահսկողություն է իրականացնում իր անձնակազմի ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ, ինչպես նաև գլխավոր դատախազի բացակայության դեպքում ապահովում է լիազորությունների շարունակականությունը:
9.	Լիազորությունների քաղաքական օգտագործում	ՀՀ դատախազության կողմից քննված՝ ընդդիմության առաջնորդների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանում, հարցազրույցներ ՀՀ դատախազության	Կառավարության կողմից ՀՀ դատախազության՝ որպես քաղաքական հակառակորդների դեմ գործիքի լայնորեն օգտագործման	Կառավարության կողմից ՀՀ դատախազության՝ քաղաքական դրդապատճառներով սահմանափակ մանիպուլյացիայի որոշ ապացույցներ	Կառավարությունը ՀՀ դատախազությունը չի օգտագործել որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ քաղաքական դրդապատճառներով	Ցածր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում ամրագրված է դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքը, որի համաձայն դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատախազը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին դատախազը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող): Դատախազը չի կարող մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը: Դատախազն իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը: Հավաքներին մասնակցելիս դատախազը չպետք է կրի ծառայողական համազգեստ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ընդդիմության առաջնորդների, ՔՀԿ-ների ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, ՁԼՄ-ներ	ապացույցներ				Միևնույն ժամանակ, հանրային և մեդիա դիսկուրսում լայնորեն շրջանառվող տեղեկությունները՝ կապված գլխավոր դատախազի նախորդ դերակատարման, գործադիր իշխանության ղեկավարի հետ ունեցած սերտ աշխատանքային հարաբերությունների և իրավապահ համակարգի գործունեության վրա ոչ ֆորմալ ազդեցության ընկալումների հետ, ստեղծում են քաղաքական կախվածության և ընտրովի արդարադատության վերաբերյալ բարձր ռիսկեր: Այդ ընկալումները խորանում են նաև այն հանգամանքով, որ բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ հարուցված գործերի զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի, իսկ իրավապահ մարմինների միջև առկա հրապարակային հակասությունները թուլացնում են հակակոռուպցիոն քաղաքականության վստահելիությունը: https://shorturl.at/fp5NO Freedom House իրավապաշտպան կազմակերպության Nations in Transit 2023 և 2024 զեկույցները արձանագրել են մի շարք բարձր պրոֆիլի գործերի փակումը կամ դադարեցումը. նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործը երկու անգամ դադարեցվել է՝ ապացույցների անբավարարության հիմնավորմամբ, նախկին նախարար Արամ Հարությունյանի նկատմամբ գործը դադարեցվել է՝ դատախազության նախաձեռնությամբ, իսկ նախկին նախագահներ Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի գործերը փակվել են համապատասխանաբար ապացույցների բացակայության և վաղեմության ժամկետի լրանալու պատճառներով: https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023 https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024 Այս օրինակները ցույց են տալիս, որ բարձրաստիճան պաշտոնյաների գործերի զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի: Միաժամանակ արձանագրվում են նաև ինստիտուցիոնալ հակասություններ՝ հատկապես դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև, ինչը հրապարակայնորեն երևացել է Գասպարյանի գործով
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Կառավարության կողմից ՀՀ դատախազությանն ապավինելը կոռուպցիան քաղաքական հակառակորդների դեմ որպես գործիք կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար: Եթե Կառավարությունը կոռուպցիան օգտագործում է որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ, ապա պետք է ներկայացվեն մանրամասները ՀՀ դատախազության կողմից հետապնդված ընդդիմադիր քաղաքական առաջնորդների վերաբերյալ և քննության արդյունքները: Հետազոտողը պետք է հիմնվի այս կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանման, այդ քաղաքական առաջնորդների (հնարավորության դեպքում) և ՀՀ դատախազության ղեկավար կազմի, ընդդիմության այլ առաջնորդների, ՔՀԿ ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Եթե լրատվամիջոցների հաղորդումների և հարցազրույցների արդյունքում ստացվում են տարբեր գնահատականներ, ապա հետազոտողը պետք է հարցազրույցի				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			մասնակիցներից պարզի այդ գնահատականների պատճառները:				փոխադարձ մեղադրանքներում: Այս իրավիճակն ազդում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վրա: Այս համատեքստում բարձր է մնում ընտրովի, քաղաքական ազդեցություններով պայմանավորված հետապնդումների ռիսկը:
	ՀՀ դատախազության՝ անկախության և կարգավիճակի միավորի հանրագումարը[164]					14/18=77.7 %	
	Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ (8 ցուցանիշ)						
10.	Բյուջեի համամասնությունը	ՀՀ ֆինանսների նախարարության կայք, ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոնյանների հետ	Պետական ընդհանուր բյուջեի 0.10 %-ից ցածր	Պետական ընդհանուր բյուջեի 0.10 %-ից 0.20 %-ը	Պետական ընդհանուր բյուջեի 0.20 %-ից բարձր	Ցածր	2021-2024 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը եղել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: Գնահատականը՝ 0 2021 թ. ՀՀ պետական բյուջեից ՀՀ դատախազությունը ֆինանսավորում ստանում էր «Փորձաքննության ծառայություններ», «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» և «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» ծրագրերի շրջանակներում (ծրագրի դասիչ 1013, 1087 և 1144): 2021 թ. ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները (5 միջոցառում)՝ • Փորձաքննության ծառայությունների տրամադրում (միջոցառման դասիչ՝ 11001) • Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում (միջոցառման դասիչ՝ 11001) • Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում (դասիչ՝ 11001) • ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ (դասիչ՝ 11002) • Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ (դասիչ՝ 11003)
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության բյուջեի միջին հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեի նկատմամբ 2021-2024 թթ. ընթացքում: Եթե ՀՀ դատախազությունն իրականացնում է թե՛ կոռուպցիայի հետ կապված, թե՛ կոռուպցիայի հետ չկապված գործառույթներ, ապա հաշվարկվում է միայն կոռուպցիայի հետ կապված գործառույթների բյուջեն (եթե այս տեղեկությունը հասանելի է): Եթե կա մեկից ավելի դատախազություն, ապա կոռուպցիայի հետ կապված գործառույթների համար նախատեսված նրանց բյուջեների հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեին				

[164] *Լրացուցիչ ուղղորդում հետապոտողների համար:* 8-րդ և 9-րդ ցուցանիշների համար: Կարևոր է, որ հետազոտողը ներկայացնի կոնկրետ ապացույցներ, այսինքն՝ համապատասխան դեպքերը, օրինակներ և տվյալներ՝ հիմնավորելու, թե կառավարությունը միջամտել է արդյոք ՀՀ դատախազության ամենօրյա գործողություններին, ինչպես նաև հիմնավորելու կառավարության կողմից ՀՀ դատախազության օգտագործումը քաղաքական հակառակորդների դեմ, քանի որ սրանք լուրջ պնդումներ են:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			հաշվարկվում է յուրաքանչյուր դատախազության համար:				2022-2024 թթ. ընթացքում վերոնշյալ ծրագրերի շրջանակներում իրականացվել է 8 միջոցառում՝ • Փորձաքննության ծառայությունների տրամադրում (միջոցառման դասիչ՝ 11001) • Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում (միջոցառման դասիչ՝ 11001) • ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ (դասիչ՝ 11002) • Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ (դասիչ՝ 11003) • ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ (դասիչ՝ 11004) • Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ (դասիչ՝ 11005) • Դատախազության տեխնիկական հագեցվածության բարելավում (դասիչ՝ 31001) • Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում (դասիչ՝ 11001) ՀՀ պետական բյուջեից 2021-2024 թթ ՀՀ դատախազությանը կատարված հատկացումներն համեմատաբար մնացել են անփոփոխ՝ 2021 թ. 0.003062 %-ից 2024 թ. կազմել են պետական բյուջեի ծախսերի 0.00351 %: 2023 թ., 2022 թ. համեմատ ՀՀ դատախազության փաստացի ֆինանսավորումն աճել է 28.2 % (7,267,887.7-ից հասնելով 10,125,032.3 հազ. ՀՀ դրամի): 2024 թ., 2023 թ. համեմատ ՀՀ դատախազության փաստացի ֆինանսավորումն աճել է ընդամենը 0.97 %-ով՝ հասնելով 10,377,285.8 հազ. ՀՀ դրամի: ՀՀ դատախազության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2021-2024 թթ.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

	2021 թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.
Փորձաքննության ծառայություններ (ծրագրի դասիչ՝ 1013), մլն ՀՀ դրամ				
Պլան	335,290.6	735,678.0	735,678.0	872,811.9
Փաստ	371,590.7	735,678.0	849,361.5	872,806.5
Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն (ծրագրի դասիչ՝ 1087), մլն ՀՀ դրամ				
Պլան	5,793,270.7	5,929,767.9	6,876,501.2	9,170,228.4
Փաստ	5,766,749.2	6,518,828.6	9,269,010.8	9,498,808.7
Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում (ծրագրի դասիչ՝ 1144), մլն ՀՀ դրամ				
Պլան	17,066.1	15,990.9	10,800.0	10,800.0
Փաստ	-	13,381.1	6,660.0	5,880.0
ՀՀ պետական բյուջեի ծախսերը, հզր. ՀՀ դրամ				
	2,004,300,990.4	2,242,625,453.6	2,547,649,891.9	2,955,318,898.0
ՀՀ դատախազության ֆինանսավորումը՝ որպես ՀՀ պետական բյուջեի ընդամենը ծախսերի %				
	0.003062%	0.0032408%	0.003974%	0.00351%
Այդ թվում՝ ըստ միջոցառումների (մլն ՀՀ դրամ)				
1013-11001				
Պլան	335,290.6	735,678.0	735,678.0	872,811.9
Փաստ	371,590.7	735,678.0	849,361.5	872,806.5
1087-11001				
Պլան	5,672,768.2	5,798,759.3	6,727,031.0	8,973,094.3
Փաստ	5,628,545.2	6,368,657.8	9,140,624.9	9,282,053.6
1087-11002				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

Պլան	120,502.5	131,008.6	149,470.2	197,134.1
Փաստ	117,892.8	129,177.5	127,292.0	196,646.5
1087-11003				
Պլան	-	-	-	
Փաստ	20,311.2	10,934.5	573.8	
1087-11004				
Պլան		-	-	-
Փաստ		60.0	24.1	209.4
1087-11005				
Պլան		-	-	-
Փաստ		5,301.9	520.1	19,899.3
31001				
Պլան		-		
Փաստ		4,757.0		
1144-11001				
Պլան	17,066.1	15,990.9	10,800.0	10,800.0
Փաստ	-	13,381.1	6,660.0	5,880.0

Դիտարկվել են պետության կողմից կատարված հատկացումները և փաստացի ֆինանսավորումը՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների համաձայն:

2021 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրվել է ավելի քան 6.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.9 %-ը: Հատկացումների հաշվին կատարվել են 2 ծրագրեր՝ «Քննչական գործունեության ծառայություններ» և «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն»: Միջոցների գերակշիռ մասը՝ 5.8 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.9 %-ով: Նախորդ տարվա համեմատ Դատախազության ծախսերն աճել են 13.5 % ով կամ 730.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 15.3 % (746.0 մլն դրամ) աճով, որն էլ պայմանավորված է դատաիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որը պահանջ է առաջացնում համակարգի պահպանման ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ: 2022 թ. Գլխավոր դատախազությունում ստեղծվել է մասնագիտացված հակակոռուպցիոն վարչություն: 2021 թ. համեմատ 2022 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրվել է 7.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.5 %-ը: Հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 6.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.4 %-ով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ դատախազության ծախսերն աճել են 18.4 % ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 13.1 % (740.1 մլն դրամ) և փորձաքննության ծառայությունների տրամադրման ծախսերի՝ 98 % (364.1 մլն դրամ) աճով: Նշված առաջին միջոցառման գծով ծախսերի աճը պայմանավորված է դատաիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որի հետ կապված, մասնավորապես, ավելացել է դատախազության հաստիքների թիվը: Փորձաքննության ծառայությունների գծով ծախսերի աճը պայմանավորված է կատարված փորձաքննությունների թվի և դրանց

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							արժեքի աճով: 2022 թվականին իրականացվել է 14404 փորձաքննություն՝ 2021 թվականի 10105-ի դիմաց: 2023 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրվել է 10.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.5 %-ը: Հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.3 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ դատախազության ծախսերն աճել են 39.3 % ով կամ շուրջ 2.9 մլրդ դրամով՝ պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 43.5 % (2.8 մլրդ դրամ) և փորձաքննության ծառայությունների տրամադրման ծախսերի՝ 15.5 % (113.7 մլն դրամ) աճով: Նշված առաջին միջոցառման գծով ծախսերի աճը պայմանավորված է 2023 թվականի հունվարի 1-ից պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի բարձրացմամբ: Փորձաքննության ծառայությունների գծով ծախսերը կազմել են 849.4 մլն դրամ՝ ապահովելով 100 % կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը պայմանավորված է կատարված փորձաքննությունների թվի աճով: 2023 թվականին իրականացվել է 15052 փորձաքննություն՝ 2022 թվականի 14404-ի դիմաց: 2024 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրվել է 10.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.5 %-ը: 2023 թ. համեմատ դատախազության ծախսերի 2.5 %-ով (252.4 մլն դրամով) աճը հիմնականում պայմանավորված է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրի ծախսերի աճով: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով: Ծրագրի շրջանակներում 9.3 մլրդ դրամ են կազմել «Քրեական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում» միջոցառման ծախսերը, որոնք նույնպես կատարվել են 99.5 %-ով: Ծրագրի ծախսերի 2.5 % աճը հիմնականում պայմանավորված է դատահիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որը պահանջ է առաջացնում համակարգի պահպանման ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց դրույքաչափերի բարձրացմամբ: «Փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2024 թ. օգտագործվել է նախատեսված միջոցների 99.9 %-ը՝ 872.8 մլն դրամ, և իրականացվել է 15,013 փորձաքննություն՝ 2023 թ. 15,052-ի դիմաց: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9804&lang=arm Միաժամանակ, պետք է փաստել, որ ՀՀ դատախազությունը օժտված չէ լիարժեք մարդկային ռեսուրսներով, որպեսզի կարողանա ավելի արդյունավետ իրականացնել իր գործառույթները: Այսպես, մասնագիտական ստորաբաժանումների հաստիքները բավարար չեն: ՀՀ դատախազությունում առկա չէ վերլուծական բաժին, ինչն ինքնին դժվարացնում է դատախազական գործառույթների արդյունավետ իրականացումը: Առկա չեն իրազեկման միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու անհրաժեշտ կադրեր: Նախատեսված չեն բավարար աշխատակազմի շարունակական վերապատրաստումներ: Ակնկալվող գործառույթները պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ բյուջետային հատկացումներ:
11.	Բյուջեի բավարար լինելը	Հարցազրույցներ ՀՀ դատախազության	Անհամարժեք է (հաստատված է	Համարժեք է (բյուջետային հայտի 66-79 %- ը	Ավելի քան համարժեք է (բյուջետային հայտի 80-100	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի համաձայն՝ դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	բյուջետային հայտի 66 %-ից պակասը). ապավինում է ՔՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը	հաստատված է)	%- ը հաստատված է)		բյուջեում առանձին տողով՝ որպես ՀՀ դատախազություն: Դատախազության բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և գլխավոր դատախազություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Բյուջետային հայտի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ դատախազության դիրքորոշումն Ազգային ժողովում ներկայացնում է դատախազության գլխավոր քարտուղարը: 2022-2024թթ. ՀՀ դատախազությունը ՀՀ կառավարություն է ներկայացրել հետևյալ մեծությամբ հայտ՝ [table 1] **2023-2024 թթ. ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն ամբողջովին են բավարարել ՀՀ դատախազության բյուջետային հայտը:** 2022 թ. հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 6.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.4 %-ով: 2021 թ. համեմատ ՀՀ դատախազության ծախսերն աճել են 18.4 % ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 13.1 % (740.1 մլն դրամ) և փորձաքննության ծառայությունների տրամադրման ծախսերի՝ 98 % (364.1 մլն դրամ) աճով: Նշված առաջին միջոցառման գծով ծախսերի աճը պայմանավորված է դատաիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության բյուջեի բավարար լինելը իր գործառույթներն իրականացնելու համար: Ի լրումն քանակական տվյալների, հետազոտողը պետք է քննության առնի, թե ՀՀ դատախազությունն ունի արդյոք ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը, և արդյոք որոշ ժամանակ սպասում է դեպքերին անդրադառնալուն՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է: Եթե ՀՀ դատախազությունն իր բյուջեն լրացնելու համար ապավինում է նաև դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը, ապա պետք է հարցազրույցներ անցկացվեն համապատասխան դոնոր				

	Ներկայացված	Հաստատված	Բավարարման %
2023 թ.	6,507,148.6	7,622,979.2	100
2024 թ.	10,286,900.8	10,377,495.2	100

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			կազմակերպությունների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ 2021-2024 թվականների ընթացքում տրամադրված ֆինանսավորման մանրամասները ստանալու համար: Գնահատվում է նաև սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթների կամ միջոցառումների քանակը 2024, 2023, 2022 և 2021 թվականներին:				անհրաժեշտությամբ, որի հետ կապված, մասնավորապես, ավելացել է դատախազության հաստիքների թիվը: Փորձաքննության ծառայությունների գծով ծախսերի աճը պայմանավորված է կատարված փորձաքննությունների թվի և դրանց արժեքի աճով: 2023 թ.-ին հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.3 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով: 2022 թ. համեմատ ՀՀ դատախազության ծախսերն աճել են 39.3 % ով կամ շուրջ 2.9 մլրդ դրամով՝ պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 43.5 % (2.8 մլրդ դրամ) և փորձաքննության ծառայությունների տրամադրման ծախսերի՝ 15.5 % (113.7 մլն դրամ) աճով: Նշված առաջին միջոցառման գծով ծախսերի աճը պայմանավորված է 2023 թվականի հունվարի 1-ից պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի բարձրացմամբ: Փորձաքննության ծառայությունների գծով ծախսերը կազմել են 849.4 մլն դրամ՝ ապահովելով 100 % կատարողական: 2022 թ. համեմատ ծախսերի աճը պայմանավորված է կատարված փորձաքննությունների թվի աճով: 2024 թ.-ին հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով: Ծրագրի շրջանակներում 9.3 մլրդ դրամ են կազմել «Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրում» միջոցառման ծախսերը, որոնք նույնպես կատարվել են 99.5 %-ով: Միջոցառման շրջանակներում նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր թիվը կազմել է 39,397, ավարտված քրեական վարույթների թիվը՝ 38,058, պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացված գործառույթների արդյունքում պետությանը և համայնքներին պատճառված վերականգնված վնասի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							չափը՝ 2,862 մլն դրամ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակներում ներկայացված հայցագնի ընդհանուր գումարը՝ 287,742 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերի 2.5 % աճը հիմնականում պայմանավորված է դատահիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որը պահանջ է առաջացնում համակարգի պահպանման ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց դրույքաչափերի բարձրացմամբ: «Փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2024թ. օգտագործվել է նախատեսված միջոցների 99.9 %-ը՝ 872.8 մլն դրամ, և իրականացվել է 15,013 փորձաքննություն՝ 2023 թ. 15,052-ի դիմաց: ՀՀ դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ նույնպես հայտնել են, որ 2021, 2022, 2023 և 2024 թթ. բյուջետային միջոցների սահմանափակումներ չեն եղել, որոնք կհանգեցնեին առանձին գործառույթներ կամ միջոցառումներ չիրականացնելուն: 2022-2024 թթ. ընթացքում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում չի տրամադրվել: Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ փաստացի հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել ՀՀ դատախազության առջև դրված խնդիրները լուծելու համար:
12.	Բյուջեի անվտանգությունը և կայունությունը	ՀՀ ֆինանսների նախարարության կայք, ՀՀ դատախազության գործունեությ	ՀՀ դատախազության բյուջեն 2021-2024 թթ. ընթացքում	ՀՀ դատախազության բյուջեն 2021-2024 թթ. ընթացքում չի կրճատվել	ՀՀ դատախազության բյուջեն երաշխավորված է՝ նախորդ տարվա հատկացման	Բարձր	**2021-2024 թթ. ՀՀ պետական բյուջեով ՀՀ դատախազությանը կատարված հատկացումները ՀՀ կառավարության կողմից աստիճանաբար ավելացվել են:** ԱԺ կողմից հաստատված և ՀՀ կառավարության կողմից «ճշտված» բյուջեն և փաստացի ֆինանսավորումը (հազար ՀՀ դրամ):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ան մասին տարեկան հաղորդումներ և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	կրճատվել է և (կամ) բյուջետային միջոցները ժամանակին չեն հատկացվել		հիման վրա, և չի կրճատվել		
			Ուղղորդում: Այս ցուցանիշը ՀՀ դատախազության ղեկավար կազմի և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ հարցազրույցներից պարզում է, թե ՀՀ դատախազությունը խնդիրներ ունեցել է արդյոք իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում: Նաև գնահատում է, թե նախատեսված բյուջեն ժամանակին է արդյոք հատկացվում: Եթե 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության բյուջեում էական փոփոխություններ են տեղի ունեցել, ապա հետազոտողը պետք է պարզի այդ փոփոխությունների պատճառները: Հետազոտողը պետք է նաև նշի, թե կան արդյոք բյուջետային հատկացումներին կցված պայմաններ (օրինակ՝ դրանք պետք է համաչափորե՞ն ծախսվեն ողջ տարվա ընթացքում, դրանք ստացվո՞ւմ են արդյոք որպես տարեկան միանվագ վճար և այլն): Այս ցուցանիշը առաջին հերթին չի գնահատում բյուջեի բարձր կամ ցածր լինելը, այլ անդրադառնում է, մասնավորապես,				

	2021 թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.
Պլան.	6,145,627.4	6,681,436.8	7,622,979.2	10,053,840.3
Ճշտված	6,146,021.2	7,306,680.3	10,171,502.4	10,434,088.3
Փաստ.	6,138,656.6	7,267,887.8	10,125,032.3	10,377,285.8

2021 թ.-ին ՀՀ դատախազությանը տրամադրվել է ավելի քան 6.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.9 %-ը: Հատկացումների հաշվին կատարվել են 2 ծրագրեր՝ «Փորձաքննության ծառայություններ» և «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն»: Միջոցների գերակշիռ մասը՝ 5.8 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.9 %-ով:
2022 թ. հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 6.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.4 %-ով:
2023 թ.-ին հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.3 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով:
2024 թ.-ին հատկացումների հաշվին իրականացվել են 3 ծրագրեր: Միջոցների գերակշիռ մասը՝ 9.5 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.5 %-ով:

Բյուջեի հատկացումների ժամանակագրությունը

ՀՀ դատախազությունը, հարցմանն ի պատասխան, հայտնել է, որ ՀՀ դատախազության 2021, 2022, 2023 և 2024 թթ. տարեկան բյուջետային հայտերը հաստատելու գործում խնդիրներ չեն առաջացել, հատկացված բյուջետային միջոցների տրամադրման սահմանված ժամկետների խախտումներ չեն եղել:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ժամանակի ընթացքում բյուջեում կատարված փոփոխություններին: Գնահատվում է նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումների քանակը 2024, 2023, 2022 և 2021 թվականներին:				Ինչ վերաբերում է ճշտված (ավելացված) միջոցների չօգտագործմանը, այդպիսի դեպքեր նույնպես չեն արձանագրվել: ՀՀ դատախազությունից հայտնել են, որ 2023 թ. կատարվել է հատկացված պետական բյուջեի էական փոփոխություն՝ 107,400.0 հազ. դրամի չափով, որը հատկացվել է քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ձեռքբերման նպատակով:
13.	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, ՀՀ դատախազության աշխատավարձերի սանդղակ և խրախուսումների չափեր,	Ցածր աշխատավարձ և սահմանափակ խրախուսումներ (պետական հատվածի համանման մարմինների համեմատ)	Համարժեք աշխատավարձ և խրախուսումներ (համադրելի են պետական հատվածի նույնպիսի մարմինների հետ)	Մրցունակ աշխատավարձ և խրախուսումներ (համադրելի են մասնավոր հատվածի սուբյեկտների հետ)	Բարձր	ՀՀ դատախազության աշխատակազմի վարձատրության և խրախուսման հարցերը կարգավորվում են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: https://www.arlis.am/hy/acts/194990 Օրենքի հավելված 1-ով կանոնակարգված և սահմանված են պետական և այլ պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության գործակիցները՝ ըստ պաշտոնների անվանումների: Համաձայն օրենքի՝ հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) հանդիսանում է որպես բազային աշխատավարձի և նախատեսված գործակցի արտադրյալ: Դատախազները, բացի հիմնական աշխատավարձից, ունեն նաև հավելումների և հավելավճարների իրավունք: «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի համաձայն՝ դատախազին վճարվում է հավելավճար դատախազի, դատախազության քննիչի, քննիչի պաշտոնում աշխատած, հակակոռուպցիոն կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում և (կամ) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը՝ որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու) յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով: Դատախազը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար: Դատախազներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը: Դատախազին, որպես առանձնակի ռիսկային և մասնագիտացում
			Ուղղորդում: ՀՀ դատախազության անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները պետք է տրամադրվեն 2-րդ մասում՝ ՀՀ դատախազության պրոֆիլում: 2021-2024 թվականների ընթացքում աշխատավարձերի խրախուսումների ցանկացած էական փոփոխություն պետք է ընդգծվի և բացատրվի: Աշխատավարձերի մրցունակությունը գնահատելու համար սովորաբար համեմատություն է կատարվում				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ-ների ղեկավարների, հետ, վերաբերելի լինելու դեպքում՝ մամուլի հաղորդումներ	մասնավոր հատվածի հետ (օրինակ՝ բանկեր, աուդիտորական ընկերություններ և այլն), որը սովորաբար ավելի լավ է վճարվում, քան պետական հատվածը: Այնուամենայնիվ, արժե նաև տեսնել, թե ինչպես են ՀՀ դատախազության աշխատակիցների աշխատավարձերը համեմատվում այլ քաղծառայողների աշխատավարձերի հետ: Երբեմն ՀՀ դատախազության աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձ է վճարվում, քան պետական հատվածի այլ մարմիններին, որպեսզի որակյալ թեկնածուներն ընդունվեն ՀՀ դատախազություն և մնան: Պետք է տրամադրվեն նաև խրախուսումների մանրամասները, քանի որ որոշ երկրներում դրանք կազմում են դատախազության անձնակազմի ամսական վարձատրության փաթեթի զգալի մասը: Մասնավոր հատվածի մարմինների հետ համեմատելիս հետազոտողը պետք է կենտրոնանա հատկապես միջին օղակի անձնակազմի վրա, քանի որ բարձր օղակի անձնակազմի աշխատավարձերն ու նպաստներն ավելի քիչ են համեմատելի: Հետազոտողը պատմողական գնահատման մեջ պետք է մասնավորեցնի, թե որ սուբյեկտներն են օգտագործում համեմատության նպատակով:				պահանջող պաշտոն զբաղեցնող անձի, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով: ՀՀ կառավարությունն իր 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշել էր, որ հանրային կառավարման և դատաիրավական համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը համարում է կարևորագույն նախապայման՝ այս ոլորտներում իրականացվող բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման արդյունավետության բարձրացման առումով: https://www.gov.am/files/docs/1322.pdf Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանվում է նաև ՀՀ կառավարության որոշմամբ https://www.e-gov.am/gov-decrees/item/38025/, որը ներառում է դատախազության ոլորտը: Այդ պաշտոններն են՝ 1. ՀՀ գլխավոր դատախազը (աշխատավարձ՝ 992,100 ՀՀ դրամ, հավելում՝ աշխատավարձի 95 %-ի չափով), 2. ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկով նախատեսված գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը և մեղադրանքի պաշտպանությունը, ինչպես նաև այդ գործերով պետության շահերի պաշտպանության ոլորտը համակարգող տեղակալները (աշխատավարձ՝ 727,540 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 95 %-ի չափով), 3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը (ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող) (աշխատավարձ՝ 826,750 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 85 %-ի չափով), 4. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազը (աշխատավարձ՝ 446,445 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 100 %-ի չափով):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

Հիշյալ պաշտոնների համար նույնպես նախատեսվել է հավելում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով հսկողություն և վերահսկողություն իրականացնելը կրում է առանձնակի ռիսկային բնույթ:
Բացի այդ, վարձատրության տարբերակում է դրված դատախազության համակարգում ծառայող դատախազների միջև: Այսպես, գլխավոր դատախազի տեղակալի վարձատրության դրույքաչափը կազմում է 11, ապա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի վարձատրության դրույքաչափը կազմում է 12,5: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության պետի դրույքաչափը 1 դրույքով ավելի է, քան Գլխավոր դատախազության մեկ այլ վարչության պետի դրույքաչափից: Նույնը վերաբերվում է Երևան քաղաքի դատախազին՝ 9, և մարզի դատախազին՝ 8:

ՀՀ դատախազության աշխատակիցների **աշխատավարձերի և հավելավճարների** մեծությունները կազմել են՝ (հազ. ՀՀ դրամ)

2021 թ.	4,048,339.8
2022 թ.	4,047,699.7
2023 թ.	5,337,293.2
2024 թ.	7,830,854.8

ՀՀ դատախազության աշխատակիցների **խրախուսումների** (պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) մեծությունները կազմել են՝ (հազ. ՀՀ դրամ)

2021 թ.	1,085,179.60
2022 թ.	1,083,068.8
2023 թ.	609,856.1
2024 թ.	84,410.3

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ՀՀ դատախազության անձնակազմի աշխատավարձերի և խրախուսումների համադրությունը վկայում է, որ խրախուսումների տեսակարար կշիռը ՀՀ դատախազության անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում կազմում է՝ 2021 թ.՝ 26.8 %, 2022 թ.՝ 26.7 %, 2023 թ.՝ 11.4 %, իսկ 2024 թ.՝ 1 %: Ընդ որում, պետք է արձանագրել, որ 2021-2024 թթ. դինամիկան վկայումն է, որ խրախուսումների հատկացումները զգալիորեն նվազել են՝ 26.8 % հասնելով ընդամենը 1 %: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9804&lang=arm https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner Միաժամանակ, վարձատրության համակարգում առկա է ներքին տարբերակվածություն դատախազության տարբեր պաշտոնների միջև, որը դրսևորվում է գործակիցների և դրույքաչափերի տարբերությամբ, օրինակ, գլխավոր դատախազի տեղակալների, վարչությունների ղեկավարների, Երևան քաղաքի և մարզային դատախազների միջև: Դատախազների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից: Այսպես, Հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 %-ի չափով: Մասնավոր հատվածի համեմատությամբ՝ դատախազների և ոչ պետական հատվածում իրավաբանների վարձատրության մրցունակությունը սահմանափակ է: ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի 2024 թ. զեկույցի համաձայն՝ ոչ պետական հատվածում իրավաբանների միջին աշխատավարձը կազմում է 434,484 ՀՀ դրամ, ինչը զգալիորեն ցածր է դատախազների աշխատավարձից՝ ներառյալ հավելումները: Այսպիսով, թեև դատախազների վարձատրությունը թվային արտահայտությամբ գերազանցում է մասնավոր հատվածում իրավաբանների միջին աշխատավարձը, այնուամենայնիվ այն չի ձևավորում լիարժեք մրցունակ համակարգ, քանի որ բարձր ցուցանիշը պայմանավորված է հիմնականում հավելումների մեծ կշռով, այլ ոչ թե կայուն և շուկայականորեն համադրելի հիմնական աշխատավարձի դրույքաչափերով:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հավելումների լայն կիրառումը դատախազության վարձատրության համակարգում խնդրահարույց է մի քանի փոխկապակցված պատճառներով: Նախ, հավելումները ձևավորվել են որպես հիմնական աշխատավարձը շրջանցող մեխանիզմ. թեև օրենքով սահմանված է, որ հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 %-ը, այս սահմանափակումը փաստացի չեզոքացվում է «առանձնակի ռիսկային և բարձր մասնագիտացում պահանջող պաշտոն» հավելումների միջոցով, որոնք հասնում են մինչև 92-100 % և չեն ենթարկվում նույն սահմանափակմանը: Արդյունքում հիմնական աշխատավարձը դադարում է լինել վարձատրության առանցքը, իսկ համակարգը կառուցվում է հավելումների վրա: Բացի այդ, հավելումները նվազեցնում են վարձատրության համակարգի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը: Քանի որ հավելումները պայմանավորված են կառավարության որոշումներով և պաշտոնների ցանկերով, դրանք ավելի հեշտ են ենթարկվում փոփոխման կամ վերանայման, քան օրենքով սահմանված աշխատավարձի դրույքաչափերը:
14.	Աշխատակազմի ընտրություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող	Հովանավորչություն և ոչ թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ	Սահմանափակ արժանիքահեն (մերիտոկրատական) և (կամ) թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ	Արժանիքահեն և թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ	Միջին	ՀՀ դատախազության ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում գլխավոր դատախազի կողմից: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 38-ի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը, որպես կանոն, տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ բաց մրցույթ կարող է անցկացվել գլխավոր դատախազի հանձնարարությամբ: Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է ՀՀ դատախազության անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերի				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձանց և համապատասխան անձնակազմի աշխատակիցների հետ, Քաղաքացիական ծառայության հաստիքների համալրման ընթացակարգեր	վրա: Տրվում է բարձր միավոր, եթե գործնականում ընտրության ընթացակարգը և՛ արժանիքահեն է (հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա), և՛ թափանցիկ: Նշանակվում է միջին միավոր, եթե ընթացակարգն արժանիքահեն է, բայց ոչ թափանցիկ, կամ ընդհակառակը: Տրվում է ցածր միավոր, եթե ընթացակարգը թափանցիկ չէ և հիմնված է հովանավորչության վրա: Հետազոտողը պետք է ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից պահանջի իր անձնակազմի ընտրությունը կարգավորող համապատասխան կանոնների պատճենը:				թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվում է բաց մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով: https://www.prosecutor.am/storage/orders/orders_21_1685023080.pdf https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: https://www.prosecutor.am/storage/orders/orders_457_1685023080.pdf Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի ժամկետի, վայրի, անհրաժեշտ փաստաթղթերի մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և դատախազության կայքում (www.prosecutor.am): Դատախազի թեկնածությունների համալրման մրցույթը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• փաստաթղթերի ուսումնասիրություն • բարեվարքության ուսումնասիրություն • հարցազրույց • արդյունքների ամփոփում Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը: Հայտերի ընդունումից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովի նախագահը թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է ԿԿՀ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ մրցույթից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն), ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին: Այն դեպքերում, երբ հայտատուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա որակավորման հանձնաժողովն ստուգում է միայն հայտատուի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում): Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ ԿԿՀ-ի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին: Գլխավոր դատախազին են տրամադրվում նաև ԿԿՀ-ից ստացված խորհրդատվական եզրակացությունները: Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում: Ցուցակում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն ՀՀ արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր: https://www.arlis.am/hy/acts/203931 ԹԻՀԿ-ի կողմից ՀՀ դատախազության հարցման արդյունքները վկայում են, որ ՀՀ դատախազությունում 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էր 14 թափուր հաստիք, որից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում: 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 31 թափուր հաստիք, որից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 56

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							թափուր հաստիք, որից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 60 թափուր հաստիք, որից 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: Այսպես, 2024 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 61.5 %, իսկ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 77.7 %: https://www.prosecutor.am/storage/orders/orders_695_1685023080.pdf Նշենք նաև, որ ՀՀ գլխավոր դատախազի 2024 թ. դեկտեմբերի 24-ի N 103-Ի հրամանով՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի հաստիքների թիվն ավելացել է ևս 4-ով՝ ընդհանուր կազմելով 17 հաստիք: https://www.prosecutor.am/storage/orders/orders_3235_3624696867.pdf 2021-2024 թթ. իրականացվել է 8 բաց մրցույթ, որից՝ 2021 թ.-ին՝ 2, 2022 թ.-ին՝ 3, 2023 թ.-ին՝ 1, 2024 թ.-ին՝ 2: Նշված մրցույթներում հաղթող են ճանաչվել ընդհանուր 117 անձինք, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոնների: Մրցույթների ընթացքում տարբեր փուլերին մասնակցությունից հրաժարված անձանց թիվը՝ ըստ տարիների:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

2021 թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.
36	16	32	27

Ստորև ներկայացված է ՀՀ դատախազության կողմից հայտարարված բաց մրցույթների մասնակցության վերաբերյալ տեղեկությունը՝ ըստ տարիների:

	2021	2022	2023	2024
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթներում հաղթող ճանաչված անձանց թիվը	-	3	3	4
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում պաշտոնի նշանակված անձանց թիվը	-	3	1	4
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի թափուր	-	1	-	-

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

հաստիքների համալրման մրցույթներում հաղթող ճանաչված անձանց թիվը				
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում պաշտոնի նշանակված անձանց թիվը	-	1	-	-

Ինչ վերաբերում է վերոնշյալ վարչությունների անձնակազմի թափուր հաստիքների համալրման գործընթացից բողոքարկումներին, 2021-2024 թթ. ընթացքում այն կազմել է 21, որից 15-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթների գործընթացից, իսկ 6-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթների գործընթացից:
Փորձագետների կարծիքով. «Գործնականում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ԿԿՀ-ն իրականացրել է դատախազների թեկնածուների համալրման մրցույթին դիմած բոլոր անձանց բարեվարքության մանրամասն ուսումնասիրություն, սակայն հարցազրույցի փուլում դիմորդները պարզապես չեն ներկայացել: Արդյունքում ԿԿՀ-ն ծանրաբեռնում է իր աշխատակիցներին՝ սահմանված ժամկետներում բարեվարքության ստուգումներ իրականացնելու նպատակով, մինչդեռ որոշ դիմորդներ չեն մասնակցում գործընթացի հաջորդ փուլին: Այս

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							իրավիճակը լուրջ խնդիր է առաջացնում, քանի որ վարչական և մարդկային ռեսուրսները փաստացի անարդյունավետ են օգտագործվում»: Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն ՀՀ արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր: Փորձագետները նշում են. «Խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ մրցույթի բոլոր փուլերը հաջողությամբ հաղթահարած դատախազի թեկնածուի վերջնական ընդգրկումը թեկնածուների ցուցակում իրականացվում է Գլխավոր դատախազի կողմից: Այսպիսով, Գլխավոր դատախազը փաստացի ունի հայեցողական լիազորություն ցուցակում ընդգրկելու հարցում, ինչի հետևանքով հնարավոր է, որ որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած բարձր որակավորում ունեցող մասնագետը տարբեր պատճառներով չընդգրկվի դատախազների թեկնածությունների ցուցակում: Միաժամանակ, նման որոշումների հիմնավորումները հրապարակային չեն, և դրանց պատճառները չեն դառնում հայտնի, մինչդեռ նման դեպքերը գործնականում հազվադեպ չեն»:

15.	Փորձագիտություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	Չունի փորձագիտություն հետապնդման իրականացման ոլորտում	Չունի փորձագիտություն հետապնդման որոշ ոլորտներում	Փորձագիտության բարձր մակարդակ հետապնդման ոլորտում	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի համաձայն՝ գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը, դատախազության կանոնադրությունը, կանոնակարգը, կառուցվածքը, հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը, հաստիքների քանակը և հաստիքացուցակը հաստատում է գլխավոր դատախազը: 2024 թ. դրությամբ ՀՀ դատախազության հաստիքների թիվը ընդհանուր կազմել է 746 միավոր, համալրման աստիճանը՝ 87.5 %: https://www.arlis.am/hy/acts/206999 Այսպես, 2024 թ. դեկտեմբերի դրությամբ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության հաստիքներից համալրված է եղել 61.5 % (5/13*100 %), իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության հաստիքներից համալրված է եղել 77.7 % (2/9*100 %): ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումների դատախազների վերապատրաստման առումով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 51-ի համաձայն, բոլոր դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան երկու տարին մեկ անցնել վերապատրաստում: Վերապատրաստումը և լրացուցիչ վերապատրաստումն իրականացվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Վերապատրաստման ենթակա դատախազների ցուցակը հաստատվում է գլխավոր դատախազի հրամանով և արդարադատության ակադեմիայի ռեկտորին է ուղարկվում «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: https://www.arlis.am/hy/acts/203931 Համաձայն 2019-2022 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիտորինգի զեկույցի՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացման նպատակով օրենսդրական փոփոխությունների հիման վրա Գլխավոր

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի փորձագիտությունը կոռուպցիայի հետապնդման ոլորտում: Գնահատումը հիմնականում որակական է և հիմնված է անձնակազմի կրթական որակավորման և վերապատրաստման (հատկապես հետապնդման մեթոդների) վերաբերյալ տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև ՀՀ դատախազության անձնակազմի միջին աշխատանքային ստաժի վրա: Ցուցանիշը հիմնված է նաև ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցիչ կարող է ծառայել նաև հետապնդման գործառույթների համար պատասխանատու թափուր հաստիքների քանակը:				դատախազության կազմում 2021 թ. նոյեմբերի 22-ին ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Նշված վարչության դատախազների բարեվարքությունը ստուգվել է: Զուգահեռաբար, Արդարադատության ակադեմիայում 2021-2022 թթ. նշված ստորաբաժանման դատախազների համար անցկացվել են բազմաթիվ վերապատրաստումներ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաներով մասնագիտացումը բարձրացնելու նպատակով: Նշված ստորաբաժանման դատախազներն ու վարչության պետը մասնակցել են նաև միջազգային ուսումնական այցերի: https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf Համաձայն 2023-2026 թ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2024 թվականի միջոցառումների մոնիտորինգի զեկույցի՝ Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 16-ին թիվ ԿԽ-013/23/2 որոշմամբ հաստատվել է դատախազների 2024 թվականի տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը https://aoj.am/full-time-education/training-programs/2024/prosecutor Վերապատրաստման ծրագրերը և մեթոդաբանությունը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին և պահանջներին՝ միաժամանակ հիմնվելով շահառուների կողմից ներկայացված կարիքների վրա: Ուսուցման նյութերը թարմացվել են, միջազգային և ներպետական գործընկերների հետ մշակվել են նոր դասընթացներ նշված թեմաներով: Վերապատրաստման ենթակա դատախազների և քննիչների խմբերը կազմավորվել են, իսկ վերջիններս իրազեկվել են վերապատրաստման ժամանակացույցի վերաբերյալ: ՀՀ գլխավոր դատախազության՝ Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների բոլոր դատախազները պարտավոր են ունենալ իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված իրավաբանական կրթություն: Միաժամանակ, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ՀՀ արդարադատության ակադեմիայում անցնում են ուսումնառության ծրագիր՝ այնուհետև նշանակվում դատախազի պաշտոնում: Բոլոր դատախազները երեք տարին մեկ անգամ պարտավոր են անցնել ատեստավորում: Ատեստավորումն անցկացնում է որակավորման հանձնաժողովը՝ զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով: Օրենքով սահմանված է նաև արտահերթ ատեստավորման անցկացման հնարավորություն: Այն կարող է անցկացվել դատախազի պաշտոն զբաղեցնելուց, հերթական կամ արտահերթ ատեստավորումից առնվազն վեց ամիս հետո: Դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով՝ իր պատճառաբանված որոշմամբ կամ դատախազի ցանկությամբ: Ընդ որում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն չունեն ներգրավվել ատեստավորման հանձնաժողովներում որակավորման հանձնաժողովի աշխատանքներում ո՛չ որպես դիտորդ, ո՛չ որպես հանձնաժողովի անդամ: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազությունը չի տրամադրել տեղեկություն ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունների՝ մասնագիտական կրթություն և/կամ որակավորման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							աստիճան (մասնագիտական որակավորում, որակավորման հավաստագրերի առկայություն) ունեցող աշխատակիցների քանակի վերաբերյալ: Թեև դատախազների թեկնածուները պետք է ունենան իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված իրավաբանական կրթություն, «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2023 թ. անցկացված բաց մրցույթի դիտարկման զեկույցի» արդյունքներով, մտահոգիչ է գնահատվել դատախազ դառնալու համար դիմած թեկնածուների մասնագիտական և անձնային պատրաստվածության մակարդակը: Մասնավորապես, արձանագրվել են թերացումներ թեկնածուների վերլուծական մտածողության, խոսքի և մտքի հստակ ու կառուցված արտահայտման, ինչպես նաև հիմնավորված փաստարկման կարողությունների շրջանակում: Բացի այդ, թեկնածուների զգալի մասը, լինելով համեմատաբար երիտասարդ տարիքի, կա՛մ առհասարակ չի ունեցել աշխատանքային փորձ, կա՛մ ունեցել է կարճատև կամ ոչ մասնագիտական փորձառություն: Այս հանգամանքների պայմաններում նրանց մասնագիտական պատրաստվածությունը, դատախազի պաշտոնում արդյունավետ գործունեություն ծավալելու տեսանկյունից, հաճախ եղել է անբավարար: https://prwb.am/2023/05/05/amphvophvo%d6%82m%e2%80%a4-dataxazneri-theknatcuthyunneri-cucakeh-hamalrelu-hamar-2023th-anckacvatc-bac-mrcuythi-ditarkum/ Փորձագետները նշում են, որ «Հաճախ մրցույթին դիմում են անգամ մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ, որոնք քննությունը հանձնում են հիմնականում անգիր պատրաստվածությամբ և կարճ ուսումնառությունից հետո նշանակվում են դատախազ՝ առանց բավարար գործնական փորձի: Արդյունքում, դատարանում մեղադրանք պաշտպանելիս ի հայտ են գալիս մասնագիտական հմտությունների և փորձի պակասից բխող խնդիրներ, ինչի հետևանքով որոշ կարևոր գործեր չեն հասնում իրենց տրամաբանական ավարտին»:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
16.	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	Վերապատրաստումները չեն կարևորվում և անտեսվում են	Անձնակազմի որոշ վերապատրաստված անդամներ՝ վերապատրաստման սահմանափակ հնարավորություններով, և (կամ) առաջարկվող վերապատրաստումը տեղին չէ	Լավ պատրաստված անձնակազմ՝ համապատասխան վերապատրաստման բազմաթիվ հնարավորություններով	Միջին	Համաձայն 2023-2026 թ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2024 թվականի միջոցառումների մոնիտորինգի և գնահատման զեկույցի՝ Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 16-ին թիվ ԿԽ-013/23/2 որոշմամբ հաստատվել է դատախազների 2024 թվականի տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը: https://aoj.am/full-time-education/training-programs/2024/prosecutor Վերապատրաստման ծրագրերը և մեթոդաբանությունը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին և պահանջներին՝ միաժամանակ հիմնվելով շահառուների կողմից ներկայացված կարիքների վրա: Ուսուցման նյութերը թարմացվել են, միջազգային և ներպետական գործընկերների հետ մշակվել են նոր դասընթացներ նշված թեմաներով: Վերապատրաստման ենթակա դատախազների և քննիչների խմբերը կազմավորվել են, իսկ վերջիններս իրազեկվել են վերապատրաստման ժամանակացույցի վերաբերյալ: 2024 թվականի մայիս ամսին 62 դատախազ «ՀՀ-ում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացին: 2024 թվականի հոկտեմբեր ամսին 15 դատախազ «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները» և «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցերը» վերտառությամբ դասընթացներին: 2024 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին 15 դատախազ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն, կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ դասընթացին: 2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 41 դատախազ «Հանրային շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացին: Բացի այդ, 2024 թվականի մայիսի 13-ից 17-ը Բուդապեշտում ԱՄՆ
			Ուղղորդում: Հետազոտողը պետք է մանրամասնորեն ներկայացնի ՀՀ դատախազության անձնակազմի վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև մասնակցած աշխատակիցների քանակը 2021-2024 թթ. ընթացքում կամ նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները: Պետք է տրամադրվեն ՀՀ դատախազության կողմից 2021-2024 թթ. ընթացքում վերապատրաստմանը հատկացված բյուջեի մանրամասները, եթե առկա են: Որպես ընդհանուր կանոն,				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			մարդկային ռեսուրսների բյուջեի 1-3 %-ը համարվում է համարժեք: 1 %-ից պակաս հատկացումը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չէ:				դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ) հրավերով Միջազգային Իրավապահ Ակադեմիայի (ILEA) կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն շարքի դասընթացին մասնակցել են Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումների 4 դատախազներ: 2024 թվականի նոյեմբերի 28-ից Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումների 4 դատախազներ մասնակցում են HELP առցանց հարթակում «Կոռուպցիայի կանխարգելման ներածություն» խորագրով դասընթացին (դասընթացը տևել է մինչև 2025 թվականի հունվարի 28-ը): Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության թվով 3 դատախազներ 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 11-ն ընկած ժամանակահատվածում Բուդապեշտ քաղաքում մասնակցել են միջազգային իրավապահ մարմինների կողմից կազմակերպված կոռուպցիոն հանցագործությունների դեմ համատեղ պայքարի շրջանակներում միջազգային համագործակցության խթանման հիմնախնդիրների դասընթացին: Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության թվով 5 դատախազներ 2024 թվականի փետրվարի 14-ին մասնակցել են «Ահաբեկչության, ծայրահեղականության և ապօրինի միգրացիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի օրենսդրության պահպանման նկատմամբ դատախազական հսկողություն», «Ներդրողների և ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանությունը» թեմաներով դասախոսությանը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կազմում ընդգրկված դատախազները ևս պարբերաբար վերապատրաստվել են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փորձագետների կողմից:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Մասնավորապես, «Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանց»-ի (BAMIN) քարտուղարության կողմից կազմակերպված «Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանց»-ի կազմակերպած ժողովին մասնակցել է 2 դատախազ, Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության կողմից իրականացվող երկօրյա ուսուցմանը՝ 1 դատախազ, Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված հատուկ մասնագիտական դասընթացներին՝ 6 դատախազ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ/INL) գրասենյակի կողմից կազմակերպված «Իրական շահառուի ապացուցման շեմը և ապացուցման բեռի առանձնահատկությունները» վերտառությամբ վերապատրաստման ծրագրին՝ 9 դատախազ: Միևնույն ժամանակ, Գլխավոր դատախազության դատախազները մասնակցել են նաև մի շարք վեբինարների, մասնավորապես՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազները 2024 թվականի հունիսի 27-ին մասնակցել են Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Ուժեղացնել միջազգային քննչական և դատախազական համագործակցությունը միջազգային կոռուպցիոն հանցագործությունների ոլորտում. համաշխարհային ցանցի օգտագործում արդյունավետ համագործակցության համար» վեբինարին, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազները՝ Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 2024 թվականի մարտի 14-ին և ապրիլի 30-ին հակակոռուպցիոն թեմաներով անցկացված վեբինարներին և 2024 թվականի հուլիսի 4-ին Հոն Կոնգ «IAACA» (Երիտասարդների ներգրավվածության կարևորությունը. խնամելով և հզորացնելով մեր ապագան: Ղեկավարներ Հակակոռուպցիոն աշխատանքում. պատմություններ ոլորտից) վեբինար-կոնֆերանսին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://moj.am/storage/uploads/Annual_Report_2024.pdf Այսպես, վերապատրաստումները իրականացվել են ինչպես Արդարադատության ակադեմիայի, այնպես էլ միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում: Պետական բյուջեից ՀՀ դատախազության անձնակազմի կարողությունների զարգացման համար «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» ծրագրի շրջանակներում (ծրագրի դասիչ 1144) «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» (միջոցառման դասիչ՝ 11001) շրջանակներում նախատեսված են միջոցներ: 2021-2024 թթ. ընթացքում 1144-11001 միջոցառման շրջանակներում նախատեսվել է և փաստացի ծախսվել է (մլն ՀՀ դրամ). | | 2021 թ. | 2022 թ. | 2023 թ. | 2024 թ. | | Պլան. | 17,066.1 | 15,990.9 | 10,800.0 | 10,800.0 | | Փաստ. | - | 13,381.1 | 6,660.0 | 5,880.0 | Այսպես, հատկացված բյուջեի մեծությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չէ: ԹԻՀԿ կողմից ՀՀ դատախազության հարցման արդյունքներով հնարավոր չէ վերհանել վերապատրաստումներին մասնակցած ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի թիվը: Ընդհանուր առմամբ, ՀՀ Արդարադատության

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ակադեմիայի կողմից կազմակերպված վերապատրաստումներին մասնակցած ՀՀ դատախազության անձնակազմի թիվը 2021 թ. կազմել է 167, 2022 թ.՝ 116, 2023 թ.՝ 261, իսկ 2024 թ.՝140: Ինչ վերաբերում է միջազգային վերապատրաստումներին, ներառյալ արտերկրում անցկացվածներին, ՀՀ դատախազությունից հայտնել են, որ 2021-2024 թթ. օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված ՀՀ դատախազության անձնակազմին հասանելի վերապատրաստման դասընթացներ չեն եղել: Նշված պնդումը հակասում է վերևում ներկայացված պաշտոնական զեկույցներում տեղ գտած հաշվետվություններին: Այսպես, ըստ հաշվետվություններում ներկայացված տեղեկությունների, վերապատրաստումները իրականացվել են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից ՀՀ դատախազության անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների և հատկացված բյուջեի մեծության համադրությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել: Բացի այդ, ՀՀ դատախազության անձնակազմի մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների համար առկա չեն հատուկ մշակված և արդիական ուսումնական պլաններ կամ ուղեցույցներ, որոնք կդյուրինացնեն իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած հարցերի, խնդիրների արդյունավետ լուծումը: Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային տվյալների համակարգի՝ ՀՀ դատախազության

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							անձնակազմի 300 պաշտոններից 196-ն են (65.3 %) ճանաչված քաղաքացիական ծառայողներ: https://cso.gov.am/charts 2021 թ. ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված վերապատրաստումներին մասնակցել է ՀՀ դատախազության անձնակազմի 57 քաղաքացիական ծառայող, որից 4-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ, 2022 թ.՝ 75 քաղաքացիական ծառայող, որից 8-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ, 2023 թ.՝ 88 քաղաքացիական ծառայող, որից 4-ը՝ կոմպետենցիաների վերաբերյալ: 2024 թ. կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է 23 քաղաքացիական ծառայող, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումներին՝ 73 քաղաքացիական ծառայող:
17.	Անձնակազմի կայունություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող	Կադրերի հոսունության և հրաժարականների բարձր մակարդակ (տարեկան 10 %-ից ավելի)	Կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ (տարեկան 5-10 %-ից ավելի)	Կադրերի հոսունության և հրաժարականների ցածր մակարդակ (տարեկան 0-5 %)	Միջին	2024 թ. դեկտեմբերի դրությամբ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 61.5 % (5/13*100%): 2023 թ. դեկտեմբերի դրությամբ Գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 84.6 % (2/13*100%): 2022 թ. դեկտեմբերի դրությամբ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 69.2 % (4/13*100%): Ինչ վերաբերվում է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանը, թափուր հաստիքների թիվը 2022, 2023 և 2024 թթ. կազմել է 2, իսկ նշված

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և մարդկային ռեսուրսների կառավարման փորձագետների հետ, Հնարավորության դեպքում պետք է հարցազրույց անցկացվի ՀՀ դատախազության անձնակազմի այն նախկին աշխատակիցների հետ, ովքեր վերջերս են ազատվել աշխատանքից					վարչության անձնակազմի համալրման աստիճանը կազմել է 77.7 % (2/9*100%): https://www.prosecutor.am/storage/orders/orders_3235_3624696867.pdf https://www.prosecutor.am/storage/orders/orders_695_1685023080.pdf Ընդհանուր առմամբ, ՀՀ դատախազությունում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 31 թափուր հաստիք, որից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 56 թափուր հաստիք, որից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազությունում առկա էր 60 թափուր հաստիք, որից 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում, իսկ 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում: ՀՀ դատախազության պաշտոնները համալրելու նպատակով 2021-2024 թթ. կազմակերպվել ու անցկացվել է 8 բաց մրցույթ, որոնցից՝ 2021 թ.-ին կազմակերպվել ու անցկացվել է 2 մրցույթ, 2022 թ.-ին՝ 3, 2023 թ.-ին՝ 1, 2024 թ.-ին՝ 2: Նշված մրցույթներում հաղթող են ճանաչվել ընդհանուր 117 անձինք, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոնների:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Այսպես, 2022 թ. Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության հաստիքները կազմել են 13, որի պայմաններում համալրվել է 9-ը, պաշտոնից ազատվել՝ 0, թափուր են մնացել 4 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 0% (0/9-4): 2023 թ.-ին, փաստացի հաստիքացուցակով 13 աշխատակիցներից, համալրվել է 11-ը, պաշտոնից ազատվել՝ 1, թափուր են մնացել՝ 2: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 9.9 % (1/13-2): 2024 թ.՝ 13 աշխատակիցներից, համալրվել է 8-ը, պաշտոնից ազատվել՝ 0, թափուր են մնացել՝ 5: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 16.5 % (17/200-97): Ինչ վերաբերվում է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանը, 2022 թ. հաստիքները կազմել են 9, որի պայմաններում համալրվել է 7-ը, պաշտոնից ազատվել՝ 0, թափուր են մնացել 2 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 0% (0/9-4): 2023-2024 թթ. հոսունության աստիճանը նույնպես կազմել է 0%: 2021-2024 թթ. հոսունության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին, ինչի պայմաններում արձանագրվում է կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ: Ըստ փորձագետների՝ «Հոսունության առաջնային պատճառն աշխատակիցների ծանրաբեռնվածությունն է, որը սահմանափակում է նրանց կարողությունները արդյունավետ կերպով իրականացնել պրակտիկ գործունեությունը: Հաջորդը՝ պրակտիկ աշխատանքի որոշ առանցքային հարցերում մասնագիտական անհամաձայնությունները, որոնք ստեղծում են գործառնական լարվածություն և դժվարացնում թիմային աշխատանքը: Պատճառների մեջ մտնում են նաև առաջխաղացման և զարգացման հնարավորությունների սահմանափակությունը, ինչպես նաև ներդրված փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչը ազդում է մասնագիտական հետաքրքրության և մոտիվացիայի վրա: Վերջապես, առկա է պետական ծառայությունից հոգնածության գործոնը, որը համադրաբար բերում է

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							աշխատակիցների շարժունակության և հաստատության ներսում շարունակականության նվազման»:
			Ուղղորդում: Եթե ՀՀ դատախազության կադրերի հոսունության մակարդակը բարձր է, ապա իր անձնակազմին պահելու ՀՀ դատախազության անկարողության պատճառները պետք է պարզվեն ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից, և հնարավորության դեպքում, վերջին տարվա ընթացքում պաշտոնից ազատված նախկին աշխատակիցներից՝ հարցազրույցների միջոցով: Կադրերի հոսունության մակարդակը կադրերի շարժն է, որն առաջանում է հավաքագրման և հրաժարականների հետևանքով: Եթե անձնակազմը ժամանակավորապես գործուղվում, փոխադրվում կամ ռոտացիայի է ենթարկվում ՀՀ դատախազություն այլ պետական մարմիններից կամ հակառակը, ապա գործուղման կամ փոխադրման մանրամասները նույնպես պետք է գրանցվեն: Եթե ՀՀ դատախազությունն անցկացնում է ելքային հարցազրույցներ անձնակազմի այն անդամների հետ, ովքեր վերջին տարիներին հրաժարական են տվել, ապա հետազոտողը պետք է այդ տեղեկությունները պահանջի ՀՀ դատախազությունից:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	ՀՀ դատախազության՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների միավորի հանրագումարը[165]					11/16=6 8.7 %	
	Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն (9 ցուցանիշ)						
18.	Տարեկան հաշվետվություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	ՀՀ դատախազությունն իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Կառավարությանը և Խորհրդարանին, սակայն դա հասանելի չէ հանրությանը և (կամ) հասանելի է դարձվում հանրությանը, սակայն բովանդակայի մանրամասները շատ համառոտ են	ՀՀ դատախազությունն իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Կառավարությանը և Խորհրդարանին, և դա հասանելի է դարձվում հանրությանը, սակայն հաշվետվության տրամադրած տեղեկատվության մակարդակը որոշ չափով սահմանափակ է	ՀՀ դատախազության վերաբերյալ տրամադրվում են համապարփակ տեղեկություններ տարեկան հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Կառավարությանը և Խորհրդարանին և դյուր հասանելի է հանրությանը	Միջին	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով սահմանված է դատախազության գործունեության հրապարակայնության սկզբունքը: Այսպես, դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը: Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Հաղորդումը սահմանված լիազորություններից յուրաքանչյուրի առնչությամբ նախորդ տարվա ընթացքում դատախազության իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ: https://www.arlis.am/hy/acts/203931 Այսպես, դատախազության գործունեության մասին հաղորդումն Ազգային ժողովի նիստում քննարկվում է հետևյալ կարգով՝ 1) մինչև 30 րոպե տևողությամբ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս գլխավոր դատախազը, որից հետո նրան կարող են տրվել հարցեր. 2) հարակից զեկուցում չի լինում, եթե Կանոնակարգով կամ Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ. 3) մտքերի փոխանակություն.

[165] *Լրացուցիչ ուղղորդում հետազոտողների համար:* Այս ցուցանիշների նկատմամբ կիրառված «աշխատակազմ» և «անձնակազմ» իմաստով հասկացությունները ներառում են աշխատակազմի անդամներին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատվում է նաև ՀՀ դատախազության տարեկան հաշվետվության ամբողջականությունն ու մատչելիությունը ՀՀ դատախազության տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունները և հաշվետվության հասանելիությունը: Հետազոտողը պետք է վերլուծի ՀՀ դատախազության տարեկան հաղորդման մեջ ներկայացված տեղեկությունները՝ գնահատելու ամբողջականությունը և հասանելիությունը հանրությանը: «Որոշ չափով սահմանափակ» տեղեկատվություն նշանակում է, օրինակ, ՀՀ դատախազության գործունեության, բյուջեի և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ բարձր մակարդակի տվյալներ, որոնք բավականաչափ ապաագրեգացված չեն, ուստի ենթակա են սահմանափակ գործածության:			4) մինչև տասնհինգական որպես տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս հարակից և հիմնական զեկուցողները: https://www.arlis.am/hy/acts/175794 Սահմանված հաղորդումը Ազգային ժողով ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տեղադրվում է դատախազության կայքէջում: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում: Ըստ քննչական ենթակայության՝ հաղորդումը պետք է պարունակի տեղեկություններ նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: Հաղորդումը կազմելու համար նախաքննության մարմինները, ըստ քննչական ենթակայության, յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 1-ը, ՀՀ գլխավոր դատախազություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մեթոդական ուղեցույցը հաստատում է գլխավոր դատախազը: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը նախաձեռնված բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների վերաբերյալ հրապարակում է տարեկան հաշվետվություն՝ պահպանելով

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տվյալների գաղտնիության ապահովման պարտականությունը: https://www.arlis.am/hy/acts/208596 ՀՀ դատախազության կայքում առկա են 2008-2024 թվականների հաղորդումները Ազգային ժողովին (https://www.prosecutor.am/dynamicWebPages/report), ինչպես նաև 2017-2024 թթ. հաղորդումները կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ (https://www.prosecutor.am/dynamicWebPages/report1https://anticorruption.am/hy/pages/show/report-semester), 2017-2024 թթ. հաղորդումները հանցագործությունների քննության վերաբերյալ (https://www.prosecutor.am/dynamicWebPages/report3https://anticorruption.am/hy/pages/show/report-semester), և 2020-2024 թթ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաշվետվությունները (https://www.prosecutor.am/dynamicWebPages/report2): ՀՀ դատախազության կայքում առկա չեն կիսամյակային հաշվետվություններ, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նույնպես սահմանված չէ կիսամյակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունը: Հաղորդումների պատրաստման և հրապարակման ժամկետների տեսանկյունից ՀՀ դատախազության կայքի տվյալները թույլ չեն տալիս եզրակացնել, թե արդյոք կիսամյակային հաղորդումները ներկայացված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ժամկետների խախտումներով: Նշված հաղորդումների ամբողջականության գնահատման տեսանկյունից առկա տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա չեն քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ կարճման հիմքերը, բյուջեի կատարողականի հաշվետվությունները և այլն:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Ընդ որում, գլխավոր դատախազի որևէ հրամանի մասին, որը կկարգավորեր հաղորդման բովանդակությունը և ներկայացման պահանջները, տեղեկատվության կառուցվածքը, հաղորդման մեջ ներառված հարցերի շրջանակը, ՀՀ դատախազության պաշտոնական կայքում www.prosecutor.am տեղեկություն չկա: Տեղեկություն առկա է «ՀՀ դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու մասին» գլխավոր դատախազի 2023 թ. հունվարի 11-ի հրամանում: https://www.prosecutor.am/storage/orders/orders_2705_8630604601.pdf Սակայն, հրամանով սահմանված հավելվածների վերաբերյալ տեղեկությունները բացակայում են պաշտոնական կայքում: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից նշել են, որ ըստ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մինչդատական վարույթում առկա է հետևյալ տեղեկությունը՝ • ստացված հաղորդումների թիվը, • նախաձեռնված վարույթների թիվը (այդ թվում՝ դատախազի հանձնարարությամբ), • քրեական վարույթ հարուցելուց հրաժարվելու դեպքերի թիվը, • բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վարույթի փոխակերպված քրեական վարույթների թիվը, • նախորդ հաշվետու ժամանակաշրջանում անավարտ մնացած և տվյալ հաշվետու ժամանակաշրջան փոխանցված վարույթների թիվը, • համագործակցության վարույթների թիվը, • քրեական հետապնդում հարուցված անձանց թիվը (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց թիվը),

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• հեռակա վարույթների թիվը, • կարճված քրեական վարույթների թիվը (այդ թվում՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդում չհարուցված կամ դադարեցված), • դատարան հանձնված քրեական վարույթների և մեղադրյալների (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց) թիվը, • բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարան հանձնված վարույթների թիվը, • քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու ժամկետների որոշումների թիվը, • այլ ստորաբաժանում կամ մարմին ուղարկված քրեական վարույթների թիվը, • միացված վարույթների թիվը, • կալանք խափանման միջոցի փոփոխման կամ վերացման թիվը, • անավարտ մնացած վարույթների թիվը, • ինչպես նաև տվյալ վարույթներով կալանքի տակ գտնվող մեղադրյալների թիվը: Ըստ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դատաքննության փուլում առկա է հետևյալ տեղեկությունը՝ • քննված և ավարտված քրեական գործերի և մեղադրյալների (այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց) թվերը, • կիրառված համաձայնության և արագացված վարույթների գործերի և մեղադրյալների թվերը, • մեղադրական դատավճիռ կայացված քրեական գործերի և մեղադրյալների թվերը, • մեղադրյալների թվերը՝ ըստ պատժատեսակների (հիմնական, լրացուցիչ, պայմանականորեն չի կիրառվել, կիրառվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, պատժի կատարումը հետաձգվել է, պատժից ազատվել են վաղեմության ժամկետն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							անցնելու հիմքով, համաներման հիմքով պատժից ազատվել է կամ պատիժը կրճատվել է), • կիրառված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներով գործերի և մեղադրյալների թվերը, • կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներով գործերի և մեղադրյալների թվերը: Առկա տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք համապարփակ չեն և չեն համապատասխանում ՏՀՁԿ-ի կողմից սահմանված կոռուպցիոն հանցանքների վիճակագրությանը վերաբերող չափանիշներին: Մասնավորապես, դրանցում առկա չեն քրեական վարույթների կարճման հիմքերը, քրեական հետապնդումները դադարեցնելու վերաբերյալ տվյալները, բյուջեի կատարողականի հաշվետվությունները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց և/կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները և այլն: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Այսպես, վերոնշյալ տվյալների անբավարար լինելը թույլ չի տալիս վերլուծելու մի շարք ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ առկա իրավիճակը, գործի քննության ողջ շղթայի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու և այլն: Միևնույն ժամանակ, հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների շրջանակում կոռուպցիոն վիճակագրական առանձին տվյալների ինքնին բացակայությունը հանգեցնում է պարտավորությունը՝ որպես չկատարված գնահատվելուն: ՏՀՁԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի վերաբերյալ 5-րդ փուլի առաջընթացի գնահատման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							զեկույցում կրկին արձանագրվել է, որ Գլխավոր դատախազության հաշվետվություններում ներկայացվում են կիրառված պատժատեսակների և դատապարտված պաշտոնատար անձանց վերաբերյալ տվյալներ, սակայն առանց իրավախախտումների տեսակների տարանջատման: Միաժամանակ, առանձին ներկայացվում են ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական բռնագանձման արդյունքները՝ առանց ընդգրկելու քրեական վարույթներով կիրառված բռնագանձումը: https://doi.org/10.1787/3d273009-en Ուստի անհրաժեշտ է կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի վերականգնման և կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու վերլուծության համակարգի ստեղծումը: Այս առնչությամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանումը և առկա կառուցակարգերի կատարելագործումը:
19.	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց,	ՀՀ դատախազությունը չունի որևէ հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին կամ մեխանիզմներին՝ արձագանքելու	ՀՀ դատախազությունն ունի որոշ մեխանիզմներ՝ արձագանքելու տեղեկություններ ստանալու վերաբերյալ հանրության հարցումներին (ներառյալ ՀՀ դատախազության	ՀՀ դատախազությունն ունի համակողմանի հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին և գործընթացներին և ժամանակին	Ցածր	Դատախազության գործունեության հրապարակայնության սկզբունքի համաձայն՝ դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը: https://www.arlis.am/hy/acts/203931 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 186-ով սահմանված է նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին, դառնալ հանցանքի կատարման պատճառ, վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը, հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման: https://www.arlis.am/hy/acts/209743

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	տեղեկություններ ստանալու վերաբերյալ հանրության հարցումներին և գործնականում չի արձագանքում նման հարցումներին	որոշումները, և թե ինչպես են ընդունվել այդ որոշումները), բայց դա սովորաբար դժվարին, ծանր և (կամ) երկարաշունչ գործընթաց է	արձագանքում է հանրության հարցումներին		Մյուս բոլոր դեպքերում, ՀՀ դատախազության, ինչպես և այլ պետական մարմինների վրա, տարածվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Այսպես, վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով և (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում: Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ դեպքերում. 1) պարունակում է պետական, բանկային, առևտրային գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն. 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը. 3) պարունակում է քրեական վարույթի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալներ. 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք). 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները: https://www.arlis.am/hy/acts/175858 ՀՀ դատախազությունը հասանելիություն ունի էլեկտրոնային e-request.am հարթակին, որի վիճակագրությունը վկայում է, որ այն չի գտնվում ամենապահանջված պետական մարմինների շարքում: https://e-request.am/hy/statistics Բացի այդ, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության թափանցիկությունը հանրության հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է):				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							իրականացված Հայաստանի բարեվարքության ծրագրի շրջանակներում իրականացվել է «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022», որի շրջանակում կատարված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: Իսկ հարցվածների ընդամենը 4.7 %-ը գիտի Դատախազության մասին: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը նշել է, որ 2021 թ. դատախազությանը ներկայացված հանրության հարցումների քանակը կազմել է 312, 2022 թ.՝ 433, 2023 թ.՝ 830, 2024 թ.՝ 843: Չնայած վերջին տարիներին հարցումների քանակի կրկնապատկմանը՝ ՀՀ դատախազությանը ներկայացված և անարձագանք թողնված հանրության հարցումներ չեն արձանագրվել: ՀՀ դատախազության՝ ժամանակին հարցումներին արձագանքելու տեսանկյունից, նշենք, որ ԹԻՀԿ հարցմանը ՀՀ դատախազությունը պատասխանել է օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի ավարտից ևս 2 ամիս անց: Ընդ որում, հարցվող տեղեկությունների մեծամասնությունը մնացել է անպատասխան, ինչը նույնպես կարելի է վերագրել համապատասխան աջակցող ստորաբաժանումների կադրերի բացակայության/սղության հանգամանքներին: Ինչպես վկայում են փորձագետների հետ հարցազրույցները, «Վիճակագրության վարման ոլորտում խնդիրն այն է, որ հստակ կարգավորող ակտ, որը սահմաներ տվյալների հավաքագրման և մշակման ընթացակարգը, առկա չէր: Կոնկրետ վարչության աջակցող ստորաբաժանման աշխատակիցը վարում էր առավելագույնի հասցված և

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							առանցքային տվյալների վիճակագրություն Excel ֆայլերում, սակայն եթե առաջանում էր նոր հարց, որի վերաբերյալ տվյալներ չկային, դրանք հավաքվում էին զրույցից»: Ընդհանուր առմամբ, հանրության հետ հաղորդակցության և տեղեկատվության տրամադրման գործող մեխանիզմները չեն ապահովում բավարար թափանցիկություն և վստահություն: Ըստ փորձագետների՝ «Նշվածը կարող է պայմանավորված լինել համապատասխան աջակցող ստորաբաժանումների կադրային սղությամբ, ինչպես նաև տեղեկությունների հավաքագրման և պահպանման կայացած մեխանիզմների բացակայությամբ»:
20.	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ,	ՀՀ դատախազությունը հաշվետու է Գործադիրի՝ առանց որևէ վերահսկիչ հանձնաժողովի	ՀՀ դատախազությունը հաշվետու է վերահսկիչ հանձնաժողով(ներ)ին, որոնց անդամ են Խորհրդարանի պատգամավորները և (կամ) ավագ քաղծառայողները, սակայն հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի գործում և (կամ) առկա	ՀՀ դատախազությունն ունի վերահսկողության մեխանիզմների համապարփակ փաթեթ, այդ թվում՝ արդյունավետ վերահսկողական հանձնաժողով(ներ)՝ Խորհրդարանի պատգամավորների, ավագ քաղծառայողների և հայտնի քաղաքացիներ	Միջին	ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ դատախազությունը հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին: ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: https://www.arlis.am/hy/acts/143723 «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով կարգավորվում ՀՀ դատախազության տարեկան գործունեության հաղորդումների բանավոր եղանակով ներկայացումը Ազգային ժողովին: https://www.arlis.am/hy/acts/203931 «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, ԱԺ-ի կողմից դատախազության գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով դատախազությանը վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը: ՀՀ դատախազության ամենամյա գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով, Ազգային ժողովին ամենամյա հաղորդումների ներկայացման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		մամուլի հաղորդումներ		են սակավաթիվ լրացուցիչ վերահսկողության մեխանիզմներ	ի գործուն մասնակցությամբ		ենթատեքստում: «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով հաշվեքննիչ պալատին վերապահված են հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննության իրականացման պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ ստուգումների իրականացման լիազորությունները: Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության համաձայն՝ հնարավոր էր իրականացնել ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ հաշվեքննություն, քանի որ 2021-2023 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը գերազանցել էր 5 միլիարդ ՀՀ դրամը, ինչը, ըստ մեթոդաբանության, համարվում է միջին ռիսկայնության չափանիշ, իսկ 2024 թ.-ին՝ 10 միլիարդ դրամը, ինչը համարվում է բարձր ռիսկայնության չափանիշ: https://armsai.am//files/decrees/2019/voroshum28.21.pdf ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության 2021, 2022, 2023 և 2024 թվականների տարեկան ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատախազության գործունեության հաշվեքննությունը ներառված չի եղել Հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրում: http://armsai.am/hy/annual-program ՀՀ դատախազությունը տեղեկություններ չի տրամադրել 2021, 2022, 2023 և 2024 թթ. ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ դատախազության գործունեության ուսումնասիրությունների և դրանց արդյունքների վերաբերյալ:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը՝ որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ դատախազության վերահսկողական հանձնաժողով(ներ)ին: Պետք է նկարագրել ՀՀ դատախազության վերահսկողական հանձնաժողովների թիվը և կազմը՝ գնահատելու այս հանձնաժողովներում հանրության ներկայացվածության և մասնակցության աստիճանը: Արդյունավետ գործող հանձնաժողովը պահանջում է ուսումնասիրության գործընթաց և հանձնաժողովի առաջարկություններին հետամուտ լինելու մեխանիզմներ: Եթե ՀՀ դատախազությունը չունի վերահսկողական հանձնաժողով, ապա բացատրել, թե ինչու է դա այդպես: Նաև նկարագրել, թե վերահսկողության ինչպիսի լրացուցիչ մեխանիզմներ են գործում (օրինակ՝ կանոնավոր հաշվետվություններ ներկայացնել Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում): Եթե ՀՀ				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			դատախազությունն ենթակա է Աուդիտի գերագույն մարմնի (ՀՀ հաշվեքննիչ պալատի) կողմից, ապա պետք է տրամադրվեն նաև 2021-2024 թվականների ընթացքում բացասական աուդիտի հուշագրերի կամ դիտարկումների քանակը և մանրամասները:				
21.	Ներքին վերահսկողության մեխանիզմներ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	ՀՀ դատախազությունն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության թույլ մեխանիզմներ կամ ամենևին չունի	ՀՀ դատախազությունն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության որոշ մեխանիզմներ, բայց՝ կարևոր բացերով	ՀՀ դատախազությունն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության մեխանիզմների համակողմանի լրակազմ	Միջին	Պետական մարմիններում ներքին վերահսկողության համակարգերի օրենսդրական կարգավորումները սահմանված են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև տվյալ մարմնի կանոնադրությամբ: «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը սահմանում է, որ ինքնավար և անկախ պետական մարմինների մասով «պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության վերահսկողությունը իրականացնում են հենց ինքնավար և անկախ մարմինները»: https://www.arlis.am/hy/acts/171966 «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով անկախ պետական մարմիններում և ինքնավար մարմիններում ներքին աուդիտի համակարգը գործում է այդ կոլեգիալ մարմնի ենթակայությամբ: https://www.arlis.am/hy/acts/193792 Այսպես, ՀՀ դատախազության ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են ՀՀ դատախազության կանոնակարգով: https://www.prosecutor.am/page/40 Դատախազության կանոնակարգի համաձայն՝ դատախազության խնդիրների կատարումն ապահովելու նպատակով գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալը վերահսկողություն է իրականացնում դատախազությունների գործունեության նկատմամբ: Գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալը վերահսկողությունն
			Ուղղորդում: Նկարագրել ՀՀ դատախազության ներքին վերահսկողության գործընթացները, ներառյալ՝ ՀՀ դատախազությունն ունի՞ արդյոք կազմակերպության կառավարման ծրագիր (կորպորատիվ պլան), «Մոնիտորինգի և գնահատման» շրջանակ և կատարողականի գնահատման մեխանիզմներ, չափանիշներ: ՀՀ դատախազությունը հավաքո՞ւմ է արդյոք կատարողականի վերաբերյալ հանրային ընկալման տվյալներ: Հնարավորության սահմաններում պարզել, թե նշված տվյալները				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			օգտագործվում են արդյոք ՀՀ դատախազության կարողությունների զարգացման և իրազեկման գործընթացներում:				իրականացնում է ստորաբաժանումների կողմից իրականացվող ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով: Ստորաբաժանումները ստուգումն իրականացնում են աշխատանքային ծրագրի, համապատասխան դատախազությունների կողմից ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, ստուգման արդյունքներով ներկայացված թերությունների վերացման ծրագրի, գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարության հիման վրա՝ ինչպես նաև ուսումնասիրությունների անհրաժեշտություն առաջացնող այլ իրավիճակներից ելնելով: Ստորաբաժանումների և դատախազությունների ստուգումներ իրականացվում են գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի կարգադրության հիման վրա, որում նշվում են ստուգումն իրականացնող ստորաբաժանման կամ դատախազության անվանումը, ստուգում իրականացնող դատախազի (դատախազների կամ աշխատանքային խմբի անդամների) անունը, ազգանունը, պաշտոնը, ստուգման իրավական հիմքը, նպատակը, ժամկետը, ստուգման սահմանները: Գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի, ծրագրային միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովում են գլխավոր դատախազի տեղակալները և ստորաբաժանումների ղեկավարները: Ստորաբաժանումներում վերահսկողության վերցված յուրաքանչյուր փաստաթղթի համար լրացվում է հսկողական քարտ: Չնայած 2024 թվականին հաստատվել է ներքին աուդիտի կոմիտեի կազմը, դատախազության կայքում բացակայում են տեղեկություններ 2021-2024 թվականներին իրականացված ներքին աուդիտների և դրանց գնահատման հաշվետվությունների մասին: Սա համընկնում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ղեկավարման և կառավարման բարելավմանը» (ՍԻԳՄԱ) նախաձեռնության կողմից «Հայաստանի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հանրային կառավարման ելակետային իրավիճակի գնահատման» 2025 թ. զեկույցի գնահատման եզրակացության հետ, ըստ որի Հայաստանի հանրային կառավարման համակարգում, մասնավորապես՝ հանրային ֆինանսական հսկողության ոլորտում, ներքին աուդիտն օրենսդրորեն կանոնակարգված է, սակայն գործընթացների որակի ապահովում, հաշվետվողականություն և անկախ գնահատումներ առկա չեն, ինչը սահմանափակում է ներքին աուդիտի ազդեցությունն ու տեսանելիությունը: https://www.sigmaweb.org/content/dam/sigma/en/publications/reports/2025/12/public-administration-in-armenia-2025_5c12af02/f996600c-en.pdf ՀՀ դատախազության կայքում բացակայում է ռազմավարական պլանի վերաբերյալ որևէ փաստաթուղթ: https://www.prosecutor.am/orders ՀՀ դատախազության կանոնադրության համաձայն՝ գլխավոր դատախազը հաստատում է դատախազության ներքին կարգապահական կանոնները: https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf https://www.prosecutor.am/page/37 Այնուամենայնիվ, ՀՀ դատախազության կայքում առկա չէ ՀՀ դատախազության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին գլխավոր դատախազի հրամանի վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն: Միևնույն ժամանակ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են սույն օրենքով, իսկ սույն օրենքով սահմանված վարքագծի կանոններից բխող պահանջները՝ գլխավոր դատախազի հրամանով: Վարքագծի կանոններից բխող պահանջները ընդունվել են գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրամանով, որով սահմանվել են դատախազի կողմից իր պաշտոնեական և արտապաշտոնեական գործունեության ընթացքում գործող պահանջներից բխող պահանջները: https://www.prosecutor.am/storage/orders/orders_46_1685023080.pdf

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ՀՀ դատախազության կանոնադրությամբ սահմանվում է, որ ՀՀ դատախազությունն ունի ներքին աուդիտի բաժին: Սակայն ներքին աուդիտի բաժնի գործառույթները սահմանված չեն ՀՀ դատախազության կանոնադրությամբ: https://www.prosecutor.am/storage/orders/orders_79_1685023080.pdf ՀՀ գլխավոր դատախազի 2024 թ. հոկտեմբերի 16-ի N 78-L հրամանով հաստատվել է ՀՀ դատախազության ներքին աուդիտի կոմիտեի կազմը: https://www.prosecutor.am/storage/orders/orders_3349_4479258664.pdf Սակայն ՀՀ դատախազության կայքում առկա չէ որևէ տվյալ ներքին աուդիտի իրականացման և 2021-2024 թթ. ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին: ԹԻՀԿ կողմից ՀՀ դատախազության հարցման արդյունքներով ՀՀ դատախազությունը չի ներկայացրել ՀՀ դատախազության գործունեության ռազմավարական ծրագրի առկայության մասին տվյալները, ներքին կարգապահական կանոնների առկայության մասին տվյալները, ՀՀ դատախազության ներքին աուդիտի մեխանիզմի և 2021-2024 թթ. աուդիտորական գնահատման զեկույցների կամ հաշվետվությունների առկայության մասին տվյալները, ՀՀ դատախազության կարողությունների զարգացման և իրազեկման գործընթացներում հանրային ընկալման հարցումների տվյալների օգտագործման վերաբերյալ տեղեկությունը:
22.	Գործընթացների պատշաճ պահպանում	ՀՀ դատախազության հանրային ընկալումների հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոց	Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր) և ՀՀ	Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75 %) և ՀՀ	Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր) և ՀՀ	Ցածր	2022 թ.-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022» զեկույցի համաձայն՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ների հաղորդումների, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, ՀՀ դատախազության հետ անմիջական շփումներ ունեցող անձանց հետ	դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ՀՀ դատախազության հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ՀՀ դատախազության հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ՀՀ դատախազության հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում		20.7 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0.3 %-ը հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65.1 %): Շատ ցածր է իրազեկվածությունը դատախազության մասին: Դատախազության մասին գիտի հարցվածների ընդամենը 4.7 %-ը: Ընդ որում, տարբեր անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու վերաբերյալ ընկալումների պատկերը վկայում է, որ հարցվածների 28.7 % Դատախազությունը համարում է մեծապես կոռումպացված, իսկ 31.6 %՝ որոշ չափով կոռումպացված: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազությունը չի տրամադրել ԹԻՀԿ կողմից հարցված՝ ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրային հարցումների առկայության, հանրային ընկալման տվյալները, ինչպես նաև ՀՀ դատախազության կարողությունների զարգացման և իրազեկման գործընթացներում հանրային ընկալման հարցումների տվյալների օգտագործման վերաբերյալ տեղեկությունը: Ընդհանուր առմամբ, ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է, հանրության կապը ՀՀ դատախազության հետ գրեթե բացակայում է: Քրեական վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման մասով գործնականում գնահատման օրինակները բացակայում են:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է հանրության վստահությունը ՀՀ դատախազության կողմից իր լիազորություններն օգտագործելիս և վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման,				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			անկողմնակալության և արդարացիության վերաբերմունքի մեջ: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի գլխավորապես հետազոտության արդյունքների վրա, ինչպես նաև լրացվի ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե ՀՀ դատախազությունն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է ՀՀ դատախազությունից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները:				
23.	ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, տվյալներ ՀՀ դատախազության կողմից ստացված	Ազդարարողների, բողոքողների փոքր մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը	Ազդարարողների, բողոքողների միջին մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտել	Ազդարարողների, բողոքողների խոշոր մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելո	Ցածր	ՀՀ դատախազությունում առկա է azdararir.am հավելվածը, որով ստացված անանուն հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը: ՀՀ գլխավոր դատախազությունը, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, ստանում է միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումները: Օրենքի 9-րդ հոդվածում նշվում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը	բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	բացահայտելու հարցում (25 %-ից պակաս)	ու հարցում (25-50 %)	ւ հարցում (50 %-ից ավելի)		միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: Նույն հոդվածի 1.1-ին, 3-րդ և 4-րդ մասերից բխում է, որ հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կողմից վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, իսկ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը՝ ԿԿՀ: ՀՀ գլխավոր դատախազությունը համակարգման շրջանակներում ընթացքավորում է գործը, և հետո արդեն գործը հասնում է Հակակոռուպցիոն կոմիտե: https://www.arlis.am/hy/acts/114364 ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2021-2023 թթ. տարեկան հաղորդումները չեն պարունակում ՀՀ դատախազության վերաբերյալ ազդարարման դեպքերի քանակի տվյալներ: Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազությունը, ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան, չի տրամադրել տվյալներ ՀՀ դատախազության անձնակազմի դեմ ներկայացված, արձանագրված բողոքների քանակի վերաբերյալ:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ազդարարողների, բողոքողների՝ իրենց ինքնությունը ՀՀ դատախազությանը բացահայտելու պատրաստակամությունը: Որպես ազդարարողներ՝ իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամության գնահատման ցուցանիշը հանդիսանում է ՀՀ դատախազության գործընթացների հանդեպ նրանց վստահության ցուցանիշը: Այն չափվում է՝ ստորագրված գրավոր բողոքների և անանուն բողոքների թիվը 2021-2024 թվականների ընթացքում համադրելով ստացված բողոքների ընդհանուր թվի հետ: Եթե ՀՀ դատախազությունը պաշտպանություն է տրամադրում ազդարարողներին, ապա պետք է նկարագրվեն նման պաշտպանության մանրամասները, եթե հնարավոր է, կոնկրետ օրինակներով:				
24.	ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք,	Բողոքները ՀՀ դատախազության անձնակազմի դեմ	Բողոքները ՀՀ դատախազության անձնակազմի դեմ	Բողոքները ՀՀ դատախազության անձնակազմի դեմ քննվում են մեկ այլ	Միջին	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ով սահմանված են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Դրանք են՝ 1) դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	բողոքների քննությունը	հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, մամուլի հաղորդումներ	անտեսվում են և (կամ) չեն քննվում առանց որևէ բացատրության	քննվում են ներքին վերահսկման ստորաբաժանման կողմից	պետական մարմնի կողմից՝ շահերի բախումից խուսափելու նպատակով		2) դատախազի վարքագծի կանոնները կամ շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված կանոնի խախտման. 3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը. 4) սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը. 5) դատախազի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելը կամ գույքային դրության առնչությամբ այնպիսի անհամապատասխանությունը, որը հանգեցրել է ԿԿՀ-ի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելուն: Գլխավոր դատախազի տեղակալի կարգապահական պատասխանատվության հիմք է նաև նրա կողմից ԿԿՀ-ի ընդունած վարքագծի կանոնագրքով սահմանված կանոնների խախտումը, որի դեպքում, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները կամ սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները խախտելու կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում կիրառելի չեն սույն օրենքով նախատեսված կարգապահական վարույթի վերաբերյալ կարգավորումները: Սույն մասով նախատեսված դեպքերում վարույթը հարուցում և իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սույն մասով սահմանված կանոնը չի վերաբերում այն դեպքերին, երբ գլխավոր դատախազի տեղակալը թույլ է տալիս այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին: Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ դատախազի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի արդյունավետությունը: Եթե առկա է, ՀՀ դատախազությունից պետք է ձեռք բերել բողոքողների բնութագիրը, ներառյալ նրանց սեռը, տարիքը, զբաղմունքը և կրթական որակավորումները:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://www.arlis.am/hy/acts/203931 Դատախազի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այսինքն՝ գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազը Օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է միայն ԿԿՀ-ի ընդունած եզրակացության հիման վրա եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում: «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը գլխավոր դատախազի տեղակալների և դատախազների նկատմամբ գլխավոր դատախազը նշանակում է էթիկայի հանձնաժողովի համապատասխան դրական եզրակացության հիման վրա: «Դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժը բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների նկատմամբ նշանակում է ՀՀ նախագահը՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ: «Դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժը գլխավոր դատախազի նկատմամբ նշանակում է ՀՀ նախագահը: https://www.arlis.am/hy/acts/203931 Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը (https://www.prosecutor.am/storage/orders/orders_47_4705905205.PDF) սահմանված է գլխավոր դատախազի հրամանով: Կարգապահական խախտման փաստի առթիվ դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի գլխավոր դատախազը՝ սեփական նախաձեռնությամբ, դատախազների միջնորդությունների հիման վրա, Ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա, պատասխանատվության

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասին դատարանի սանկցիայի հիման վրա: https://www.arlis.am/hy/acts/203931 Դատախազի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ հարուցում է նաև գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, ինչպես նաև ՁԼՄ-ների հրապարակումների հիման վրա: https://www.prosecutor.am/storage/orders/orders_47_4705905205.PDF
25.	Բողոքների արդյունքները	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի	Բողոքները ՀՀ դատախազության անձնակազմի դեմ անտեսվում են և ամենևին չեն քննվում	ՀՀ դատախազության անձնակազմի դեմ որոշ հիմնավոր բողոքներ հանգեցնում են պատժի կամ պատասխանատվության այլ միջոցների	ՀՀ դատախազության անձնակազմի դեմ բոլոր հիմնավոր բողոքները հանգեցնում են պատժի կամ պատասխանատվության այլ միջոցների և հրապարակվում են նրա տարեկան զեկույցում	Բարձր	ՀՀ դատախազության 2021, 2022, 2023 և 2024 թվականների ամենամյա հաղորդումները պարունակում են որոշակի տեղեկություններ ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: Այսպես, 2022 թ. տարեկան հաղորդման համաձայն, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 77 ծառայողական քննություն՝ 86 դատախազի նկատմամբ (2021 թվականին՝ 71 ծառայողական քննություն՝ 79 դատախազի նկատմամբ): Ծառայողական քննություն իրականացնելու հիմք են հանդիսացել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների առերևույթ խախտումներ թույլ տալը և այլն: Վերոհիշյալ ծառայողական քննություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը: Իրականացված

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		դեմ պայքարի փորձագետների հետ, մամուլի հաղորդումներ	*Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները 2021-2024 թվականների ընթացքում: Պետք է ներկայացվի սխալ վարքագծի համար ՀՀ դատախազության անձնակազմի դեմ ներկայացված հիմնավոր բողոքների քանակը՝ նշանակված պատժի մանրամասների հետ միասին: Եթե միայն որոշ հիմնավոր բողոքներ են հանգեցնում պատժի նշանակման, կամ եթե բողոքներն անտեսվում են ՀՀ դատախազության կողմից, պետք է բացատրություն խնդրել ՀՀ դատախազության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից կամ այլ պետական մարմիններից, որոնք լիազորված են կամ իրավասու են ՀՀ դատախազության անձնակազմի վարքագծի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու համար:				ծառայողական քննության արդյունքներով 6 դեպքով՝ 6 դատախազի վարքագծի կանոնների պահանջների և աշխատանքային պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 49 դեպքով՝ 50 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 22 կարգապահական վարույթ՝ 30 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 6 դատախազի նկատմամբ, 3 կարգապահական վարույթ՝ 6 դատախազի նկատմամբ) (2021 թվականին՝ 7 կարգապահական վարույթ՝ 11 դատախազի նկատմամբ): Կարգապահական վարույթ հարուցելու հիմք են հանդիսացել քրեական գործով նախաքննության նկատմամբ թերի և մակերեսային դատավարական ղեկավարում իրականացնելը, վերադաս դատախազի կողմից ոչ պատշաճ վերահսկողությունը, դատավարական ժամկետները չպահպանելը, դատախազի վարքագծի կանոնները խախտելը: 12 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն», 3 դատախազի նկատմամբ՝ «խիստ նկատողություն», 1 դատախազի նկատմամբ՝ «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով», այնուհետև նույն դատախազի նկատմամբ հարուցված առանձին կարգապահական վարույթի արդյունքներով՝ վերջինիս նկատմամբ նշանակվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժը: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf 2023 թ. ընթացքում իրականացվել է 83 ուսումնասիրություն՝ 129 դատախազի նկատմամբ (2022 թվականին՝ 71 ուսումնասիրություն՝ 79 դատախազի նկատմամբ): Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների, փաստաբանների դիմում-բողոքները, դատավորների գրությունները, ՀԼՄ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հրապարակումները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը:22 ուսումնասիրության արդյունքներով՝ 36 դատախազի կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 31 ուսումնասիրության արդյունքներով՝ 39 դատախազի կողմից ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել, 29 ուսումնասիրության արդյունքներով 41 դատախազի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ: 1 ուսումնասիրության արդյունքով 13 դատախազի նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազը որոշում է կայացրել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 29 կարգապահական վարույթ՝ 41 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 8 դատախազի նկատմամբ, 5 կարգապահական վարույթ, յուրաքանչյուրը՝ 2 դատախազի նկատմամբ, 23 կարգապահական վարույթ՝ յուրաքանչյուրը՝ 1 դատախազի նկատմամբ (2022 թ.՝ 22 կարգապահական վարույթ՝ 30 դատախազի նկատմամբ): Կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել քրեական վարույթներով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առկա թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների, աշխատանքային ներքին կարգապահական կանոնների խախտումներ թույլ տալը և այլն: Արդյունքում՝ • 9 դատախազի նկատմամբ իրականացված 2 կարգապահական վարույթի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• 8 դատախազի նկատմամբ իրականացված 6 կարգապահական վարույթի արդյունքներով դատախազների կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են օպերատիվ խորհրդակցություններում, • 10 դատախազի նկատմամբ իրականացված 9 կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, • 5 դատախազի նկատմամբ իրականացված 4 կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, • 1 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժ, • 2 դատախազի նկատմամբ իրականացված 1 կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ, • 5 դատախազի նկատմամբ իրականացված 5 կարգապահական վարույթների ընթացքում վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից `սեփական դիմումի համաձայն, • 1 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթի արդյունքում՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված չի համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը: Իրականացված կարգապահական վարույթների արդյունքում կազմակերպվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի 17 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է 20 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված նիստերի արդյունքներով՝ 19 դատախազի վերաբերյալ կայացվել է որոշում կարգապահական խախտման փաստը և դրանում դատախազի մեղավորությունը հաստատելու մասին (1 դատախազ դրանից հետո սեփական դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և վերջինիս

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվել), 1 դատախազի դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված չի համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը : https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf 2024 թ. ընթացքում իրականացվել է 43 ուսումնասիրություն՝ 49 դատախազի նկատմամբ: Ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում թույլ տրված առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների առերևույթ խախտումները: Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ • 7 դեպքով՝ 8 դատախազի կողմից թույլ տրված վարքագծի կանոնների և ծառայողական պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի կամ ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, • 28 դեպքով՝ 30 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել, • 2 դեպքով՝ 2 դատախազի նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցվել է, քանի որ վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• 1 դեպքով՝ 1 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել չհարուցել կարգապահական վարույթ, • 1 դեպքով՝ 2 դատախազի նկատմամբ իրականացվող ուսումնասիրությունը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չի եղել, • 5 դեպքով՝ 6 դատախազի նկատմամբ, ուսումնասիրության արդյունքում, հարուցվել են կարգապահական վարույթներ, իսկ 3 դեպքով՝ 3 դատախազի նկատմամբ, առանց ուսումնասիրության, հարուցվել են կարգապահական վարույթներ: Իրականացվել է 8 կարգապահական վարույթ՝ 9 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 2 դատախազի նկատմամբ): Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի տույժ, 4 դատախազ ազատվել են կարգապահական տույժից, 1 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում: 3 կարգապահական վարույթ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չեն եղել: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ՀՀ դատախազությունից հայտնել են, որ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի դեմ ուղղված բողոքներ 2021-2023 թվականների ընթացքում չեն եղել: 2024 թվականին արձանագրվել է 2 բողոք, որոնց արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գույքի բռնագանձման գործերով վարչության անձնակազմի 2 աշխատակիցների նկատմամբ տույժ չի կիրառվել:
26.	Բարեվարքության ներքին մեխանիզմներ		ՀՀ դատախազությունը չունի վարքագծի կանոններ կամ ներքին կարգապահական ընթացակարգեր կամ դրանք շատ թույլ են և (կամ) գործնականում չեն կիրառվում	ՀՀ դատախազությունն ունի վարքագծի կանոններ և ներքին կարգապահական ընթացակարգեր, սակայն դրանք համապարփակ և (կամ) հետևողականորեն չեն կիրառվում	ՀՀ դատախազությունն ունի համակողմանի վարքագծի կանոններ և կարգապահական ընթացակարգեր, որոնք կիրառվում են արդարացիորեն և հետևողականորեն	Բարձր	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են սույն օրենքով, իսկ սույն օրենքով սահմանված վարքագծի կանոններից բխող պահանջները՝ գլխավոր դատախազի հրամանով: Վարքագծի կանոններից բխող պահանջները ընդունվել են գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրամանով, որով սահմանվել են դատախազի կողմից իր պաշտոնեական և արտապաշտոնեական գործունեության ընթացքում գործող պահանջներից բխող պահանջները: https://www.prosecutor.am/storage/orders/orders_46_1685023080.pdf Դատախազի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատախազների համար: Անմիջական վերադաս դատախազը պարտավոր է նաև պահանջել, որ ապահովվի վարքագծի կանոնների պահպանումը ստորադաս դատախազների կողմից: Դատախազն իր վարքագծով, գործունեությամբ, մասնագիտական և բարոյական հատկանիշներով պետք է ձգտի ապահովել դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անաչառությունը, նպաստել դատախազության նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, դատախազական գործունեության անկախության ապահովմանը, մասնակցել վարքագծի բարձր չափորոշիչների արմատավորմանը: Գլխավոր դատախազի տեղակալների վրա տարածվում է ԿԿՀ-ի ընդունած վարքագծի կանոնագիրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ գլխավոր դատախազի տեղակալը թույլ է տալիս այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին: ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանվել են 2022 թ. հունիսի 17-ին: https://www.arlis.am/hy/acts/164523
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության վարքագծի կանոնների ամբողջականությունը (օրինակ՝ գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և հյուրասիրության, հետաշխատանքային սահմանափակումները), և վարքագծի կանոնների և սահմանափակումների խախտումների վերացման գործնականում կիրառելի ընթացակարգերը, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: https://www.arlis.am/hy/acts/169106 Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի դատախազի վարքագծի կանոնները վերտառությամբ գլուխ 12-ում, հոդվածներ 72-74.1: Ընդ որում, կանոնակարգված են ինչպես դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները, այնպես էլ դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում: Օրենքը հղում է կատարում նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, մասնավորապես՝ նվերներ ընդունելու սահմանափակումներին, շահերի բախման իրավիճակներին և այլն: https://www.arlis.am/hy/acts/120832 Բացի այդ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի Հոդված 49-ով սահմանված են դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները: Ընդ որում, օրենքը նույնպես հղում է կատարում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Այսպես, գլխավոր դատախազի տեղակալների վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության և այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները: Սույն հոդվածում նշված եզրույթների մեկնաբանման և կիրառման համար վերաբերելի են այնքանով, որքանով (mutatis mutandis) «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները սահմանում են: https://www.arlis.am/hy/acts/203931 Սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով դատախազի նկատմամբ վարքագծի կանոնների խախտումների քննությունն ու լուծումը իրականացնում է գլխավոր դատախազը կամ էթիկայի հանձնաժողովը: Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: https://www.arlis.am/hy/acts/203931 Սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում կամ միջնորդություն ստանալու դեպքում գլխավոր դատախազը, կամ էթիկայի հանձնաժողովը եռօրյա ժամկետում հաղորդումը կամ միջնորդությունն ուղարկում է ԿԿՀ: Եթե դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնողը գլխավոր դատախազն է, ապա նա եռօրյա ժամկետում ԿԿՀ է ներկայացնում տեղեկատվություն դատախազի կողմից՝ օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու փաստի մասին: Իր կամ էթիկայի հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում ստեղծում է դատախազներից կազմված կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ կամ դրա իրականացումը հանձնարարում է մեկ դատախազի: Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերվելու օրվանից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամսվա ընթացքում: Ծառայողական քննությունը հարուցվում է ԿԿՀ-ի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով բացասական բնույթի եզրակացությունը տրամադրվելուց հետո՝ մեկ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց վեց տարի հետո (բացառությամբ բարեվարքության գույքային դրության առնչությամբ հարուցվող ծառայողական քննությունների): Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության արդյունքով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրվելու դեպքում ծառայողական քննությունը հարուցվում է ԿԿՀ-ի կողմից բացասական եզրակացությունը տրամադրվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Կարգապահական վարույթի ավարտից հետո՝ յոթնօրյա ժամկետում, գլխավոր դատախազը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է ներառել նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Էթիկայի հանձնաժողովը հարցը քննում է դրա համար հրավիրված նիստում և գաղտնի քվեարկությամբ որոշում կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված կարգապահական խախտման մեջ դատախազի մեղավորության հարցը, ինչպես նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու հնարավորության հարցը: Էթիկայի հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարգապահական վարույթի արդյունքներով ձեռք բերված տվյալները գնահատում է իր ներքին համոզմամբ՝ հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ: ՀՀ դատախազության ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների խախտումների ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից: Քաղաքացիական ծառայության և ՀՀ դատախազության կայքերում բացակայում է որևէ տեղեկություն ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին: Հայտարարագրման մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ում սահմանվում է, որ հայտարարագրման պարտականություն ունեն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1 և 2 ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք: Այսպես, ՀՀ դատախազությունում հայտարարագրման պարտականություն ունեն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը: https://www.arlis.am/hy/acts/120832 ՀՀ դատախազության ծառայողների բարեվարքության մեխանիզմների կիրարկման տեսանկյունից գործնականում ոչ մի գործընթաց չի իրականացվել: Համաձայն ՀՀ դատախազության՝ ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ 2021, 2022, 2023 և 2024 թթ. ընթացքում ՀՀ դատախազության անձնակազմի աշխատակիցների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների արձանագրված դեպքերի վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել, ուստի, կարելի է եզրակացնել, որ նշված հիմքերով արձանագրված դեպքեր չեն եղել:
	ՀՀ դատախազության հաշվետվողականության և ներքին բարեվարքության միավորի հանրագումարը					8/18=44.4 %	
	Հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում (9 ցուցանիշ)						
27.	Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և	ՀՀ դատախազությունն անհասանելի է, ինչն	ՀՀ դատախազությունը հասանելի է, ինչն	ՀՀ դատախազությունը ունի բարձր հասանելիությ	Բարձր	ՀՀ դատախազության հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին հաղորդակցման կապուղիների մասով՝ ՀՀ դատախազության կայքից հնարավոր է տեղեկություն փոխանցել ՀՀ դատախազության էլեկտրոնային հասցեին՝ info@prosecutor.am, կամ ֆեյսբուքյան էջին՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	/ազդարարումներին	կայք, տվյալներ ՀՀ դատախազության կողմից ստացած բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների ցածր համամասնությամբ (տարեկան միջինը 1-ից պակաս բողոք 20 000 քաղաքացու հաշվով)	արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների միջին համամասնությամբ (տարեկան միջինը 1 բողոք 10 000 - 20 000 քաղաքացու հաշվով)	ուն, ինչն արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ ստացված կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների բարձր համամասնությամբ (տարեկան միջինը 1-ից ավելի բողոք 10 000 քաղաքացու հաշվով)		https://www.facebook.com/GenProcArmenia կամ էլ +374-10-511-527 հեռախոսահամարով, կամ էլ գրավոր՝ կառույցի հասցեով առաքված նամակով (ՀՀ ք. Երևան, 0010 Վազգեն Սարգսյան փ. 5): Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request համապետական կապուղու միջոցով հաղորդումներին հասանելիությունը իրականացվում է ՀՀ դատախազության էլեկտրոնային հասցեով: ՀՀ դատախազությունը չունի թեժ գիծ, ինչպես նաև անանուն հաղորդումների ընդունման հնարավորություն: ՀՀ դատախազության կայքում առկա չէ հետադարձ կապի հնարավորություն: ՀՀ դատախազության կայքում առկա է azdararir.am-ի հավելվածը, որով ստացված անանուն հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը: Այսպես, Դատախազության հարցման արդյունքների համաձայն, Գլխավոր դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների մասին միասնական էլեկտրոնային ազդարարման հարթակի միջոցով ստացված հանցագործության էլեմենտներ պարունակող հաղորդումների թիվը կազմել է՝ 2021 թ.՝ 18, 2022 թ.՝ 116, 2023 թ.՝ 116, 2024 թ.՝ 380: Իսկ նույն հարթակի միջոցով ստացված հանցագործության էլեմենտներ պարունակող անանուն հաղորդումների թիվը կազմել է՝ 2021 թ.՝ 15, 2022 թ.՝ 74, 2023 թ.՝ 99, 2024 թ.՝ 301: Ներկայացված տվյալները վկայում են, որ կոռուպցիայի մասին հաղորդելու մշակույթը Հայաստանում զարգանում է: Ընդամենը երեք տարվա ընթացքում կտրուկ աճել է կոռուպցիոն հաղորդումների ընդհանուր թիվը՝ 18-ից մինչև 380: Նույնը կարելի է նշել անանուն հաղորդումների մասով: Միևնույն ժամանակ, անանուն հաղորդումների բարձր տոկոսը ցույց է տալիս, որ դեռևս առկա են վստահության հետ կապված խնդիրներ: Քաղաքացիները ցանկանում են հաղորդել, բայց գոյություն ունի վախ կամ ցածր վստահություն՝ անձնական տվյալների պաշտպանվածության կամ հետևանքների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, անանուն հաղորդումների աճը վկայում է, որ հարթակը ընկալվում է որպես ապահով գիծ կոռուպցիայի բացահայտման համար:	
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության հասանելիությունը ազդարարումներին և (կամ) տեղեկատվություն հաղորդողներին, դիմումներին և բողոքներին 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից ստացված				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			կոռուպցիոն բողոքների վերաբերյալ տվյալների միջոցով: Այս ցուցանիշի գնահատումը պետք է կատարվի հավաքագրված տվյալները երկրի բնակչության թվաքանակի մեջ կշռելու միջոցով: Առաջարկվող շեմերը պետք է դիտարկել երկրում կոռուպցիայի ընկալման մակարդակի համատեքստում՝ օգտագործելով այնպիսի տվյալներ, ինչպիսիք են ԹԻ Կոռուպցիայի ընկալման համաթիվը և Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը: Եթե կոռուպցիայի ընկալման մակարդակը հատկապես բարձր է, ապա պետք է համապատասխանաբար բարձրացվեն շեմերը, և ընդհակառակը, եթե երկրում կոռուպցիայի ընկալվող մակարդակը ցածր է: Առկայության դեպքում հետազոտողը պետք է ՀՀ դատախազությունից պահանջի այն անձանց վերաբերյալ տվյալներ, ովքեր տեղեկություններ են տրամադրել կամ բողոքներ ներկայացրել: Ազդարարողների, բողոքներ ներկայացնողների պրոֆիլների վերլուծությունը՝ ըստ նրանց տարիքի, սեռի և կրթության, ցույց կտա, թե որքանով են նրանք ներկայացնում ընդհանուր բնակչությանը: Հետազոտողը պետք է ներառի նաև ցանկացած տեղեկություն այն մասին, թե որքանով է ազդարարումների, բողոքների, դիմումների ներկայացման համակարգը/ընթացակարգը օգտագործողի համար հարմար կամ համարժեք:				ՀՀ դատախազության հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին ցուցանիշը հաշվարկվել է որպես ՀՀ դատախազությանը հասցեագրված բոլոր դիմումների, բողոքների ու հաղորդումների թվի հարաբերությունը ՀՀ բնակչության թվին՝ բազմապատկած 20,000-ով: ՀՀ բնակչության թվաքանակի մասին ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի հրապարակված տվյալներն են՝ 2021 թ.՝ 2,961,400, 2022 թ.՝ 2,977,100, 2023 թ.՝ 2,991,200, 2024 թ.՝ 3,076,200: https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf https://armstat.am/file/article/population_01_01_25.pdf Այսպես, ՀՀ դատախազությունում 2024 թվականին քաղաքացիներից ստացվել է 14.000 դիմում-բողոք, որից 1529-ը վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Ուստի, ՀՀ դատախազության հասանելիությունը ազդարարումներին կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասով, ՀՀ 10 հազար բնակչի հաշվով 2024 թ.-ին կազմել է 4.9 (1529/3,076,200*10,000): 2023 թ. ընթացքում քաղաքացիներից ստացվել է 13.705 դիմում-բողոք, որից 1578-ը վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, իսկ հասանելիության մակարդակը 2023 թ.-ին կազմել է միջինում 7,85 ((1578/2,991,200*20,000) + (1578/2,991,200*10,000) /2, կամ (10.5 + 5.2)/2):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf 2022 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 11.305, որից 1684-ը վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, իսկ հասանելիության մակարդակը 2022 թ.-ին կազմել է միջինում 8,45 ((1684/2,977,100*20,000)+ (1684/2,977,100*10,000) /2, կամ (11.3 + 5.6)/2): https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf 2021 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 10.918, որից 1177-ը վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, իսկ հասանելիության մակարդակը 2021 թ.-ին կազմել է՝ միջինում 5,9 ((1177/2,961,400*20,000)+ (1177/2,961,400*10,000) /2, կամ (7.9 + 3.9)/2): https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_48_8560338567.pdf Ուստի, ՀՀ դատախազության միջինացված հասանելիությունը ազդարարումներին կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասով, ՀՀ 10 հազար բնակչի հաշվով 2021-2024 թթ.-ին կազմել է 4.9: ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2024 թ. հաղորդման համաձայն՝ դատախազությունում 2024 թվականի ընթացքում ներքին ազդարարման դեպքեր չեն գրանցվել: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով 2024 թվականին ստացվել է 380 հաղորդում, որից 301-ը՝ անանուն, 79-ը՝ տվյալներով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կարգով ստուգման է ուղարկվել 237 հաղորդում, հիշյալ հաղորդումների ստուգման արդյունքներով նախաձեռնվել է 21 քրեական վարույթ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ «2021-2023 ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների մասին միասնական էլեկտրոնային ազդարարման հարթակի միջոցով 2022 թ.-ին ստացվել է և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին է հասցեագրվել 1, իսկ 2023 թ.-ին՝ 9 հաղորդում: Բացի այդ, միասնական էլեկտրոնային ազդարարման հարթակի միջոցով ստացված և ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հասցեագրված 3-ական հաղորդումներ, ինչպես նաև 2023 թ.-ին ստացված ևս 4 հաղորդումներ ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հասցեագրվելուց հետո ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե»: Այսպես, ՀՀ դատախազությունում 2024 թվականին քաղաքացիներից ստացվել է 14.000 դիմում-բողոք (2023 թվականին՝ 13.705): 2024 թվականին ստացված դիմում-բողոքներից 3258-ը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, 2683-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին, 2580-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին, 1529-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, 696-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, 292-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններին և այլն: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ՀՀ դատախազություն հասցեագրված ստորագրված գրավոր բողոքների և անանուն բողոքների թվի համադրությունը 2024 թվականի համար վկայում է, որ ազդարարողների, բողոքողների փոքր մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (380/1529*100 %=24.85 %):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
28.	Արձագանքողականությունը կոռուպցիայի ն առնչվող հաղորդումներին/բողոքներին	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, տվյալներ ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների վերաբերյալ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի	ՀՀ դատախազությունն արձագանքողական չէ, ինչն արտացոլված է 2021-2024 թթ. հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների ցածր համամասնությամբ (33 %-ից պակաս)	ՀՀ դատախազությունը միջին չափով է արձագանքողական, ինչն արտացոլված է 2021-2024 թթ. հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների միջին համամասնությամբ (33-66 %)	ՀՀ դատախազությունն ունի բարձր արձագանքողականություն, ինչն արտացոլված է 2021-2024 թթ. հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների բարձր համամասնությամբ (66 %-ից ավելի)	Բարձր	ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ ՀՀ դատախազությունում 2024 թվականին քաղաքացիներից ստացվել է 14.000 դիմում-բողոք, որից 1529-ը (10.9 %) վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին: Դիմումներից 2,627-ը եղել է կրկնակի, 1,578-ը բավարարվել է, 3,412-ին տրվել է պարզաբանում, 1,713-ը մերժվել է, 399-ը թողնվել է անհետևանք, 17-ը վերադարձվել է դիմումատուին, 32 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 130 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 6,656 դիմում ուղարկվել է այլ մարմին ընթացքը լուծելու համար, 63 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf 2023 թ. ընթացքում քաղաքացիներից ստացվել է 13,705 դիմում-բողոք, որից 1,578- ը (11.5 %) վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին: Դիմումներից 2,671-ը եղել է կրկնակի: Դիմումներից 1,767-ը բավարարվել է, 3,597-ին տրվել է պարզաբանում, 1,635-ը մերժվել է, 168-ը թողնվել է անհետևանք, 2-ը վերադարձվել է դիմումատուին, 24 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 59 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 6307 դիմում ուղարկվել է այլ մարմին ընթացքը լուծելու համար, 146 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf 2022 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 11,305, որից 1,684-ը (14.9 %) վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին: Դիմումներից 2,300-ը եղել է կրկնակի: Դիմումներից 1,117-ը բավարարվել է, 3,187-ին տրվել է պարզաբանում, 1,682-ը մերժվել է, 101-ը թողնվել է անհետևանք, 4-ը վերադարձվել է
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության արձագանքը կոռուպցիոն բողոքներին և ստացված տեղեկություններին: ՀՀ դատախազության կողմից կոռուպցիայի հետ կապված բողոքների թվի վերաբերյալ տվյալների համար նայել ՀՀ դատախազության				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		հաղորդումներ	տարեկան հաղորդումը կամ պահանջել համապատասխան տեղեկատվություն ՀՀ դատախազությունից: Այնուհետև հաշվարկել 2021-2024 թվականների ընթացքում քննված բողոքների մասնաբաժինը, համանման տեսակի գծով ՀՀ դատախազությանը ներկայացված տեղեկություն ներկայացնողների, դիմումների, բողոքների ընդհանուր թվի մեջ: Պետք է նկատի ունենալ նաև, թե ՀՀ դատախազության կողմից առկա է արդյոք հետապնդումներ նախաձեռնելու դժկամություն և գործերի զգալի կուտակում կամ ժամկետների ձգձգում: Եթե այո, ապա նման որակական գործոններն, ամենայն հավանականությամբ, մատնանշում են ցածր միավոր:				դիմումատուին, 20 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 71 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 4,827 դիմում ուղարկվել է այլ մարմին, 296 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf 2021 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 10,918, որից 1,177-ը (10.8 %) վերաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին: Դիմումներից 2,183-ը եղել է կրկնակի: Դիմումներից 966-ը բավարարվել է, 2,862-ին տրվել է պարզաբանում, 2,204-ը մերժվել է, 172-ը թողնվել է անհետևանք, 3-ը վերադարձվել է դիմումատուին, 19 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 78 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 4,473 դիմում ուղարկվել է այլ մարմին, 346 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_48_8560338567.pdf Բացի այդ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ 2024 թ. հաշվետվության համաձայն, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2024 թվականի ընթացքում իրավասու դատախազների կողմից զեկուցագրեր են ստացվել 121 քրեական վարույթով 201 անձի վերաբերյալ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 16 նյութ՝ 16 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 163 որոշում, իսկ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին՝ 45 որոշում: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2023 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2023 թվականի ընթացքում իրավասու դատախազների կողմից զեկուցագրեր են ստացվել 46 քրեական վարույթով 79 անձի վերաբերյալ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 27 զեկուցագիր 28 անձի վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 82 որոշում, իսկ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին՝ 26 որոշում: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf Այսպիսով, ՀՀ դատախազության կողմից հաղորդումների/բողոքների արձագանքողականությունը քանակական գնահատման տեսանկյունից 2021 թ. համար կազմում է 97.7 % (10,918-250=10,668/10,918), 2022 թ.-ին՝ 98.4 % (11,305-172=11,133/11,305), 2023 թ.-ին՝ 98.3 % (13,705-226=13,479/13,705), իսկ 2024 թ.-ին՝ 96.2 % (14,000-529=13,471/14,000): Վերոնշյալ թվերը վկայում են, որ կոռուպցիոն բողոքների ընդհանուր ծանրաբեռնվածությունը աճել է, հատկապես 2022–2024 թթ., երբ և ընդհանուր դիմումների, և կոռուպցիոն բնույթի հաղորդումների քանակը շարունակաբար բարձրացել են: Միևնույն ժամանակ, բավարարված դիմումների տոկոսը համեմատաբար ցածր է, մինչդեռ զգալի մասի դեպքում տրվել են պարզաբանումներ: Բացի այդ, բողոքների միայն փոքր հատվածն է հանգեցրել վարույթի մեկնարկի, ինչը, մի կողմից, կարող է խոսել որակի և նախնական տվյալների սահմանափակության մասին, մյուս կողմից՝ բարձրացնել արդյունավետ քննության և նախաքննական մարմինների հետ գործակցության հարցը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
29.	Նախաձեռնողականություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, տվյալներ ՀՀ դատախազության ստացած բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց,ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	ՀՀ դատախազության նախաձեռնած կոռուպցիոն հետապնդումների ցածր մասնաբաժին (բոլոր վարույթների 5 %-ից պակաս)	ՀՀ դատախազության նախաձեռնած կոռուպցիոն հետապնդումների չափավոր մասնաբաժին (բոլոր վարույթների 5-10 %-ը)	ՀՀ դատախազության նախաձեռնած կոռուպցիոն հետապնդումների բարձր մասնաբաժին (բոլոր վարույթների 10 %-ից ավելի)	Միջին	Համաձայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ 2024 թ. հաշվետվության՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2024 թվականի ընթացքում իրավասու դատախազների կողմից զեկուցագրեր են ստացվել 121 քրեական վարույթով 201 անձի վերաբերյալ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 16 նյութ՝ 16 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 163 որոշում, իսկ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին՝ 45 որոշում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով սկսվել է 7 ուսումնասիրություն: Այսպես, սեփական նախաձեռնությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազները 2024 թ. ընթացքում նախաձեռնել են ընդամենը 7 ուսումնասիրություն: Ուստի, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության նախաձեռնողականությունը 2024 թ. համար գնահատվում է՝ 7/163=4.29 %: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf 2023 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2023 թվականի ընթացքում իրավասու դատախազների կողմից զեկուցագրեր են ստացվել 46 քրեական վարույթով 79 անձի վերաբերյալ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 27 զեկուցագիր 28 անձի վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 82 որոշում, իսկ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին՝ 26 որոշում:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով է ՀՀ դատախազությունը նախաձեռնողական իր կամքով հետապնդում սկսելու հարցում: Համեմատել 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության նախաձեռնած քրեական հետապնդումների ընդհանուր թվի վերաբերյալ տվյալները նույն ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից իրականացված հետապնդումների ընդհանուր թվի հետ (ներառյալ բողոքների, դիմումների, ազդարարման արդյունքում հարուցվածները): Նախաձեռնողական վարույթների մեծ մասնաբաժին է համարվում բոլոր ուսումնասիրությունների ավելի քան 10 %-ը, չափավոր (միջին) մասնաբաժին՝ 5-10 %-				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ի սահմաններում, իսկ ցածր մասնաբաժին՝ 5 %-ից պակասը: Եթե ՀՀ դատախազությունը նախաձեռնել է հետապնդումներ քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար այլ անձանց նկատմամբ, ապա նախաձեռնողականության մակարդակը գնահատելիս սա ևս պետք է հաշվի առնվի:				Սեփական նախաձեռնությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կողմից 2023 թ. ընթացքում նախաձեռնած ուսումնասիրությունների թիվը կազմել է 9: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության նախաձեռնողականությունը 2023 թ. համար գնահատվում է՝ 9/82=10.9 %: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ 2022 թ. Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կողմից ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 77 որոշում: Սեփական նախաձեռնությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կողմից 2022 թ. ընթացքում նախաձեռնած ուսումնասիրությունների թիվը կազմել է 2: Այսպիսով, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության նախաձեռնողականությունը 2022 թ. համար գնահատվում է՝ 2/77=2.5 %: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության նախաձեռնողականությունը 2021 թ. համար գնահատվում է՝ 0 %, քանի որ ըստ հարցման արդյունքների՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացված ուսումնասիրություններ չեն եղել: Այսպիսով, 2021-2024 թթ. համար Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության միջինացված նախաձեռնողականությունը կազմել է 4.4 %: Ստացվում է, որ 2021-2024 թթ. ընթացքում ընդհանուր ուսումնասիրությունների 95-100%-ը մեկնարկել է ոչ սեփական նախաձեռնությամբ: Այս հանգամանքը մտածմունքների տեղիք տալիս, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							բռնագանձման գործիքը, ըստ միջազգային չափորոշիչների, ենթադրում է ակտիվ հետախուզական և ֆինանսական վերլուծական աշխատանք: Ուստի, դատախազությունն այս ոլորտում ձևավորում է ռեակտիվ, ոչ թե պրոակտիվ մոդել, քանի որ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը գործում է որպես արձագանքող մարմին՝ աշխատելով հիմնականում ստացված հաղորդումների հիման վրա, այլ ոչ որպես նախաձեռնող մարմին, որը պետք է ինքնուրույն բացահայտի ապօրինի հարստացման դեպքերը: Ինչ վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից նախաձեռնված հանրային քրեական հետապնդումներին, ԹԻՀԿ հարցման արդյունքներով, 2022 թ. այն կազմել է 31, 2023 թ.՝ 83, իսկ 2024 թ.՝ 156: Ընդ որում, ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթների հսկողության ընդհանուր թիվը 2022 թ. կազմել է 486, 2023 թ.՝ 642, իսկ 2024 թ.՝ 749: Այսպիսով, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության նախաձեռնողականությունը 2022 թ. համար գնահատվում է 6.3 % (31/486), 2023 թ.՝ 12.9 % (83/642), իսկ 2024 թ.՝ 20.8 % (156/749): Այսպիսով, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության նախաձեռնողականությունը 2022-2024 թթ. ընթացքում աճել է գրեթե քառապատիկ՝ ցուցանիշը բարձրացել է 6.3 %-ից մինչև 20.8 %, ինչը նշանակում է, որ դատախազության դերակատարումը դարձել է ավելի ակտիվ և նախաձեռնողական: Չնայած աճին՝ նախաձեռնողականությունը շարունակում է մնալ համեմատաբար ցածր (միջինը՝ 13.3 %): Արդյունավետ հակակոռուպցիոն համակարգում նախաքննության վերահսկող դատախազության նախաձեռնողականությունը պետք է լինի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							շատ ավելի բարձր՝ հաշվի առնելով կոռուպցիոն հանցավորության լատենտայնությունը: Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցված հանրային քրեական հետապնդումների քանակի վերաբերյալ ՀՀ դատախազությունը տվյալներ չի ներկայացրել:
30.	Արդյունավետություն և արհեստավարժություն	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, տվյալներ ՀՀ դատախազության կողմից հետապնդված կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և	Կոռուպցիոն դեպքերի անբավարար և ոչ արհեստավարժ հետապնդում	Կոռուպցիոն դեպքերի բավարար և արհեստավարժ հետապնդում	Կոռուպցիոն դեպքերի խիստ արդյունավետ և արհեստավարժ հետապնդում	Միջին	ԹԻՀԿ կողմից «ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից օրենքով սահմանված ժամկետներում նախաձեռնված հանրային քրեական հետապնդումների ընդհանուր թվի, յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակի, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների համար պահանջված միջինացված ժամանակի (օրեր, ամիսներ)» Գլխավոր դատախազության հարցման արդյունքներով տեղեկություն չի ներկայացվել: ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից օրենքով սահմանված ժամկետներում նախաձեռնված հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշումների թվաքանակի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ տվյալները՝ 2022 թ.՝ 129, 2023 թ.՝ 480, 2024 թ.՝ 591: ԹԻՀԿ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազության՝ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության գործունեության արդյունավետության մակարդակի գնահատման համար հաշվարկվող կոռուպցիոն գործերով հետապնդման միջին ժամկետի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 192-ի համաձայն՝
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատելու համար հավաքագրել տվյալներ 2021-2024 թվականների ընթացքում կոռուպցիոն գործով վարույթը ավարտելու համար պահանջված ՀՀ դատախազությունից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ՝ գնահատելու կոռուպցիայի հետապնդման արդյունավետության մակարդակը: ՀՀ դատախազության արհեստավարժությունը կոռուպցիոն դեպքերը հետապնդելու հարցում արտացոլված է 2021-2024 թվականների ընթացքում հաջողությամբ նախաձեռնված քրեական հետապնդումների թվով, դատապարտված անձանց թվով և				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հարցումների գնահատականներով: Առանձնապես, քրեական վարույթների գործերի երկարատևության պատճառները պետք է բացատրվեն, եթե առկա են հատուկ հանգամանքներ: Առավել կարևոր է կոռուպցիոն դեպքերով հետապնդումներն ավարտելու համար ՀՀ դատախազությունից պահանջված միջին ժամանակը:				մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝ • 3 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 5 ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 8 ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 10 ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով: Բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով հանրային քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 1 ամսով, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 2 ամսով: https://www.arlis.am/documentview.aspx?docid=154763 Այսպես, 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում հսկողություն է իրականացվել 486 ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ, որից 38-ը վերադարձվել է Հակակոռուպցիոն կոմիտե, 129-ով կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշում, 85 վարույթի նյութ հանձնվել է դատարան: 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում հսկողություն է իրականացվել 642 ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ, որից 28-ը վերադարձվել է Հակակոռուպցիոն կոմիտե, 480-ով կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշում, 169 վարույթի նյութ հանձնվել է դատարան:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում հսկողություն է իրականացվել 749 ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ, որից 41-ը վերադարձվել է Հակակոռուպցիոն կոմիտե, 591-ով կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշում, 159 վարույթի նյութ հանձնվել է դատարան: Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2022 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ (2021 թ.-ին՝ 83)՝ 197 անձի վերաբերյալ (2021 թ.-ին՝ 150): Նշված քրեական գործերից 67-ով (2021 թ.-ին՝ 53) 132 անձ դատապարտվել է (2021 թ.-ին՝ 97 անձ): https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf 2023 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ՝ 249 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 97-ով 140 անձ դատապարտվել է: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf 2024 թ. ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 163 քրեական գործ՝ 362 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 126-ով 272 անձ դատապարտվել է: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf Քննված գործերի քանակը, բազմապատկած յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակով և ստացված արտադրյալը բաժանած քննված գործերի քանակի վրա, 2022 թ. համար կկազմի 26.2 օր (85*150/486), 2023 թ. համար՝ 39.4 օր (169*150/642), իսկ 2024 թ. համար՝ 31.8 օր (159*150/749):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Նշենք, որ ստացված արդյունքներն ոչ թե իրական միջին վարույթի տևողություններ են, այլ մոտավոր, գնահատողական հաշվարկ, որը հիմնված է գործերի քանակի, դատախազության կողմից դատարան ուղարկված գործերի թվի և օրենսգրքով թույլատրելի առավելագույն ժամկետների վրա, ուստի արդյունքները պետք է դիտարկել զուտ որպես հարաբերական ակտիվության ցուցանիշ: ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության արհեստավարժության աստիճանը՝ հաջողությամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշումների և դատապարտված անձանց հարաբերակցության տեսանկյունից, 2022 թ. համար կազմում է 97.7 % (129/132*100), 2023 թ. համար՝ 29.1 % (140/480*100), իսկ 2024 թ. համար՝ 36.3 % (272/749*100): ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 2021 թվականի ընթացքում ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով՝ կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 65 որոշում, 2022 թ.՝ 77, 2023 թ.՝ 82, 2024 թ.՝ 163: Նշված ուսումնասիրությունների արդյունքում դատարան ուղարկված վարույթների քանակը 2021 թ. կազմել է 3, 2022 թ.՝ 21, 2023 թ.՝ 73, 2024 թ.՝ 44: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի համաձայն՝ ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի: Նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության արհեստավարժության աստիճանը՝ հաջողությամբ ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշումների և

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							դատարան ուղարկված վարույթների հարաբերակցության տեսանկյունից, 2021 թ. համար կազմում է 4.6 % (3/65*100), 2022 թ. համար՝ 27.2 % (21/77*100), 2023 թ. համար՝ 89 % (73+1/82*100), իսկ 2024 թ. համար՝ 26.9 % (44/163*100): Այսպես, 2021-2024 թթ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության արդյունավետությունը տատանվել է 4.6 %-ից մինչև 89 %, ինչը վկայում է ոչ թե կայուն լավ աշխատանքի, այլ համակարգի անկայունության մասին: 2023 թվականի ցուցանիշները բացառություն են, ոչ թե տենդենց, քանի որ 89 % արդյունքը չի պահպանվել հաջորդ տարում և չի կարող դիտարկվել որպես առողջ աճ: 2024 թ. ուսումնասիրությունները կրկնապատկվել են, բայց դատարան ուղարկված գործերը նվազել են: Ուսումնասիրությունների քանակի ավելացումը ինքնին արդյունավետության նշան չէ, հատկապես, եթե դատարան ուղարկվող գործերի տոկոսը նվազում է: Այս իրավիճակը խոսում է համակարգի գերծանրաբեռնվածության, սահմանափակ ռեսուրսների և որակի պահպանման դժվարությունների մասին:
31.	Հետապնդումների ցուցանիշը	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության	50 %-ից ցածր	50 % -75 %	75 %-ից բարձր	Ցածր	Համաձայն 2021 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2021 թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում քննված 2312 քրեական գործից ավարտվել է 730-ը, որոնցից 543-ը կարճվել է, այդ թվում՝ 414-ը՝ արդարացման, իսկ 129-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 187 քրեական գործ՝ 433 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից քննված կոռուպցիոն դեպքերի հետապնդման միջին մակարդակը: ՀՀ դատախազությունից պարզել, թե ինչու է հետապնդման միջին մակարդակը 50%-ից ցածր, և որ գործոններն են նպաստում ցածր մակարդակին:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ					Այսպես, ավարտված քրեական գործերի 74 %-ը կարճվել է, որոնցից 76 %՝ արդարացնող հիմքերով, իսկ 34 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2021 թ. համար կազմում է 13.6 % (730-414/2312): Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2022 թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2718 քրեական գործից (վարույթից) ավարտվել է 567-ը, որոնցից 388-ը կարճվել է, այդ թվում՝ 286-ը՝ արդարացման, իսկ 102-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 178 քրեական գործ (վարույթ)՝ 397 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 68 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 73.7 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 26.2 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2022 թ. համար կազմում է 10.3 % (567-286/2718): Համաձայն 2023 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2023 թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 3556 քրեական վարույթից ավարտվել է 908-ը, որոնցից 602-ը կարճվել է, այդ թվում՝ 502-ը՝ արդարացման, իսկ 100-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 306 քրեական վարույթ՝ 757 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 66 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 83.3 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 16.6 %՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2023 թ. համար կազմում է 11.4 % (908-502/3556): Համաձայն 2024 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2024 թ. ընթացքում նախաքննական մարմինների վարույթում քննված 3526 քրեական վարույթից ավարտվել է 1097-ը, որոնցից 880-ը կարճվել է, այդ թվում՝ 473-ը՝ արդարացման հիմքով: 217 քրեական վարույթ՝ 493 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 80 %-ը կարճվել է: Կարճված քրեական գործերի 53.7 % կարճվել է արդարացնող հիմքերով, իսկ 46.2 %՝ ոչ արդարացնող հիմքերով: Հետապնդման մակարդակը 2023 թ. համար կազմում է 17.6 % (1097-473/3526): Այսպիսով, 2021-2024 թթ. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հետապնդումների միջին մակարդակը, ըստ Գլխավոր դատախազության տեղեկանքի, կազմում է 13.2 %, ինչը, համաձայն գնահատման մեթոդաբանության, համարվում է ցածր ցուցանիշ: Այն էականորեն ցածր է միջազգային ընդունված նվազագույն շեմից (մոտ 50 %), որն ընդհանուր առմամբ ապահովում է հակակոռուպցիոն վարույթների արդյունավետությունը: Չնայած 2024 թ. որոշակի աճին՝ ընդհանուր միտումը մնում է ցածր և անկայուն: Ըստ դատախազության տվյալների՝ ակնհայտ է, որ արդարացման հիմքով քրեական վարույթների կարճման տոկոսային հարաբերությունը տարեցտարի աճում է, ինչը մտահոգիչ է կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից: Այսպես, 2021-2024 թթ. ընթացքում ավարտված կոռուպցիոն վարույթների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							66–80 %-ը կարճվել է: Այդ կարճումների զգալի մասը եղել է արդարացման հիմքերով: Արդարացման հիմքով կարճման մասնաբաժինը 2021 թ.՝ 76 %, 2022 թ.՝ 73.7 %, 2023 թ.՝ 83.3 %, 2024 թ.՝ 53.7 %:
32.	Դատապարտումների ցուցանիշը	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	50 %-ից ցածր	50 % -75 %	75 %-ից բարձր	Միջին	Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2022 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ (2021 թ.-ին՝ 83)՝ 197 անձի վերաբերյալ (2021 թ.-ին՝ 150): Նշված քրեական գործերից 67-ով (2021 թ.-ին՝ 53) 132 անձ դատապարտվել է (2021 թ.-ին՝ 97 անձ), որոնցից 30 անձ՝ ազատազրկման (2021 թ.-ին՝ 30), 63 անձ՝ տուգանքի (2021 թ.-ին՝ 46), հիմնական այլ պատժի որևէ անձ չի դատապարտվել (2021 թ.-ին՝ 1), 39 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել (2021 թ.-ին՝ 20), 8 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ (2021 թ.-ին՝ 18): 7 գործով (2021 թ.-ին՝ 6) 18 անձ արդարացվել է (2021 թ.-ին՝ 11) : Կարճվել է 24 գործ (2021 թ.-ին՝ 24)՝ 46 անձի վերաբերյալ (2021 թ.-ին՝ 42): https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf Համաձայն 2023 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2023 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ՝ 249 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 97-ով 140 անձ դատապարտվել է, որոնցից 25 անձ՝ ազատազրկման, 39 անձ՝ տուգանքի, 3՝ հիմնական այլ պատժի, 73 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 9 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 9 գործով 14 անձ արդարացվել է: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն գործերով դատարանում մեղադրանքի պաշտպանության արդյունքում դատապարտման միջին մակարդակը: Ճշտել այն գործոնները, որոնք նպաստում են պատասխանատվության միջոցների կիրառման բարձր կամ ցածր մակարդակին՝ լինի դա հենց ՀՀ դատախազությունը, թե այլ պետական իրավասու մարմին, որը պատասխանատու է կոռուպցիայի հետապնդման համար: Վերջին դեպքում, ՀՀ դատախազության և քրեական հետապնդող մարմնի միջև գործակցության և աջակցության չափը պետք է պարզվի հարցազրույցների միջոցով: Եթե նշված գերատեսչությունների միջև չկա գործակցություն և աջակցություն, պարզել, թե որ գործոններն են դրան նպաստում:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Համաձայն 2024 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝2024 թ. ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 163 քրեական գործ՝ 362 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 126-ով 272 անձ դատապարտվել է, որոնցից 37 անձ՝ ազատազրկման, 46 անձ՝ տուգանքի, 4 անձ՝ հիմնական այլ պատժի, 185 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 17 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 11 գործով 17 անձ արդարացվել է: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf Այսպիսով, 2021 թ. համար դատապարտումների ցուցանիշը կազմում է 64 %, 2022 թ. համար՝ 67 %, 2023 թ. համար՝ 65 %, իսկ 2024 թ. համար՝ 75 %: Դատարանում մեղադրանքների պաշտպանության արդյունքում դատապարտման միջին մակարդակը կազմում է շուրջ 60-65 %, սակայն ցուցանիշը տարեցտարի զգալի տատանվում է՝ 56 %-ից մինչև 75 %: Սա վկայում է նախաքննության որակի, դատախազության ներկայացրած մեղադրանքի հիմնավորվածության և տարբեր դատավորների մոտեցումների ոչ միասնականության մասին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
33.	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումներ կոռուպցիոն գործերով	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, դեպքերին առնչվող փաստաթղթեր, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով ոչ մի հետապնդումներ կամ սակավաթիվ հետապնդումներ կոռուպցիոն գործերով (5-ից պակաս դեպք)	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով որոշ հետապնդումներ կոռուպցիոն գործերով (5-30 դեպք)	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով զգալի թվով հետապնդումներ կոռուպցիոն գործերով (30-ից ավելի դեպքեր)	Միջին	ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնել են, որ 2021 թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից նախաձեռնված քրեական հետապնդումների շրջանակում ներգրավվել են 1 մարզպետ, 2 համայնքի ղեկավար, 1 ԱԺ նախկին պատգամավոր, 1 դատավոր, 16 ՀՀ ոստիկանության աշխատակիցներ, 1 ՔԿՀ ծառայող, 2 քննիչ, 20 ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք: Հիմք ընդունելով «ազդեցություն ունեցող անձինք»՝ կարելի է եզրահանգել, որ թվարկված անձանցից բարձրաստիճան պաշտոնյա են համարվում 7 անձինք, ուստի արձանագրված դեպքերի թիվը կազմում է 7: 2022 թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից նախաձեռնված քրեական հետապնդումների շրջանակում ներգրավվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 7 պաշտոնատար անձ, այդ թվում՝ 1 գործող նախարար, նախկին ՀՀ գլխավոր դատախազ, ապա նաև՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ, Երևան քաղաքի դատախազության Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ, նախկին 1 մարզպետ, գործող և նախկին համայնքի 4 ղեկավար, ՀՀ ՊԵԿ 5 պաշտոնատար անձ, ՀՀ քննչական կոմիտեի 3 պաշտոնատար անձ, ՀՀ ոստիկանության 11 աշխատակից, ՔԿՀ 3 ծառայող, դատավորի 1 օգնական: Թվարկված անձանցից բարձրաստիճան պաշտոնյա են համարվում 7-ը, ուստի արձանագրված դեպքերի թիվը նույնպես կազմում է 7: 2023 թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից նախաձեռնված քրեական հետապնդումների շրջանակում ներգրավվել են ԱԺ նախկին 1
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության պատրաստակամությունը՝ առանց վախի և բարեհաճության կոռուպցիայի գործով հետապնդումներ անցկացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ: Տրամադրել մանրամասներ այն ազդեցիկ անձանց թվի և անունների վերաբերյալ, որոնց նկատմամբ հետապնդում է անցկացրել ՀՀ դատախազությունը 2021-2024 թվականների ընթացքում: Պետք է				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			տրամադրվեն կոռուպցիոն դեպքերի համապատասխան մանրամասները՝ ներառյալ հետապնդման արդյունքները և նշանակված պատիժը: «Ազդեցություն ունեցող անձինք» նշանակում է քաղաքական առաջնորդներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք՝ բացառությամբ հայեցողական պաշտոնների խմբի, ղեկավար խմբի քաղծառայողներ, բիզնեսների ղեկավարներ և նշանավոր քաղաքացիներ: «Որոշ»-ի և «զգալի»-ի շեմերը կողմնորոշիչ (հուշող) են և կախված են երկրում անցկացվող հետաքննությունների ընդհանուր թվից և կոռուպցիայի ամենատարածված ձևերից (օրինակ՝ մանր կամ քաղաքական կոռուպցիա, կամ ձեռնարկատիրական գործունեություն և պաշտոնական դիքի չարաշահում, հովանավորչություն):				պատգամավոր, նախկին նախարար, նախկին 1 դեսպան, Երևանի նախկին 1 քաղաքապետ, Երևանի նախկին 1 փոխքաղաքապետ, նախկին 1 մարզպետ, նախկին մարզպետի 1 տեղակալ, գործող և նախկին համայնքի 4 ղեկավար, ՀՀ ՊԵԿ 5 պաշտոնատար անձ, ՀՀ քննչական կոմիտեի 3 պաշտոնատար անձ, ՀՀ ոստիկանության 36 աշխատակից, նախկին 1 ոստիկանապետ, ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչության նախկին 1 պետ, ճանապարհային ոստիկանության պետի 1 տեղակալ, ՀՀ ՊՆ և ԶՈՒ 37 պաշտոնատար անձ: Թվարկված անձանցից բարձրաստիճան պաշտոնյա են համարվում 13-ը, ուստի արձանագրված դեպքերի թիվը նույնպես կազմում է 13: 2024 թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից նախաձեռնված քրեական հետապնդումների շրջանակում ներգրավվել են 1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 1 պետ, տեղական ինքնակառավարման մարմնի 31 պաշտոնատար անձ, գործող և նախկին համայնքի 11 ղեկավար, համայնքի ղեկավարի 1 տեղակալ, ՀՀ ՊԵԿ 16 պաշտոնատար անձ, ՀՀ սնանկության դատարանի 1 դատավոր, ՀՀ դատախազության 1 նախկին դատախազ, ՀՀ քննչական կոմիտեի 6 պաշտոնատար անձ, սնանկության գործով 1 կառավարիչ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության 42 աշխատակից, ՀՀ ՊՆ և ԶՈՒ 31 պաշտոնատար անձ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների 3 ծառայող, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության 5 աշխատակից, բաժնի 2 պետ, ՀՀ առողջապահության նախարարի 1 տեղակալ, նախարարության վարչության 1 պետ: Թվարկված անձանցից բարձրաստիճան պաշտոնյա են համարվում 15-ը, ուստի արձանագրված դեպքերի թիվը նույնպես կազմում է 15:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ՀՀ գլխավոր դատախազությունը չի տրամադրել կոնկրետ անուններ, դատավճիռների կամ պատիժների մասին տեղեկություն: Թափանցիկության պակասը հանգեցնում է այն եզրահանգման, որ քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ առանձին հաշվառում կամ հրապարակային հաշվետվություն իրականում չի իրականացվում: 2021-2024 թթ. բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ արձանագրված հետապնդումների ընդհանուր թիվը կազմում է 42: Տվյալները վկայում են, որ ՀՀ դատախազությունը մի շարք դեպքերում նախաձեռնել է քրեական հետապնդումներ բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ, սակայն բացակայում է հանրային հասանելիությունը գործերի արդյունքների և պատիժների վերաբերյալ: Freedom House իրավապաշտպան կազմակերպության Nations in Transit 2023 և 2024 զեկույցները հաստատում են այս միտումը՝ արձանագրելով մի շարք բարձր պրոֆիլի գործերի փակումը կամ դադարեցումը. նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործը երկու անգամ դադարեցվել է ապացույցների անբավարարության հիմնավորմամբ, նախկին նախարար Արամ Հարությունյանի նկատմամբ գործը դադարեցվել է դատախազության նախաձեռնությամբ, իսկ նախկին նախագահներ Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի գործերը փակվել են՝ համապատասխանաբար ապացույցների բացակայության և վաղեմության ժամկետի լրանալու պատճառներով: https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023 https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024 Այս օրինակները ցույց են տալիս, որ բարձրաստիճան պաշտոնյաների գործերի զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի: Միաժամանակ արձանագրվում են նաև ինստիտուցիոնալ հակասություններ՝ հատկապես դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև, ինչը հրապարակայնորեն երևացել է Գասպարյանի գործով փոխադարձ մեղադրանքներում: Այս իրավիճակն ազդում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վրա:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ընդհանուր առմամբ՝ 2021-2024 թթ. տվյալները վկայում են, որ թեև բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ նախաձեռնված գործերի թիվը աճում է, վերջնական արդյունքների բացակայությունը, թափանցիկության պակասը և իրավապահ մարմինների միջև հակասությունները վնասում են հակակոռուպցիոն քաղաքականության վստահելիությանը և թույլ չեն տալիս հաստատել իրական պատասխանատվության կիրառման առկայությունը: Այս համատեքստում բարձր է մնում ընտրովի, ոչ կայուն կամ քաղաքական ազդեցություններով պայմանավորված հետապնդումների ռիսկը, իսկ անպատժելիության ընկալումը՝ զգալի:
34.	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետնե	ՀՀ դատախազության ոչ գործուն դերակատարություն	ՀՀ դատախազության բավականին գործուն դերակատարություն	ՀՀ դատախազության շատ գործուն դերակատարություն	Ցածր	Համաձայն 2024 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հաշվետվության՝ 2024 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Դատարան է ներկայացվել 44 հայցադիմում (2023 թվականին՝ 73), որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված հայցադիմումներից 43-ը ներկայումս քննվում են Դատարանում, իսկ ներկայացված մեկ հայցադիմումից իրավասու դատախազը հրաժարվել է: Դատարանում քննվող 43 հայցադիմումներով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 96,961,344,000 դրամ: Բռնագանձման է ենթակա նաև 346 անշարժ և 71 շարժական գույք, ինչպես նաև 85 իրավաբանական անձում մասնակցություն: 2024 թվականին Դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 100,354,660,000 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf 2023 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Դատարան է ներկայացվել 71 հայցադիմում, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 384,055,372,049 դրամ: Բռնագանձման է ենթակա նաև 832 անշարժ և 161 շարժական գույք, ինչպես նաև 283 իրավաբանական անձում
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության դերը փոխհատուցման, ակտիվների վերականգնման, սառեցման և բռնագրավման գործում: Տեղեկություններ տրամադրել ՀՀ դատախազություն ներկայացված 2021-2024 թվականների ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վարույթների թվի, վերականգնված, սառեցված կամ բռնագրավված ակտիվների գումարների և մանրամասների մասին: Երբ գնահատվում է, թե ՀՀ դատախազության				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		րի հետ, լրատվամիջոցների հաղորդումների	դերակատարությունը գործո՞ւն է արդյոք նման գործընթացներում, պետք է հաշվի առնել այն հաշվի առնելով այն դեպքերի թիվը, որոնցում կիրառվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրավված ընդհանուր գումարները՝ համեմատելով երկրում գողացված ակտիվների գնահատված ընդհանուր ծավալի հետ (եթե նման գնահատումներ առկա են):				մասնակցություն: 2024 թվականին Դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 417,591,062,222 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf 2022 թ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով ներկայացվել է 21 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Նշված 21 հայցադիմումներով՝ պահանջվում է հօգուտ պետության բռնագանձել ավելի քան 200 անշարժ և շուրջ 45 շարժական գույք, ինչպես նաև 45 իրավաբանական անձանցում մասնակցություն: Բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 51,360,000,000 դրամ: 2022 թվականին ներկայացված հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 100 միլիարդ ՀՀ դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf 2021 թ. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով ներկայացվել է 3 հայցադիմում, որոնցով պահանջվում է հօգուտ պետության բռնագանձել 18 անշարժ և 7 շարժական գույք, ինչպես նաև 3 իրավաբանական անձանցում մասնակցություն: Բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 18,958,605,653 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf Միաժամանակ, 2024 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 9,077,021,700 դրամ գույքային վնաս, որից պետությանը՝ 6,854,136,600 դրամ, համայնքներին՝ 2,089,537,100 դրամ, իրավաբանական անձանց՝ 123,158,000 դրամ, ֆիզիկական անձանց՝ 10,190,000 դրամ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2024 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը, համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված 1,163,514,400 դրամ գույքային վնաս, որից պետությանը՝ 805.810.800 դրամ, համայնքներին՝ 229,023,600 դրամ, իրավաբանական անձանց՝ 123,158,000 դրամ, ֆիզիկական անձանց՝ 5,522,000 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf 2023 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 32,886,735,053 դրամ գույքային վնաս, որից պետությանը՝ 25,699,223,153 դրամ, համայնքներին՝ 60,643,000 դրամ, իրավաբանական անձանց՝ 6,556,465,000 դրամ, ֆիզիկական անձանց՝ 416,573,900 դրամ: 2023 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը, համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված 1,365,324,431 դրամ գույքային վնաս, որից պետությանը՝ 1.215.032.431 դրամ, համայնքներին՝ 43,391,000 դրամ, իրավաբանական անձանց՝ 106,901,000 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf 2022 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասը կազմել է 2 մլրդ 221 մլն 849 հազար 983 դրամ: Ընդ որում, վերը նշված ընդհանուր վնասից 1 մլրդ 298 մլն 688 հազար 676 դրամը պատճառվել է պետությանը, 858 մլն 49 հազար 307 դրամը՝ համայնքներին, իսկ 65 մլն 112 հազար դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց: Բացի այդ, 2022 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասից վերականգնվել է 873 մլն 265 հազար 480 դրամը՝ 473 մլն 214 հազար 450 դրամով ավելի, քան 2021 թվականին արձանագրված՝ նույն 25 ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասից վերականգնված չափը: Ընդ որում, վերականգնված 873 մլն 265 հազար 480 դրամից 43 մլն 690 հազար 130 դրամը կազմել է պետությանը պատճառված վնասի վերականգնումը, իսկ 808 մլն 888 հազար 807 դրամը՝ համայնքներին պատճառված վնասը: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf 2021 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասը կազմել է 4 մլրդ 548 մլն 233 հազար 348 դրամ: Ընդ որում, վերը նշված ընդհանուր վնասից 4 մլրդ 417 մլն 939 հազար 348 դրամը պատճառվել է պետությանը, 124 մլն 657 հազար 263 դրամը՝ համայնքներին, իսկ 5 մլն 636 հազար 737 դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց: Բացի այդ, 2021 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասից վերականգնվել է 400 մլն 51 հազար 30 դրամ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf Ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների ընդհանուր հայցագնին, ապա, ըստ ՀՀ դատախազության տվյալների, «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ընդհանուր հայցագինը կազմում է շուրջ 585,856,507,899 ՀՀ դրամ (այս թիվը չունի ստատիկ բնույթ, պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայում ոչ բոլոր գույքերի շուկայական արժեքն է պարզված, մի շարք դեպքերում պարզված չեն նաև իրավաբանական անձանցում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							մասնակցությունների արժեքները, բացի այդ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 16-ի 1776 որոշմամբ պայմանավորված կատարվել են ներկայացված հայցերի առարկայում փոփոխություններ)»: Այսպիսով, 2021-2024 թթ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունը զգալիորեն ընդլայնել է իր մասնակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացներին. ներկայացված հայցադիմումների թիվը աճել է 3-ից մինչև 44, ինչը ցույց է տալիս գործիքի ակտիվ գործարկում և համակարգային հաստատում: Աճը հատկապես նկատելի է 2023-2024 թթ., սակայն հենց այս տարիներին այդ աճին զուգահեռ դիտվում է նաև հայցադիմումների արժեքի (հայցագնի) զգալի տատանում: Հայցադիմումների ծավալների միտումները հետևյալն են. • 2021 թ.՝ 3 հայց, ~19 մլրդ դրամ, • 2022 թ.՝ 21 հայց, ~100 մլրդ դրամ, • 2023 թ.՝ 73 հայց, ~417 մլրդ դրամ, • 2024 թ.՝ 44 հայց, ~100 մլրդ դրամ: Չնայած, որ 2023 թ. առկա է արտառոց մեծ աճ թե՛ քանակի, թե՛ հայցագնի առումով, 2024-ին ցուցանիշները կրկին նվազում են՝ մոտենալով 2022 թվականի մակարդակին: Սակայն գործընթացի արդյունավետության հիմնական չափումը միայն հայցերի ներկայացման աստիճանը չէ, այլ վերականգնված վնասների իրական չափը: Այստեղ պատկերը շատ ավելի թույլ է. 2021–2024 թթ. ընթացքում վնասների վերականգնումը կազմել է՝ • 2021 թ.՝ 400 մլն դրամ (ընդհանուր վնաս՝ 4.5 մլրդ), • 2022 թ.՝ 873 մլն դրամ (ընդհանուր վնաս՝ 2.2 մլրդ), • 2023 թ.՝ 1.36 մլրդ դրամ (ընդհանուր վնաս՝ 32.8 մլրդ), • 2024 թ.՝ 1.16 մլրդ դրամ (ընդհանուր վնաս՝ 9 մլրդ): Վերականգնված վնասների համադրությունը ընդհանուր վնասների հետ վկայում է շատ ցածր արդյունավետության մասին. 2021 թ.՝ ընդամենը 9 %, 2022 թ.՝ 39 %, 2023 թ.՝ 4 %, 2024 թ.՝ 13 %:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ուստի, չնայած դատախազության ակտիվ աշխատանքին, վնասների վերականգնումը մնում է անկայուն և ընդհանուր վնասների համեմատ՝ անբավարար: Ընդհանուր գնահատմամբ, դատախազության դերը 2021-2024 թթ. ընթացքում ուժեղացել է, սակայն համակարգը դեռևս չի ապահովում իրական, տեսանելի և զգալի ակտիվների վերադարձ պետությանը:
35.	ՀՀ դատախազության կատարողականի ընկալում	ՀՀ դատախազության հանրային ընկալումների հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների	Արդյունավետության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության	Արդյունավետության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75 %), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ՀՀ դատախազ	Արդյունավետության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ՀՀ դատախազության հետ անմիջական	Ցածր	ՀՀ դատախազության գործունեության հանրային ընկալումների վերաբերյալ առանձին համապարփակ ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետությունում գրեթե չեն իրականացվել, ինչն արդեն ինքնին վկայում է ինստիտուցիոնալ փակ լինելու և հանրային հաղորդակցության պակասի խնդիրների մասին: ՀՌԿԿ–Հայաստանի կողմից իրականացված «Կոռուպցիան Հայաստանում» հանրային կարծիքի ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ դատախազության վերաբերյալ հանրային տեղեկացվածությունը չափազանց ցածր է. դատախազության մասին գիտի հարցվածների ընդամենը 4.7 %-ը: Ավելին՝ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի, 20.7 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0.3 %-ը հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65.1 %): Ընդ որում, տարբեր անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու վերաբերյալ ընկալումների պատկերը վկայում է, որ հարցվածների 28.7 %-ը դատախազությունը համարում է «մեծապես կոռումպացված», իսկ 31.6 %-ը՝ «որոշ չափով կոռումպացված», այսինքն՝ հանրային ընկալումների մեջ դատախազությունն ունի համեմատաբար բարձր կոռուպցիոն ընկալում: Այս իմաստով այն ավելի մոտ է իրավապահ համակարգի այն կառույցներին, որոնց նկատմամբ ավանդաբար ձևավորվում են վստահության ցածր գնահատականներ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, ՀՀ դատախազության հետ անմիջական շփումներ ունեցող անձանց հետ	դեպքում, ՀՀ դատախազության հետ անմիջական շփումներ ունեցող անձանց տեսակետներում	ության հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	շփում ունեցող անձանց տեսակետներում		https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf Բացի այդ, Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ՝ 2023 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է հանրային կարծիքի ուսումնասիրություն: Ըստ ուսումնասիրության՝ ՀՀ դատախազությունը գոհունակության ցուցանիշով, 2023 թվականի մարտ ամսին անցկացված հարցման համեմատ, 8 %-ով բարելավել է իր դիրքերը: 2023 թվականի դեկտեմբերին իրականացված հարցման մասնակիցների 11 %-ը նշել է, որ լիովին գոհ է Դատախազության աշխատանքից (2023 թվականի մարտին՝ 7 %-ը), 28 %-ը՝ ավելի շուտ գոհ Դատախազության աշխատանքից (2023 թվականի մարտին՝ 24 %-ը): Ավելի շուտ գոհ չի եղել հարցվածների 17 %-ը (2023 թվականի մարտին՝ 24 %-ը), ընդհանրապես գոհ չի եղել 26 %-ը (2023 թվականի մարտին՝ 26 %-ը). հարցման մյուս մասնակիցները դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել: https://www.prosecutor.am/article/4503 Այս տվյալները ցույց են տալիս, որ հանրային վստահությունը դատախազության նկատմամբ չի գերազանցում միջինը: Միևնույն ժամանակ, ՀՀ դատախազության հարցման արդյունքներով, հանրային ընկալումների վերաբերյալ հարցումների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ուստի կարելի է եզրակացնել, որ նմանատիպ հարցումներ դեռևս չեն անցկացվել: Ընդհանուր գնահատմամբ՝ հանրային ընկալումները պայմանավորված են ոչ միայն դատախազության աշխատանքի իրական որակով, այլև դրա հանրային ներկայացման բացակայությամբ, ինչի հետևանքով նույնիսկ բարեփոխումները մնում են անտեսանելի: Մինչդեռ հակակոռուպցիոն ոլորտում վստահության ձևավորումը հենց այն ոլորտներից է, որտեղ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության կատարողականը հանրային ընկալումներում: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե ՀՀ դատախազությունը իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է ՀՀ դատախազության անձնակազմից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հանրային ընկալումը նույնքան կարևոր է, որքան իրական կատարողականը:
	Հայտնաբերման, հետաքննության և հետապնդման միավորի հանրագումարը					8/18=44.4 %	
	Կանխարգելում, կրթություն և իրազեկում (7 ցուցանիշ)						
36.	Հատկացված բյուջե	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, ՀՀ ֆինանսների նախարարության կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	ՀՀ դատախազության գործառնական ծախսերի 2.5 %-ից ցածր	ՀՀ դատախազության գործառնական ծախսերի 2.5-5 %	ՀՀ դատախազության գործառնական ծախսերի 5 %-ից բարձր	Ցածր	Համաձայն ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման՝ Դատախազության հանրային կապերի բաժինը 2022 թվականի ընթացքում շարունակել է իրականացնել Դատախազության միջոցառումների լուսաբանման՝ տեսանկարահանման և լուսանկարահանման, Դատախազության պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները, մշտադիտարկել է հանրապետությունում գործող 15 տպագիր մամուլի, 159 էլեկտրոնային մամուլի և 15 հեռուստառադիոընկերությունների հրապարակումները, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին՝ իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ: 2022 թվականի հոկտեմբերից Դատախազության գործունեությունը հասանելի է դարձել նաև Facebook և Telegram սոցիալական հարթակներում: Հանրային կապերի բաժնի կողմից, ինչպես նաև՝ ռադիո և հեռուստատեսային, համացանցային հաղորդումներում դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 136 տեսանյութ, որոնք հիմնականում վերաբերել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացին, կոռուպցիայի դեմ պայքարին, պետական շահերի պաշտպանության ոլորտում Դատախազության կողմից իրականացված աշխատանքներին և այլն: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf 2023 թվականի ընթացքում մշտադիտարկել է հանրապետությունում գործող 165 էլեկտրոնային մամուլի և 14 հեռուստառադիոընկերությունների հրապարակումները, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից հանրային իրազեկմանը և հաղորդակցմանը հատկացված գործառնական ծախսերի միջին մասնաբաժինը: Հավաքագրել ՀՀ դատախազության՝ հանրային իրազեկման ծրագրերի ծախսերի վերաբերյալ տվյալներ և հաշվարկել այս ծախսերի միջին մասնաբաժինը ՀՀ դատախազության ընդհանուր գործառնական ծախսերի մեջ 2021-2024 թվականների ընթացքում:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							միջոցներին՝ Դատախազության լիազորություններին առնչվող հարցերի վերաբերյալ: 2023 թվականին շարունակվել են Դատախազության սոցիալական հարթակների՝ Facebook-ի, Telegram-ի, Youtube-ի սպասարկման աշխատանքները՝ ներկայացնելով ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, դատախազների մասնակցությամբ հանդիպումները, հարցազրույցները, Դատախազության գործունեությանն առնչվող հաղորդագրությունները: Հանրային կապերի բաժինը Դատախազությունում մեկնարկած բարեփոխումների շրջանակում 2023 թվականի հուլիսի 1-ին գործարկել է արդիականացված և նորացված պաշտոնական կայքը: Կայքը լավարկված է ցանկացած չափի համակարգչային մոնիտորների համար, ունի մոբայլ տարբերակ՝ նախատեսված սմարթֆոն, պլանշետ և այլ գաջեթներ գործածողների համար: Կայքի բոլոր էջերից հասանելիություն է ապահովված նաև սոցիալական հարթակներին՝ Facebook, Telegram, Youtube: Մշտադիտարկման արդյունքներով՝ 2023 թվականին Դատախազությունում ընթացք է տրվել մամուլի 128 հրապարակման, Դատախազության պաշտոնական կայքով հանրությանը հասանելի է դարձել 401 հաղորդագրություն: Հանրային կապերի բաժնի ջանքերով՝ դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 167 տեսանյութ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում իրականացված աշխատանքներին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf Դատախազության հանրային կապերի բաժինը 2024 թվականին շարունակել է ապահովել Դատախազության միջոցառումների լուսաբանման, տեսանկարահանման ու լուսանկարահանման, պաշտոնական կայքի՝ www.prosecutor.am-ի սպասարկման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							աշխատանքները, մասնավորապես՝ մամուլի հաղորդագրությունների, դրանց թարգմանությունների, տեղեկատվական բազայի թարմացումը, ինչպես նաև իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին, իրականացրել է 166 էլեկտրոնային մամուլի (կայքերի) և 14 հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների մշտադիտարկում: Դատախազության պաշտոնական կայքով հանրությանը հասանելի է դարձել 255 հաղորդագրություն, ապահովվել է Դատախազության 89 պաշտոնական հանդիպումների տեսալուսանկարահանման աշխատանքները: Դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 141 տեսանյութ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ՀՀ դատախազությունը, հարցման ի պատասխան, չի ներկայացրել տեղեկություն՝ 2021-2024 թթ. բյուջեներում հանրային իրազեկման, հաղորդակցման ծրագրերին հատկացված բյուջետային ծախսերի վերաբերյալ: Բաց տվյալներից հասանելի է միայն 2024 թվականին՝ ՀՀ դատախազության կողմից տեղեկատվական ծառայությունների վերաբերյալ փաստացի ծախսերը, որոնք ներկայացված են ստորև. <table><tr><th></th><th>Տեղեկատվական ծառայություններ (ՀՀ դրամ՝՝՝)</th><th>Տեսակարար կշիռը (%)</th></tr><tr><td>2024 թ.</td><td>2,600.6</td><td>0.025</td></tr></table>https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/ Այսպես, ՀՀ դատախազության կողմից հանրային իրազեկման ծրագրերին հատկացվող ծախսերը ծայրահեղ ցածր են: Միջինում դրանք կազմում են ընդամենը 0.02-0.03 % ընդհանուր գործառնական ծախսերից:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
37.	Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխարգելման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ	Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման միջոցառումների ծրագիր գոյություն չունի կամ թույլ է	Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման միջոցառումների ծրագիրը համապարփակ է, բայց ամբողջովին չի իրականացվել	Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագիրը համապարփակ է և ամբողջովին իրականացվել է	Ցածր	ՀՀ դատախազության կայքում բացակայում է կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը: Բացակայում են այդ ուղղությունը կարգավորող ռազմավարական ծրագրերը: Հաշվի առնելով, որ ՀՀ դատախազությանն ուղղված հարցման արդյունքներով նույնպես չեն տրամադրվել ՀՀ դատախազության կողմից 2021, 2022, 2023 և 2024 թթ. գործունեության ընթացքում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա մշակված հակակոռուպցիոն ծրագրի կամ բարեվարքության ծրագրի առկայության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այդ ծրագրի կատարման ընթացքում կրթական և կանխարգելման միջոցառումների իրականացման վերաբերյալ տվյալները, կարելի է եզրակացնել, որ այս ոլորտում բացակայում է համակարգային ռազմավարական մոտեցումը, հետևողական հաշվետվողականությունն ու հանրային թափանցիկությունը:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության՝ կանխարգելման, կրթության և իրազեկման ծրագրերի ամբողջականությունը և դրանց իրականացումը: Ներկայացնել մանրամասներ ՀՀ դատախազության՝ կանխարգելման, կրթության և իրազեկման երկարաժամկետ ռազմավարության մասին՝ ներառյալ, ընդգրկված ոլորտները և իրականացման աստիճանը: Եթե ՀՀ դատախազությունը չունի կանխարգելման, կրթության և իրազեկման իր միջոցառումների ծրագիր, հետազոտողը պետք է ճշտի դրա պատճառները ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			Համապարփակ ծրագիրը պետք է ներառի բոլոր երեք ոլորտները՝ կանխարգելում, կրթություն և իրազեկում: Հետազոտողը պետք է արձանագրի բարձր, միջին կամ ցածր միավոր նշանակելու հիմնավորումը, ներառյալ այն տարրերը, որոնք օգտագործվել են ծրագրի ամբողջականության աստիճանը պարզելու համար:				
38.	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	ՀՀ դատախազությունը նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման սակավաթիվ նախաձեռնություններ կամ ոչ մի նախաձեռնություն	ՀՀ դատախազությունը նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման որոշ նախաձեռնություններ (տարեկան միջինը 1-4)	ՀՀ դատախազությունը նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման բազմաթիվ նախաձեռնություններ (տարեկան միջինը 5 և ավելի)	Միջին	ՀՀ դատախազությունը 2021-2024 թվականների ընթացքում իրականացրել է առանձին և հատվածային հակակոռուպցիոն կրթական և վերապատրաստման նախաձեռնություններ, որոնք հիմնականում ուղղված են եղել դատախազների և հարակից իրավապահ մարմինների ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Դրանք ներառել են թեմատիկ քննարկումներ, սեմինարներ, մասնագիտական երկխոսություններ, ինչպես նաև միջազգային վերապատրաստման ծրագրերի և աշխատաժողովների մասնակցություն: Միևնույն ժամանակ, այս նախաձեռնությունները չեն կրումհամակարգային և շարունակական բնույթ, այդ նախաձեռնությունների վերաբերյալ ամբողջական քանակական հաշվառում չի իրականացվում (մասնակիցների ընդհանուր թիվ, վերապատրաստումների պարբերականություն, թիրախային խմբեր, ակնկալվող և չափելի արդյունքներ): Բացի այդ, կրթական և իրազեկման միջոցառումները հիմնականում կենտրոնացած են եղել ներքին և մասնագիտական լսարանի վրա, մինչդեռ քաղաքացիների, քաղաքացիական հասարակության և լայն հանրության ուղղվածությամբ նախաձեռնությունները սահմանափակ են կամ չեն համակարգվել դատախազության կողմից որպես առանձին քաղաքականություն: Հետևաբար, չնայած առկա են որոշակի դրական փորձեր, ՀՀ դատախազության հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության կողմից 2021-2024 թվականների ընթացքում նախաձեռնված հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման նախաձեռնությունները, ներառյալ ՀՀ դատախազության կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, ՀՀ դատախազություն այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և վերապատրաստման դասընթացների քանակը և դրանց մասնակցած պաշտոնյաների թիվը:				գործունեությունը չի կարող գնահատվել որպես համակարգված, ռազմավարական և կայուն:
39.	Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Ամենևին	Երբեմն (իրավասու մարմինների ներկայացված առաջարկությունների մինչև 50 %-ը բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ	Հաճախ (իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների 50 %-ից ավելին բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ)	Ցածր	ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2023 թ. հաղորդման համաձայն՝ 2023 թ. նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 10 օրենսդրական նախաձեռնություն (2022 թվականին՝ 14): Ընդ որում, օրենսդրական նախաձեռնություններից մեկը ներառել է ՀՀ քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու 39 առաջարկություն: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված 95 օրենսդրական նախաձեռնությունների (ներառել են տարբեր օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու 416 օրենքների նախագծեր) փաթեթների (2022 թվականին՝ 74), Կառավարության որոշումների՝ 97 (2022 թվականին՝ 62), ՀՀ վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի՝ 28 (2022 թվականին՝ 20) նախագծեր, որոնց վերաբերյալ ՀՀ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
				առաջարկու թյուններ)			դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf 2024 թ. Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 4 օրենսդրական նախաձեռնություն: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված 82 օրենսդրական նախաձեռնությունների փաթեթների, կառավարության որոշումների 92, ՀՀ վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի 23 նախագծեր, որոնց վերաբերյալ Դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ԹԻՀԿ հարցման արդյունքներով ՀՀ դատախազությունը քանակական տվյալներ չի ներկայացրել 2021, 2022, 2023 և 2024 թթ. պատրաստված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) վերաբերյալ: ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունը, որը պատասխանատու է դատախազության կողմից շրջանառության մեջ դրվելիք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման համար, նաև ընձեռված է համապատասխան
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության 2021-2024 թվականների գործունեության ընթացքում վեր հանված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների քանակը և դրանք տարեկան հաշվետվություններում ներառելու հաճախականությունը: Հավաքել տվյալներ 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից պատրաստված հետաքննությունների հաշվետվությունների քանակի վերաբերյալ և բացահայտել ՀՀ դատախազության կողմից պատրաստված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) քանակը և դրանց տեսակարար կշիռը իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների թվում, որպեսզի հնարավոր լինի որոշել նման առաջարկությունների հաճախականությունը: Սա արվում է պարզելու համար, թե ՀՀ դատախազությունն իր գործունեությամբ արդյոք ակտիվորեն բացահայտում է համակարգային խնդիրները և տրամադրում առաջարկություններ: Եթե ՀՀ դատախազությունը հիմնականում				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			անգործուն է համակարգային խնդիրների վերհանման բովանդակային առաջարկություններով, ապա անկախ իր գործունեության արդյունքներով ներկայացված առաջարկությունների քանակից հետազոտողը պետք է նշանակի միայն ցածր (կամ, հնարավոր է, միջին) միավոր:				ստորաբաժանումներից տեղեկատվության ստացման, ոլորտների և դրանց առանձին ծրագրերի վերլուծության իրականացման, դրանց բարելավման կամ առանձին ուղղությունների ու ոլորտի մասնագիտական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների տրամադրման լիազորություններով: https://www.prosecutor.am/page/40 Այդուհանդերձ, առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված բովանդակային առաջարկությունների քանակը, դրանց համակարգված ներկայացումն ու հանրային հաշվետվություններում արտացոլման հաճախականությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Թեև տարեկան հաղորդումներում ներկայացված են օրենսդրական նախաձեռնությունների և տարբեր իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության քանակական տվյալներ, այդ նախաձեռնությունների շրջանակում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կոնկրետ առաջարկների առանձնացված հաշվառում, դասակարգում և վերլուծություն չի իրականացվում: Ավելին, չկան հրապարակային տվյալներ, որոնք թույլ կտան պարզել՝ • առաջարկների քանի տոկոսն է ուղղված եղել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, • որքանով են այդ առաջարկները բխել համակարգային խնդիրների վերհանումից, • կամ ինչ չափով են դրանք ձևավորվել որպես կանխարգելիչ քաղաքականության տարր, այլ ոչ թե տեխնիկական կամ իրավաբանական բնույթի դիտարկումներ: ԹԻՀԿ հարցման շրջանակում քանակական տվյալների չտրամադրումը 2021-2024 թթ. ընթացքում մշակված կոռուպցիայի կանխարգելման առաջարկությունների վերաբերյալ ևս մեկ անգամ վկայում է, որ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							դատախազության ներսում բացակայում է նման առաջարկությունների համակարգված հաշվառման և գնահատման մեխանիզմ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը հիմնականում հանդես է գալիս որպես արձագանքող մարմին, այլ ոչ թե որպես կոռուպցիայի կանխարգելման ոլորտում համակարգային խնդիրներ բացահայտող և նախաձեռնող դերակատարներից մեկը: Այս պայմաններում, անկախ ներկայացված օրենսդրական նախաձեռնությունների ընդհանուր քանակից, դատախազության գործունեությունը կոռուպցիայի կանխարգելման բովանդակային առաջարկությունների մասով գնահատվում է ցածր, կամ առավելագույնը՝ միջին մակարդակով:
40.	Հետազոտություն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և	ՀՀ դատախազության կողմից իրականացվել են փոքր ծավալի կամ աննշան անկախ հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների	ՀՀ դատախազության կողմից իրականացվել են որոշ ծավալի հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար	ՀՀ դատախազության կողմից իրականացվել են լայնածավալ հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար	Ցածր	Կոռուպցիոն հանցագործությունների հակազդման գործընթացում ՀՀ դատախազության կողմից կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների վերաբերյալ հետազոտությունների և վերլուծությունների համակարգային օգտագործման հնարավորությունները պետք է գնահատվեն որպես սահմանափակ: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը տեղեկություններ չի տրամադրել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, և պայմանների վերաբերյալ հետազոտությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ, ինչից կարելի է եզրակացնել, որ նմանատիպ ուսումնասիրություններ ՀՀ դատախազությունը չի իրականացրել: Այս հանգամանքը վկայում է, որ դատախազության գործունեությունը կոռուպցիոն հանցագործությունների ոլորտում հիմնականում հիմնված է դեպքահեն (case-based) մոտեցման վրա, այլ ոչ թե հետազոտությունների վրա հիմնված (evidence-based) քաղաքականության ձևավորման և համակարգային վերլուծության: Արդյունքում, դատախազության կարողությունը՝ բացահայտելու կոռուպցիայի կառուցվածքային պատճառները, ռիսկային ոլորտները և հանցավոր դրսևորումների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	մշակման համար				օրինաչափությունները, ինչպես նաև կանխարգելիչ և թիրախավորված միջամտություններ առաջարկելու հնարավորությունները, մնում են սահմանափակ: Այս պայմաններում տվյալ ցուցանիշի շրջանակում ՀՀ դատախազության գործունեությունը պետք է գնահատել ցածր, քանի որ բացակայում են ինչպես նախաձեռնված և համակարգված հետազոտությունները, այնպես էլ դրանց արդյունքների ինտեգրումը կոռուպցիոն հանցագործությունների հակազդման և կանխարգելման պրակտիկայում: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության մեկնաբանման՝ «Յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաստատվում է տվյալ ժամանակահատվածի համար ՀՀ դատախազության աշխատանքային ծրագիրը: ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, ի թիվս դատախազության այլ ստորաբաժանումների, վերլուծում է կոնկրետ կոռուպցիոն հոդվածով մինչդատական վարույթի օրինականության և դատարանում մեղադրանքի պաշտպանության վիճակը և ներկայացնում կոնկրետ առաջարկություններ»:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները: Հավաքագրել տվյալներ և տեղեկություններ ՀՀ դատախազության անձնակազմի և այլ հետազոտողների կողմից երկրում առկա կոռուպցիայի վերաբերյալ իրականացվող հետազոտական նախագծերի մասին, եթե այդպիսիք առկա են կամ կիրառելի: Ներառված հետազոտությունները պետք է նախաձեռնվեն և համակարգվեն ՀՀ դատախազության կողմից:				
41.	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության	Չի տարածում կոռուպցիոն հանցագործությունների նախական խման/հակազդման վերաբերյալ տեղեկությու	Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների սահմանափ	Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների ընդարձակ	Միջին	ՀՀ դատախազության կայքը, ինչպես նաև ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումները չեն պարունակում տեղեկություններ՝ ՀՀ դատախազության կողմից քարոզարշավներ կազմակերպելու վերաբերյալ: Համաձայն ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման՝ Դատախազության հանրային կապերի բաժինը 2022 թվականի ընթացքում շարունակել է իրականացնել Դատախազության միջոցառումների լուսաբանման՝ տեսանկարահանման և լուսանկարահանման, Դատախազության պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները, մշտադիտարկել է հանրապետությունում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	ններ և չի դիմում քարոզարշավների	ակ տարածում և քարոզարշավների սահմանափակ օգտագործում	կերպով տարածում և քարոզարշավների ընդարձակ կերպով օգտագործում		գործող 15 տպագիր մամուլի, 159 էլեկտրոնային մամուլի և 15 հեռուստառադիոընկերությունների հրապարակումները, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին՝ իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ: Հանրային կապերի բաժնի կողմից, ինչպես նաև՝ ռադիո և հեռուստատեսային, համացանցային հաղորդումներում դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 136 տեսանյութ, որոնք հիմնականում վերաբերել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացին, կոռուպցիայի դեմ պայքարին, պետական շահերի պաշտպանության ոլորտում Դատախազության կողմից իրականացված աշխատանքներին և այլն: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf 2023 թվականին շարունակվել են Դատախազության սոցիալական հարթակների՝ Facebook-ի, Telegram-ի, Youtube-ի սպասարկման աշխատանքները՝ ներկայացնելով ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, դատախազների մասնակցությամբ հանդիպումները, հարցազրույցները, Դատախազության գործունեությանն առնչվող հաղորդագրությունները: Մշտադիտարկման արդյունքներով՝ 2023 թվականին Դատախազությունում ընթացք է տրվել մամուլի 128 հրապարակման, Դատախազության պաշտոնական կայքով հանրությանը հասանելի է դարձել 401 հաղորդագրություն: Հանրային կապերի բաժնի ջանքերով՝ դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 167 տեսանյութ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում իրականացված աշխատանքներին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf Դատախազության հանրային կապերի բաժինը 2024 թվականին շարունակել է ապահովել Դատախազության միջոցառումների
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության կողմից տարածված՝ կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տեսակը, և թե ՀՀ դատախազությունը կազմակերպում է քարոզարշավներ՝ տարածելու կոռուպցիայի դեմ պայքարի ուղերձը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							լուսաբանման, տեսանկարահանման ու լուսանկարահանման, պաշտոնական կայքի՝ www.prosecutor.am-ի սպասարկման աշխատանքները, մասնավորապես՝ մամուլի հաղորդագրությունների, դրանց թարգմանությունների, տեղեկատվական բազայի թարմացումը, ինչպես նաև իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին, իրականացրել է 166 էլեկտրոնային մամուլի (կայքերի) և 14 հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների մշտադիտարկում: Դատախազության պաշտոնական կայքով հանրությանը հասանելի է դարձել 255 հաղորդագրություն, ապահովվել է Դատախազության 89 պաշտոնական հանդիպումների տեսալուսանկարահանման աշխատանքները: Դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 141 տեսանյութ: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ՀՀ վարչապետի 2022 թ. N 820-Լ որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որով նախատեսվել են հաղորդակցման գործողությունների շրջանակը, հաղորդակցման եղանակները և միջոցները, ակնկալվող արդյունքները: https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2022/820_1.pdf Այսպես, «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ» գործողության շրջանակներում ակնկալվում էր իրազեկող տեսահոլովակների հեռարձակումը (ցուցադրումը) կամ տեղեկատվական նյութերի սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում հրապարակումը, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում հրապարակումը: Որպես ակնկալվող արդյունք նախատեսվում էր, որ հանրային իրազեկման արշավների արդյունքում հասարակությունը պետք է տեղեկացվի Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից Գլխավոր դատախազությունը հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարող հանդես է գալիս Արդարադատության նախարարությունը՝ ի դեմս Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի վարչության, որի գործառույթները ներառում են հակակոռուպցիոն քաղաքականության, ներառյալ ռազմավարությունների և ծրագրերի կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման ծրագրերի մշակումը, Կառավարության ծրագրով և այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը և այլն: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման շրջանակներում առկա են համապատասխան գործողություններ՝ կապված իրազեկման ծրագրերի և միջոցառումների հետ: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից ՀՀ դատախազությունը հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարողներ հանդես են գալիս այլ պետական մարմինները: Տեղեկատվության տարածման միջոցառումներ և քարոզարշավներ ՀՀ դատախազությունը նույնպես չի իրականացնում: Այսպես, 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ դատախազությունը հանդես չի եկել որպես կոռուպցիոն հանցագործությունների նախականխման և հակազդման վերաբերյալ տեղեկատվական կամ քարոզչական արշավների նախաձեռնող կամ հիմնական իրականացնող մարմին: Թե՛ ՀՀ դատախազության պաշտոնական կայքում, թե՛ տարեկան գործունեության վերաբերյալ հաղորդումներում բացակայում են տվյալներ՝ ինքնուրույն մշակված և իրականացված հակակոռուպցիոն քարոզարշավների, նպատակային հաղորդակցման ռազմավարությունների կամ հանրային իրազեկման արշավների մասին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Թեպետ Դատախազության հանրային կապերի բաժնի կողմից իրականացվել են լայնածավալ տեղեկատվական գործունեություն, ներառյալ տեսանյութերի պատրաստում, պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների սպասարկում, մամուլի մշտադիտարկում և լրատվամիջոցներին պարզաբանումների տրամադրում, այդ գործունեությունը հիմնականում կրել է տեղեկատվական և հաշվետվողական բնույթ՝ ուղղված արդեն իրականացված գործողությունների լուսաբանմանը (օրինակ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում, կոռուպցիոն գործերի քննություն), այլ ոչ թե կանխարգելիչ, վարքագծային կամ արժեքահեն հաղորդակցման նպատակներին:
42.	Առցանց հաղորդակցում	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների	ՀՀ դատախազությունը չունի կայք և չի օգտվում սոցցանցերից կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար	ՀՀ դատախազության կողմից իր կայքի և սոցցանցերի սահմանափակ օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար	ՀՀ դատախազության կողմից իր կայքի և սոցցանցերի ընդարձակ կերպով օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար	Միջին	ՀՀ դատախազության գործառույթներն առավելապես լուսաբանելու նպատակով պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվում են կառույցի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2021 թ.-ին www.prosecutor.am կայքում շուրջ 276 հրապարակում է տեղադրվել, 2022 թ.-ին՝ 298, 2023 թ.-ին՝ 402 իսկ 2024 թ.-ին՝ 253: Հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար իր լսարանն է ընդարձակել ՀՀ դատախազության ֆեյսբուքյան էջը: Այս պահին էջն ունի մոտ 30.000 հետևորդ: ՀՀ դատախազության յութուբյան հարթակն այս պահին ունի 1360, իսկ տելեգրամյան այիքը՝ 1949 հետևորդ: ՀՀ դատախազության կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կառուցվածքը, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, կառուցվածքի վերաբերյալ տեղեկություններ, դատախազության ամենամյա հաշվետվությունները՝ Ազգային ժողովին, կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաղորդումները, հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	*Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար: Վերլուծել ՀՀ դատախազության կայքը և այլ առցանց հաղորդակցման ուղիները՝ պարզելու ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ տրամադրված տեղեկությունների քանակն ու տեսակը: Հանրության հետ կապ հաստատելու համար ՀՀ դատախազության կողմից սոցցանցերի օգտագործումը նույնպես պետք է պարզվի, ներառյալ՝ ՀՀ դատախազությունն արդյոք ունի առցանց հաղորդակցության ընդարձակ ռազմավարություն:				Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, գլխավոր դատախազի հրամաններ: ՀՀ դատախազության կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկություն: ՀՀ դատախազության պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Նշված 3 սոցիալական հարթակներից բոլորը գործում են: Կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ՝ ակտիվ հղումներով: Կայքում գործում է որոնման համակարգը: Հրապարակվող փաստաթղթերը, մասնավորապես՝ գլխավոր դատախազի հրամանները, չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք չունեն մատչելի ձևաչափ, ներկայացվում են միայն PDF ձևաչափով, չունեն պատճենելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկությունը առկա չէ այլընտրանքային ձևաչափերով: Առկա չէ տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիք: Առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «Հայտարարություններ» ընդհանուր բաժնում: Առկա է տեղեկություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները ներկայացված են: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են: Կայքում հրապարակված չէ տեղեկություն քաղաքացիների հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Կայքում առկա չէ տեղեկություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին: Կայքում առանձին բաժնով հրապարակված են մարմնի բյուջետային հատկացումների մասին տեղեկությունները: Կայքում առկա է ազդարարման առանձնացված պատուհան: Կայքում առկա չէ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը: Ընդհանուր առմամբ, ՀՀ դատախազության կայքն իր ձևով, կառուցվածքով, նավիգացիոն տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ ունի բարելավման կարիք: Արդյունքում, ՀՀ դատախազությունը ակտիվորեն օգտագործում է առցանց հաղորդակցման ուղիները՝ հատկապես պաշտոնական կայքը և սոցիալական ցանցերը, իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար, ինչի մասին վկայում են կայքում հրապարակումների բարձր քանակը, սոցիալական հարթակներում առկա և գործող էջերը, ինչպես նաև լսարանի աստիճանական ընդլայնումը: Միևնույն ժամանակ, այդ առցանց հաղորդակցումը կրում է հիմնականում տեղեկատվական և հաշվետվողական բնույթ և սահմանափակ չափով է ուղղված հանրության հետ երկկողմանի հաղորդակցության զարգացմանը կամ կանխարգելիչ ուղերձների նպատակային տարածմանը:
	ՀՀ դատախազության կանխարգելման, կրթման և իրազեկման միավորի հանրագումարը					3/14=21.4 %	
	Համագործակցություն և արտաքին հարաբերություններ (6 ցուցանիշ)						
43.	Վստահությունը Կառավարության կողմից ՀՀ	ՀՀ դատախազության հանրային ընկալումների	Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլվ	Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլվա	Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված	Ցածր	Հասարակության վստահությունը ՀՀ դատախազության նկատմամբ՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործիք, մնում է սահմանափակ և հակասական: Առաջին հերթին, բացակայում են ՀՀ դատախազության կողմից նախաձեռնված կամ պատվիրած հանրային ընկալումների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	դատախազությանը ցուցաբերվող աջակցության հանդեպ	հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների հետ	ած է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր) և ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում	ծ է հարցման արդյունքներում (50-75 %) և ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում	է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր) և ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում		մասնագիտացված հարցումներ, որոնք ուղղակիորեն կգնահատեին՝ արդյոք հասարակությունը վստահ է, որ Կառավարությունը դատախազությանը տրամադրել է բավարար լիազորություններ, անկախություն և ֆինանսական ու մարդկային ռեսուրսներ կոռուպցիայի դեմ պայքարելու համար: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ նման ուսումնասիրությունների կամ դրանց հաշվետվությունների չտրամադրումը վկայում է, որ այս հարցը ինստիտուցիոնալ մակարդակում չի դիտարկվել որպես չափելի քաղաքականության բաղադրիչ: Բացի այդ, ՀՀ դատախազության գործունեության հանրային ընկալումների վերաբերյալ առանձին համապարփակ ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետությունում գրեթե չեն իրականացվել, ինչն արդեն ինքնին վկայում է ինստիտուցիոնալ փակ լինելու և հանրային հաղորդակցության պակասի խնդիրների մասին: ՀՌԿԿ–Հայաստանի կողմից իրականացված «Կոռուպցիան Հայաստանում» հանրային կարծիքի ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ դատախազության վերաբերյալ հանրային տեղեկացվածությունը չափազանց ցածր է. դատախազության մասին գիտի հարցվածների ընդամենը 4.7 %-ը: Ավելին, հանրային ընկալումների մեջ դատախազությունն ունի համեմատաբար բարձր կոռուպցիոն ընկալում: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ՝ 2023 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է հանրային կարծիքի ուսումնասիրություն: Ըստ ուսումնասիրության՝ ՀՀ դատախազությունը գոհունակության ցուցանիշով, 2023 թվականի մարտ ամսին անցկացված հարցման համեմատ, 8 %-ով բարելավել է իր դիրքերը: 2023 թվականի դեկտեմբերին իրականացված հարցման մասնակիցների 11 %-ը նշել է, որ լիովին գոհ է Դատախազության աշխատանքից (2023 թվականի մարտին՝ 7 %-ը), 28 %-ը՝ ավելի շուտ գոհ Դատախազության աշխատանքից (2023 թվականի
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը ՀՀ դատախազությանը տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիայի դեմ պայքարելու				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			համար: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե ՀՀ դատախազությունը իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, պահանջել այդ հարցումների հաշվետվությունները ՀՀ դատախազության անդամներից և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից: Բացի դրանից, որպես ՀՀ դատախազությանը Կառավարության ցուցաբերած աջակցության լուսաբանում, հաշվի առնել նաև Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) հետևյալ հարցի պատասխանները. «Ձեր կարծիքով ներկայիս կառավարությունը որքանո՞վ է լավ կամ վատ զբաղվում հետևյալ հարցերով. […] Պայքար կոռուպցիայի դեմ կառավարությունում» (ԿՀԲ-ի հարց թիվ T17):			մարտին՝ 24 %-ը): Ավելի շուտ գոհ չի եղել հարցվածների 17 %-ը (2023 թվականի մարտին՝ 24 %-ը), ընդհանրապես գոհ չի եղել 26 %-ը (2023 թվականի մարտին՝ 26 %-ը). հարցման մյուս մասնակիցները դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել: https://www.prosecutor.am/article/4503 Այդուհանդերձ, նշված տվյալներն ընդգծում են, որ՝ • Հանրային վստահությունը դատախազության նկատմամբ բարձր չէ, այն գտնվում է միջին կամ միջինից ցածր մակարդակում: • ՀՀ դատախազության գործունեության նկատմամբ հանրային տեղեկացվածությունը շատ ցածր է, ինչը վկայում է ինստիտուցիոնալ փակության և հաղորդակցության պակասի մասին: • Դատախազությունը դեռևս չունի համապարփակ և պարբերական հանրային ընկալումների դիտարկման և գնահատման մեխանիզմ, որը թույլ կտար մանրամասն գնահատել հասարակության կողմից տրամադրված լիազորությունների և ռեսուրսների արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում: • Հանրային ընկալումների նվազագույն մակարդակն, համակցված ցածր տեղեկացվածության հետ, վկայում է, որ հասարակությունը դժվարությամբ է արձագանքում Կառավարության կողմից դատախազությանը տրամադրված լիազորություններին և ռեսուրսներին՝ չկարողանալով գնահատել դրանց արդյունավետությունը: Այս հանգամանքները ընդհանուր առմամբ ցույց են տալիս, որ հանրության կողմից վստահության բարձրացման ուղղությամբ առկա է գործելու մեծ անհրաժեշտություն, հատկապես տեղեկատվության հասանելիության, բացահայտումների և արդյունավետ հաղորդակցման ոլորտներում:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
44.	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, պետական և ՏԻՄ մարմինների հետ, այլ մարմինների միջև	Հակամարտություն և (կամ) գործակցության բացակայություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Սահմանափակ գործակցություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Գործակցության բարձր աստիճան կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Բարձր	Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում: https://www.prosecutor.am/structure «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքում: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: https://www.arlis.am/hy/acts/203931 Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վիճակագրական տվյալները ՀՀ գլխավոր դատախազությունը ստանում է Հակակոռուպցիոն կոմիտեից: ՀՀ դատախազությունը համագործակցում է նաև ԿԿՀ-ի հետ: Մասնավորապես, 2024 թ. ԿԿՀ-ից ստացված՝ անձանց քրեական հետապնդման ենթարկված լինելու, վերջիններիս ներկայացրած հայտարարագրերը քրեական գործերով ապացույց հանդիսանալու կամ Դատախազությունում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել շուրջ 1496 անձի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 43 ուսումնասիրություն՝ 49 դատախազի նկատմամբ: Ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում թույլ տրված
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության՝ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ (Հակակոռուպցիոն կոմիտե, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Հաշվեքննիչ պալատ, ՄԻՊ և այլն) հարաբերությունները, կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հետապնդման գործընթացում/տեղեկատվական գործունեության տեսանկյունից: Եթե երկրում կան կոռուպցիայի դեմ պայքարող մի քանի մարմիններ, ապա պետք է վերլուծվեն ՀՀ դատախազության՝ այլ մարմինների հետ հարաբերությունները: Եթե առկա է գործակցության կամ համակարգման բացակայություն ՀՀ դատախազության և կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			մարմինների միջև, նշել դրանց պատճառները:				առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների առերևույթ խախտումները: Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ 7 դեպքով 8 դատախազի կողմից թույլ տրված վարքագծի կանոնների և ծառայողական պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի կամ ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում: 28 դեպքով՝ 30 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով, ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել: 2 դեպքով 2 դատախազի նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցվել է, քանի որ վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն: 1 դեպքով 1 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել չհարուցել կարգապահական վարույթ: 1 դեպքով 2 դատախազի նկատմամբ իրականացվող ուսումնասիրությունը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չի եղել: Ուսումնասիրության արդյունքում՝ 5 դեպքով 6 դատախազի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ, իսկ 3 դեպքով 3 դատախազի նկատմամբ, առանց ուսումնասիրության, հարուցվել են կարգապահական վարույթներ: Իրականացվել է 8 կարգապահական վարույթ 9 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 2 դատախազի նկատմամբ): Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի տույժ, 4 դատախազ ազատվել են կարգապահական տույժից, 1 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							խորհրդակցությունում: 3 կարգապահական վարույթ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չեն եղել: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ 2023 թ. հաղորդման համաձայն՝ 2023 թ. ակտիվ համագործակցություն է իրականացվել ԿԿՀ-ի հետ: Մասնավորապես, ԿԿՀ-ից ստացված՝ անձանց քրեական հետապնդման ենթարկված լինելու (ներառյալ՝ վկա-կասկածյալի կարգավիճակով հարցաքննվելու), վերջիններիս ներկայացրած հայտարարագրերը քրեական գործերով ապացույց հանդիսանալու կամ ՀՀ դատախազությունում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել շուրջ 815 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 450): Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 83 ուսումնասիրություն՝ 129 դատախազի նկատմամբ (2022 թվականին՝ 71 ուսումնասիրություն՝ 79 դատախազի նկատմամբ): Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների, փաստաբանների դիմում-բողոքները, դատավորների գրությունները, ՁԼՄ հրապարակումները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը: 22 ուսումնասիրության արդյունքներով՝ • 36 դատախազի կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, • 31 ուսումնասիրության արդյունքներով՝ 39 դատախազի կողմից ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել, • 29 ուսումնասիրության արդյունքներով 41 դատախազի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• 1 ուսումնասիրության արդյունքով 13 դատախազի նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազը որոշում է կայացրել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf Բացի այդ, անհրաժեշտ է նաև նշել ՀՀ դատախազության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համագործակցությունը՝ ազդարարման մասով: Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է համակարգային մոնիտորինգ և տվյալների հավաքագրում, վերահսկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց և կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանումը, ինչպես նաև նպաստում է դրանց վերականգնմանը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 30.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանը լիազորված է ազդարարների պաշտպանության նպատակով հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը, իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիտորինգ և գնահատում, հանդես գալու հրապարակային զեկույցներով, ինչպես նաև տրամադրելու խորհրդապահական խորհրդատվություն ազդարարներին կամ նրանց փոխկապակցված անձանց: Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ Պաշտպանը իր տարեկան հաղորդման շրջանակում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունն ու վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած տվյալների հիման վրա: https://www.arlis.am/hy/acts/123524

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված կարգավորումների համաձայն, իրավասու մարմինները պարտավոր են իրենց կողմից վարվող ազդարարման վիճակագրական տվյալները տարեկան հաշվետվությունների ձևով, մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ը, ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանին: Այս դրույթի շրջանակում ՀՀ գլխավոր դատախազությունը հանդես է գալիս որպես տվյալներ ներկայացնող մարմին և մասնակցում է ազդարարման համակարգի ընդհանուր մոնիտորինգին: Ներկայացված պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության մասով արձանագրվել է 380 ազդարարում, ինչը վկայում է, որ Դատախազությունն ընդգրկված է ազդարարման ազգային համակարգում և համագործակցում է ՄԻՊ-ի հետ տվյալների փոխանցման և հաշվետվողականության մակարդակում: https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf Վերը ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ դատախազությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ունի ձևավորված և գործառութային համագործակցություն հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի և ԿԿՀ-ի հետ, որը հիմնականում իրականացվում է մինչդատական վարույթի օրինականության հսկողության, տեղեկատվության փոխանակման, վիճակագրական տվյալների ստացման, ինչպես նաև դատախազների նկատմամբ ուսումնասիրությունների և կարգապահական վարույթների իրականացման շրջանակում:
45.	Համագործակցություն ոչ կառավարակ	ՀՀ դատախազության	Հակամարտություն և (կամ)	Սահմանափակ գործակցության	Գործակցության բարձր աստիճան ՀՀ	Միջին	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում դրսևորվում է տարբեր ծրագրերի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	ան (հասարակական) կազմակերպությունների հետ	տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և մասնավոր ընկերությունների անձնակազմի ներկայացուցիչների հետ	գործակցության բացակայություն ՀՀ դատախազության և ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև	ուն ՀՀ դատախազության և ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև	դատախազության և ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև		շրջանակներում ՀՀ դատախազություն ճանաչողական այցերի, հանդիպումների կազմակերպման եղանակներով: Այսպես, 2023 թ. մայիսի 19-ին գլխավոր դատախազն ընդունել է «Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն» հասարակական կազմակերպության «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի սաներին: Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել տուն-ինտերնատներում, խնամքի կենտրոններում և նման այլ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին, այդ համատեքստում Դատախազության լիազորություններին, պետական և համայնքային շահերի պաշտպանության ոլորտում Դատախազության կողմից իրականացվող աշխատանքներին, քրեական ենթամշակույթի դեմ պայքարում առկա մարտահրավերներին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առանձնահատկություններին, ինչպես նաև ատելության խոսքի պատժմանն ու կանխարգելմանն ուղղված քայլերին: https://www.prosecutor.am/article/2518 2024 թ. հունիսի 7-ին գլխավոր դատախազն ընդունել է «Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն» հասարակական կազմակերպության «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի ուսանողներին: Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է Դատախազության առաջնահերթությունները՝ դրանցից առանձնացնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, պետական և համայնքային շահերի պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտները: https://www.prosecutor.am/article/4581 Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվել է նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ առանձին աշխատաժողովների շրջանակներում նրանց
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների միջև գործակցությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի, գործունեության հանրայնացման առումով: Հետազոտողը պետք է խնդրի այն անձանց, ում հետ հարցազրույց է վարում, բերել համապատասխան օրինակներ կամ դեպքերի մանրամասներ, որոնք ցույց են տալիս ՀՀ դատախազության և ոչ				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության աստիճանը:				մասնակցության, առանձին նախագծերի վերաբերյալ կարծիքների ստացման եղանակներով: Այսպես, Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Միեր Մկրտչյանը 2024 թվականի դեկտեմբերի 9-ին մասնակցել է «Արդարադատության բարոմետր. գնահատելով դատական արձագանքը կոռուպցիային» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտական զեկույցի շնորհանդեսին, որն իրականացվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Իրավական ռեսուրսների կենտրոնի ու «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի համատեղ ջանքերով: Վարչության պետը ներկայացրել է կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացմանն ուղղված իրավական նոր գործիքակազմերը, ոլորտի մարտահրավերները, ինչպես նաև անդրադարձել է պետական (համայնքային) շահերի պաշտպանության ու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում Դատախազության արձանագրած ձեռքբերումներին: https://www.prosecutor.am/article/4707 Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվում է նաև ՀՀ դատախազության՝ օրենքով սահմանված որոշ պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնելու, ինչպես նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելու շրջանակներում: Օրինակ՝ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ սահմանված է որպես դիտորդ ներգրավվելու հնարավորություն: https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2017 թ. ստորագրվել է համագործակցության հուշագիր ՀՀ գլխավոր դատախազության և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի միջև: https://www.prosecutor.am/article/1054
46.	Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	ՀՀ դատախազությունը չի մասնակցում որևէ հակակոռուպցիոն ցանցի	Ակտիվ է՝ ՀՀ դատախազությունը մասնակցում է 1 կամ 2 հակակոռուպցիոն ցանցերի	Շատ ակտիվ է՝ ՀՀ դատախազությունը մասնակցում է 3 կամ ավելի հակակոռուպցիոն ցանցերի	Բարձր	Գլխավոր դատախազությունը համագործակցում է նաև Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Եվրաջասթի ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհրդի քարտուղարության, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, ԵԽ այլ միջկառավարական կոմիտեների ու ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: 2024 թվականի ընթացքում ապահովվել է ՀՀ դատախազության ներգրավվածությունը երկկողմ և միջազգային տարբեր հարթակներում անցկացվող հանդիպումներին, քննարկումներին, սեմինարներին և նիստերին: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf ՀՀ դատախազությունը մասնակցություն ունի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm ՀՀ դատախազությունը ներգրավված է նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարմանը: https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և նրա մասնակցության (ներգրավվածության) աստիճանը: Այն կարող է ներառել, օրինակ, ՏՀԶԿ գործողությունների Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան կամ ԳՐԵԿՈ-ն: Եթե ՀՀ դատախազությունը չի մասնակցում որևէ միջազգային հակակոռուպցիոն ցանցի, խնդրեք ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց բացատրել, թե ինչու է դա այդպես:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ՀՀ դատախազությունը ներգրավված է ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործում: https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման», Եվրոպայի խորհրդի «Աջակցություն դատահիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» և «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրերի շրջանակում՝ Գլխավոր դատախազությունը, Եվրոպայի խորհրդի հետ համատեղ, 2024 թվականի ապրիլի 26-ին և 27-ին կազմակերպել է «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով երկօրյա բարձրաստիճան խորհրդաժողով: Խորհրդաժողովին ներկա են եղել ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, Դատախազության ներկայացուցիչներ, խորհրդաժողովին մասնակցելու համար Հայաստան է ժամանել 12 պատվիրակություն՝ 23 ներկայացուցիչ օտարերկրյա պետությունների գլխավոր դատախազություններից և միջազգային կազմակերպություններից (ընդհանուր՝ 100 մասնակից): https://prosecutor.am/article/4541 Հայաստանի և Եվրոպական միության միջև շուրջ երկու տարի տևած բանակցությունների արդյունքում 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը (ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 1-ին): https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf 2024 թվականի սեպտեմբերի 23-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրի կատարումն ապահովող աշխատանքային պայմանավորվածությունը (ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 11- ին): Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունն առաջիկայում «Եվրաջասթ» կգործուղի դատախազ՝ քրեական վարույթներով ԵՄ անդամ պետությունների իրավասու մարմինների հետ զարգացնելով առավել արդյունավետ համագործակցություն: https://prosecutor.am/article/4629 Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակում՝ Դատախազության, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ջանքերով 2024 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում կայացել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուի շնորհանդեսը: Միջոցառման թեմատիկ նիստի ընթացքում ներկայացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի թիվ 14 կարծիքը, որը վերաբերում է կոռուպցիայի և հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների դերին, անդրադարձ է կատարվել կոռուպցիոն բնույթի հանցանքների բացահայտման արդի մարտահրավերներին և այլն: https://prosecutor.am/article/4684

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
47.	Համագործակցություն այլ երկրների հետ	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, այն երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների տարեկան հաշվետվությունն և կայք, որոնց հետ գործակցում է ՀՀ դատախազությունը, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Գործակցության բացակայություն ՀՀ դատախազության և այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների միջև	Որոշ ոլորտներում սահմանափակ գործակցություն ՀՀ դատախազության և 1 կամ 2 այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների հետ	Համատեղ ծրագրերի առումով գործակցության և փորձագիտական օժանդակության բարձր մակարդակ ՀՀ դատախազության և մի քանի այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների հետ	Միջին	2023 թ. հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազը փոխըմբռնման մասին հուշագրեր է ստորագրել Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազի ու Իտալիայի Հանրապետության գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր դատախազի հետ: https://prosecutor.am/article/4203 https://prosecutor.am/article/4208 ՀՀ դատախազությունը համագործակցության հուշագրեր է ստորագրել նաև Հունգարիայի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/35, Ռումինիայի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/441, Մոլդովայի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/340, Կիպրոսի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/340, Հունաստանի գերագույն դատարանի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/1169, Իրանի դատախազության ՝ https://www.prosecutor.am/article/1366, Ուզբեկստանի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/1522, Ռուսաստանի Դաշնության դատախազության՝ https://www.prosecutor.am/article/1876, Վրաստանի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/2157, Եգիպտոսի դատախազության՝ https://www.prosecutor.am/article/2182 և այլն: ՀՀ գլխավոր դատախազությունը 2020 թվականից հանդիսանում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցի անդամ: Այսպես, 2024 թ. ընթացքում CARIN.NETWORK միջազգային ոչ պաշտոնական ցանցի միջոցով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության կողմից մի շարք գործընկեր պետությունների իրավասու մարմիններին ուղարկվել է 6 հարցում (մեկական հարցում՝ ԱՄՆ, Հունաստան, Ֆրանսիա, Բուլղարիա, 2 հարցում՝ Իսպանիա): Վարչության կողմից ուղարկված հարցումներից 4-ով ստացվել են պատասխաններ, իսկ երկու հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել: Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից CARIN.NETWORK (Camden
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության գործակցությունը այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ: Եթե ՀՀ դատախազությունը համագործակցում է այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ, նկարագրեք նման գործակցության մանրամասները և չափը, այդ թվում՝ համատեղ ծրագրերը և տրամադրված փորձագիտական օժանդակությունը: Եթե ՀՀ				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			դատախազությունը չի գործակցում այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ, պետք է բացահայտել գործակցության բացակայության պատճառները:				Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցի միջոցով ստացվել է 5 հարցում (3 հարցում՝ Ֆրանսիայից, մեկական հարցում՝ Լատվիայից և Լեհաստանից): Հարցումների շրջանակներում Վարչության կողմից կատարվել են անհրաժեշտ գործողությունները և տրամադրվել են հարցմամբ հայցվող տեղեկատվությունը: Բացի այդ, 2024 թ. նշված վարչության դատախազների կողմից ուղարկվել է 17 միջազգային հարցում, որոնցից՝ մեկական հարցում ուղարկվել է ԱՄԷ, Իսպանիա, Վրաստան, ԱՄՆ, երեքական հարցում՝ Հունաստան, Բուլղարիա, 7 հարցում՝ ՌԴ: Ուղարկված հարցումներից 5-ով պետությունները Վարչությանն են փոխանցել հայցվող տեղեկությունը, 4-ով Վարչությունը ստացել է մերժում, 8 հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել: http://www.parliament.am/draft_docs8/1038_31032025_Datakhazutyan_Haghordum.pdf Ի համեմատություն, 2023 թ. ընթացքում Միջազգային ոչ պաշտոնական ցանցի՝ CARIN.NETWORK-ի միջոցով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 4 հարցում (2 հարցում՝ Ֆրանսիայից, 1 հարցում՝ Գերմանիայի Դաշնությունից, 1 հարցում՝ Իսպանիայի Թագավորությունից): Նշված հարցումներով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացվել են անհրաժեշտ գործողությունները: Ոչ պաշտոնական նույն ցանցի միջոցով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից մի շարք պետությունների (ԱՄՆ, Ավստրիա, Հունաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Վրաստան, Էստոնիա, Միացյալ Թագավորություն և այլն) իրավասու մարմիններին ուղարկվել է 17 հարցում: Հարցումներից 16-ով ստացվել են պատասխաններ, 1-ով պահանջվել է հավելյալ տեղեկություն: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կողմից ուղարկվել է իրավական փոխօգնության 7 հարցում. հարցումներից 4-ն ուղարկվել է ԱՄԷ, մեկական հարցում՝ ԱՄՆ,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Չեխիայի Հանրապետություն և Վրաստան: ԱՄԷ ուղարկված 1 հարցմանն ի պատասխան՝ իրավասու մարմինները Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն են փոխանցել տեղեկատվություն՝ ուսումնասիրվող անձին պատկանող՝ ԱՄԷ-ում գտնվող բանկային հաշիվների քաղվածքների վերաբերյալ: Ի պատասխան Վրաստան ուղարկված հարցման՝ իրավասու մարմինների կողմից ստացվել է պատասխան առ այն, որ Վրաստանի պաշտոնական բազաներում առկա չէ ուսումնասիրվող անձի վերաբերյալ որևէ տեղեկություն: Ուղարկված հարցումներից երկուսով (ԱՄԷ և Չեխիայի Հանրապետություն) Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ստացել է մերժում՝ իրավական հիմքերի բացակայության պատճառաբանությամբ: Վարչության կողմից ուղարկված մյուս երեք հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf ՀՀ դատախազության համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ դրսևորվում է նաև միջազգային և տարածաշրջանային միջոցառումների ու երկկողմ հանդիպումների կազմակերպման և մասնակցության միջոցով: Այսպես, 2024 թ. հոկտեմբերի 3-ից 5-ը Դատախազության կողմից Երևանում կազմակերպվել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 34-րդ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանել 7 պատվիրակություն՝ 45 ներկայացուցիչ ԱՊՀ անդամ 6 պետություններից և միջազգային կազմակերպությունից: https://prosecutor.am/article/4642

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2023 թ. հուլիսի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Արմեն Հարությունյանի նախագահությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է հանդիպում-քննարկում «Ատելության խոսք և խոսքի ազատություն» թեմայով, որին մասնակցել են Դատախազության և Քննչական կոմիտեի 25 ներկայացուցիչներ: Քննարկման արդյունքում կազմվել է ուղեցույց, որն ուղարկվել է Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ: https://prosecutor.am/article/4264 2023 թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ դատախազության հիմնադրման 105-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Դատախազության կողմից կազմակերպվել է «Դատավարական էթիկա» թեմայով մասնագիտական երկխոսություն՝ ԱՄՆ Լոս Անջելես նահանգի Գերագույն դատարանի դատավոր Արմենուհի Էմի Աշվանյանի մասնակցությամբ, որին մասնակցել են ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, դատախազներ և դատավորներ (80-ից ավելի մասնակից): https://prosecutor.am/article/4381 Դատախազության կողմից կազմակերպվել են ՀՀ գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2023- 2024 թթ. Ծրագրով արդիական թեմաներով նախատեսված 4 միջոցառումներ, այդ թվում՝ փորձագետների 1 այց, 1 սեմինար և դատախազների համար 2 դասախոսություն: Միջոցառումների շրջանակում ՌԴ-ից ՀՀ են ժամանել 7 ներկայացուցիչ, իսկ ՀՀ-ից ՌԴ գործուղվել՝ 5 ներկայացուցիչ: 2024 թ. դատախազության ներկայացուցիչները, ի թիվս այլնի, մասնակցել են՝ • Բուդապեշտում կայացած՝ ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ) կազմակերպած՝ Միջազգային Իրավապահ Ակադեմիայի (ILEA) կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն շարքի դասընթացներին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• Թբիլիսիում կայացած՝ ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ), ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի, Բուխարեստում ԱՄՆ դեսպանատան OPDAT գրասենյակի հետ մեկտեղ կազմակերպած՝ «Պայքար կեղծ ալկոհոլային ապրանքների ապօրինի շուկաների դեմ» խորագրով աշխատաժողովին: • Թբիլիսիում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) «TOPCOP» ծրագրի շրջանակում կազմակերպած՝ «Շարժական կազմակերպված հանցավոր խմբեր. Բանկոմատներում կանխիկ դրամական միջոցների տարանցման հետ կապված հարձակումներ, ավտոտրանսպորտային հանցագործություններ» թեմայով ազգային ներկայացուցիչների վերապատրաստմանը: • Բուդապեշտում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից «TOPCOP» ծրագրի շրջանակում անցկացված՝ «Մարդկանց թրաֆիքինգ/Վերապատրաստողների վերապատրաստում» թեմայով դասընթացին: • Քիշնևում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից «TOPCOP» ծրագրի շրջանակում կազմակերպված՝ «Ծանր և կազմակերպված հանցավորության ռիսկի գնահատման մեթոդաբանություն, ռիսկի կառավարում, օպերատիվ և ռազմավարական վերլուծություն» խորագրով դասընթացին: • Սամարղանդում կայացած՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի (UNODC ROCA) կողմից կազմակերպված՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բազմաշահառու միջոցառմանը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• Ստրասբուրգում կայացած՝ Քրեական գործերով համագործակցության եվրոպական կոնվենցիայի փորձագետների Եվրոպայի խորհրդի միջկառավարական կոմիտեի լիագումար նիստին: • Չինաստանի կառավարության կողմից կազմակերպված՝ «Ահաբեկչության դեմ պայքարի շուրջ ՇՀԿ անդամ երկրների համար» բազմակողմ դասընթացին: • Հյուսիսային Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում կայացած՝ Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանցի 2024 թվականի ընդհանուր ժողովին և վերապատրաստմանը: • Կորեայի Բուսան քաղաքում կայացած՝ Եվրոպայի խորհրդի Մանիվալ հանձնախմբի կազմակերպած՝ ֆինանսական ակտիվների հատուկ հանձնախմբի կողմից ՖԱԹՖ հանձնարարականների թեմայով վերապատրաստման դասընթացին: • Բելգրադում կայացած՝ «Քրեական բռնագրավման գործընթացում լրացուցիչ գործիքների ներդրում» թեմայով կոնֆերանսին: • Հյուսիսային Մակեդոնիայի Շտռուգա քաղաքում կայացած՝ Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանցի 2024 թվականի ընդհանուր ժողովին և վերապատրաստմանը: • Ռիգայում կայացած՝ ՏՀՁԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն իրավապահ ցանցի 14-րդ հանդիպմանը: https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf Փորձագիտական գնահատմամբ՝ ներկայացված վիճակագրությունը վկայում է միջազգային իրավական համագործակցության արդյունավետության հետ կապված համակարգային խնդիրների մասին: Մերժումների հիմնավորումներից առանձնանում են ինչպես իրավապայմանագրային հիմքերի բացակայությունը (փոխօգնության

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							պայմանագրերի կամ հուշագրերի բացակայություն), այնպես էլ փոխադարձ ճանաչելիության սահմանափակումները: Սակայն փորձագիտական դիտարկմամբ՝ խնդիրը միայն միջազգային իրավական շրջանակների պակասով չի պայմանավորվում. այն կարող է պայմանավորված լինել նաև հարցումների ոչ լիարժեք իրավական հիմնավորմամբ, ձևակերպման թերություններով և միջազգային պահանջներին ոչ լիարժեք համապատասխանությամբ: *Ըստ փորձագետների՝ «Դատախազները հաճախ չեն կարողանում ձևակերպել բավարար չափով հիմնավորված և իրավական տեսանկյունից պատշաճ հարցումներ, ինչի հետևանքով դժվարանում է անհրաժեշտ տեղեկատվության ստացումը: Մասնավորապես, արձանագրվում են դեպքեր, երբ օտարերկրյա իրավասու մարմինները չեն տրամադրում պահանջվող տվյալները՝ հարցումների ոչ լիարժեք կամ ոչ պատշաճ ձևակերպման, ինչպես նաև համապատասխան իրավական հիմքերի ոչ հստակ նշման պատճառով»:*
48.	Հասանելիությունը մարգինալացված խմբերին	ՀՀ դատախազության տարեկան հաղորդում և կայք, հարցազրույցներ ՀՀ դատախազության անձնակազմի ղեկավար պաշտոն	ՀՀ դատախազությունը չունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ կտային մոնիտորինգի	ՀՀ դատախազությունն ունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի	ՀՀ դատախազությունն ունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի հանդեպ իր	Ցածր	ՀՀ դատախազության 2021-2024 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի կտրվածքով ագրեգացված վիճակագրական տվյալները բացակայում են: ՀՀ դատախազության հարցման արդյունքները նույնպես վկայում են, որ ՀՀ դատախազությունն մարգինալացված (խոցելի) խմբերի կոռուպցիոն շփումների մասով տվյալների առանձնացված հաշվառում չի իրականացնում:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		զբաղեցնող անձանց հետ	ենթարկել մարգինալացված խմբերի (այդ թվում՝ կանանց և փոքրամասնություններ ի) հանդեպ իր արձագանք ողականությունը	հանդեպ իր արձագանքողականությունը, սակայն գործուն կերպով չի դիտարկում այդ տարբերությունները	արձագանքողականությունը, ինչը նա գործուն կերպով դիտարկում է		
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված (խոցելի) խմբերին: Ստուգել, թե ՀՀ դատախազությունն ունի արդյոք ապաագրեգացված կամ տարանջատված տվյալներ (օրինակ՝ ստացված կոռուպցիոն բողոքների վերաբերյալ)՝ ըստ մարգինալացված առանձին խմբերի ու բնութագրերի: Նաև պարզել, թե առկա են արդյոք ընթացակարգեր այս տվյալների մոնիտորինգի և ՀՀ դատախազության կողմից հանրայնացման և իրազեկման համար: Այս ցուցանիշը դիտարկվում է նաև հասկանալու համար, թե ՀՀ դատախազությունը տեղյակ է արդյոք իր				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			քաղաքացիների տարբեր խմբերի, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց կամ ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև այլ մարգինալացված խմբերի կողմից կոռուպցիոն շփումների ու դրանց մասին համապատասխան մարմիններին տեղեկացնելու հնարավորության մասին: Ի վերջո, ապաագրեգացված տվյալներ ունենալը ՀՀ դատախազությանը հնարավորություն կտա լինելու առավել ներառական, հասանելի և արդյունավետ հասարակության բոլոր մասերի համար:				
	ՀՀ դատախազության համագործակցության և արտաքին հարաբերությունների միավորի հանրագումարը					6/12=50 %	

Հավելված 2. ՀՀ դատախազության գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման չափանիշների և ցուցանիշների

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ								
Անկախությունը և կարգավիճակը	Ինստիտուցիոնալ անկախություն	Գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	Մանդատ	Իրավասություն	Հետապնդման լիազորություն-ներ	Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ	Իրավական ինքնավարություն	Գործառնական ինքնավարու թյուն	Լիազորություններ ի քաղաքական օգտագործում
Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ	Բյուջեի համամասնությունը	Բյուջեի բավարար լինելը	Բյուջեի անվտանգությունը և կայունությունը	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում	Աշխատակազմի ընտրություն	Հետապնդման փորձագիտություն	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում	Անձնակազմի կայունություն	
Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն	Տարեկան հաշվետվություն	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	Ներքին վերահսկողու-թյան մեխանիզմներ	Գործընթաց-ների պատշաճ պահպանում	Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը	ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը	Բողոքների արդյունքները	Բարեվարքու թյան ներքին մեխանիզմներ
Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում	Հասանելիությունը բողոքատուներին/տեղե կատուներին /ազդարարումներին	Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին	Նախաձեռնողա-կանություն	Արդյունավետու թյուն և արհեստավարժ ություն	Հետապնդում-ների ցուցանիշը	Դատապարտումների ցուցանիշը	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումներ	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում	ՀՀ դատախազու-թյան կատարողա կանի ընկալում
Կանխարգելում, կրթություն և իրազեկում	Հատկացված բյուջե	Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում	Կանխարգել-ման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությու ններ	Հետազոտու թյուն կոռուպցիոն հանցագործու թյունների վերաբերյալ	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ	Առցանց հաղորդակցում		
Համագործակցություն և արտաքին հարաբերություններ	Վստահությունը Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության հանդեպ	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ	Համագործակցությ ուն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությու ններ հետ	Միջազգային հակակոռուպ-ցիոն ցանցեր	Համագործակ ցություն այլ երկրների հետ	Հասանելիությունը մարգինալացված խմբերին			

Գնահատման սանդղակ

Ցածր միավոր	0	ԿԱՐՄԻՐ
Միջին միավոր	1	ԴԵՂԻՆ
Բարձր միավոր	2	ԿԱՆԱՉ
Հնարավոր չէ գնահատել	Միավորներ չեն նշանակվել	ՄՈԽՐԱԳՈՒՅՆ

Հավելված 3. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ՝ հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ դատախազության համար

ՋԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ	ՄԻԱ ՎՈՐ	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
1. Մանդատը ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատներ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով:	**3. Մանդատը** կենտրոնանում է ՀՀ դատախազության մանդատի և գործառույթների վրա, գլխավորապես այն բանի, թե ՀՀ դատախազությունն իրականացնում է արդյոք հետաքննության, հակակոռուպցիոն կրթության և կանխարգելման գործառույթները:	**2**	Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով սահմանված է դատախազությանը վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը, որի բովանդակությունը համապատասխանում է Սահմանադրության 176-րդ հոդվածի բովանդակությանը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է՝ գլխավոր դատախազի ղեկավարությամբ, որը իր սահմանադրական լիազորությունները իրականացնում է դատախազների միջոցով: Քրեական դատավարության օրենսգրքով նախաքննությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից, մինչդեռ դատախազությունը պատասխանատու է քրեական հետապնդման իրավաչափության, մինչդատական վարույթի օրինականության և դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության համար: ՀՀ դատախազության իրավասությունը տարածվում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի կոռուպցիոն դրսևորումների վրա՝ կենտրոնական և ենթազգային մակարդակներում: Միաժամանակ, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը օժտված է ապօրինի գույքի բացահայտման, ուսումնասիրության և քաղաքացիական բռնագանձման ամբողջական
	4. Իրավասությունն ընդգրկում է ՀՀ դատախազության ոլորտային և աշխարհագրական շրջանակը (օրինակ՝ ՀՀ դատախազության իրավասությունն ընդգրկո՞ւմ է կոռուպցիան ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում և գործո՞ւմ է բոլոր վարչական մակարդակներում):	**2**	
	5. Հետապնդման լիազորությունները կենտրոնանում են ՀՀ դատախազության գործնական լիազորությունների վրա՝ նախաձեռնողական վարույթ սկսելու, պահանջելու այլ պետական մարմիններից համագործակցություն՝ ստուգելու կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամտահարկի գրառումները և գույքը, խուզարկել և մուտք գործել տարածք, և այլն:	**2**	

	6. Առաջարկությունները հաղորդելու և կիրարկելու լիազորություններն ուսումնասիրում են ՀՀ դատախազության լիազորությունները՝ մշակելու և կիրարկելու պարտադիր առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ, առավել ընդհանրաբար, Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է ուղեգրումների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը:	**1**	գործիքակազմով, ինչը նպաստում է ոչ միայն պատժիչ, այլ նաև վերականգնողական հակակոռուպցիոն մոտեցման իրագործմանը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և Քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունից բխում է, որ դատախազությունը իրավասու է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցելու հանրային քրեական հետապնդում և իրականացնելու մինչդատական վարույթի օրինականության հսկողություն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության միջոցով: Դատախազը պատասխանատու է քրեական հետապնդման հարուցման, չհարուցման կամ դադարեցման իրավաչափության, ինչպես նաև դատարանում հանրային մեղադրանքի պաշտպանության համար: Հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ հանցանքի փաստերը հաստատող տվյալների հիման վրա, այդ թվում՝ նաև դատախազի սեփական նախաձեռնությամբ: Միևնույն ժամանակ, դատախազությունը չի հանդիսանում նախաքննության մարմին, և քրեական հետապնդում հարուցելուց հետո նախաքննությունն իրականացնում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: Դատախազը մինչդատական վարույթում օժտված է լայն վերահսկողական լիազորություններով՝ անօրինական գործողություններն ու որոշումները վերացնելու, քննիչին պարտադիր հանձնարարություններ տալու, քրեական հետապնդում հարուցելու կամ դադարեցնելու, մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան հանձնելու մասով: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում Գլխավոր դատախազության համապատասխան վարչությունը իրավասու է սկսել ուսումնասիրություն ինչպես քրեական վարույթների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական տվյալների հիման վրա, այդ թվում՝ այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը անհնար է կամ կասեցված է: Վարչությունը կարող է գործել ինչպես ներկայացված նյութերի, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ՝ պայմանով, որ ենթադրյալ ապօրինի գույքի շուկայական արժեքը գերազանցում է 50 մլն դրամը: Ուսումնասիրության շրջանակում վարչությունն օժտված է փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ նախաձեռնելու (սահմանված բացառություններով), միջազգային տեղեկատվական համագործակցություն իրականացնելու և դատարանի միջոցով գաղտնի տեղեկություններ պահանջելու լիազորություններով: Այս իրավական գործիքակազմը դատախազությանը հնարավորություն է տալիս իրականացնել ոչ միայն քրեական
	9. Լիազորությունների քաղաքական օգտագործումն անդրադառնում է այն հարցին, թե Կառավարությունն արդյոք ապավինում է ՀՀ դատախազությանը վերոհիշյալ մանդատը և լիազորությունները որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար:	**0**	

			հետապնդման, այլև ակտիվ ֆինանսական վերլուծության և քաղաքացիական բռնագանձման գործառույթներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման, իսկ այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կարող են դրվել հանրային քննարկման նախաձեռնությամբ: Այս կարգավորումից բխում է, որ ՀՀ դատախազությունը՝ որպես նորմատիվ իրավական ակտեր մշակող մարմին, իրավասու է կազմակերպելու հանրային քննարկումներ: Դատախազության կանոնակարգի համաձայն՝ գլխավոր դատախազը և նրա տեղակալները ընդունում են ներքին և անհատական իրավական ակտեր, որոնց նախագծերը մշակվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից և պետք է համապատասխանեն օրենսդրական տեխնիկայի պահանջներին: 2024 թ. ընթացքում Դատախազությունը մասնակցել է քրեական արդարադատության ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի մշակմանը, ներկայացրել է 4 օրենսդրական նախաձեռնություն և դիրքորոշումներ է հայտնել շուրջ 200 այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Դատախազությունը ներգրավված է եղել նաև հակակոռուպցիոն և դատահիրավական ռազմավարությունների իրականացման գործընթացներում: Միևնույն ժամանակ, ներկայացված առաջարկությունների ընդունման մակարդակի վերաբերյալ տվյալներ չեն հրապարակվել, ինչի հետևանքով ազդեցության արդյունավետության գնահատումը սահմանափակ է: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքը. դատախազը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, մասնակցել քարոզչությանը կամ կազմակերպել քաղաքական չեզոքությունը կասկածի տակ դնող հավաքներ և ընտրություններին մասնակցում է միայն որպես ընտրող: Միևնույն ժամանակ, հանրային և մեդիա դիսկուրսում շրջանառվող տեղեկությունները գլխավոր դատախազի նախկին դերակատարման և գործադիր իշխանության հետ կապերի վերաբերյալ ձևավորում են քաղաքական կախվածության և ընտրովի արդարադատության ընկալումներ: Այս ընկալումները խորանում են ինչպես այն պատճառով, որ բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ հարուցված գործերի

			զգալի մասը չի հասնում դատավարական ավարտի, այնպես էլ իրավապահ մարմինների միջև առկա հրապարակային հակասությունների հետևանքով: Freedom House-ի Nations in Transit 2023 և 2024 զեկույցները ևս արձանագրում են մի շարք բարձր պրոֆիլի գործերի դադարեցում կամ փակման փաստեր, ինչը վկայում է համակարգային խնդիրների և քաղաքական ազդեցությամբ պայմանավորված հետապնդումների բարձր ռիսկի մասին:
2. Գործակցություն ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսացված: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ միջազգային գործակցությունը:	**38. Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում** ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության վերապատրաստման և կրթության նախաձեռնությունները վերջին 3-5 տարվա ընթացքում, այդ թվում՝ ՀՀ դատախազության քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, ՀՀ դատախազություն այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և պետական պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների քանակը:	**1**	ՀՀ դատախազությունը չունի հակակոռուպցիոն կրթության և զարգացման հրապարակված ռազմավարական ծրագիր: 2021-2024 թթ. ընթացքում իրականացվել են մի շարք հակակոռուպցիոն վերապատրաստումներ և կրթական նախաձեռնություններ, որոնք հիմնականում ուղղված են եղել դատախազների և այլ իրավապահների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, ներառյալ սեմինարներ, քննարկումներ և միջազգային ծրագրերի մասնակցություն: Միևնույն ժամանակ, այդ նախաձեռնությունները եղել են հատվածային և ոչ համակարգային. բացակայում է ամբողջական քանակական հաշվառումը, արդյունքների չափելի գնահատումը և լայն հանրությանը ուղղված շարունակական կրթական քաղաքականությունը: Արդյունքում, դատախազության հակակոռուպցիոն կրթական գործունեությունը չի ձևավորում համապարփակ և կայուն համակարգ:
	44. Գործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ գնահատում է ՀՀ դատախազության և կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հարաբերությունները երկրում ինչպես հետաքննության/հետապնդման, այնպես էլ կանխարգելման/տեղեկատվական գործունեության տեսանկյունից՝ վերաբերելի դեպքերում:	**2**	ՀՀ դատախազությունը համակարգված համագործակցում է հակակոռուպցիոն ոլորտի առանցքային պետական մարմինների հետ: Դատախազության համապատասխան վարչությունը հսկողություն է իրականացնում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, իսկ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրական տվյալները ստացվում և ամփոփվում են տարեկան հաղորդումներում: Դատախազությունը համագործակցում է նաև ԿԿՀ-ի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ՝ տեղեկատվության փոխանակման, կարգապահական վարույթների և ազդարարման համակարգի մոնիտորինգի շրջանակում:

	45. Հասարակական կազմակերպությունների հետ գործակցությունը գնահատում է ՀՀ դատախազության և երկրի այլ կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական ձեռնարկությունների միջև գործակցությունը՝ կանխարգելման/հանրայնացման գործունեության առումով:	1	ՔՀԿ-ների հետ փոխգործակցությունը հիմնականում իրականացվում է հանդիպումների, ճանաչողական այցերի, աշխատաժողովների և դոնոր ծրագրերի շրջանակում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավվում են նաև դատախազությունում մրցույթների և հանձնաժողովների դիտորդական գործընթացներում: Սակայն համագործակցությունը կրում է առավելապես իրազեկման և խորհրդատվական բնույթ: ՀՀ դատախազությունը ներգրավված է ՏՀՁԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿ-ի և այլ միջազգային հակակոռուպցիոն մեխանիզմներում, մասնակցում է գնահատման, մոնիտորինգի և հաշվետվությունների պատրաստման գործընթացներին: Համագործակցությունը ներառում է տեղեկատվության փոխանակում, իրավական ակտերի մշակում և համատեղ վերապատրաստումներ: 2023-2024 թթ. ՀՀ գլխավոր դատախազությունը ստորագրել է փոխըմբռնման հուշագրեր մի շարք երկրների դատախազությունների հետ և շարունակում է անդամակցությունը CARIN.NETWORK-ին՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ: Դատախազության ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում են միջազգային միջոցառումների, վերապատրաստումների և երկկողմ հանդիպումների՝ կոռուպցիայի, ֆինանսական և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտներում:
	46. Միջազգային ցանցեր ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության մասնակցությունը միջազգային ցանցերին և ներգրավվածության աստիճանը (օրինակ՝ ՏՀՁԿ Ստամբուլյան գործողությունների հակակոռուպցիոն նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան):	2	
	47. Այլ երկրների հետ գործակցությունը գնահատում է ՀՀ դատախազության գործակցությունը այլ երկրների իրավապահ մարմինների հետ, այդ թվում՝ համատեղ նախագծերի և փորձագիտական օժանդակության միջոցով:	1	
3. Մշտականություն ՀԿՄ-ները, իրենց երկրների հիմնական իրավական սկզբունքների համաձայն, պետք է ստեղծվեն պատշաճ և կայուն օրենսդրական	**1. Ինստիտուցիոնալ անկախությունն** անդրադառնում է ՀՀ դատախազության իրավական հիմքին, մասնավորապես այն հարցին, թե արդյոք ՀՀ դատախազությունն օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմին է, որևէ նախարարությանը հաշվետու առանձին	2	ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխում սահմանված են դատախազությանը նվիրված իրավակարգավորումները, ինչից կարելի է եզրահանգել, որ դատախազությունը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, չնայած Սահմանադրության տեքստում դատախազության անկախության մասին որևէ դրույթ նախատեսված չէ: ՀՀ Սահմանադրության հոդված 176-ը սահմանում է, որ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Ըստ

դաշտով, օրինակ, Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա ՀԿՄ-ի շարունակականությունն ապահովելու համար:	մարմին, թե գործում է ոստիկանության կամ որևէ նախարարության կազմում:		«Դատախազության մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի՝ դատախազությունը գործում է հրապարակայնության, դատախազի ինքնուրույնության և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիության, դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելու, դատախազի ապաքաղաքականացվածության սկզբունքների վրա:
4. Նշանակում ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և ձեռնհասությունը:	**2. Գլխավոր դատախազի և իր տեղակալների նշանակումը և հեռացումը** ներառում է գլխավոր դատախազի և իր տեղակալների նշանակման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անձինք, ուսումնասիրում է, թե առկա՞ են արդյոք անկողմնակալության ապահովման երաշխիքներ, այդ թվում՝ անաչառ ընտրության չափանիշներ և նշանակման ընթացակարգի թափանցիկություն: (Այս ցուցանիշը ներառու մ է նաև հեռացման գործընթացները. տես ստորև):	1	ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածով սահմանված է, որ գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ: Սահմանադրությամբ սահմանված են նաև գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող հիմնական պահանջները. թեկնածուն պետք է լինի առնվազն 35 տարեկան, միայն ՀՀ քաղաքացի, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով, բարձրագույն իրավաբանական կրթությամբ և իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառությամբ: Օրենքով կարող են սահմանվել նաև լրացուցիչ պահանջներ: Գլխավոր դատախազի և նրա տեղակալների նշանակման ու պաշտոնի դադարեցման կարգավորումները սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով: Գլխավոր դատախազի թեկնածուն առաջադրվում է ԱԺ խմբակցության կողմից, անցնում է իրավասու մշտական հանձնաժողովի և ԿԿՀ-ի բարեվարքության գնահատում, ապա ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ և պաշտոնը ստանձնում է երդմամբ: Գլխավոր դատախազի տեղակալները նշանակվում են օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ՀՀ քաղաքացիներից՝ որոշ դեպքերում առանց մրցույթի, իսկ մյուս դեպքերում՝ որակավորման հանձնաժողովի կողմից անցկացվող մրցույթի միջոցով՝ հաշվի առնելով նաև ԿԿՀ-ի եզրակացությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալի համար սահմանված է հատուկ՝ բաց մրցութային կարգ: Օրենսդրությունը չի նախատեսում քաղաքացիական հասարակության լիարժեք ներգրավվածություն գլխավոր դատախազի և նրա տեղակալների ընտրության

			գործընթացում, ինչը սահմանափակում է թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Միաժամանակ, նույն անձի կրկնակի անընդմեջ նշանակման հնարավորությունը կարող է ստեղծել քաղաքական կախվածության և անկախության ռիսկեր:
5.Շարունակականություն Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ-ի ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ-ի համապատասխան պաշտոնյայի մինչև ՀԿՄ-ի նոր ղեկավարի նշանակումը:	**8. Գործառնական ինքնավարությունը**, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է այն խնդրին, թե ՀՀ դատախազությունն օպերատիվ վերահսկողություն ունի ավագ անձնակազմի ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ, որը ներառում է գլխավոր դատախազի բացակայության դեպքում շարունակականությունն ապահովելու մեխանիզմներ:	**2**	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը նախատեսում է. «Գլխավոր դատախազի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով գլխավոր դատախազի տեղակալներից մեկը փոխարինում է գլխավոր դատախազին: Նման հրաման ընդունելու անհնարինության դեպքում, ինչպես նաև գլխավոր դատախազի պաշտոնն օրենքով սահմանված կարգով թափուր մնալու դեպքում գլխավոր դատախազին ժամանակավորապես փոխարինում է գլխավոր դատախազի՝ դատախազության համակարգում առավել երկար փորձառություն ունեցող տեղակալը»:
6. Հեռացում ՀԿՄ-ների ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և պետք է հեռացվեն միայն իրավականորեն սահմանված	**2. Գլխավոր դատախազի և իր տեղակալների նշանակումը և հեռացումը**, ի լրումն վերը նկարագրված տարրերի, ներառում է գլխավոր դատախազի և իր տեղակալների հեռացման գործընթացը, այդ թվում՝ նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները, ինչպես նաև հեռացման ընթացակարգերի անաչառության և թափանցիկության ապահովման երաշխիքները: Նաև ուսումնասիրում է, թե գլխավոր դատախազը և իր տեղակալները ունեն արդյոք հաստատագրված ժամկետ	**1**	Գլխավոր դատախազի լիազորությունների վաղաժամկետ դադարելու հիմքերը սահմանված են «Դատախազության մասին» օրենքի 63-րդ հոդվածով և հիմնականում կրում են օբյեկտիվ բնույթ: Միաժամանակ, օրենքը նախատեսում է նաև լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հայեցողական հիմքեր, ինչպիսիք են՝ օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումը, որը «վարկաբեկել է դատախազության հեղինակությունը», կամ «այլ անհաղթահարելի խոչընդոտների» առկայությունը: Այս հիմքերը բազմիցս քննադատվել են իրավական որոշակիության տեսանկյունից: ՏՀԶԿ-ի 5-րդ գնահատման զեկույցում նշվում է, որ նշված ձևակերպումները չափազանց ընդհանուր են և կարող են լայն մեկնաբանության տեղիք տալ, ինչը

ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատարի (օրինակ՝ Գերագույն դատարանի նախագահի) պաշտոնազրկման ընթացակարգին:	(պաշտոնավարության ժամկետով) և չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ՝ անձեռնհասություն կամ սխալ վարքագիծ) (Այս ցուցանիշը ներառում է նաև նշանակման գործընթացները. տես վերևում):		ստեղծում է քաղաքական կամ հայեցողական ազդեցության ռիսկեր: Գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու ընթացակարգը սահմանված է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածով և ներառում է խմբակցության նախաձեռնություն, քննարկում ԱԺ նիստում, ԿԿՀ-ի եզրակացության ներկայացում և գաղտնի քվեարկություն՝ երեք հինգերորդ ձայների շեմով: Գլխավոր դատախազի տեղակալների լիազորությունների դադարեցման հատուկ կարգավորում օրենքում առկա չէ, և նրանց նկատմամբ կիրառվում են դատախազների համար նախատեսված ընդհանուր հիմքերը:
7. Էթիկական վարքագիծ ՀԿՄ-ները պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որոնք իրենց անձնակազմից պահանջում են էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության (պահանջների պահպանման) խիստ ռեժիմ:	**26. Բարեվարքության ներքին մեխանիզմներ** ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության վարքագծի կանոնների ամբողջականությունը (օրինակ՝ գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և հյուրասիրության կանոնները, հետաշխատանքային սահմանափակումները), կանոնների խախտման և այլ սխալների վերացման գործընթացները, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը:	**2**	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են օրենքով և գլխավոր դատախազի հրամանով: Դրանք պարտադիր են բոլոր դատախազների համար, իսկ վերադաս դատախազը պարտավոր է հետևել ստորադասների վարքագծի կանոնների պահպանմանը: Դատախազը պետք է իր գործունեությամբ ապահովի դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անկախությունը: Գլխավոր դատախազի տեղակալները հետևում են ԿԿՀ-ի վարքագծի կանոնագրքին՝ բացառությամբ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում թույլատրելի գործողությունների: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատվում են փոխվարչապետի կողմից: Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը կարգավորվում են «Դատախազության մասին» օրենքի 72-74.1 հոդվածներով՝ հղում կատարելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Դատախազի նկատմամբ սահմանափակումներն ու անհամատեղելիությունը սահմանված են նույն օրենքի 49-րդ հոդվածով, որի խախտումները քննվում են գլխավոր դատախազի կամ 7 անդամից բաղկացած էթիկայի հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրում է փաստերը, գաղտնի քվեարկությամբ որոշում է ընդունում կարգապահական խախտման և հնարավոր տույժի մասին: Հայտարարագրման պարտականությունը սահմանված է «Հանրային ծառայության

			մասին» օրենքով՝ ընդգրկելով դատախազության որոշ պաշտոնյաների:
8. Անձեռնմխելիություն ՀԿՄ-ների ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿԳ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:	**7. Իրավական ինքնավարությունը**, ի թիվս այլոց, ուսումնասիրում է, թե գլխավոր դատախազը, իր տեղակալներն ու ծառայողներն անձեռնմխելի են արդյոք քրեական և քաղաքացիական հետապնդումից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար:	**2**	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանվում են դրույթներ, որոնք կարգավորում են դատախազության ղեկավար կազմի անձեռնմխելիության հարցերը: Այսպես, գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին չի թույլատրվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկել առանց էթիկայի հանձնաժողովի համաձայնության, բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերի, կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Եթե քննարկվում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու հարցը, ապա նրանք էթիկայի հանձնաժողովի կողմից նշված հարցի քննարկմանը չեն մասնակցում: Գլխավոր դատախազի տեղակալի կամ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և տվյալ վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, իսկ գլխավոր դատախազի նկատմամբ՝ գլխավոր դատախազի տեղակալը:
9. Վարձատրություն ՀԿՄ-ների աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված աշխատողների:	**13. Աշխատողների աշխատավարձ և խրախուսում** ցուցանիշը ներառում է ՀՀ դատախազության միջին օղակի անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և նպաստների մանրամասները, այդ թվում՝ վերջին 3-5 տարիների ընթացքում աշխատավարձերի և նպաստների ցանկացած էական փոփոխություն: Գնահատում է, թե աշխատավարձերը մրցունակ են մասնավոր հատվածի (օրինակ՝ բանկերի, աուդիտորական ընկերությունների և այլն), ինչպես նաև քաղծառայության այլ համադրելի պաշտոնների համեմատ:	**2**	ՀՀ դատախազության աշխատակազմի վարձատրությունը կարգավորվում է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: Դատախազների հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) լրացվում է հավելումներով և հավելավճարներով՝ հաշվի առնելով փորձառությունը, դասային աստիճանը և պաշտոնի առանձնահատուկ ռիսկայնությունը: Օրենքով սահմանված է՝ հավելավճարների ընդհանուր չափը չպետք է գերազանցի հիմնական աշխատավարձի 30 %-ը, իսկ առանձնակի ռիսկային պաշտոնների դեպքում տրվում է հավելում՝ 85–95 %-ի չափով:

	17. Անձնակազմի կայունությունը ուսումնասիրում է ՀՀ դատախազության կադրերի հոսունության մակարդակը (այսինքն՝ անձնակազմի շարժը, որն առաջանում է անձնակազմի հավաքագրման և հեռանալու արդյունքում), որն ինքնին կարող է լինել վարձատրության մակարդակների համարժեքության ցուցանիշ:	**1**	Վարձատրության համակարգը դասակարգված է ըստ պաշտոնների՝ ընդհանրացնելով տարբերակված դրույքաչափերը գլխավոր դատախազի տեղակալի, վարչության պետի և մարզային դատախազների համար: ՀՀ դատախազության խրախուսումների տեսակարար կշիռը ՀՀ դատախազության անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում կազմում է՝ 2021 թ.՝ 26.8 %, 2022 թ.՝ 26.7 %, 2023 թ.՝ 11.4 %, իսկ 2024 թ.՝ 1 %: 2021-2024 թթ. դինամիկան վկայումն է, որ խրախուսումների հատկացումները զգալիորեն նվազել են՝ 26.8 %-ից հասնելով ընդամենը 1 %: Մասնավոր հատվածի հետ համեմատությամբ, դատախազների աշխատավարձերը մրցունակ չեն. 2024 թ.՝ մասնավոր ոլորտում իրավաբանի միջին աշխատավարձը բարձր է պետական ցուցանիշից 27.1 %-ով: Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ»: 2022 թ. Գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության հաստիքները կազմել են 13, որի պայմաններում համալրվել է 9-ը, պաշտոնից ազատվել 0, թափուր են մնացել 4 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 0 % (0/9-4): 2023 թ.-ին, փաստացի հաստիքացուցակով 13 աշխատակիցներից, համալրվել է 11-ը, ազատված՝ 1, թափուր՝ 2: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 9.9 % (1/13-2): 2024 թ.՝ 13 աշխատակիցներից, համալրվել է 8-ը, ազատված՝ 0, թափուր՝ 5: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 16.5 % (17/200-97): Ինչ վերաբերվում է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանը, 2022 թ. հաստիքները կազմել են 9, որի պայմաններում համալրվել է 7-ը, պաշտոնից ազատվել 0, թափուր են մնացել 2 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 0 %: 2021-2024 թթ. հոսունության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին, ինչի պայմաններում արձանագրվում է կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ:

10. Իրավասություն մարդկային ռեսուրսների նկատմամբ ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն՝ ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն:	**14. Աշխատակազմի ընտրությունը** կենտրոնանում է ՀՀ դատախազության ծառայողների հավաքագրման ներքին ընթացակարգերի (անկախ քաղաքացիական ծառայության գործող կանոններից), այդ թվում՝ ընթացակարգի և՛ արժանապետական, և՛ թափանցիկ լինելու վրա:	**1**	ՀՀ դատախազության ծառայողները նշանակվում են մրցութային կարգով՝ գլխավոր դատախազի կողմից: Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթներով, որոնք կազմակերպում է դատախազության որակավորման հանձնաժողովը: Բաց մրցույթները, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատախազների համար, անցկացնում են տարին մեկ անգամ, և անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ: Հանձնաժողովը բաղկացած է 9–11 անդամից՝ գլխավոր դատախազի տեղակալ, դատախազներ, իրավաբան-գիտնականներ և ոլորտի փորձագետներ, այն ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: Մրցույթը բաժանվում է փուլերի՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, բարեվարքության ուսումնասիրություն, հարցազրույց և արդյունքների ամփոփում: Հարցաթերթիկի միջոցով բարեվարքության վերաբերյալ կարծիքը տրամադրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Թեկնածուները գնահատվում են մասնագիտական, գործնական հմտությունների և անձնական որակների (ինքնատիրապետում, հաղորդակցման ու վերլուծական հմտություններ) հիման վրա: Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտերը ներառել կամ բաց թողնել ցուցակում, որոշումը հնարավոր է բողոքարկել դատական կարգով: Ցուցակում ընդգրկվածները անցնում են ուսումնառության ծրագիր Արդարադատության ակադեմիայում: Բացի այդ, դատախազները, բացառությամբ գլխավոր դատախազի և տեղակալների, պարտավոր են յուրաքանչյուր երկու տարին մեկ անցնել վերապատրաստում Արդարադատության ակադեմիայի ծրագրերով: 2024 թ. նրանց վերապատրաստումները ներառել են՝ կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունների, հանրային շահերի պաշտպանության, միջազգային փորձագիտական դասընթացների (Բուդապեշտ, ԱՄՆ դեսպանության ԹՊԻՀ, BAMIN, Եվրոպայի խորհուրդ, Դատախազների միջազգային ասոցիացիա) թեմաները: Արդարադատության ակադեմիայի դասընթացներին 2021 թ. մասնակցել են 167, 2022 թ.՝ 116, 2023 թ.՝ 261, 2024 թ.՝ 140 դատախազներ, իսկ քաղաքացիական ծառայողների վերապատրաստումներին՝ 2021 թ.՝ 57, 2022 թ.՝ 75, 2023 թ.՝ 88, 2024 թ.՝ 73 մասնակիցներ:
	15. Հետապնդման փորձագիտությունը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի հետապնդման ոլորտում, ինչպես նաև ՀՀ դատախազության անձնակազմի միջին աշխատանքային ստաժը: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ է ծառայում նաև հետապնդման գործառույթի համար չլրացված հաստիքների քանակը: ***Ծանոթություն:*** *Թեև 15-րդ ցուցանիշն ուղղակիորեն չի անդրադառնում մարդկային ռեսուրսների նկատմամբ իրավասության հարցին, սակայն կարող է հանդես գալ որպես համեմատության եզր՝ պարզելու, թե ՀՀ դատախազությունն որքանով ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ իր գործառույթներն իրականացնելու համար (վերաբերում է նաև Զեկուցման 11-րդ սկզբունքին. տես ստորև):*	**2**	

11. Համարժեք և հուսալի ռեսուրսներ ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և ցամաքային տարածքը: ՀԿՄ-ները պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ-ի կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ-ի մանդատի իրագործման համար:	**10. Բյուջեի համամասնությունը** դիտարկում է վերջին 3-5 տարիների ընթացքում ՀՀ դատախազության բյուջեի միջին համամասնությունը ընդհանուր պետական բյուջեի նկատմամբ:	**0**	ՀՀ դատախազության ֆինանսավորումը իրականացվում է «Դատախազության մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի համաձայն՝ դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում առանձին տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատախազություն: Դատախազության բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Գլխավոր դատախազություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Բյուջետային հայտի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ դատախազության դիրքորոշումն Ազգային ժողովում ներկայացնում է դատախազության գլխավոր քարտուղարը: 2021-2024 թթ. ՀՀ դատախազության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 0.1 %-ից պակաս է՝ փոքր աճով՝ 2021 թ. 6.1 մլրդ. դրամից մինչև 2024 թ. 10.4 մլրդ. դրամ: Հատկացումները հիմնականում ուղղվել են «Փորձաքննության ծառայություններ», «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» և «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» ծրագրերին: Աշխատանքների գերակշիռ մասը՝ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծախսերն են, որոնք կատարելագործվել են, մասնավորապես՝ քրեական հետապնդման և փորձաքննությունների ծառայությունների ծախսերի աճով: Բյուջեի հատկացումների հաստատման և տրամադրման գործընթացում խախտումներ չեն եղել, իսկ ճշտված միջոցների չօգտագործման դեպքեր նույնպես չեն արձանագրվել: 2023 թ. 107,4 մլն. դրամ հատկացվել է քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ձեռքբերման համար: Պետական բյուջեից ՀՀ դատախազության անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների և հատկացված բյուջեի մեծության համադրությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե,
	11. Բյուջեի բավարար լինելը գնահատում է, թե ՀՀ դատախազությունն ունի բավարար բյուջե իր գործառույթներն իրականացնելու համար, և արդյոք որոշ ժամանակ սպասում է դեպքերին անդրադառնալուն՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է:	**2**	
	12. Բյուջեի անվտանգությունը և կայունությունը պարզում է, թե ՀՀ դատախազությունն խնդիրներ ունեցել է իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում, հատկացված բյուջեն ժամանակին է բաշխվում, և վերջին 3-5 տարվա ընթացքում ՀՀ դատախազության բյուջեում նշանակալի փոփոխություններ եղել են, թե՝ ոչ:	**2**	
	16. Անձնակազմի վերապատրաստումն ընդգրկում է ՀՀ դատախազության անձնակազմի մասնակցած վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև վերջին 3-5 տարվա ընթացքում նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները: Ուսումնասիրում է նաև վերջին 3-5 տարվա ընթացքում ՀՀ դատախազության կողմից վերապատրաստմանը հատկացված բյուջեն:	**1**	

			ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել:
12. Ֆինանսական ինքնավարություն ՀԿՄ-ները ստանում են բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունեն կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին:	**11. Բյուջեի բավարար լինելը,** ի հավելումն վերը նկարագրված տարրերի, գնահատում է նաև, թե ՀՀ դատախազությունն ունի՞ ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը:	**2**	2023-2024 թթ. ՀՀ կառավարությունն ու ԱԺ-ն ամբողջությամբ բավարարել են ՀՀ դատախազության բյուջետային հայտը: Հատկացումները հիմնականում ուղղվել են «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն», «Փորձաքննության ծառայություններ» և մեկ այլ ծրագրերին՝ գերակշռող մասով Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին՝ շուրջ 99.4-99.5 % կատարման մակարդակով: 2022-2024 թթ. ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների ծավալի մեծացմամբ, բազային աշխատավարձերի բարձրացմամբ և դատահրավական համակարգի բարեփոխումներով: 2024 թ. ծրագրերի շրջանակներում իրականացվել է 39,397 քրեական վարույթ, ավարտվել է 38,058-ը, պետական շահերի պաշտպանության ոլորտում վերականգնվել է 2,862 մլրդ դրամ, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցագումարը կազմել է 287,742 մլրդ դրամ: «Փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում օգտագործվել է միջոցների 99.9 %-ը՝ 15,013 իրականացրած փորձաքննություն: 2021-2024 թթ. բյուջետային միջոցների սահմանափակումներ չեն եղել, դոնոր կազմակերպությունների ֆինանսավորում չի տրամադրվել: Հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել դատախազության առաջադրված խնդիրները լուծելու համար:
13. Ներքին հաշվետվողականություն ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ	**21. Ներքին վերահսկողության մեխանիզմներ** ուսումնասիրում են ՀՀ դատախազության ներքին ուսումնասիրության գործընթացները, այդ թվում՝ ՀՀ դատախազությունն ունի՞ արդյոք կորպորատիվ պլան, մոնիտորինգի և գնահատման (ՄԵԳ) շրջանակ և կատարողականի գնահատման չափումներ, և հավաքո՞ւմ է ՀՀ դատախազության կատարողականի վերաբերյալ հանրային ընկալման տվյալներ:	**1**	ՀՀ դատախազությունում ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են ՀՀ դատախազության կանոնակարգով: Գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը վերահսկողությունն իրականացնում են ստորաբաժանումների ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով, որոնց դեպքում լրացվում է հսկողական քարտ: Ստուգումների կարգը ներառում է հանձնարարություն, իրավական հիմք, նպատակ և ժամկետ: Գլխավոր դատախազը հաստատում է դատախազության ներքին կարգապահական կանոնները: Դատախազի վարքագծի կանոնները սահմանված են «Դատախազության

ընթացակարգեր, ներառյալ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու ՀԿՄ-ների կողմից ցանկացած սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում:	**26. Բարեվարքության ներքին մեխանիզմները**, ի թիվս այլոց, գնահատում են վարքագծի կանոնների խախտման և այլ չարաշահումների վերացման, ինչպես նաև ներքին բողոքների քննության առկա գործընթացները:	**2**	մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով և գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրամանով: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են օրենքով և գլխավոր դատախազի հրամանով: Դրանք պարտադիր են բոլոր դատախազների համար, իսկ վերադաս դատախազը պարտավոր է հետևել ստորադասների վարքագծի կանոնների պահպանումին: Դատախազը պետք է իր գործունեությամբ ապահովի դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անկախությունը: Գլխավոր դատախազի տեղակալները հետևում են ԿԿՀ-ի վարքագծի կանոնագրքին՝ բացառությամբ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում թույլատրելի գործողությունների: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատվում են փոխվարչապետի կողմից: Դատախազի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը կարգավորվում են «Դատախազության մասին» օրենքի 72-74.1 հոդվածներով՝ հղում կատարելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Հայտարարագրման պարտականությունը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ ընդգրկելով դատախազության որոշ պաշտոնյաների: Դատախազությունում առկա է ներքին աուդիտի բաժին, սակայն դրա գործառույթները կանոնադրությամբ մանրամասնված չեն: Գլխավոր դատախազի 2024 թ. հոկտեմբերի 16-ի N 78-Լ հրամանով հաստատվել է ներքին աուդիտի կոմիտեի կազմը, սակայն կայքում բացակայում են գնահատման հաշվետվություններ և 2021-2024 թթ. աուդիտի արդյունքները: ՀՀ դատախազությունում գործում է azdararir.am հավելվածը անանուն հաղորդումները անմիջապես հասցեագրելու նպատակով: ՀՀ գլխավոր դատախազությունը միասնական էլեկտրոնային հարթակով ստանում է ազդարարումները, դրանք քննարկում, հաշվառում է և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտ է ընդունում կամ ուղարկում օպերատիվ-հետախուզական մարմնին կամ Հակակոռուպցիոն կոմիտե: 2024 թվականին դատախազություն ստացվել է 14.000 դիմում-բողոք, որոնցից 1529-ը կոռուպցիոն բնույթի էին: Անանուն կամ ստորագրված բողոքների համադրությամբ երևում է, որ ազդարարողների միայն 24.85 %-ն է վստահել ինքնությունը
	23. Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը գնահատում է բողոքատուների և ազդարարների՝ իրենց ինքնությունը ՀՀ դատախազությանը բացահայտելու պատրաստակամությունը՝ ի նշան ՀՀ դատախազության գործընթացների հանդեպ իրենց վստահության:	**0**	
	24. Անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը գնահատում է ՀՀ դատախազության անձնակազմի դեմ բողոքների քննարկման ընթացակարգը և դրա արդյունավետությունը:	**1**	
	25. Բողոքների արդյունքները գնահատում են վերջին 3-5 տարվա ընթացքում ՀՀ դատախազության կամ նրա անձնակազմի դեմ ներկայացված բողոքների արդյունքները և այն, թե անտեսվել են արդյոք որոշ հիմնավոր բողոքներ:	**2**	

			բացահայտելուն (380/1529*100): «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ պարտականությունների չկատարում, վարքագծի կանոնների կամ շահերի բախման կանոնների խախտում, ներքին կարգապահական կանոնների մշտական խախտում, սահմանափակումների կամ անհամատեղելիության պահանջների չպահպանում և ԿԿՀ-ի բացասական եզրակացություն: Գլխավոր դատախազի տեղակալների համար հիմք է նաև ԿԿՀ-ի ընդունած վարքագծի կանոնների խախտումը՝ բացառությամբ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների: Այս դեպքերում վարույթը հարուցում և իրականացնում է ԿԿՀ-ն: Կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի գլխավոր դատախազը և գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը: Կարգապահական տույժերը կախված են խախտման ծանրությունից՝ նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում, պաշտոնի իջեցում, պաշտոնից ազատում: Տույժերը նշանակվում են գլխավոր դատախազի, որոշ դեպքերում՝ ՀՀ նախագահի կողմից, էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա:
14. Արտաքին հաշվետվողականություն ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմներին, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար:	**20. Արտաքին վերահսկողության մեխանիզմները** գնահատում են ՀՀ դատախազության արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ դատախազության վերահսկողական հանձնաժողով(ներին): Նաև ուսումնասիրում է հսկողության լրացուցիչ մեխանիզմներ (օրինակ՝ կանոնավոր հաշվետվությունների ներկայացում Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում):	**1**	ՀՀ դատախազության արտաքին վերահսկողության մեխանիզմները բացակայում են: ՀՀ դատախազությունը հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով կարգավորվում ՀՀ դատախազության տարեկան գործունեության հաղորդումների բանավոր եղանակով ներկայացումը Ազգային ժողովին: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, ԱԺ-ի կողմից դատախազության գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով դատախազությանը վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը: ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ վարչապետին ենթակա վերահսկողական պետական ծառայության միջոցով ՀՀ դատախազության գործունեության հաշվեքննություն և հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների իրականացման նկատմամբ ուսումնասիրություններ կամ ստուգումներ չեն իրականացվել:
	22. Պատշաճ գործընթացի պահպանումը գնահատում է հանրության վստահությունը ՀՀ դատախազության կողմից պատշաճ ընթացակարգերի, անկողմնակալության և	**0**	

	արդարացիության պահպանմանը իր լիազորություններն օգտագործելիս և հետաքննության տակ գտնվող անձանց հանդեպ վերաբերմունքի մեջ:		Ընդհանուր առմամբ, հանրության տեղեկացվածությունը և կապը դատախազության հետ բավականին ցածր է, իսկ քրեական վարույթների ընթացակարգերի պատշաճությունը գնահատված չէ: 2022 թ. «ՀՌԿԿ-Հայաստան»-ի «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022» զեկույցի համաձայն՝ հարցվածների 44.1 %-ը չի ճանաչում որևէ հակակոռուպցիոն պետական կամ հասարակական կառույց: Դատախազության մասին տեղեկացված են ընդամենը 4.7 %: Հարցվածների 28.7 %-ն Դատախազությունը համարում է մեծապես կոռումպացված, 31.6 %՝ որոշ չափով կոռումպացված:
15. Հրապարակային հաշվետվություններ ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարեկան մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանը իրենց գործունեության մասին:	**18. Տարեկան հաշվետվությունը** գնահատում է ՀՀ դատախազության տարեկան հաղորդման համակողմանիությունը և հասանելիությունը:	**1**	«Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն՝ դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին այնքանով, որքանով դա չի խախտում մարդու իրավունքները, ազատությունները, օրինական շահերը և օրենքով պաշտպանվող գաղտնիքները: Գլխավոր դատախազը ամեն տարի մինչև ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին տարեկան հաղորդում, որը քննարկվում է նիստում՝ հիմնական զեկուցման, հարցերի և մտքերի փոխանակության կարգով, և հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է դատախազության կայքում: ՀՀ գլխավոր դատախազությունը հրապարակում է նաև հանցագործությունների, կոռուպցիոն հանցագործությունների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Սակայն առկա տվյալները ցույց են տալիս՝ հաղորդումները լիարժեք չեն, բացակայում են քրեական վարույթների կարճման հիմքերը, բյուջեի կատարողականը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունները և այլ անհրաժեշտ տվյալներ: ՀՀ դատախազությունը հասանելիություն ունի էլեկտրոնային e-request.am հարթակին, որի վիճակագրությունը վկայում է, որ այն չի գտնվում ամենապահանջված պետական մարմինների շարքում: 2021 թ. դատախազությանը ներկայացված հանրության հարցումների քանակը կազմել է 312, 2022 թ.՝ 433, 2023 թ.՝ 830, 2024 թ.՝ 843: Չնայած վերջին տարիներին հարցումների քանակի կրկնապատկմանը՝ ՀՀ դատախազությանը ներկայացված և անարձագանք թողնված հանրության հարցումներ չեն արձանագրվել:
	19. Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին ցուցանիշը գնահատում է ՀՀ դատախազության թափանցիկությունը հանրության կոնկրետ հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է):	**0**	

16. Հաղորդակցություն և գործակցություն ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և գործակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության վստահությունը իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ:	**42. Առցանց հաղորդակցումը** գնահատում է ՀՀ դատախազության կողմից առցանց ալիքների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկությունների տարածման և հանրության հետ առավել լայն կապեր հաստատելու համար, ներառյալ ՀՀ դատախազությունն ունի արդյոք առցանց հաղորդակցման ընդարձակ ռազմավարություն:	**1**	ՀՀ դատախազության կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել: ՀՀ դատախազության հանրության հետ հաղորդակցության ու գործակցության հիմնական գործիքը շարունակում է մնալ https://prosecutor.am պաշտոնական կայքը: ՀՀ դատախազության կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կառուցվածքը, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, կառուցվածքի վերաբերյալ տեղեկություններ, դատախազության ամենամյա հաշվետվությունները՝ Ազգային ժողովին, կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հաղորդումները, հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդումները: Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, գլխավոր դատախազի հրամաններ: ՀՀ դատախազության կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկություն: ՀՀ դատախազության պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Նշված 3 սոցիալական հարթակներից բոլորը գործում են: Հասարակության վստահությունը ՀՀ դատախազության նկատմամբ միջինից ցածր է, հանրային տեղեկացվածությունը շատ ցածր է, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ ընկալումները հակասական են: Այս հանգամանքները վկայում են հաղորդակցության պակասի, հանրային ընկալումների ուսումնասիրությունների բացակայության և վստահության բարձրացման անհրաժեշտության մասին: ՀՀ դատախազության 2021-2024 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի կտրվածքով ագրեգացված վիճակագրական տվյալները բացակայում են:
	43. Վստահություն Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության հանդեպ ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը ՀՀ դատախազությանը տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիան զսպելու համար:	**0**	
	48. Հասանելիությունը մարգինալացված խմբերին գնահատում է ՀՀ դատախազության արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված խմբերին (օրինակ՝ կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք կամ ազգային փոքրամասնություններ), այդ թվում՝ ՀՀ դատախազության կողմից ապաագրեգացված տվյալների օգտագործումը հանրայնացման և հակակոռուպցիոն քաղաքականության իրազեկման համար:	**0**	

Հավելված 4. ՀՀ դատախազության գործունեության գնահատման ցուցանիշների դասակարգումը՝ ըստ ազդեցության ու կատարողականը բնութագրող գործոնների

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		ԿԱՏԱՐՈ ՂԱԿԱՆ
		ԱՐՏԱՔԻՆ	ՆԵՐՔԻՆ	
1.	Ինստիտուցիոնալ անկախություն	2		
2.	Գլխավոր դատախազի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	1		
3.	Մանդատ	2		
4.	Իրավասություն	2		
5.	Հետապնդման լիազորություններ	2		
6.	Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ	1		
7.	Իրավական ինքնավարություն	2		
8.	Գործառնական ինքնավարություն	2		
9.	Լիազորությունների քաղաքական օգտագործում	0		
10.	Բյուջեի համամասնությունը	0		
11.	Բյուջեի բավարար լինելը	2		
12.	Բյուջեի անվտանգությունը և կայունությունը	2		
13.	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում		2	
14.	Աշխատակազմի ընտրություն		1	
15.	Հետապնդման փորձագիտություն		2	
16.	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում		1	
17.	Անձնակազմի կայունություն		1	
18.	Տարեկան հաշվետվություն		1	
19.	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին		0	
20.	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	1		
21.	Ներքին վերահսկողական մեխանիզմներ		1	
22.	Գործընթացների պատշաճ պահպանում			0
23.	Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը*[166]			0
24.	ՀՀ դատախազության անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը			1

[166]* Դասակարգումը ճշգրտված է՝ ըստ ՀՀ դատախազությանը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներով,կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստի, օրինակ. եթե բողոքատուների պատրաստակամությունը բացահայտելու իրենց ինքնությունը մեծապես որոշվում է դատախազության վերահսկողությունից դուրս գտնվող գործոններով. կամ եթե ՀՀ դատախազությունը պատասխանատու չէ քրեական հետապնդման համար, կամ եթե այլ երկրների հետ համագործակցության մակարդակը մեծապես որոշվում է ՀՀ դատախազության վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոններով:

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		ԿԱՏԱՐՈ ՂԱԿԱՆ
		ԱՐՏԱՔԻՆ	ՆԵՐՔԻՆ	
25.	Բողոքների արդյունքները			2
26.	Բարեվարքության ներքին մեխանիզմները		2	
27.	Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին			2
28.	Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին			2
29.	Նախաձեռնողականություն			1
30.	Արդյունավետություն և արհեստավարժություն			1
31.	Հետապնդումների ցուցանիշը*			0
32.	Դատապարտումների ցուցանիշը	1		
33.	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետապնդումներ կոռուպցիոն գործերով			1
34.	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում			0
35.	ՀՀ դատախազության կատարողականի ընկալում			0
36.	Հատկացված բյուջե	0		
37.	Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխարգելման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում			0
38.	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում			1
39.	Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ			0
40.	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտություն			0
41.	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ			1
42.	Առցանց հաղորդակցում			1
43.	Վստահությունը Կառավարության կողմից ՀՀ դատախազությանը ցուցաբերվող աջակցության հանդեպ	0		
44.	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ		2	
45.	Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ		1	
46.	Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր		2	
47.	Համագործակցություն այլ երկրների հետ*		1*	
48.	Հասանելիությունը մարգինալացված խմբերին			0
	Գնահատման մակարդակները՝ %	**20/16*2=62.5%**	**17/13*2=65.3%**	**13/19*2=34.2%**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, 31.10.2003 թ.
2. «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ.
3. ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով)
4. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ.
5. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ.
6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ.
7. ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021 թ.
8. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, 24.03.2021 թ.
9. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020 թ.
10. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
11. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
12. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018 թ.
13. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, 16.01.2018 թ.
14. «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.
15. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, 09.06.2017 թ.
16. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, 09.06.2017 թ.
17. «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք, 12.12.2013 թ.
18. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, 02.05.2013 թ.
19. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, 22.12.2010 թ.
20. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, 26.05.2008 թ.
21. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, 22.10.2007 թ.
22. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, 18.02.2004 թ.
23. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003 թ.
24. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24.06.1997 թ.
25. ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ԱԺՈ-006-Ն որոշում, 19.06.2025 թ.
26. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազի 2022 թ. հունիսի 27-ի N 47 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 103-L հրաման, 24.12.2024 թ.
27. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2023 թ. հոկտեմբերի 9-ի N 80-L հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 78-L հրաման, 16.10.2024 թ.
28. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-L որոշում, 26.10.2023 թ.
29. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. հուլիսի 8-ի N 54 հրամանում լրացումներ կատարելու մասին», N 1-L հրաման, 11.01.2023 թ.

30. ՀՀ փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 697-Ն որոշում, 04.10.2022 թ.
31. ՀՀ վարչապետի «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 820-Լ որոշում, 18.07.2022 թ.
32. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության հաստիքացուցակը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրաման, 27.06.2022 թ.
33. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշում, 17.06.2022 թ.
34. ՀՀ կառավարության «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների առանձնահատկություններով պայմանավորված տրվող հավելումների վճարման չափերը, կարգը, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանելու մասին» N 446 - Ն որոշում, 07.04.2022 թ.
35. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. միջոցառումների ծրագիր, 18.08.2021 թ.
36. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 42 հրաման, 26.04.2021 թ.
37. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թ. սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացումներ կատարելու մասին» N 50 հրաման, 03.06.2020 թ.
38. ՀՀ գլխավոր դատախազի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրաման, 23.05.2020 թ.
39. Հաշվեքննիչ պալատի 2018 թ. նոյեմբերի 22-ի «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 16/4 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 28/21 որոշում, 24.12.2019 թ.
40. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնակարգը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի N 59 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 72 հրաման, 18.12.2019 թ.
41. ՀՀ կառավարության «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, 03.10.2019 թ.
42. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության ներքին աուդիտի կոմիտեի կազմը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թ. հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրաման, 24.09.2019 թ.
43. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թ. հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրաման, 24.09.2019 թ.
44. ՀՀ կառավարության «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» սահմանելու մասին»N 1146-Ն որոշում, 10.10.2018 թ.
45. ՀՀ գլխավոր դատախազի «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը սահմանելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007

թվականի մայիսի 30-ի N 20 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 49 հրաման, 05.06.2018 թ.
46. ՀՀ գլխավոր դատախազի «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թ. հունվարի 29-ի N 8 և հոկտեմբերի 20-ի N 77 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 43 հրաման, 26.04.2018 թ.
47. ՀՀ գլխավոր դատախազի 2018 թ. ապրիլի 10-ի N 27 հրաման, հավելված «Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները»
48. ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 - Ն որոշում, հավելված, «ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»
49. ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ դատախազության և ՀՀ դատախազության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 5 հրաման, 02.03.2012 թ.

Հրապարակումներ

50. Ազատություն ռադիոկայան, Գլխավոր դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև վեճ է սկսվել Վլադիմիր Գասպարյանի քրգործի շուրջ, 19.01.2022 թ., https://www.azatutyun.am/a/31661424.html
51. Ազատություն ռադիոկայան, Հայաստանի խորհրդարանը թույլատրել է երկու ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում, 27.03.2025 թ., https://www.azatutyun.am/a/33362139.html
52. ԹԻՀԿ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության գնահատում, 2023, https://transparency.am/hy/publication/pdf/369/11178
53. ԹԻՀԿ, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատում, 2025, https://transparency.am/hy/publication/395
54. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Ամփոփում. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2023թ. անցկացված բաց մրցույթի դիտարկում, 2023, https://shorturl.at/dB4ZM
55. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Հայաստանի Հանրապետությունում դատախազության բարեփոխումների հայեցակարգ, 2024, https://prwb.am/2024/04/25/hayastani-hanrapetuthyan-dataxazuthyan-barephoxumneri-hayecakarg/
56. Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի Հայաստանի Հանրապետության գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia
57. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-inArmenia_Arm_v2.pdf
58. Հետք, Գլխավոր դատախազն ԱԺ-ում ներկայացրել է Դատախազության 2024 թ. հաղորդումը, 08.05.2025 թ., https://hetq.am/hy/article/174229
59. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, նորություններ բաժին, «Աննա Վարդապետյանն ընտրվել է ՀՀ գլխավոր դատախազ», 29.06.2022 թ.,

http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=06&year=2022&NewsID=16991&lang=arm
60. ՀՀ արդարադատության նախարարություն, Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի և գնահատման 2024 թվականի տարեկան զեկույց, https://moj.am/storage/uploads/Annual_Report_2024.pdf
61. ՀՀ գլխավոր դատախազություն, 2021 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանք, 2022, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf
62. ՀՀ գլխավոր դատախազություն, 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանք, 2023, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf
63. ՀՀ գլխավոր դատախազություն, 2023 թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հաղորդում, 2024, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf
64. ՀՀ գլխավոր դատախազություն, 2024 թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հաղորդում, 2025, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_296_4498495218.pdf
65. ՀՀ գլխավոր դատախազություն, Հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2022 թ. հաղորդում, 2023, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_61_8560493694.pdf
66. ՀՀ գլխավոր դատախազություն, Հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության 2024 թ. հաղորդում, 2025, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_294_4340070921.pdf
67. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների վերաբերյալ 2021 թ. հաշվետվություն, 2022, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf
68. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2022 թ. հաշվետվություն, 2023, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf
69. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2023 թ. հաշվետվություն, 2024, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf
70. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ 2024 թ. հաշվետվություն, 2025,

https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf
71. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ դատախազության 2021 թ. գործունեության մասին հաղորդում, 2022, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_48_8560338567.pdf
72. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ դատախազության 2022 թ. գործունեության մասին հաղորդում, 2023, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf
73. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ դատախազության 2023 թ. գործունեության մասին հաղորդում, 2024, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf
74. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ դատախազության 2024 թ. գործունեության մասին հաղորդում, 2025, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf
75. ՀՀ դատախազության կայք, «Աննա Վարդապետյանը հանդիպել է «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի ուսանողներին» 07.06.2024 թ. https://www.prosecutor.am/article/4581
76. ՀՀ դատախազության կայք, «Մասնագիտական երկխոսություն դատավորների ու դատախազների միջև՝ դատավարական էթիկայի թեմայով», 26.10.2023 թ., https://prosecutor.am/article/4381,
77. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, « ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն», 02.06.2021 թ., https://www.prosecutor.am/article/1876
78. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Աննա Վարդապետյանը և Իտալիայի գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր», 30.06.2023 թ., https://prosecutor.am/article/4203
79. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Դատախազներն ու քննիչները հանդիպել են ՄԻԵԴ դատավորին», 21.07.2023 թ., https://prosecutor.am/article/4264,
80. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Դատախազությունը զգայուն վերաբերմունք ունի հատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ. Աննա Վարդապետյանն ընդունել է «Հոդված 3» մարդու իրավունքի դպրոցի սաներին» 20.05.2023 թ., https://www.prosecutor.am/article/2518,
81. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Լիտվայի դատախազությունները խորացնում են համագործակցությունը. Աննա Վարդապետյանը լիտվացի գործընկերոջ հետ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր», 30.06.2023 թ., https://prosecutor.am/article/4208
82. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Հունաստանի գլխավոր դատախազությունների միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել», 03.07.2018 թ., https://www.prosecutor.am/article/1169
83. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Հայաստանի և Հունգարիայի գլխավոր դատախազները ստորագրեցին համագործակցության հուշագիր», 06.07.2007 թ., https://www.prosecutor.am/article/35

84. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանն ընդունել է ՀՀ դատախազության 95-ամյա հոբելյանի կապակցությամբ Հայաստան ժամանած պատվիրակությունների ղեկավարներին», 01.07.2013 թ., https://www.prosecutor.am/article/340
85. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հրավերով Հայաստան է ժամանել Վրաստանի գլխավոր դատախազը. ստորագրվել է համագործակցության հուշագիր», 19.04.2022 թ., https://www.prosecutor.am/article/2157
86. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպել է Եգիպտոսի գլխավոր դատախազին. ստորագրվել է համագործակցության հուշագիր», 17.05.2022 թ., https://www.prosecutor.am/article/2182
87. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազը մասնակցել է Բիշքեկում կայացած ԱՊՀ և Շանհայան համագործակցության կազմակերպության երկրների գլխավոր դատախազների նիստերին», 02.10.2019 թ., https://www.prosecutor.am/article/1522
88. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպանին», 28.12.2018 թ., https://www.prosecutor.am/article/1366
89. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Ներկայացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուն», 15.11.2024 թ., https://prosecutor.am/article/4684
90. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Պետական շահերի պաշտպանության ոլորտում 2023 թվականին նկատվում է արդյունավետության էական աճ. ներկայացվել են հետազոտական զեկույցի արդյունքները», 10.12.2024 թ., https://www.prosecutor.am/article/4707
91. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Պետությանը և համայնքին պատճառված վնասի վերականգնմանն ուղղված դրամական միջոցները կվճարվեն «Վերականգնված միջոցների միասնական հաշվին», 05.12.2024 թ., https://prosecutor.am/article/4702
92. ՀՀ դատախազության կայք, Նորություններ բաժին, «Ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ Հայաստանի և Ռումինիայի դատախազությունների միջև», 15.09.2010 թ., https://www.prosecutor.am/article/441
93. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրեր, http://armsai.am/hy/annual-program
94. ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/
95. ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ, Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2024, https://shorturl.at/pJhd1
96. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2022, https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf

97. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2023, https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf
98. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2024 թ. հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2024, https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf
99. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2025, https://armstat.am/file/article/population_01_01_25.pdf
100. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններ, https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
101. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի կողմից ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վիճակի գնահատման 2021 թ. զեկույցի ամփոփագիր, https://shorturl.at/cFmrl
102. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թ. հաղորդում, https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf
103. Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) Հարցումների հետազոտության կենտրոն, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, Երևան, 2024, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia/
104. ՍԻԳՄԱ նախաձեռնություն, «Հայաստանի հանրային կառավարման ելակետային իրավիճակի գնահատման» զեկույց, 2025 թ., https://www.sigmaweb.org/content/dam/sigma/en/publications/reports/2025/12/public-administration-in-armenia-2025_5c12af02/f996600c-en.pdf
105. Aurora Media Group, «Քննչական կոմիտեն չի հերքում վարչապետի խորհրդականին առնչվող սկանդալային տեսանյութերի իսկությունը», 11.03.2021 թ., https://auroranews.am/news/2021-03-11-qnnchakan-komiten-chi-herqum-varchapeti-khorhrdakanin-arnchvogh-skandalayin-tesanyuteri-iskutyuny
106. Factor.am, «Փաշինյանի օգնականից՝ գլխավոր դատախազ. ՔՊ-ի փակ նիստում որոշում են կայացրել», 16.06.2022 թ., https://factor.am/523581.html,
107. Panorama.am, «Գլխավոր դատախազը չի մասնակցի քաղբանտարկյալների հարցով վաղը խորհրդարանում սպասվող լսումներին. Վարդանյան», 25.11.2025 թ., https://shorturl.at/ltQkq
108. Panorama.am, «Սա է ավտորիտարիզմի բաստիոնի բերած բարքերը. Աբրահամյանը՝ ընդդիմադիրների նկատմամբ քաղաքական հետապնդումների մասին», 08.01.2026 թ., https://shorturl.at/PZEu7
109. Sputnik, «Փաշինյանի խորհրդականն է ցուցում տալիս՝ ինչ մեղադրանք առաջադրեն Հայրապետյաններին», 10.03.2021 թ., https://arm.sputniknews.ru/20210310/ruben-hayrapetyan-qrqorc-pashinyani-xorhrdakan-26759375.html,
110. Freedom House, Nations in Transit 2023 զեկույց, 2024, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023
111. Freedom House, Nations in Transit 2024 զեկույց, 2025, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024

112. OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/fb158bf9-en
113. OECD (2024), Combatting High-level Corruption in Eastern Europe: Insights and Solutions, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/3c82f87d-en
114. OECD (2025), Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Follow-Up Report: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/3d273009-en
115. Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparencycdn.org/kproducts/ACA-Assessment-Tool.pdf